



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


244110007


891.99 | _____ 23470

P-35 | P. 9 94

tipikah danggudane : L. H.

25/1/11	22/1/11	23/1/11





ՐԱՖՖԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՆԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ

ՋԱԿՐՈՒՄԱՐ

ՎԻՊԱՍՍԱՆՈՒԹԻՒՆ

ԹԻՓԼԻՋԻ ՀԱՅԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ




Վ Ի Ե Ն Ն Ը

Մ Ե Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1930

PRINTED IN AUSTRIA




ՋԱՅՐՈՒՄԱՐ

ՐԱՖԳԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԺՈՒ

ՀԱՏՈՐ ԺԱ.

ՋԵՋՐՈՒԹԵՐ



Վ Ի Ե Ն Ն Ա
Մ Ե Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1930

891.99

Ր-35

ՐԱՖՖԻ

ՁԱՎՔԹԻՄԱՐ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԹԻՓԼԻՋԻ ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ


ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

A II
30153

23.470



Վ Ի Ե Ն Ն Ա
Մ Ե Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն
1930




ՅԱՌԱՋԱԲԱՆ

«ԶԱՀՐՈՒՄԱՐԸ» ես գրել եմ 1871 թուականին Թիֆլիզում, ուր ես իմ գործերի պատճառով ստիպուած էի մի տարի եւ կէս մնալ: Վիպասանութեանս նիւթն առնուած է Թիֆլիզի հայերի կեանքից. գրուած է աշխարհաբար լեզուով եւ միայն տեղ-տեղ թիֆլիզեցոց բարբառով: «Զահրումար»ի մէջ ընթերցողը կը տեսնէ պատկերներ բարի եւ չար անձերի. նա կը տեսնէ տարապայման կրթութեան (ժամաւանդ օտարազգեայ ուսումնարաններում) վնասակար հետեւանքները, բարքերի ասպականութիւն, բարոյական փտութիւն ժամանակիս շռայլութիւնից եւ զեղխութիւնից եւ հայութեան գաղափարի օր ըստ օրէ ջրնջուիւն ժողովրդի մտքից, եւ ձգտողութիւն ժողովրդի դէպ օտարամիլ նորածեւութիւնները:

ԲԱՓՓԻ

Հրատարակութեանս ընագիր առնուած է Թիֆլիզի 1895 ի առաջին տպագրութիւնը. անփոփոխ պահուած է ընագիրը. միայն կարելոր տեսանք կցել հատորիս վերջը դժուարիմաց բառերու ցուցակ մը, որ կ'ամփոփէ իր մէջ Թիֆլիզի բարձրոհն յատուկ ասութիւններ, անմատչելի շատերուն: Կը յուսանք թէ ասով աւելի դիւրնասկանալի պիտի դառնայ հատորիս ընթերցումը:

ՀՐԱՏԱՐԱՆԿՈՇ



Ա

ովհասեան նահանգի մի դաւառաքաղաքի մէջ բնակվում էր Հացի-Գէլենց Օհանէսի որդի Ղաղօ անունով հարուստ վաճառականը: Նրա ծնողքը, մեռնելով խուրբայից, թողեցին միակ զաւակը, փոքրիկ Ղաղօին, մանկական հասակում, բոլորովին անխնամ եւ յետին աղքատութեան մէջ: Փոքրիկ Ղաղօն օրական հացի կարօտ չմնալու համար, իրանց թաղի ծխատէր քահանայ Տէր-Մարութի բարերարութեամբ, յանձնուեցաւ իրրեւ աշակերտ մրգավաճառ Պաճօ-Սօսիկօի մօտ: Ուր նրա սլաշտօնը այն էր՝ հակել խանութի դրանը, կանանչեղէնի վրայ ջուր սրսկել, խնձորների փոշին սրբել, վաճառողներ հրաւիրել, եւ երբեմն անցնող մի ջիհուտի յետքից թաքուն քարշ տալ աղուէսի սրշ, յետոյ հա՛յ, հո՛յ, աղաղակ բարձրացնել, ծափ տալ, եւ իւր վարպետին ծիծաղացնել:

Փոքրիկ Ղաղօն առողջ եւ վստահ երեխայ էր, նրա բնական ճարպիկութիւնը առիթ տուաւ մի քայլ յառաջադիմութեան նրա դործունէութեան մէջ, երբ իւր տասնուչորս տարեկան հասակում եղաւ նա կատարեալ կի՛ն սօ: Նա թէեւ հրաժարուել էր իւր վարպետից, բայց այնքան վարկ եւ համարում ստացել էր բոլոր մրգավաճառների

մօտ, մինչ նա ամէն օր կարողանում էր անվճար դնել նրանցից ամենայն տեսակ մրդեղէններ, եւ լցնելով իւր ահազին տաշտը, գլխի վրայ դնել, եւ կշեռքը ուսից քարշ տուած, իւր մթերքը քաղաքի շուկաններում եւ փողոցներում պտտացնել, զանազան լեզուներով բարձրաձայն դռուլ մրդեղէնների անուներն, գովասանութիւններ եղանակել, եւ զնոցներ հրասուրել:

Կինսօ Ղաղօն ծանօթ էր բոլոր մրդասէր հասարակութեանը: Նրա դռուլու ձայնը այն աստիճան քաղաքականութիւն էր ստացել, մինչ նա շուկաններում երբ իւր խռպոտ եւ ձգական ներդաշնակութեամբ եղանակում էր՝ «Տ ա՛յ ճ ա՛ն ճ ու ը ի հ է՛», այդ բաւական էր մի քանի բողբոջում գուրս ածել մրդասէր երեսաների խումբը, որոնք ամենայն յօժարութեամբ իրանց կոպէկները նրա տաշտի մէջ ձգելով մի քանի խնձոր կամ տանձ առնելով, ուրախութեամբ կրկին զէպի տուն էին վազում:

Այդ յաջողութիւնը կինսօի գործունէութեան մէջ այն հետեւանքն ունեցաւ, որ նա ժառանգեց իւր սիրելի վաճառքի անուներ, այնպէս որ ամէն երեխայ, նրա ծանօթ ձայնը լսելով, իսկոյն երեւակայում էր Ղաղօին, ահազին բարերեր տաշտը գլխի վրայ, եւ հրճուելով ասում էր՝ «Ճ ա՛ն ճ ու ը ը» եկաւ:

Եւ այդպիսով Ղաղօն սկսաւ կոչուել ճ ա՛ն ճ ու ը:

Աւելորդ եմ համարում մանրամասնաբար պատմել, թէ ինչ ճանապարհներով Հացի-Գէլի տղան, կամ լաւ եւս ասեւ, ծանձուրը, բարձրացաւ մինչեւ իւր հարստութեան վերին աստիճանը: Այսքանը միայն հարկաւոր է յիշել, որ նա իւր տասնեւեց տարեկան հասակում թողեց մրդավաճառութիւնը, եւ չգիտեմ ի՞նչ բախտով բազաղխանայի աշակերտ դարձաւ. այնտեղ սրամիտ կինսօն ոչ միայն կարճ ժամանակում կրթուեցաւ առեւտուրի արհեստում, այլ

մի քանի հարիւր մանէթ իր ձեռքն ձգելով, իւր համար փոքրիկ բաղադի խանութ բաց արաւ, կարճ միջոցում նա ընդարձակեց իւր վաճառականական ասպարէզը, եւ մեծակշիռ վարկ ստացաւ:

Իսկ անհաւատարիմ բախտը, որ առաջ այնպէս սիրելութեամբ ժպտում էր նրա երեսին, խղճալի ճանճուրին եւս հասցրեց իւր ծանրադին հարուածը: Մի դիշեր յանկարծակի հրդեհով այրուեցաւ նրա խանութը եւ նրա բաղմամեայ քրտինքը եւ աշխատութեան պտուղներն մի քանի բողկում անգութ կրակին զոհ դարձան: Ծանճուրը մնաց դարձեալ խեղճ եւ աղքատ:

Աւելորդ է խորամուխ լինել այն միջին գաղտնիքներէ մէջ, ուշադրութիւն դարձնելով չարախնդաց հասարակութեան բամբասանքներին, որոնցից ոմանք ասում էին՝ «հաւամ փուղի վերջն միշտ էտէնց կուլի», եւ ոմանք՝ թէ ինքն ճանճուրը դիտմամբ իւր խանութը հրդեհել է եւսյն: Միայն նրա բարեսիրտ պարտատէրներն, «Աստծու բանն է» ասելով, խիստ ներողամտութեամբ վարուեցան այդ դժբախտի հետ, եւ թումանին չորս ասպսի ստանալով, աղատեցին նրան բոլոր պարտականութիւններէց:

Այդ դժբախտութիւնն շտիպեց ճանճուրին ընդերկար ձգել իւր աղքատութեան լուծը. նա շուտով եղաւ դործակատար մի երեսելի կապալառուի մօտ, եւ քանի տարի ծառայելուց յետոյ, ինքն սկսաւ պարապել փոքրիկ կապալներով, եւ հետզհետէ ընդլայնելով իւր դործունէութեան շրջանը, նա իւր քառասուն տարեկան հասակից սկսած հազարների հետ էր խաղում մինչեւ իւր յիսունամեայ հասակը, երբ հանդիպում ենք նրան մեր վիպասանութեան մէջ:

Այժմ նա իւր կինտօի արհեստով ժառանգած ճանճուր մականունը կցելով իւր հօր Օհանէսի անուան հետ, կոչվում է «Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի ճան-

ճուր Իվանիչ» : Այդ անունով եւս մենք պարտաւորվում ենք նրան ծանօթացնել մեր ընթերցողներին :

Ճանճուր Իվանիչի տարիքը, որպէս յիշեցինք, անցել էին յիսունից . բայց ծերութիւնը դեռ ոչ բոլորովին ճնշել էր նրան : Նրա բարձր, հսկայակերպ ճակատը, միախառնուելով մարմնի զուգակշիռ լայնութեան հետ, ձեւացնում էր ահագին մեծութեամբ մի շարժական մսեղէն դունդ :

Նրա այլանդակ դէմքի վայրենի դժադրութիւնները խիստ կոշտ եւ սարսափելի էին : Լայն եւ մտտ երեսի վրայ, անկանոն կերպով, դրուած էին կնճռած խորշոմներէ ծալքերը, որոնք վերջանալով դուրս ցցուած ծնօտներով, եւ միախառնուելով վրացու պարկի նման ուռած պարանոցի մասնների հետ, ձեւակերպում էին Անդեղեայ Տորքի առասպելարանական կերպարանքը, — իւր թաւամազ յօնքերով, ահագին տափակ քթով, լայն բերանով, ուռած շրթունքով, որոնք, արիւնով լցուած երկու հատ սղորուկի նման, դրուած էին միմեանց վրայ, եւ դժնետեսիլ աչքերով, որոնք երկու սարդերի նման նենդաւոր կերպով նախում էին երեսի խորշոմների խորքից :

Այդ հսկայական դէմքի արտայայտութիւնները այնքան դժուար որսելի էին, մինչ անկարելի է որոշ կերպով նկարագրել նրանց . — նրանք երբեմն բացատրում էին վազրի վայրենի կատաղութիւնը, երբեմն սարսափելի մեռելային էին, որպէս մահ, եւ երբեմն անխորհուրդ յիմարական, որպէս անխելք աւանակի խաղաղասէր ուխտ :

Նրա երեսի դոյնին չէ կարելի որոշ նշանակութիւն տալ, որովհետեւ նա փոխվում էր, որքան փոխվում էին տարուայ եղանակներն : Այսինքն դարնան եղանակում նրա դէմքը ունէր մոլդ աղիւսի դոյն, բայց քանի մօտենում էր ամառը, այդ ազատ կարմրութիւնը պարզվում էր, հետեւաբար ընդունելով դորշ դեղնապղնձի բրոնզային սեւութիւնը : Իսկ աշունքի

ցրակերը խառնելով այդ դորշութեան հետ փոքր ի շատէ կարմրութիւն, նրա դէմքը ստանում էր լերդի դոյն: Իսկ ձմեռն աւելի լրջանում էր նա, եւ միեւնոյն ժամանակ նմանութիւն էր բերում հնդկահաւի գլխի դոյնին:

Բայց թէ ինչ հոգեբանական եւ բնագիտական դաղտնիք կար նրանում, այդ դժուար է բացատրել. մենք թողնում ենք ժամանակին եւ արհեստին լուծել այդ խնդիրը:

Նրա մարմնի կազմութեան մէջ աւելի հետաքրքրական մի երևոյթ էր ահագին փորը: Այդ բախտաւոր փորը, լաւ եւս ասել, այդ ամէն ապահանութեան մթերանոցը, վաղուց արդէն ծառայում էր Բաքոսի տարրին: Եւ կարելի է նախանձուելով, թէ ինչո՞ւ գինեաների ուսում բիքը կարող էին տանել իրանց մէջ այնքան հարիւրաւոր թունդներ այն օրհնեալ հեղուկից, որ շնորհում են Կախէթիայի որթերը, ինքն նոյնպէս աշխատել էր այնքան լայնանալ, դուցէ նրանց մեծութեանը հասանել: Բայց եթէ ճանճուր Իվանիչի փորը ունենար որեւիցէ զգացողութիւն, եւ պարտաւորութիւն կը համարէի կարգալ նրան Եզոբոսեան դորտի առակը, թէ այդ օրըստօրէ տարապայման ուռուցքը ոչ միայն չէր հասցնելու նրան իւր սիրելի նպատակին, այլ մի օր, շատ հաւանական է, պատճառելու էր սաստիկ պայթումն եւ տրաքոց՝ Միայն ցաւալի է ասել, որպէս ճանճուր Իվանիչը, նոյնպէս եւ իւր բարերախտ փորը, զուրկ էին ամենայն մարդկային զգացողութիւնից: Մենք բարւոք ենք համարում լուել, ի նկատի ունենալով որ նա շատ էլ փոքր մնացած չէր ուումրիից:

Արդարեւ այդ մտեղէն բլուրը ձեւացնում էր երկրագնտի վրայ մի անպիտան ծանրութիւն, բոլորովին անօգուտ մարդկային հասարակութեանը, այսուամենայնիւ իսպառ չէին կորցնելու նրա այնքան ջանքերը, հաստացնելու եւ պարտելու իւր մարմինը, որովհետեւ կու դար բախտաւոր օրը,

երբ ճճիք, զեռուները, օձերը եւ մողէսները նրա շնորհիւ կարող էին ամբողջ ամիսն խրախճան կազմել եւ քէֆ անել նրա զերեզմանում, ունենալով առատ ու լի սեղան: Այդ, իմ կարծիքով, աւելի կը նպաստէր միւս աշխարհում նրա հողւոյ փրկութեանը, քան թէ այն հողեհացն, որ որոշելով բազմաթիւ զոհերի արեան զնից, պիտի տային աղքատներին եւ հարուստներին նրա մահուան պատարագը կատարելուց յետոյ:

Ճանճուր Իվանիչի հազուստները ունէին առանձին խորհրդական յատկութիւններ, որոնք համապատասխան էին նրա կոշտ եւ անզեղասէր ճաշակին: Նրա սեւ մահուղի կարան, դուցէ կրում էր իւր վրայ այն հին ձեւը, որով առաջին անգամ երեւեցաւ այդ հազուստը վրայ Քարթլոսի ժամանակ: Մահուղի խաւը վաղուց մնաք բարեաւ էր ասել իւր դործուածքին, որ նրա փոխարէն ընդունելով իւր վրայ իւղի եւ կեղտի առատ մածոյքներ, այնքան կոկուել եւ փայլունացել էր, մինչ նա աւելի նմանութիւն ունէր մուշանրայի, քան թէ չուխայի: Նրա սեւ դատաքէ արխալուխը, մինչեւ վրիզ խնամքով կոճակած, նոյնպէս փայլում էր կեղտոտութիւնից: Նրա քերմանի շալէ գօտին՝ չկարողանալով շրջապատել նրա հաստ փորը եւ իւր սոփորական տեղը թողնելով, բարձրացել էր մինչեւ թեւքերի տակ, լաւ եւս ասել, կանգնած էր նրա կուրծքի վրայ: Նրա ոչ այնքան լայն շալվարը ունէր կրկնակի դոյն: Կարայից ցած բոլորովին մոլորեղեղնագոյն էր, բայց բարձրանալով դէպի վեր նա տակաւին կրում էր իւր նախկին սեւ գոյնը: Դրա պատճառը ո՛չ այլ ինչ էր, եթէ ո՛չ՝ կարայից դուրս շալվարի մահուղը, որ երկար տարիներ ենթարկուելով արեւի եւ անձրեւի ազդեցութեանը, զրկուել էր առաջին երանգից: Նրա շաքմէքը (կօշիկները), խարպի հմուտ դործ, կարծես թէ ամէն միւր մի երեխայի զերեզման լինէր: Նրանց նալերը (պոյտերը),

որք երկայն մեխերով ամրացած էին կօշիկների կրունկներին, իրանց մեծութեամբ պակաս չէին իշի նալերից: Իսկ գրանք անհրաժեշտ պէտք էին, որովհետեւ նրանց մեխերը բաւականին օգնում էին ձանճուր Իվանիչին իւր ահադին մարմինը անսայթաք ման ածել ցեխոտ եւ սառած դետնի վրայ:

Նրա սեւ բուխարու մորթէ գտակը յայտնի չէ, որքան ժամանակ ծածկում էր ձանճուր Իվանիչի ահադին գլուխը: Միայն հարկաւոր է մտածել, թէ ամբողջ տասնեակ տարիների ընթացքը միայն կարող էր ներդրածել նրա վրայ այն փաստակար ազդեցութիւնը, որով մորթը զրկուել էր իւր դուշից եւ մազերից, երեւացնելով գլազի վրայ անհամար թուով լերկ աստղիկներ, որոնք ծածկելու համար ձանճուր Իվանիչը ներկել էր թանաքով:

Տարուայ բոլոր եղանակներում այդ նուիրական գտակը տեսանելի էր ձանճուր Իվանիչի գլխին: Միայն դժուար է լուծել խնդիրը, թէ ինչպէս նա ամբարային սաստիկ սօթերում չէր զզոււմ որեւիցէ նեղութիւն այդ ահադին թարաքամայի մօթայի թանձրութիւնից: Բայց կարելի է համաձայնել, թէ նրա համար տանելի էր այդ ծանրութիւնը, որովհետեւ զգացողութիւն ասած բանը վաղուց արդէն անհետացել էր ձանճուր Իվանիչի սրտից:

Բայց տեսանելի էր, շատ անդամ ձանճուր Իվանիչը ամբարային սօթ օրերում, յոգնած եւ փոշոտած դառնում էր փողոցից իւր տունը, եւ նստելով թաղթի վրայ, երբ գլազը առնում էր, նոյն բուզէին, կրակի վրայ ջուր ածելու նման, թանձր շողիք վեր էին բարձրանում նրա գլխից: Այն ժամանակ նա իւր աջ ձեռքի ցուցամատը քարշում էր ճաղատ ճակատին, քրտինքի աղբերակների մակընթացութիւնը դետանում էր խորշոփների միջից, եւ իսկայն կազմվում էր մի փոքրիկ ջրվէժ, որ հեղվում էր նրա գլխից դէպի դետին:

Այնուհետեւ ճանճուր Իվանիչը սրբում էր թաց եղած ձեռքը եւ ճակատը իւր կարայի փէշով, ջրվէժը դադարում էր հոսելուց :

Միայն հարկաւոր եմ համարում խոստովանաբար ասել իմ ընթերցողին, որ թաշկինակ, կամ աղլուխ ասած բանը, վաղուց արդէն անծանօթ էին ճանճուր Իվանիչին: Միայն նա ունէր իւր դրպանում մի կեղտոտ լաթի կտոր, որով եւ քիթն էր սրբում, եւ առաւօտեան լուացուելուց յետոյ երեսը, որի մէջ երբեմն միրզ ամած բազարից բերում էր իւր երեխաներին :

Բ

Այսքան բաւական է ճանճուր Իվանիչի արտաքին կերպարանքի մասին, դառնանք այժմ դէպի նրա ներքին աշխարհի նկարագրութիւնը, այսինքն նրա հոգւոյ, մտքի, հանճարի եւ բարոյական կրթութեան պատկերները :

Բայց ի՞նչ բարութիւններ, ի՞նչ արդարութիւն, ի՞նչ ազնուութիւն, մի խօսքով, ի՞նչ ստաքինութիւններ կարելի է պահանջել այն մարդուց, որ խիստ մօտ էր սողում դետնին: Այսինքն մի ցած մարդ, որ պատրաստ էր իրան յարմարեցնել ամենայն ստոր եւ կեղտոտ հանդամանքների, ուր կային անձնական շահի նպատակներ: Այդ պատճառաւ կեղծաւորութիւնը, ստախօսութիւնը, երզումը, հաճոյամոլութիւնը, օտարի բարին յափշտակելը, ճանճուր Իվանիչը անխայթ խղճմասնքով ներելի էր կացուցել իրան, համոզուելով թէ առանց դրանց ո՛չ միայն չէր կարելի փող դատել, այլեւ կեանք վարել, կամ ապրել: Կշեռքում ծանր առնել եւ թեթեւը տալ, նրա հին արհեստն էր՝ սկսեալ իւր կինտօութեան կեանքից: Արշինում պակաս չափելը նա ուսած էր իւր բազազխանում աշակերտութեան օրերից: Իսկ կապալներում պէս-պէս խարդախութիւններ դործ դնել, ինժեներին կա-

չառելով խարել, արագում ջուր խառնել, թուեղ սպիրտի տեղ սալդաթներէն խմեցնել, դրանք կազմում էին նրա նորոգ գործունէութեան եւ արդիւնքներէ զլխաւոր աղբիւրները:

Այդպիսի պատուիրանազանցութիւններ ծանճուր Իվանիչի համար ներելի էին եւ փոշեատեսակ: Իսկ երբ պատահում էր նրան դործել խոշոր մեղքեր, այդ մասին նոյնպէս հող չունէր նա: Որովհետեւ կրօնքը շնորհել էր նրան խիստ դիւրին միջոցներ իւր հողին սրբելու: Տարին մի անգամ Աւագ Ծարաթի օրը, նա անխափան պարտք էր դրած իւր վրայ հաղորդուել Տիրոջ մարմնով եւ արեամբ, եւ նորոգել իւր քրիստոնէութեան կապը Աստուծոյ հետ: Հաղորդուելուց առաջ նա խոստովանում էր տէրտէրի մօտ իւր մեղքերը, եւ նրա խոստովանահայր քահանան այնքան բարի մարդ էր, որ առանց ծանր ապաշխարանք դնելու նրա վրայ, թողութիւն էր տալիս նրա յանցանքներին, մանաւանդ երբ խոստովանողը դադանի սողցնում էր նրա ձեռքում մի քանի ապասի, այնուհետեւ մեղքերի քաւողը պատրաստ էր արդէն նրա անունը յիշել իւր պատարագի մէջ եւ բարեխօսել նրա մասին Աստուծոյ առջեւ: Եւ այդ միջոցով ծանճուր Իվանիչը տարին մի անգամ թօթափում էր ժամտան անկիւնում իւր մեղքերի ծանրութիւնները, եւ սրբվում էր, որպէս սրբվում է սեւացած պղինձը կլեկազործի արհեստով:

Եւ այդպիսով ծանճուր Իվանիչը հասարակութեան մէջ իրան յայտնի էր կացուցել ո՛չ միայն իբրեւ մի բարեպաշտ եւ արդար հայ քրիստոնէսայ, այլ եւ որպէս մի բարեմիտ եւ պատուաւոր քաղաքացի:

Ի՞նչ էր արդելում նրան զրկուել այդ փայլուն տիտղոսներէց:

Նրա մեծակշիռ շարժական եւ անշարժ հարստութիւնը բաւական էր շնորհել նրան պատուաւոր քաղաքացիի համարումը: Իսկ նրա արտաքին բարեպաշտութիւնը, որով ան-

թերի լցուցանում էր նա իւր կրօնական ծէսերն, բաւական էին շահելու բարի քրիստոնեայի կոչումը:

Արդարեւ, ճանճուր Իվանիչը երբեք իւր կեանքում պաս չէր կերած, նա չէր լուծում սուրբերի տօները եւ կիրակիները: Եկեղեցու դռնից, կամ կամուրջի վրայից անցնելու միջոցին միշտ պատրաստ էր խաչակնքել իւր երեսը: Թեւէթի, Ծիրանաւորի, Նորաչէնի, Ջիզբաչէնի, Մողնու տօնախմբութեան օրերում նա ամենայն տարի իւր դերդաստանով դնում էր համբուրելու: Եթէ նրա որդիներից չիւանդանում էին եւ գուշակող պառաւը ասում էր, թէ այդ «խ է չէ մ է ն» է, նա առանց ուշացնելու, հիւանդին իւր մօր հետ, ուղարկում էր «Ղամիս թէ վա» Բէթղէհէմում, կամ մէյլնի եկեղեցում: Եւ այնտեղ այնքան մնում էին, մինչեւ սուրբը երազում նրանց հրաման էր տալիս տուն դառնալու:

Բացի դրանցից ճանճուր Իվանիչը ամէն շաբաթ սովորութիւն ունէր կիրակէ օրերն ժամ դնալ եւ պատարադ տեսնել: Նա եկեղեցին մտնելու ժամանակ գիտէր բոլոր ծէսերն, թէ որպէս պէտք էր վարուիլ Աստուծոյ ասն մէջ, այսինքն երբ ծունր դնել, երբ երեսն խաչակնքել, երբ երկրպագութիւն տալ, ողջոյնի միջոցին ի՛նչ ասել, հրաժարիմքի ժամանակ սատանային որպէս հայհոյել եւայլն:


Տեսնում ես, ճանճուր Իվանիչը ժամի մէջ կազնած է իւր սովորական տեղում (ի հարկէ ամենապատուաւոր տեղում). նրա հաստ շրթունքները շարժվում են, կարծես թէ կարդում է աղօթքի նման մի բան: Թէեւ նա դրաւոր աղօթքներ չգիտէ, բայց իւր սովորական լեզուով, նա չի դադարում իւր ջերմ խնդիրները վեր ուղղել դէպի Յաւիտենականի Աթոռը: Եթէ մինը ականջ դնելու լինէր, նրա աղօթքներին, անշուշտ լսելու էր այսպիսի խօսքեր. «Տէր Աստուծ, Գու հոգուն մատաղ, Դու նամարդի մօհթաջ շանիս, իմ

Երբեք չէր
կարծէր
այսպէս շատ
լինելու

առուստերին խէր ու բարաբաթ տաս, իմ դուրծքերին աջու-
 դութին տաս: Տէր Աստուծ, Քու հոգուն մատաղ, աղատիր
 ինձ օրուայ շառէմէն, հարեւնի բախիլէմէն, սատանի շարէ-
 մէն: Տէր Աստուծ, Քու հոգուն մատաղ, իմ դուշմնիրս
 փշարու, ով որ իմ վրայ վատ կուխօսէ, նրա լիղուն պա-
 պանձեցրու, ով որ իմ վրասին չալիշ դուքայ, նրա տունը
 քանդէ, ու էնպէս էլ Կունձու տղի ու ճուղուր Թաթուխի
 աչքերը հանէ, նրանց տունը բրիշակ արա՛ իրանց դլխին,
 վուրթիքը չար հրեշտակով սպանէ. նրանք ինձ շատ օյն
 էկան փօղբաթում: Տէր Աստուծ, փառք Քու ողորմութենէն,
 Դու ինձ շատ ես տուի, վուր ոչ մէկին արժանի չիմ,
 մազբամ Դու իմ Զանին սաղութին տու, իմ կինքը երկար
 արա, վուր էլի փուղ դադիմ, բալքա Միրզօի տղին հասնիմ:
 Տէր Աստուծ, իմ երեխերքս պահէ, նրանց խելք սորվեցրու,
 վուր Քիզ օրհնող ըլիմ: Տէր Աստուծ, իմ մամա Օհանէսի,
 իմ պապ Մղալօրի, իմ դէզի Փէփէլօի հոգիներն լուս
 դարձրու: Յետոյ կցում էր Տէրունական աղօթքը. —
 «Հայր միր, վուր երզին, սուրբ եղցի անուն Քու, եղեցի
 կամ Քո վուր պէս զի երզին. Հաց մեզ զանապաղօր տուր
 միզ այսօր, թող միզ զպարտս միզ պարտապանաց, ի մի
 տանիլ ըզմիզ ի շարէն, միզ ի փորձութին, զի քոյի ար-
 քայութին եւ դօրութին, փառք աւիդենից աւիդենաց. ամէն»:

Միով բանիւ, նրա աղօթքների մէջ կային ե՛ւ օրհնու-
 թիւն, ե՛ւ անէծք, ե՛ւ հոյհոյանք, ե՛ւ ամենայն ինչ...:

Ճանճուր Իվանիչը հասարակութեան կարգերի, կա-
 նոնների, սովորութիւնների մէջ ունէր իւր փոքրիկ քաղա-
 քավարութիւնները՝ Նա, չնայելով իւր մարմնի անհամե-
 մատ հաստութեանը, թեքուն եղէզնի նման ծալվում էր
 ամէն մարդու առաջեւ՝ թէ հարստի, թէ աղքատի, մա-
 նաւանդ աստիճանաւորի: Նա գիտէր օրուայ ամէն մի պա-
 հուն որպէս պէտք է ողջունել հանդիպողին: Նա գիտէր,



A II 30159

որ առաւօտեան պէտք է ասել. «բարի լուս», կէսօրին՝ — «բարեւ». երեկոյեան պահուն՝ — «բարի իրիզուն». երբ մութը պատում է աշխարհը՝ — «բարի գիշեր»: Նա գիտէր, երբ հանդիպում ես մինին, որ դործում էր, պէտք է ասել՝ — «բարի անողում», կամ մինը որ վաճառում էր, ասել՝ — «Աստուծ խէր տայ»: Նա գիտէր, որ տէրտէրին ասում են՝ — «օրհնեա՛՛ Տէր». բայց վարդապետին եւ եպիսկոպոսին ի՛նչ պէտք է ասել, այդ չգիտէր, որովհետեւ իւր կեանքում դրանց հետ գործ չէր ունեցել:

Ճանճուր Իվանիչը ճշտութեամբ կատարում էր իւր երկրում ընդունած քաղաքավարութիւնների եւ այլ կանոնները: Ձորօրինակ՝ մինը փոշտալու միջոցին ասել նրան՝ — «առողջութիւն». մինը, որ դառնում էր ուխտատեղից, հանդիպածին պէս, ասել՝ — «օղորմած կենայ». ինքը յօրանջելու միջոցին երեսը խաչակնքում էր, որ սատանաներ, կամ չար ոգիք բերնից չմտնեն իւր փորը: Եւ փողոցում երբ հանդիպում էր մեռելի յուղարկաւորութեան, դղակը առնելով, կանգնում էր, մինչեւ անց էին կացնում հանդուցեալը: Ինքը եւս. — «Աստուծ քու մեղքերին թողութիւն տայ» ասելով, շարունակում էր իւր ճանապարհը:

Ճանճուր Իվանիչը հայերէն ամենեւին կարգալ, գրեւ չգիտէր, եւ ո՛չ յարգում էր դրա հարկաւորութիւնը. որովհետեւ իւր փոքր ի շատէ վրացերէն դպրութիւնը, որով դրում էր իւր դաւթարները, բաւական էր նրան. դրանով նա, հայոց ասութեան ոճով, իւր էլը ցելից հանում էր:

Ճանճուր Իվանիչը, չնայելով իւր հասարակութեան մէջ նրա բազմահանճար զիտութեանը, համարեա՛՛ ոչինչ տեղեկութիւն չունէր իւր ազգային պատմութիւնից եւ հայերի կեանքից: Նա չգիտէր, թէ ինչո՞ւ ինքը կոչվում է Հայ, ուսկի՞ց էր իւր ծագումը, ո՞ւր է նրա հայրենիքը, ունեցե՞լ էին արդեօք հայերը մի ժամանակ անկախ տէրութիւն եւ

Ի՞նչ եղաւ հայերի անկման եւ խղճութեան պատճառը, եւ ի՞նչ միջոցներով պէտք էր ուղղել նրա դրութիւնը. ճանճուր Իվանիչը այդ մտածութեանց մէջ բոլորովին անդալայ էր, եւ իւր կեանքում երբեք ուշադրութիւն չէր դարձած, իւր կարծիքով, այդպիսի սնոտի հարցերի վրայ :

Նա, բայցի մի քանի առասպելաբանական աւանդութիւններէր, ուրիշ իրողական տեղեկութիւններ չունէր : Արայն փոքր ի շատէ համոզուած էր, որ հայի հաւատը լաւ հաւատ է նրանով, որ Լուսաւորիչը խոր վիրաւում օժերի եւ դաղանների մէջ կենդանի մնաց «Մրթատին» խողութիւնից մարդ շինեց, եւ հայոց կրօնի հիմքը դրաւ : Այլեւ նա դիտէր, որ հայի մեռոնը առանց կրակի է ելիւում, եւ Երուսաղէմ, հայոց տաճարում, սուրբ Յարութեան օրը, ամէն տարի լոյս է իջնում երկնքից : Բայց զնալ այդ լոյսը տեսնել եւ մահտեսի դառնալու ամենեւին ցանկութիւն չունէր. մին որ՝ ծախսից փախչում էր, մին էլ՝ լսած էր, որ Երուսաղէմում մի աղբիւր կայ, որի ջուրը մահտեսիքը խմածին պէս զգւում են, այդ պատճառով նրանք սարսաղներ են լինում . . . :

Այդ բոլոր մեր յիշածները ճանճուր Իվանիչի համար երկրորդական բաներ էին, որոնք նա, այլեւայլ հանգամանքներից ստիպուած, մտածում էր եւ գործում : Իսկ այն իրողութիւնը, որի վրայ նա հիմնել էր իւր բոլոր մտաւոր եւ հոգեկան ոյժը, որ նա համարում էր իւր կեանքի միակ նպատակը, — էր փողը : Փողը, ասում էր նա, կոյրին աչք է տալիս, կաղին՝ ոտք. փողը գէին խելք է տալիս, երկչոտին՝ սիրտ. փողը տկարին ոյժ է տալիս, գերիին՝ ազատութիւն. փողը սովածին հաց է տալիս, մեռեալին՝ կեանք. ուրիշ ի՞նչ հրաշքներ չէ գործում փողը . . . : Այդ պատճառով ճանճուր Իվանիչը Աստուածութիւնը երկու էր բաժանում. երկնքի Աստուածը, ասում էր, Քրիստոսն է, բայց երկրի

Աստուածը՝ — փողն է: Նրա համար պէտք է ապրել, նրան ամենայն յարգութեամբ պէտք է պաշտել, որովհետեւ առանց փողի մարդը զրկվում է մարդ լինելուց . . . :

Ճանճուր Իվանիչի այդ ասացուածներէ մէջ կայ փոքր ի շատէ ճշմարտութիւն: Բայց թէ մինչեւ որտեղ սխալ էր նրա կարծիքը փողի մասին, այդ թողնում ենք ընթերցողին ինքնին հարցասիրել, միայն մենք կ'աւելացնենք մի քանի խօսք, թէ արդար շահասիրութիւնը երբեք պարտաւելի չէ՝ մեր աչքի առջ ունենալով այն իրողութիւնը, որ ազքատի վիճակը խիստ սարսափելի է, եւ փողը առաջին դերն է խաղում մեր կեանքի մէջ . . . :

Գ.

Տիկին Բարբարէն, — այսպէս էր Ճանճուր Իվանիչի կնոջ անունը, — թէ իւր մարմնի կազմուածքով եւ թէ բարոյական, մտաւոր կողմերից, ձեւացնում էր բոլորովին ընդդիմադիր ծայրը իւր ամուսնու հետ, որին արդէն ծանօթ է մեր ընթերցողը: Նա էր մօտ քառասունամեայ մի կինարմատ, բարձր եւ ուղիղ հասակով, լիքը եւ առողջ մարմնով: Նրա դէմքի զծագրութիւնն ախորժելի էր եւ կանոնաւոր: Նրա մանկական զարունքի դեղեցկութիւնը տակաւին թողել էր աիկնոջ փափուկ թշերի վրայ փոքր ինչ դունաատուած վարդադոյն կարմիրը, բայց սեւորակ աչքերը դեռ չէին կորուսած իրանց նախկին փայլողութիւնը: Նրա դիտակը տակաւին, սեւ սաթի պէս սեւ էր, նրանց մէջ անդուժ ժամանակը արծաթաջրել էր հաղիւ նշմարելի մի քանի մազեր:

Նա հազնուած էր բաւական մաքուր եւ պատշաճաւոր կերպով: Նրա գլխի սեւ թաւիշեայ ծաղկազարդ թասակը աւելին, քողարկուած նուրբ չղարշով եւ կապած եռանկունի ծալուածոյ ատլասեայ թաշկինակով, բաւական վայել-

չացնում էր նրա բոլորակ դէմքը: Ուրից ցղլուխ նրա հագուստը համեստ մոյզ դոյնի էր: Մի սլլ դոյն նրա հագուստի մէջ բարակ մետաքսեղէն զօտին էր եւ դլխի զարդարանքը: Նրա կիսաեւրոպական եւ կիսասասիական տարազները, այնպէս նուրբ ճաշակով յարմարուած միմեանց, շնորհալի կերպով վայելչացնում էին տիկնոջ տարիքով հասունացած իրանը:

Որպէս ասացինք, իւր ամուսնուն բոլորովին հակառակ բնուտութիւն ունէր տ. Բարբարէն: Նա թէեւ ծանճուր Իվանիչի նման սնահաւատ էր եւ բորիկ ոտքով մինչեւ թ' ել է թ' համբուրելու էր դնում, թուրքի մորթած չէր ուտում, պասին մեղրով էր թէյ խմում, իւր զաւակները հիւանդացածին պէս դիմում էր հմայող եւ աղօթող պառաններին, երազների, մարմնախաղերի, կախարդութեան հաւատում էր, — բայց, տնտեսական կառավարութեան, ապրուստի եւ կեանքի ճոխութեան մէջ նա աւելի բարեկեաց եւ առատաձեռն էր քան իւր ամուսինը:

S. Բարբարէն մեծատան դուստր էր: Նա իւր տասնեւութ տարեկան հասակում ամուսնացաւ արդէն երեսունեւհինգ ամեայ ծանճուր Իվանիչի հետ: Նրանց պսակը չէր կապուած սիրոյ լծորդութեամբ: Բայց նրա ծնողները՝ ցանկանալով ունենալ ծանճուր Իվանիչի նման, իրանց կարծիքով, վաստակաւոր եւ քաղաքագէտ անձը փեսայ, գեղեցիկ Բարբարէին ձգեցին այն վայրենի գազանի ճանգերի մէջ, որին երբեք չկարողացաւ սիրել:

Նրանց առաջին զաւակները ծաղիկը տարաւ: Բայց Աստուած դարձեալ պարգեւեց նրանց երեք աղջիկ եւ մի տղայ: Աղջիկներէց մինը՝ — օրիորդ Սոֆին էր տասնեւութ տարեկան, միւսը՝ — Լիզան տասն տարեկան, երրորդը՝ — Ելենան ութն տարեկան: Իսկ արու զաւակը, օրիորդ Սոֆիից փոքրն էր, Գրիգօլ անունով, տասնւթեց տարեկան:

Նրանց զաւակներէց ո՛չ մէկը նմանութիւն չունէր ճանճուր Իվանիչին. նրանց ամէն մինը որոշ դոյն եւ կազմուածք ունէր: Օրիորդ Սոֆին կրում էր իւր մօր զեղեցկութիւնը եւ նրա մարմնի քնքշութիւնը: Լիզան մի գորշ սեւլիկ աղջիկ էր, ցամաք մեղամաղձական դէմքով, թուխ, փայլուն աչքերով, գանդրահեր գիսակով: Յլինան ձիւնի պէս սպիտակ դէմքով, շիկահեր եւ երկնադոյն կապոյտ աչքերով: Իսկ Գրիգօլը հիւանդոտ մի պատանի էր, տկար կազմուածքով, շագանակադոյն մաղերով, դունատ դէմքով եւ նուազած, սեւտրակ աչքերով: Այդ բազմազանութիւնը նրանց զաւակների մէջ առիթ էր տալիս զարմանալ, թէ ինչո՞ւ ճանճուր Իվանիչի նման Գողիաթից յառաջ եկաւ այդպիսի մանրիկ սերունդ: Բայց ո՞վ զիտէ բնութեան զաղտնիքները: Մինչեւ այսօր էլ այդ հարցը փնայել է անլուծելի, թէ ինչո՞ւ զաւակները ըստ մեծի մասին չեն նմանում իրանց հօրը . . . :

Ճանճուր Իվանիչի զաւակներէց ո՛չ մինը չգիտէր իւր ազգային լեզուն: Նրանց ընտանեկան խօսակցութիւնը վրացերէն էր: Թէեւ ճանճուր Իվանիչը եւ իւր կինը գիտէին փոքր ի շատէ կազ ու կոտոր հայերէն, բայց այն եւս խոսուած վրացի եւ թուրքի, ռուսի եւ այլազգի բառերով:

Նրանք այդ մասին բոլորովին անտոյթ էին, թէ ամէն մի անհատը պէտք է իւր ազգային լեզուն գիտենայ, սիրէ նրա զբաղանդութիւնը եւ կրօնական ու մտաւոր աւանդութիւնները: Այդ պատճառով նրանք ոչ միայն հող չէին տանում իրանց զաւակներին հայերէն ուսուցանել, այլ ցաւալի է ասել, արգելում էին եւս, մտածելով որ Հայոց լեզուն մի անպիտան լեզու է եւ այդ լեզուով խօսելն ամօթ եւ նախատինք էր բերում մարդուն, որովհետեւ զօկերին, զարարազցիկներին, երեւանցիներին, շանճրաղներին եւ կոծներին միայն ներելի էր խօսել հայերէն, որոնք, ճանճուր Իվանիչի կարծիքով, ստոր եւ կեղտոտ մարդիկ էին: Այդ պատ-

ճառով նա նախատինք էր համարում մի այդպիսի մոսյուրոս խուժանի բարբառով պղծել իւր զաւակներէ լեզուն, որոնք ո՛չ կոօ էին եւ ոչ շանճրազ, այլ «ԹինՓլիսի պատուաւոր քաղաքացու» զաւակներ :

Ճանճուր Իվանիչի գերդաստանի թւումն էին՝ — Գիւլէս իմերէլ ծառան, բարձրահասակ մի առողջ տղամարդ, զօրեղ կազմուածքով, վայրենի դէմքով, գայլի աչքերի նման վառվռուն աչքերով, խճճուած թանճր մազերով, եւ Թինա անունով օս ազախինը, նոյնպէս առողջ, հաստլիկ, ուռած թշերով, ոչխարի հեղ աչքերով եւ վայրենի եղջերուի միամիտ եւ խոնարհ սրտով : Թինային Ճանճուր Իվանիչը բերաւ կովկասի լեռներից՝ երբ գնացել էր այնտեղ բուրդ գնելու, փոքրիկ Գրիգօյիի համար ստնտու, ամսական երեք ուրբլի վարձով, եւ խոստանալով ամէն տարի մի ձեռք հալաւ տալ իւր կնոջ մաշուած հաղուստներից : Բայց հաւանելով լեռնաբնակ կնոջ հաւատարիմ ծառայութիւնը, Ճանճուր Իվանիչը չկամեցաւ բաց թողնել նրան, այլ բեռնաւորելով նրա մարդուն՝ Մերեթէլիին յիսուն ուրբլի պարտքով, խղճալի լեռնարձակի կինը կապուեցաւ անխղի շղթաներով պարտատիրոջ տան հետ. նա ստիպուած էր այնուհետեւ ծառայել այդ անտանելի դումարի տոկոսի փոխարէն միայն : Երկար տարիներ ողորմելի Թինան, ախ ու վախով յիշում էր իւր հայրենիքի ձրենաղարդ սարերը, կանաչաղարդ հովիտները եւ մութ մառախլապատ անտառները, բայց նա մի անգամ եւս չկարողացաւ տեսնել նրանց, քանի որ ճակատագրական պարտքը ճնշում էր նրանց : Նրա ամուսինը տարին մի քանի անգամ գալիս էր իւր կնոջ տեսութեան, բայց նա երբեք չէր երեւում նրա տիրոջ տան մէջ բոլորովին դատարկաձեռն, այլ ամէն անգամ բերում էր իւր հետ ընծաներ իրանց սարի բերքերից, որպիսիք են՝ թթու զկեռ, չորացրած հուն եւ երբեմն մի հնդկահաւ : Իսկ Ճանճուր Իվանիչը

նոյնպէս առատաձեռնութեամբ արձակում էր իւր հիւրը՝ գնելով նրա համար երկու արասանոց մի դոյզ տրեխ հին ռումբի կաշիից, եւ տալով նրան իւր մաշուած շապիկները, կամ արխալուխը, եթէ ամբողջ տասնեակ տարիների միջոցում դժբախտաբար վիճակվում էր նրանց մաշուել եւ թղթի գործարանի նիւթ դառնալ,

Տունը, որի մէջ բնակվում էին Հացի-Գէլենք, թէեւ հին էր, բայց բաւական ամուր եւ հոյակապ շինութիւն էր երեք յարկով: Ծանճուր Իվանիչը ինքը չէր շինել նրան, բայց համարեա՛ կէս դնով առել էր աճուրդում (տորդում): Նորա վերին եւ միջին յարկերը վարձով էին տուած, իսկ ներքին յարկի միայն կէսը վարձով կենդանի էին:

Սենեակները, որ ընտրել էին Հացի-Գէլենք իրանց կացութեան համար, զուրկ էին ամենայն շքեղութիւնից: Լուսամուտները նեղ, սպակիի փոխարէն թղթով կալած, պատերը պատած հասարակ թղթով, յատակի տախտակամածը մաշուած, դռները դոյնից զրկուած, պատուհանները՝ կոտրատուած, ձեւացնում էին որպէս մթին եւ խոնաւ գերեզմաններ: Եւրոպական կահ-կարասիք չկային այնտեղ: Վրաց թախաք, նրա վրայ ձգած մի քանի թերմաշ գորգեր եւ կարպետներ, անկիւնում փոշիով պատած Սուրբ Աստուածածնի պատկերը, կացուցանում էին բոլոր զարդարանքը սյդ տխուր ու մուսլուտ բնակարանի: Աւելացնելով դրանց հետ եւ մի հատ դայրա եւ դիւլլիւլիւտօն, որ խնամքով քարշ էին արուած հիւրանոցի պատից, որոնք լիզան եւ Ելենան, իջուցանելով իրանց նուիրական տեղից, կիւրակէ օրերը աճում էին, լեզդինկա էին խաղում, մի փոքր կենդանացնելով իրանց տխուր մեղամաղձական բնակարանի գերեզմանական լուսթիւնը:

Ծանճուր Իվանիչը, որպէս հասարակօրէն ասում են, «փողոցի մարդ էր»՝ նա աւելի ուշադրութիւն չէր դարձնում

Իւր տան անտեսական կառավարութեան վրայ, այլ սովորա-
 րար ամէն առաւօտ վաղ զարթնում էր, մինչդեռ նրա ըն-
 տանիքը քնած էին, շատ անգամ առանց թէյ խմելու, երեսը
 խաչակնքելով, տանից դուրս էր գալիս եւ դիմում էր բա-
 ցար: Նա գտնում էր իւր գործակատարներին իւր խանութը
 բաց արած եւ ամենայն ինչ կարգին դրած, նրանց հար-
 կաւոր պատուէրները տալուց յետոյ ինքը դուրս էր գալիս
 փողոց, ամէն մի հանդիպող մարդուն զլուխ էր տալիս, մի
 փոքր ծիծաղում էր, կեղծաւորվում էր, շախուշուխ էր
 անում. «գու իմ անդին բարեկամս ես» ասելով, հեռանում
 էր, իւր մտքի մէջ կրկնելով՝ «հէ՛յ շուն շան որդի» եւ այլ
 հայհոյանքներ դէպի «անդին բարեկամը»: Այնուհետեւ նա
 գնում էր դէպի մէյդանը, մանրամասնաբար հարցնում էր
 ալիբրի, սոխի, մօթալի, եւ ցօցխալի գները, եւ եթէ գտնում
 էր մի խեղճ թարաքամա, կամ վրացի, ուտելու ապրանքը
 ձեռքին շուար մնացած, ամբողջ ժամեր նրա հետ բաղար էր
 անում, մինչևէ զանազան յոյսեր տալով, խաբում էր այն
 միամտին, եւ խղճալու ապրանքն համարեա կէս գնով գնե-
 լով, մշակի շալակն էր տալիս եւ տուն ուղարկում: Իսկ
 թէ չէին պատահում նրան այդպիսի որսեր, «հէ՛հ, սով է
 եղել» ասելով, ունքերը կիտում էր եւ յուսահատութեամբ
 հեռանում մէյդանից:

Ճրագվառոցին Ճանճուր Իվանիչը տուն էր գտնում
 իւր սովորական թիւում եւ խոժոռած ուխով. թէյի մեքե-
 նան սպասում էր նրան թախտի վրայ: Նա առանց բարի իրի-
 կուն ասելու, կամ մինի հետ խօսելու, նստում էր: Մարսա-
 փելի էր նրա դրութիւնը, երբ նկատում էր տան մէջ իւր
 կամքին ընդդէմ փոքր ի շատէ լաւ, կամ վատ փոփոխու-
 թիւն. օրինակի համար՝ եթէ թէյը սովորական չափից շատ
 էին դրած եւ թունդ էր, կամ մի ճրագի փոխարէն վառվում
 էր երկուսը, եւ կամ մանդալի մէջ ածուխներն աւելի շատ

էին դրած, եւ այլ այդպիսիք: Նա, արջի նման կատաղելով, սկսում էր մրթմրթալ, եւ աղախնի ու ծառային կուշտ սրտով հայհոյելուց եւ իւր կնոջ ու զաւակների ուրախութիւնը խռովելուց յետոյ, նրանց թէյրմօպութիւնը զաւարտած ար էր շինում. եւ շատ անգամ իւր սրտի զայրոյթը թափելով շան, կամ կատուի վրայ, նրանց դիտին մի քանի գաւաղանի զարկ հասցնելով, թողնում էր խղճալի անասունները ցաւալի կերպով կաղկանձելիս, եւ առանց իւր թէյի գաւաթը խմելու, մրթմրթալով դուրս էր դալիս տանից եւ դիմում դէպի կլուբ, այնտեղ վաճառականների հետ տեսնուելու համար, եւ առեւտուրից, կամ կաղալիներից լուր լսել, մինի յաջողութեան վրայ տրտմել, միւսի անյաջողութեան վրայ ուրախանալ, եւ մի կողէկով նարդի խաղ անել ու ժամանակ անցկացնել:

Արդարեւ, ծանձուր Իվանիչը իւր տանից դուրս, հասարակութեան մէջ, խոնարհ էր, որպէս աւանակ, երկչոտ էր, որպէս նապաստակ, կեղծաւոր եւ շողոքորթ էր, որպէս կատու, եւ շողոմիջ, քծնուող էր, որպէս շուն, իսկ իւր ընտանեկան շրջանում, կատաղի էր որպէս արջ: Ճշմարիտ, այդպիսի մարդիկ, որ դրսում գետին են լիզում, ամէնի առջեւ ստրկաբար թեքվում են, ծարվում են, բայց դառնում են բռնակալը իրանց խեղճ ընտանիքի: Նրանք մի այլ առարկայ չեն գտնում նրա վրայ գործ դնելու իրանց վայրենի ոյժը եւ մտքի ցնորքը, քան իրանց տկար կենակիցը — խեղճ ամուսինը, եւ իրանց զերդաստանի միւս անդամները, որոնք ստիպուած են ստրկաբար հպատակել նրա կամքին: Բայց տիկին Բարբարէն զիտէր իւր ամուսնու բնաւորութեան բոլոր թոյլ կողմերը. նա միշտ նկատած էր, որ նրա բարկութեան ժամանակ որքան լուս, նա կը բորբոքի, իսկ երբ որ խստութեամբ պատասխանեցիր, նա արդէն ընդունում է իւր սովորական խոնարհ եւ կեղծաւոր կերպարանքը: Այդ պատ-

Հասոյ մ. Բարբարէն ուշադրութիւն չդարձնելով իւր ամուսնու խտտարտութեանը, շատ անգամ կարողանում էր դորձադրել իւր իշխանութիւնը եւ կամքը տնտեսական եւ ընտանեկան պիտոյքների եւ յարարերութիւնների մէջ, թէեւ դրա համար նա ստիպուած էր վարել մի անխղելի պատերազմ ճանճուր Իվանիչի կամքի դէմ:

Դ

Բայց մի դիչեր, ուսկից սկսվում է մեր վէպը, Հացի-Գէլենց տան մէջ տեսանելի էր արտաքին կարգի փոփոխութիւններ: Կարծես թէ նրանք պատրաստուել էին հարսանիքի, կամ թէ սպասում էին ընդունել մի պատուաւոր հիւր: Այդ պատճառով սենեակները լուսաւորուած էին սովորականից աւելի ճրագներով, յատակի տախտակամածը մաքուր լուսացուած էր, դորդերը, որ ամբողջ տարին ծալուած, մտռանում դրուած էին եւ բացվում էին միմիայն տօն օրերը, այսօր սիւսած էին: Լիզան, Ելենան, Գրիգօլը, Քիտէսը եւ Թինան, մաքուր հագնուած էին, մի քանի հիւրեր, իրանց դրացի աղջիկներից, կնիկներից եւ մերձաւոր աղագականներից թուշում էին այս կողմ եւ այն կողմ, միով բանիւ, ամենուրեք տեսանելի էին ուրախ դէմքեր եւ լսելի էին ծիծաղի ձայներ, որ մի օտարոտի երեւոյթ էր այն թախծալի բնակարանի մէջ: Բայց միեւնոյն անփոփոխ այն տան առարկաներից մնացել էր ճանճուր Իվանիչի տրտում եւ մոայլոս ուելը, որին կեանքի բոլոր ուրախալի հանդէսները ազատել կարող չէին...:

Այո՛, Հացի-Գէլենք պատրաստուել էին ընդունել օրինորդ Սոֆիին, որ աւարտելով իւր ուսումը տեղային գլխաւոր իգական դպրոցում, այն օրը վարժարանի կեանքից փոխվում էր դէպի իւր ծնողների ընտանեկան կեանքը:

Տ. Բարբարէն ինքն էր զնացել օր. Սոփիին բերելու պանսիոնից :

Ճանճուր Իվանիչը իւր սենեակում նստած մի մարդու հետ խաղում էին նարդի :

Այդ մարդը կոչվում էր Սամիլ Պետրովիչ Թաթուխով :

Այդ պարոնը կը լինէր քառասունեւհինգ տարեկան, բարձր եւ լիքը հասակով, ալեխառն մազերով եւ հնամաշ հագուստով : Նրա բոլոր շարժումաձգի եւ խօսակցութեան մէջ նկատելի էր կեղծաւորի խորամանկ ձևերը : Արդարեւ Թաթուխովը յայտնի էր որպէս նոյն քաղաքի չարախնդաց բամբասողներէց մինը : Նա բոլորովին անգործ եւ պորտաբոյծ մարդ էր, եւ որպէս այն քաղաքի հասարակութեան կենդանի օրադիրը, առաւօտից մինչեւ գիշեր զանազան լուրեր ման ածելով, նա պատրաստ էր ամէն ծակ մտնել, ուսկից՝ ճաշի, խնջոյքի, հարսանիքի եւ մեռելի հոգեհացի, հոտ էր փչում :

Բայց նոյն գիշեր, Սամիլ Պետրովիչը չգտնելով մի իւզալի տեղ, ուր ընթրիքը խիստ ճոխ լինէր եւ սեղանը առատ, եւ նկատելով Ճանճուր Իվանիչի լուսամուտներից ճրագների վառուելը, այդ անսովոր երեւոյթն առիթ տուաւ նրան մտնել այնտեղ : Եւ նա չսխալուեցաւ իւր կարծիքի մէջ, երբ այն նշանաւոր ժլատի տան մէջ գտաւ մի օտարոտի հանդէս, որ կարող էր ծառայել նրա փորին :

— Լսել ե՞ս նուր խարար, Ճանճուր Իվանիչ, ասաց Թաթուխովը նարդիի զարը ձգելով. — ասում ին Պրուսը Փոանցուզի հիա կովում է, ու Փոանցուզէմէն մէ քանի քաղաք է առի :

— Խուսը՞, հարցրուց Ճանճուր Իվանիչը, չղաղարելով խաղալուց :

— Ձէ', Պրուսը, պատասխանց Սամիլ Պետրովիչը :

Ճանճուր Իվանիչը, ծանօթ չլինելով այդ օտարոտի անուան հետ, կրկնեց իւր հարցը.

— Պրուսը ո՞վ է:

— Նա էլ մի թաղաւոր է Եւրոպումը, պատասխանեց Սամիլ Պետրովիչը քաղաքագէտ մարդու ոճով:

— Է՛հ, թող մէկզմէկու միս ուտին, ի՛նչ մէր բանն է թաղաւորներու վրայ խօսիլը, ասաց սառնութեամբ Ճանճուր Իվանիչը եւ յօրանջեց իւր վիզը քորելով:

— Դադէթնիրում դրած էր, վուր Սէզանի մօտ մինձ կոխ է էլի, Նապոլէոնին գերի ին տարի հարիւր օխտանասուն ու հինգ հաղար սալդաթով, աւելացրեց Սամիլ Պետրովիչը:

Ճանճուր Իվանիչը, բոլորովին անկարեկից բացատրութիւն տալով իւր դէմքին, խօսեց.

— Ախա՞ր սատանի մօտ ի՞նչ գուրծք ունէր Նապոլէոնը, վուր գերի էր ննջնում. է՛հ, ի՛նչ կուզի անին, քիսէմէս ի՛նչ է գնում: Դուն մէր քաղկի բանն ասա՛, Սամիլ Պետրովիչ:

Արդարեւ, եթէ բոլոր աշխարհը քանդուելու լինէր, Ճանճուր Իվանիչին փոյթ չէր, միայն նրա կոպէկին մնաս չլինէր: Եւ Սամիլ Պետրովիչը՝ նկատելով որ նա ամենեւին համահրութիւն ցոյց չտուաւ իւր քաղաքական լուրերին, խօսքը փոխեց, ասելով.

— Էս էլ քիզ քաղկի թաղա խարար. լսի՛լ իս, Սաշուտովի տղէն, ասում ին, փօղրաթնիրում զարար է արի, ու էզուց տները տօրգով ծախում ին:

— Էդ լա՛ւ խարար է... կրկնեց Ճանճուր Իվանիչը դադարելով խաղալուց, եւ նոյն բողէում ուրախութեան նման մի բան փայլեցաւ նրա մեռած դէմքի վրայ:

— Քանի՞ է նրա խաղնի պարտքը:

— Քառսուն հաղար մանէթ:

— Էդ լա՛ւ է... կրկնեց ձանճուր Իվանիչը խորին ողեւորութեամբ :

— Ամա քառսուն հազար մանէթն էլ շատ փուղ է, է՛, պատասխանեց բամբասողը գլուխը շարժելով :

— Հողին դուս դայ, — նրա խօսքը կտրեց ձանճուր Իվանիչը, — նա շատ իր ասածի էր, ու վուսն իր լճէբի գորա չէր ձգում... :

Եւ նա մի քանի վայրկեան մտածութեան դնաց :

Մեզ յայտնի է որ ձանճուր Իվանիչի այդ լուռութիւնը որեւիցէ ցաւակցութեան զգացմունք չէր դէպի խղճալի Սաշուտովի տղան, որի որդիքը քանի օրից յետոյ սխտի գրկուէին հացից, այլ ընդհակառակն այդ մի խորին հողեզմայլութեան վրդովմունք էր, որ պատճառեց նրա սրտում բամբասողի անակրնկալ աւետիքը : Որովհետեւ ոչինչ լուր ձանճուր Իվանիչին այնքան չէր ուրախացնում, որպէս մի բոթարեր լուր որեւիցէ դժբախտի, երբ նա անյաջողութեան էր հանդիպում : Այդ նրա միակ բաղձալի ցանկութիւնն էր, երբ նրա համալիճակ, կամ իրանից բարձրաստիճան անձինք, ենթարկուելով զանազան փրասների, խոնարհէին, եւ ինքն դերիվերոյ դասուէր նրանց աւերման վրաստակների վրայ : Այդպիսի ցանկութիւններ ունեցողներն այնքան շատ են, որ ձանճուր Իվանիչը ձեւացնում է նրանց բաւական բարեխեղճ ներկայացուցիչը... :

Գոհ լինելով իւր լսած լուրից, ձանճուր Իվանիչը հրամայեց Քիտէսուն շուտով պունչ մատուցանել բամբասողին, եւ ապա հարցրեց .

— Էլ ի՞նչ կայ :

Բամբասողը՝ նկատելով իւր հաղորդած լուրի ուրախալի ընդունելութիւնը եւ լսելով պունչի անունը, աւելի ողեւորուելով, հաղորդեց իւր խօսակցին մի նոր աւետիք եւս .

— Էլ ի՞նչ դուզիս, ձանճուր Իվանիչ, Սօխրօի տղի

դուքանն էլ էսօր փեշաակցին, օխտը հաղար թուճնով կուտը է ննդի :

— Շատ լաւ էլ ին արի, նրա հէրն անիծած, պատասխանեց մի փոքր բարկանալով ճանճուր Իվանիչը. նա էլ իր չլումը չէր կենում : Դրա հօրը ես տեհել իմ հինդ կոպէկով Շէյթան փողոցէմէն ալուրի մէշօկը ինչկլի Վէրա կուտանէր. ամա, տղէն, կօսիս, թաւադ էր բլի, վուտները կտարուել է՞ր, վուր կառէթ էր պահում, դրօշկով էր ման դալի... կնկայ համա պլեանաէ քորոց ու օսկէ ցեպօշկա էր շինել տուի. ինքն էլ մէ նալ շիինքին քաշ տալու համա հազարնիրով մանէթնիր մխտից... :

— Ինչնց մարդու վերջն էլ էհէնց կուլի, կրկնեց Սամիլ Պետրովիչը. հօրէս էշքերթողի տղէն, մինք ամէնքս տեհել ինք, հէրը ծխում, մխում սիւցած մէ փոնչի էր, հիմի տղէն դրօշկով է ման դալի, ու բարօրի վօրօտնիկ ունէ... հա', քու դլխի պատուելը դիտենայ... էդուց քու վերջն էլ կու տեհնինք, եփօր վուր քու բարբառնն էլ կօծին... :

Ճանճուր Իվանիչը, չկամենալով տեղիք տալ բամբասողին կարծել իրան մի շարախնդաց մարդ, փոխեց խօսքը, տալով իւր մտածութեանը աւելի մարդասիրական կերպարանք :

— Էս ժուկումս, ասաց նա, դիփուճանքն էլ էհէնց ին դառի, Սամիլ Պետրովիչ, շանորդութինը սորվիլ ին. ով վուր քիտումը մէ քանի շահի փուղ է տեհնում, գօվում է ու էնդումէն դէնը դցում է անխիլ անխիլ դէս ու դէն մխտիլը, իժում եփօր տեհնում է վուր օխաէմէն չէ կանացի դայ, ուրիշ սատանութին է մօզօնում — ան կուտը է ննդնում, խալխի փուղիրն ուտում, ան թէ չէ Մոսկովէմէն դէս ու դէնէմէն հազարնիրով փուղ է տակն անում, իժում թուճնին երկու ապասի փուղ տալի իր պարտքանտէրերուն : Արա մէ ասա՛ դուն էն խիղճ փուղատէրիրը միղքը չի՞ն, ախար ինչի՞՞

իրանց չափով չին ժափ գալի, վուր վիրջը խարար չըլին, իրանց նամուսը պահին, ու վիրջը բխարուս չըլին:

— Մէ խօսքով, շատ դուրթ էք հրամայում, աղա, կրկնեց Սամիլ Պետրովիչը, խորին համակրութիւն ցոյց տալով. դրուստ է, կուտը ննդնողներէմէն շատիւր սատանութիւն ին բանեցնում. Լարլարու տղէն է՛հէնց չարա՞ւ, վուր հիմի ջուխտ տանտէր է դառի, ու փողոցումը էն դաղայ. դուքնիր ունէ էդ վո՞ւրդանցէմէն է, դիփ խալխի փուղը չէ՞:

Այս միջոցին Քիտէսը մատուցարանի վրայ բերաւ երկու մեծ բաժակ. մինը ընդունեց ձանճուր Իվանիչը, միւսը՝ Սամիլ Պետրովիչը: Մի փոքր տաքացնելով իրանց ուղեղը ողելից ըմպելիքով, նրանք կցեցին իրանց բամբասանքի թելը:

— Գիտե՞ս ինչէմէն է ըլում էտունք, Սամիլ Պետրովիչ, խօսեց ձանճուր Իվանիչը գործազէտ մարդու եղանակով. — դիփ հիմիկուան դատասանատներու միդն է: Էս միբօի սուղն վուր լուս ննդաւ, խալխի տունը ջլիղլան քանդուեցաւ: Մինք ուրախանում էինք, թէ հին սյօլիցերէմէն պրծանք, ամա էլի նրանց աղբաթը խէր ըլի: Ախար էդ ի՞նչ օրէնք է, քու փուղը աչքիդ առաջ ուտում ին, չիս կանացի վուչիինչ անի: Ումէն վուր փուղը իս ուղում, էն սհաթն սուղի դուռն է շանց տալի. գնում իս, գանդատ իս անում, տարի ին քաշիլ տալի. դիփուճանքն էլ զակօնը լաւ ին սորվի...: Է՛ս, միբօի սուղ, է՛ս օկրօժնի սուղ, է՛ս պալատ, է՛ս սենատ, էլ ո՞վ է իմանում ուրիշ ի՞նչ դա հրոսմար...: Տարիներով հէնց գնում իս, դալխս իս, փուղ է վուր գջլում ին... կինքդ մաշում ին, ինչկլի մէ խալօլի լիստ իս ձեռք գցում: Ուրախանում իս, թէ փուղս սաղացրի: Հա՛, քու հօրն օղօրմի, լաւ սաղացրի... Էնդումէն զէնը ասում ին՝ դէ՛, դու տեղը շանց տո՛ւ, մինք առնինք՝ Տօ անաստուծնիր, Էս վուրդանցէմէն շանց տամ՝ էդ շանորդի պարտականը, գանա, էն դաղա տուտուց է՞ր, վուր էս քանի

տարուամբ, հուլիսուամբ մէկ իմքին թողիլ է՞ր: Նա իր էլած չէ-
լածն առաջուց թաքցրիլ է, մուկը կնկայ վրայ հաստատիլ
տուի, դուքանը ուրիշի անումով է դրիլ տուի, իրան նրա
փոքաշիկ է շինի. հիմի ի՞նչ է մնացի, վուր ես շանց տամ:
Փնում իս տունը վիր դրում. երկու կոտրած սկամի, մէ հին
սաօլ ու մէ քանի ային-օյին բանիւր իս դտնում: Էստունը էլ
տանում իս թամամշովի քարվանսարի առաջ տօրդ իս
անում, սրիսթաւի փուղն չէ դուրս բերում: Թէ պարտա-
կանն էլ ծիր է, ան թէ մէ քանի լակոտնիւր ունէ, բիրթումն
էլ չիս կանայ բանիլ տայ: Ու թէկուզ բունիլ էլ տուիւր, ի՞նչ
լսէր. ջիրէմէդ կօրմովոյ պիտի տաս, նա էնդէ ուտէ ու
պառկի, դու կի տնքայ: Ձաղօնում ետուսուն հաղար մանէթի
համա, ասում ին, իրիք տարի պիտի բիրթում նստի. էս էլ
օրէ՞նք է. ախար էս ո՞վ չի անի:

Ճանճուր Իվանիչի այդ երկար քաղաքական նկատո-
ղութիւնը ընդհատեց Սամիլ Պետրովիչը, ասելով.

— Ետուսուն հաղար կողէկ տան ինձ, կօրմովոյ էլ
հիդը, ես շանորդի ըլիմ, թէ իրիք տարի բիրթումը չնստիմ.
էս ո՞վ չի անի. էստու վրայ էլ լաւ աշխատանք վճարդի
կանայ մարդ դտնի:

Ճանճուր Իվանիչը, իւր մտածողութիւնը իւր ժամա-
նակի օրէնսդրութեան վերանորոգութեան վրայ իսպառ վեր-
ջացրած չհամարելով, աւելացրեց.

— Էս խօսմ էհէնց է, Սամիլ Պետրովիչ, դրուստ է ձիւր
ասածը. մազրամ էս անիծած դաւիծախառնող աղփօկատ-
նիւրը չի՞ս ասում, միւր տունը ջլիդ քանդեցին, մարդու կաշի
ին քերթում, սատկած էչ ին պտուում, վուր նալնիւրն հանին:

Ճանճուր Իվանիչի խօսքն ընդհատեց փոքրիկ Ելենան,
որ ներս վազեց ուրախութեամբ, ասելով.

— Մամա, մամա, Սոֆօն դալիս է, — եւ կրկին շու-
տով դուրս թռաւ աղջիկը առանց հօր պատասխանին սպասելու:

Եւ արդարեւ, լսելի եղաւ ժօռեցող կառքի դռոցը, որ կանգնեցաւ նրանց դրան առջեւ, եւ մի քանի վայրկեանից յետոյ ներս մտաւ տ. Բարբարէն օր. Սոֆիի հետ, Ճանճուր Իվանիչի սենեակը:

Ճանճուր Իվանիչի զաւակները, եկուոր հիւրերը, կանայք եւ աղջիկները, բոլորը հաւաքուեցան այնտեղ:

Օրիորդը՝ դպրոցական սերտած քաղաքավարական ձեւերով ժօռեցաւ իւր հօրը եւ համբուրեց նրա աջը. հայրն էլ համբուրեց իւր դստեր ճակատը: Այնուհետեւ խիստ շնորհալի կերպով նա գլուխ տուաւ Սամիլ Պետրովիչին, բարովեց բոլոր հիւրերին, եւ ուրախութեամբ դրկեց իւր քոյրերին եւ եղբայրներին:

Ճանճուր Իվանիչը հարցրեց տ. Բարբարէից վրաց լեզուով, թէ ինչո՞ւ ուշացան նրանք: Կինը պատասխանեց նոյն լեզուով.

— Սոֆիի տեսուհին մեզ ուշացրեց. նա կարդում էր Սոֆիին իւր վերջին խրատները, թէ դուրս գալով ուսումնարանից, նա ինչպէս պիտի վարէ իրան հասարակական կեանքում:

— Այո՛, դրանք անշուշտ հարկաւոր են, կրկնեց Ճանճուր Իվանիչը. բայց ասա՞ց որ հօրն ու մօրը հնազանդ լինի:

Եւ հայրը խորհրդաւոր կերպով նայեց դստեր երեսին:

— Այո՛, ասաց. նա շատ բաներ ասաց, պատասխանեց տ. Բարբարէն:

Մի փոքր խօսելուց յետոյ տ. Բարբարէն, օր. Սոֆին, իրանց հիւրերի հետ, դնացին միւս սենեակը, ուր պատարաստուած էր թէյ եւ զանազան մրգեղէններ ու քաղցրաւունիք փոքրիկ խնջոյքի համար: Եւ Ճանճուր Իվանիչը իւր հիւրի հետ դարձեալ մնացին միայնակ:

— Ա՛յ, լաւ խիւղ իս արի, աղա, աղջիկդ ուսումի իս տուի, ասաց Սամիլ Պետրովիչը նրանց հեռանալուց յետոյ

Ճանճուր Իվանիչին: Աստուծ պահէ, շատ շուրջով աղջիկ ունիս. գրուտս վուր, հէստի ժամանակ է էկի, վուր առանց ուսումի աղջիկը մէ սիվ փուղ էլ չափէ:

— Թէ ինձ կու հարցնիս, պատասխանեց ճանճուր Իվանիչը մի փոքր տհաճութեամբ, աղջիկերանց համա ուսումը մէ հարկաւոր բան չէ՛, էնդուր վուր, ինչ զաղա կարգալ գրել սորվին, էնդաղա էլ սատանութիւնը աւելանում է: Ամա ի՞նչ անինք. անիծուի՛ էս ժամանակը. մօղէն էհէնց է գտուի. ինչկլի աղջիկը ունակ չէ խօսում, ինչկլի տանցաւատ չէ իմանում, լաւ օքմին թամահ չէ ննդնում:

— Էլի էդ լաւ է, ճանճուր Իվանիչ, էնդուր վուր ինչկլի հիմի տղէն աղջկայ փուղին էր թամահ ննդնում ու հիմի փուղի տիղը ուսումը կու բռնէ էլի՛:

— Ամա գիտի՞ս էս զահրուճար ուսումը քանի է նստում... Եիօր միտս իմ բերում Սօփօի վրայ մխսածս, ջանս դուղ է ննդնում... Ես էլ առաջ քիղպէս փիքը էի անում, թէ ուսումը աղջկայ բաժինքի թանխէն կու պակսեցնէ, ու էդ ումիկով Սօփօին վարժատուն տուի, ամա հիմի տեսնում իմ, վուր «կօճիս թոխան նստեցաւ...»:

Ճանճուր Իվանիչը իւր խօսակցութեան մէջ միշտ սովորութիւն ունէր դորժ ածել այդ այլազգի բառը՝ զահրուճար, որ նշանակում է օձի թոյն: Այդ բառով նա աւելի ճշտութեամբ կարողանում էր արտայայտել իւր սրտի տհաճութիւնը: Աշխարհի մէջ ամենայն առարկայ, որ դուրս էր քաշում նրա քսակից մի քանի կողէկ, զահրուճարի նշանակութիւն ունէր նրա համար. միակ սուրբ բանը բոլոր ստեղծագործութեան մէջ, որ հեռու էր այդ թոյնից, էր արծաթը:

Թաթուխովի դիտաւոր արհեստը, որով պարապում էր նա իւր քաղաքի մէջ, բացի լրտեսութիւնը եւ բամբասանքը, էր մօցիքուլուլութիւն, այլ խօսքով՝ աղջիկների առեւ-

տ ու ր ի դ ա լ ա լ ու թ իւ ն՝ Նա այդ արհեստով բաւական
գումարներ էր կարողանում ձեռք ձգել. իսկ այդ բոլորը նա
վատնելով կըլուրում խաղաթղթի վրայ, մնում էր միշտ աղ-
քատ եւ խեղճ: Նա նկատելով ձանձուր Իվանիչի վիշտը իւր
դասեր մասին, մխիթարեց նրան, ասելով.

— Դուն, ա՛ղա, Սօփօիդ համա իսկի փերքը մի՛ քաշի,
նրա համա մէ լաւ փեսայ ճարիւր իմ վզին. շատ վուխտ է նրա
դէիփ մէ քանի լաւ օքմիր ասիլ ին ինձ:

Ձանձուր Իվանիչը, այդ հին վաճառականը, այն կարգի
մարդկանցից չէր, որ ցոյց տար դնողին, կամ դալալին
(միջնորդին), թէ ինքը իւր վաճառքի մասին շիւտ է
մնացած, նա վաղուց էր սովորել միշտ մեծ արժանաւորու-
թիւն տալ իւր ապրանքին: Այդ պատճառով բաւական ան-
փոյթ կերպով պատասխանեց նա, թէ եւ մի եւ նոյն բոլէին
նրա սիրտը զգաց ինքնաբաւական ուրախութիւն, երբ լսեց
մօցիքուլի խօսքերը՝ «մէ քանի լաւ օքմիր ասիլ ին ինձ...»:

— Է՛հ, հալա ի՞նչ վուխտն է Սօփօի համա փեսայ
մտածել. բերնէն ջէր կաթը գնում է:

— Էդ մի՛ ասի, աղա, աղջիկը պահելու աղբանք
չէ՛. աղջիկդ չուտ մարդի տու, վուր իժում չի փօշմխ:

Ամբողջ ժամեր նրանք միասին այդպէս խօսում էին,
երբեմն բամբասանք, երբեմն չարախօսութիւն, երբեմն
դուարճախօսութիւն, մինչեւ ընթրիքը ուտելուց յետոյ թա-
թուխովը հեռացաւ Հացի-Գէլենց տանից:

Ե

Առաւօտեան ձանձուր Իվանիչը վաղուց մի բաժակ
կծովի թէյ խմելով՝ դնացել էր բաղար. Գրիգօյը ութ ժամի
կէսին դնացել էր գլինազիոն. տ. Բարբարէն պարապում էր
տնտեսութեամբ:

Այդ առաջին առաւօտն էր, երբ օրիորդ Սոֆին ազատուելով զպրոցի վաղորդեան դանդաղի հրաւիրական ձայնից, կամենում էր իւր ծնողական տան ծածկի տակ վայելել անոյշ եւ հանգիստ քուն: Բայց նրա քոյրերի կովոտցը, որոնք մի ժամ առաջ զարթել էին, դրան ճոռոցը, սպասաւորների սանաձայնը, խոռվեցին խեղճ օրիորդի հանգստութիւնը, եւ նա ստիպուեցաւ վեր կենալ անկողնից:

Նա շուտով լուացուեցաւ, սանրուեցաւ եւ հագնուեցաւ, եւ դնաց մօր սենեակը, ուր բոլոր գերդաստանը բոլորել էին թէյի սեղանի շուրջը:

Չմայլեցաւ տ. Բարբարէն, երբ ցերեկով ոտքից գլուխ չափեց իւր դասեր գեղեցիկ հասակը եւ նրա հիանալի դէմքը:

Արդարեւ, օր. Սոֆին այն գեղեցկուհիներէց էր, որ սակզձեւ կարող է միմիայն Կովկասի հրաշալի բնութիւնը: Նրա բարձր, ուղիղ եւ նրբակազմ հասակը, շնորհալի եւ սեղանձեւ ընթացքը, նմանութիւն էին բերում մի անտառային յաւերժահարսի, որի հպարտ եւ մեծաշուք կերպարանքը՝ Արքիմեդէսի քերիչը միայն կարող էր ձեւակերպել սպիտակ մարմարինի վրայ: Նրա դէմքը ունէր արեւելեան գծագրութեան բոլոր կանոնաւորութիւնը: Սեւորակ նշանձեւ աչքերը, երկայն թերթերունքներով եւ նուրբ աղեղնաձեւ յօնքերով սլատած, վառվում էին ինչպէս զոյգ աստղեր պարզ եւ ջինջ երկնակամարի վրայ: Նրա թաւ, վարսագեղ, սեւ սաթի նման դիտակը հիանալի վայելչութեամբ յարմարվում էր դէմքի յտակ դոյնին եւ քնքուշ կազմութեանը, որի վրայ արտափայլում էին գեղեցկութեան հազարաւոր հրապուրանքներ: Նրա ձայնը դանդաղի հնչիւն ունէր, եւ խօսելու միջոցին նուրբ շրթունքները նմանում էին ճղած վարդի կոկոնին, ուսկից ալեռանդ թերթիկները կախարդողապէս ժպտում էին մարդու երեսին: Նրա քաղցրիկ ծիծաղը տալիս էր նրա դէմքին աւելի ախորժելի արտայայտութիւն, երբ երկու փոքրիկ

փոսիկներ էին կաղձփում լիքը եւ վարդագեղ թշերի վրայ : Բնական սեւ խալը, նրա շրթունքի վրայ, ասես թէ կենդրոնացնում էր իւր մէջ մի գրաւիչ մոզական զօրութիւն, որով առաջին նայուածքից կարող էր ներգործել սիրախնդիր երիտասարդին իւր հրապուրիչ աղղեցութեամբ... : Նա շնչում էր մանկական դարունքի բոլոր քնքշութեամբ... :

— Ո՞րպէս անցկացրիր գիշերը, — հարցրեց նրանցից մայրը վրացերէն լեզուով, ախորժանօք նայելով դստեր երեսին :

— Բաւական հանգիստ, պատասխանեց օրիորդը անուշ կերպով . հայրական տան քունը քաղցր է, մայրի՛կ . միայն ես ներկայացնում էի ինձ, թէ դարձեալ դպրոցումն եմ, երազումս երեւում էին ինձ դասասները, ուսուսց լեզուի վարժապետը հարցնում էր ինձանից դասս, ես դժուարանում էի պատասխանել . իմ ընկերուհիքը ծիծաղում էին ինձ վրայ, ես ամաչելով կարճրում էի, բայց Լիզայի ձայնը զարթեցրեց ինձ, եւ ես նկատեցի, որ մօրս տանն եմ . շատ ուրախացայ, մայրիկ, որ իմ վարժապետից նուլ ստանալիս, յիշեցի որ երազ էր :

— Այդպիսի երեւակայութիւններ, իմ սիրեկան, ընդերկար չեն հեռանում դպրոցի աշակերտներից, երբ նրանք մտնում են հասարակական կեանքը, պատասխանեց օրիորդի մայրը : Գրիգօյն էլ, նկատում եմ, շատ գիշերներ խոտոված է լինում վարժարանի երազներով :

— Բայց քաղցր երազներ են դրանք, մայրիկ, խօսեց օրիորդը խորհրդաւոր ձայնով : — Նրանք յիշեցնում են դպրոցական անհող, մտաւորական կեանքը... :

— Ինձ էլ տուէ՛ք պանսիոն . մայրի՛կ, — նրանց խօսքը կրեց փոքրիկ Ելենան, անմեղ ժպիտով . — որ ես էլ տեսնեմ այդպիսի երազներ :

— Հա՛, աղջիկս, պատասխանեց նրան մայրը, յարգա-

քելով նրա գլխի մետաքսանման մաղերը, որ նոյն բոսէին թափուած էին փոքրիկ կուսի սպիտակ երեսի վրայ: Սոֆին կը սորվեցնէ քեզ ու Լիզային եւ յետոյ կը գնաք պանսիոն:

— Հա՞. կը սորվեցնե՞ս ինձ, Սոֆի—ջան, դարձաւ փոքրիկ աղջիկը դէպի եւր քոյրը, եւր կապուտակ աչիկները հարցական կերպով բանալով նրա վրայ:

— Կը սորվեցնեմ, իմ սիրեկան, երբ դու խելացի եւ աշխատասէր կը լինիս, պատասխանեց օրիորդը ժպտալով:

— Ես շատ խելացի եմ, էնպէս չէ՞, մայրիկ, կրկնեց փոքրիկ աղջիկը, դառնալով դէպի տ. Բարբարէն. ես ոչ մի ժամանակ չեմ աղտոտում իմ հագուստները:

Լիզան, որ այդ խօսակցութեան միջոցին ընկղմուած էր իւր սովորական մեղմադձական լուսթեան մէջ, կտրեց փոքրիկ քրոջ խօսքը երգիծարանօրէն, ասելով.

— Հա՛, դու շատ խելացի ես, սնա՛ւարծ, հայա՛րտ. օր չի անց կենայ, որ դու մի բան չկոտրես եւ հայրս չծեծէ քեզ:

Փոքրիկ Նլենան, վշտանալով քրոջ կծու նկատողութիւնից, ասաց նրան.

— Հա՛, դու շատ ուղորդ ես ասում... երէկ ես ի՞նչ էի կոտրել, որ մամէն թրակեց ինձ. բայց այն որ դու կոտրել ես, ասե՛մ...

— Դէ՛, լուռ, Նլենա՛, դու երբէք թոյլ չես տալ քեզ ջրտեսութիւն անել, սաստեց նրան օր. Սոֆին:

— Ես ոչինչ չեմ ասում, բայց Լիզան միշտ ջգրացնում է ինձ, ասաց նա եւ լռեց:

Տ. Բարբարէն, որ իւր դուստրները բոլոր վիճարանութեան միջոցին ծիծաղելով նայում էր նրանց վրայ, գրկեց երկուսին եւս ասելով.

— Դուք երկուսդ էլ խելացի էք, իմ աղջիկներ, Սոֆին ձեզ երկուսիդ էլ կը պատրաստէ, եւ յետոյ կը տամ ձեզ

պանսիոն: Սոֆիի նման լաւ ուսերէն եւ փրանցուղերէն կը սորվիք:

Թէյը մտուցիւնը եւ նախաճաշիկը վերջացաւ:

Լսելի եղաւ դրան մուրճի զարկը:

Ծառան իմացում տուաւ, թէ մի օրիորդ կկել էր օր-Սոֆիի տեսութեան:

Օր. Սոֆին շուտով գնաց իւր սենեակը, եւ հրամայեց հիւրուհուն հրաւիրել այնտեղ:

Տ. Բարբարէն դիմեց խոհանոց պատուէրներ տալու Թինային, որ կատարում էր եւ աղախնի եւ խոհարարուհու պաշտօն: Ելննան առաւ իւր խրճիկը եւ դուրս եկաւ բակը խաղալու կեցողի փոքրիկ աղջկայ՝ Օլինկայի հետ: Բայց Լիզան, դեռ պահելով փոքրիկ քրոջ ոխը իւր սրտում, սկսաւ վեր քաղել թէյի պարագաքները:

Օր. Սոֆիի սենեակում, որ եւ նրա ննջարանն էր, եւ հիւրանոցը, եւ կարինէտը, յայտնուեցաւ հիւրուհին, մի հասուն օրիորդ, միջակ հասակով, ուրախ դէմքով եւ բաւական վայելուչ կերպով հագնուած առանձին թիթեւ զգեստներով:

Նրա երեւոյթը լիակատար հաճութիւն պատճառեց օր-Սոֆիին, տեսնելով իւր հին ընկերուհուն, որ երկու տարի առաջ աւարտել էր նոյն պանսիոնը, ուր ուսանում էր ինքը, եւ նրանք ուրախութեամբ դրկախառնուեցան:

Այդ օրիորդը նոյնպէս արմենուհի էր եւ կոչվում էր Անիշկա Եղորովնա:

Օր. Սոֆին մատոյց իւր ընկերուհուն մի հին աթոռ, որից երկու հատ միայն կար նրա սենեակում. այնպէս որ մի երրորդ անձն եթէ դար, ստիպուած պէտք է նրա մահճակալի վրայ նստէր:

— Ներեցէ՛ք, խնդրեմ, Անիշկա ջան, — ասաց նա ուսերէն — ես տակաւին որպէս մի օտարական հիւր եմ այս տան մէջ. մենք դեռ ոչինչ չենք կարգադրել իմ կացութեան

զանազան զուարճախօսութեամբ ծիծաղացնում է իւր ընկերուհիներին :

— Բայց Նատո՛ն :

— Նա էլ դեռ բանեցնում է իւր հին արհեստը, փոքրաւորներին կաշառելով, ծածուկ նրանց ձեռքով գրազրուութիւններ է անում, եւ ամէն ընդամենը պատրաստ է վաղել դէպի լուսամուտը, լսելու այն քաղցր մեղեդին Դոն-ժուանից, երբ նրա մտքի ցնորքը, գիշերային պահուն երգելով, անցնում է դպրոցի մօտից :

— Այդ, ճշմարիտ, շատ հետաքրքրական է, խօսեց Անիչկան եւ սկսեց ծիծաղել :

— Բայց նրա Կօջօրի այն անցքը ճշմարիտ է՞ր, հարցրուց Անիչկան բաւական հետաքրքրուելով ընկերուհու խօսքերից :

Օր. Սոֆին իւր սովորական քաղցաբարոյութեամբ ծիծաղեց :

— Ո՞վ ասաց քեզ, հարցրեց նա :

— Այդ ինձ ասաց Նինօն :

— Ա՛խ, ո՛րպիսի շաղակրատն է նա, Աստուած իմ. ամենեւին գաղտնիք պահել չգիտէ :

— Մեր մէջ ի՞նչ գաղտնիք, ասա՛ ինդրեմ :

— Այնու ամենայնիւ չէ կարելի ամէն ինչ հրատարակել ...

Անիչկան տեսաւ, որ իւր ընկերուհին ընդունեց բաւական պատկառելի ձեւ, սկսաւ նրան թախանձել, որ հանգամանօրէն պատմէ Նատօի անցքը :

— Դու արդէն լսել ես, էլ ո՞ւր ես կրկին հարցնում, ասաց նրան օր. Սոֆին :

— Կամենում եմ քեզանից լաւ տեղեկանալ. դու գիտես, որ շատ չէ՛ կարելի հաւատալ Նինօի խօսքերին :

Համար. նստի՛ր, խնդրեմ՝, հոգեակս, եթէ մեր ազտոտ
աթոռը չի կեղտոտիլ քո սպիտակ հագուստը :

— Այդ ոչինչ... պատասխանեց նոյն լեզուով օր.
Անիչկան: — Ես մինչ այն աստիճան նրբաճաշակ չեմ : Ես էլ
տեսել եմ առաջին անգամ այդպիսի կեղտոտ աթոռներ հօրս
տանը ... :

Եւ նա նստեց առաջարկած աթոռի վրայ, հին դրասե-
ղանի հանդէպ, որ իւր դոյնով եւ կաղձուկածքով համապա-
տասխան էր երկու աթոռների դոյութեանը, որ երկու տարի
առաջ ճանճուր իվանիչը հինգ մանէթով առել էր աճուր-
դում, Թամաճշովի քարվանսարայի առաջ, մտածելով որ մի
օր նրանք կարող էին հարկաւոր լինել դատերը, եւ նոյն օրից
թաղնուած էր մառանումը, փոքրիկ Ելենայի չարութիւն-
ներից զերծ պահելու համար :

Բայց օր. Սոֆիի թշերը շտապունեցան ընկերուհու
նկատողութեան պատճառով, եւ նա ասաց խիստ խորհրդա-
ւոր ձայնով .

— Այո՛, այդ այդպէս է լինում միշտ մեր կեանքի առա-
ջին հանդէպը դպրոցէն դուրս դալուց յետոյ ... :

— Բայց դու տակաւին մեծ պատերազմ ունիս պատե-
րադմելու հնամուլութեան հետ, մինչեւ կարգադրես ամէն ինչ
քո ախորժակին համեմատ :

— Կը փորձենք, ժպտալով կրկնեց օր. Սոֆին :

— Այժմ ասա՛, ի՞նչ նորութիւններ ունիս մեր աշխար-
հից. ի՞նչպէս են Սոնիչկան, Մական, Կատօն, Էփօն եւ մեր
միւս ընկերուհիները :

— Բոլորը քո տեսածին պէս. Սոնիչկան տակաւին ծու-
լանում է որպէս առաջ. Մական դեռ չէ՛ դադարում լուսա-
մուսներից թաքուն նայել դէպի շուկայ. Կատօն նոյնպէս
պահած ունի իւր բարձի տակ Տուրզենեւը, եւ Էփօն նոյնպէս

անքաղաքավարութեամբ էր վարուել իւր հիւրի հետ : Օրիորդը դուրս գնաց եւ հրամայեց ծառային սուրճ մատուցանել :

Բայց որովհետեւ այդ հիւրը մի անծանօթ բան էր Հացի-Գէլենց տանը, ծառան նոր գնաց փողոցից գնելու : Մինչեւ նրա գնելը, մինչեւ դրացիներից բովելու գործիք առնելով սուրճ բովելը, տեւեց ամբողջ երկու ժամ : Մի ժամ եւս հարկաւոր էր կաթ գնելու համար . բայց օր . Սոֆին խիստ տհաճութեամբ հրամայեց այնպէս տալ :

— Ի՞նչպէս են մայրդ, քոյրերդ, հարցրեց տ . Բարբարէն Անիչկայից վրացերէն :

— Փառք Աստուծոյ, առողջ են . մայրս ձեզ յատուկ բարեւ ունի, պատասխանեց նոյն լեզուով Անիչկան :

Անիչկան թէեւ արմենուհի էր, բայց դժբախտաբար նա էլ չգիտէր հայերէն խօսել :

— Շատ շնորհակալ եմ, պատասխանեց տ . Բարբարէն :

— Ձեր մայրը բարի կին է : Դուք եւս լաւ աղջիկ էք . ես ուրախ եմ, որ չէք մոռացել Սոֆին :

— Մենք վարժատանից սկսած սիրում էինք միմեանց, դէդի ջան, ասաց Անիչկան բարեսրտութեամբ :

— Աստուած պահէ ձեզ երկուսիդ էլ, կրկնեց տիկինը :

Եւ այնուհետեւ նա սկսեց պատմել նրանց իւր մանկութեան ժամանակի աղջիկների բարքի եւ բնութեան մասին, երբ ո՛չ ուսում կար եւ ո՛չ կրթութիւն, եւ թէ ինչպէս նրանք շատ պարզամիտ ու յիմարներ էին : Երկու օրիորդները բաւական ծիծաղեցան ասելով . — Հէնց հիմա էլ այդպիսի աղջիկներ սակաւ չեն մեր քաղաքում :

Սոյն միջոցին ներս մտաւ բարձրահասակ Քիտէսը սուրճի մատուցարանը ձեռքին : Քիտէսի ուղտի նման անշնորհ շարժումներից սուրճի սեւ հեղուկը կէս մասամբ գաւաթների ափսէների մէջ էր թափուել : Օր . Սոֆին նկա-

— Մենք մի օր առաւօտեան պահուն զնացինք դրօսանքի բոլոր աշակերտուհիներով. մինչև և մտանք անտառը, աշակերտուհիները ցրուեցան զանազան կողմեր եւ սկսան ոմանք ծաղիկներ քաղել, ոմանք վայրի մրդեղէններ: Յանկարծ նկատում ենք՝ Նատօն աներեւութացել է. մենք կարծեցինք թէ հարկաւորութեան պատճառով մեղանեց հեռացած պիտի լինի: Բայց երկար նայեցինք նա չդարձաւ: Վարժուհիները վրդովուեցան եւ կամենում էին որոնել նրան: Եւ խիղոյն կասկածանքի մէջ ընկայ, որովհետեւ առաջուց գիտէի նրա գաղտնիքը, եւ թոյլ չտուի վարժուհիներին որոնել նրան: Ինքս Նինօի հետ զնացի նրան որոնելու: Յանկարծ թիփրի միջից, ուր խիստ փակուած էին միմեանց, լսում ենք խշխշոց. հագիւ թէ կարողացանք մտնել այնտեղ, գտնում ենք Նատօին եւ նրան կատարեալ ումանական դրութեան մէջ . . . Նա խիղոյն անհետացաւ, թողնելով այնտեղ իւր շէնտպան. խի Նատօն մեր ոտքերն ընկաւ եւ սկսեց աղաչել, որ ո՛չ ոքի չտեսնէք մեր տեսածը: Ի հարկէ մենք ծածկեցինք վարժուհիներից եւ միւս աշակերտուհիներից այդ անցքը. բայց ահա Նինօն յայտնել է քեզ:

— Եւ վաղուց գիտէի նրա գաղտնիքները:

Երկու ընկերուհիների խօսակցութիւնն ընդհատեց տ. Բարբարէն, որ մտաւ իւր դստեր սենեակը: Անիշկան վերկացաւ, շնորհալի կերպով ձեռք տուաւ նրան եւ շնորհաւորեց օր. Սոֆիի ուսման աւարտելը եւ միւս անգամ իւր ծնողական տուն վերադառնալը: Տ. Բարբարէն շնորհակալ եղաւ եւ օրհնեց օրիորդին նրա բարեսրտութեան համար եւ կամենում էր նստել իւր դստեր մահճակալի վրայ, բայց օր. Սոֆին իւր աթոռը նրան տուաւ եւ ինքը նստեց այնտեղ:

Օրիորդ Սոֆին մինչ այն աստիճան մոռացուած էր իրանց խօսակցութեամբ, որ չէր մտածել մի բանով հիւրասիրել իւր ընկերուհուն. մայրը մտաբերեց նրան, թէ նա շատ

տելով այդ, բարկութեամբ մի կողմնակի հայեացք ձգեց վայրենի իմերէլի երեսին եւ ոչինչ չխօսեց:

Աննա եզորովեան բաւական երկար նստեց, նրանք խօսեցան այս եւ այն աղջկայ, այս եւ այն նորափեսի մասին, այս եւ այն հաղուտի վրայ. մի փոքր բամբասելուց, մի փոքր չարախօսելուց յետոյ օր. Աննան առաւ իւր փոքրիկ վարդազոյն հովանին եւ հեռացաւ:

Նրա գնալու ժամանակ. օր. Սոֆին խնդրեց շուտ շուտ յաճախել իւր մօտ: Օրիորդը շարժեց դուռը եւ ասաց նրա ականջին. — Էս միւս անգամ կը դամ քեզ մօտ, մեր խօսքը կիսատ մնաց . . . :

9

Աղատուելով դպրոցի փակուած վանդակից, այո՛, օր. Սոֆին մտաւ հասարակական կեանքի ընդարձակ ասպարէզը: Բայց Հացի-Գէլինց ընտանեկան շրջանը ո՛չ միայն անհամեմատ էր արտաքին աշխարհի պահանջմունքներին, այլ մի փոքր է շատէ կրթուած եւ կեանքի վայելչութիւններին սովորած օրիորդի համար, որպէս օր. Սոֆին էր, խիստ նեղ եւ նրա բաղձանքներին բոլորովին անդոհացուցիչ էր:

Մթին ու խոնաւ սենեակներ, անդարդ եւ համարեա՛ աղքատին կարասիք, անկանոն տնային կառավարութիւն, անկիրթ եւ կեղտոտ սպասաւորներ եւ այլ զանազան անյարմարութիւններ, առաջին օրից, անտանելի եղան օրիորդին: Գպրոցում կեանքի գաղափարական վայելչութիւններով միշտ հրապուրուած կոյսը որոնում էր արձակ կեանք, զուարճութիւն, եւ ցանկանում էր իրան շրջապատել այն ճոխութիւններով, որոնց երազներով միշտ հրապուրուած էր նրա երեւակայութիւնը:

Բայց դիտենալով իւր հօր խստասրտութիւնը, խղճալի

օրիորդը չէր համարձակվում յայտնել իւր ցանկութիւնները, եւ այդպէս տրտմութեամբ անց էր կացնում իւր օրերը, մինչեւ մի անգամ մայրը, դտնելով նրան միայնակ իւր սենեակում ընկղմուած խորին տխրութեան մէջ, հարցրեց .

— Սոֆի, դու օրէց օր մաշվում ես, քո դէմքը միշտ տխուր է . ասա՛, սիրեկան, չլինե՞ հիւանդ ես դու :

— Ես հիւանդ չեմ, մայրիկ, պատասխանեց օրիորդը յոգւոց հանելով :

— Ապա ի՞նչ է քո սրտի դարդը :

— Ոչինչ . . . տխրութեամբ պատասխանեց օրիորդը :

— Մի բան կայ, ասա՛, սիրեկան :

Եւ մայրը սկսեց նրան փայփայել :

Իսկ օր . Սոֆին պատասխանեց նրան բաւական զբալի եղանակով .

— Ի՞նչը կարող է ինձ ուրախացնել, որ չլինիմ տխուր . ես չըջապատուած եմ այնպիսի անյարմարութիւններով, որ ամաչում եմ մինչեւ անգամ տեսնուել ընկերուհիներին հետ :

— Ի՞նչպէս, հարցրեց մայրը զարմանալով :

— Այնպէս, որ ինձ եւս վերջապէս պէտք է ծանօթանալ արտաքին աշխարհի հետ եւ ըստ այնմ հարկաւոր է բարեկարգել իմ զրութիւնը, ինչ որ պահանջում են հասարակական կեանքի յարաբերութիւնները :

Մայրը համարեա ոչինչ չհասկացաւ այդ խօսքերից . նա կարծեց, թէ իւր աղջիկը ամուսնական ցանկութիւն ունի իւր սրտում : Այդ պատճառով ասաց .

— Այն որ դու ես ցանկանում, դեռ չուտ է, դրա համար քե՛զ մտածիր . միայն դու միշտ ի նկատի ունեցիր, որ քո մայրը բոլորովին անհող չէ քո մասին :

— Մայրիկ, դու բոլորովին չհասկացար ինձ, նրա խօսքը կտրեց կարմրելով օրիորդը : — Ես կամեցայ քեզ յայտնել բոլորովին այլ բան :

— Ի՞նչ բան :

— Այն, որ դու ինքդ էլ նկատում ես, թէ մեր սենեակները որքան անյարմար են իմ կացութեան համար. դու դիտես, որ ես այսուհետեւ երթեւեկներ շատ կ'ունենամ: Իսկ այսպիսի կեղտոտ տեղում չէ կարելի ընդունել մի օրինաւոր մարդու: Բացի սորանից ես տակաւին պատշաճաւոր հագուստ եւս չունիմ, որ կարողանամ առանց ամաչելու հասարակութեան մէջ երեւալ: Պէտք չէ՞ դրանց համար մտածել:

— Անպատճառ, իմ սիրելիս, ասաց նրան մայրը զգուշելով: — Այդ բոլորը, ինչ որ ցանկանում ես, դրէ՛ մի թղթի վրայ, որ չմոռանամ. երեկոյեան հայրդ երբ փողոցից կը վերադառնայ, ես կը խօսեմ նրա հետ եւ բոլորը կը կարգադրեմ:

Ուրախացած մօր յուսադրելով, օրիորդը վեր առաւ մի կտոր թուղթ եւ սկսաւ գրել իւր ցանկացած իրերի ցուցակը: Նա գրեց եւ գրեց, թղթի երեսը լքցրեց: Եւ սկսաւ կարգալ: «Առաջին անգամ այս շատ կը լինի, հարկաւոր չէ հօրս խիղոյն վախեցնել», ասաց նա իւր մտքի մէջ եւ սկսաւ տեղ-տեղ ջնջել ցուցակից ամբողջ տողեր: Վերջապէս նրանից արտագրեց փոքրիկ թերթի վրայ հետեւեալները.

1. Տեղափոխել մեր բնակութիւնը աների վերին յարկը,
2. ինձ համար առանձին սենեակներ որոշել այնտեղ, 3. գնել սենեակներին համար եւրոպական պատշաճաւոր կարասիք եւ մի հատ դաշնամուր, 4. հոգալ հագուստիս մասին:

Այդ թերթը դրուած էր վրացերէն, որ տ. Բարբաբէն ինքը եւս կարող էր կարգալ. մայրը առաւ թուղթն ու դուրս գնաց, խոստանալով որ գիշերը անպատճառ կը խօսէ ծանօճուր Իվանիչի հետ:

Այդ երեկոյեան ծանճուր Իվանիչը խիստ ուշ դարձաւ փողոցից, եւ տուն դալուց յետոյ նա չերեւեցաւ իւր ընտանիքին, այլ խիղոյն մտաւ իւր սենեակը: Այնտեղ նա սկսել էր

քրքրել իւր առեւտրական գրքերը, երբ տ. Բարբարէն ներս մտաւ եւ նստելով նրա մօտ, մի քանի այլ եւ այլ խօսակցութիւններէից յետոյ յայտնեց իրանց դատեր պիտոյքները եւ կարգաց նրա պահանջած իրերի ցուցակը :

Ճանճուր Իվանիչը խորին տհաճութեամբ լսելով կնոջ առաջարկութիւնները, նրա սարսափելի դէմքի վրայ երեւացին անախորժ արտայայտութիւններ :

— Գանա առանց էտունք չի կանայ եօլա—դնա Սոֆի^ոն, խօսեց նա իւր ուխը թթուեցնելով :

— Վո՛ւյ մէ, արուղօլաննի աղջիկը առանց էտունք վո՛ւնց կանայ եօլա—դնա, պատասխանեց տ. Բարբարէն խորին համոզմունքով :

Ճանճուր Իվանիչը մի քանի բոպէ մտածման մէջ ընկաւ :

— Լաւ. հադուստը ջէբ ասինք հարկաւուր է, չունքի սատանէքը կուխոռվին, եկոր աղջկերքը մօղիցը յիդ ննդնին, ասաց նա հեղնօրէն : — Մադբամ էդ մէկէլ չանչալէքն ի՞նչ դա հրօւմար ին, կրկնեց նա աչքի տակով նայելով իւր կնոջը :

— Գանա դուն չի՞ս գիդի, պատասխանեց տ. Բարբարէն դլուխը շարժելով :

— Սատանէն է խարար. ես ի՞նչ գիդենամ, խօսեց Ճանճուր Իվանիչը պինդ ձայնով :

— Է՛լի իծանիրդ մօդ էլա՞ն :

— Բա՛ս ի՞նչ անիմ, վուր չգժուիմ :

— Էստուրում ի՞նչ գժուելու բան կայ, վուր ուղում իս անպատճառ միծ մարաքա սարքիս :

— Ախար ես վո՛ւր ջուրը ննդնիմ, ձիւր վո՛ւր մէկ ասածը կատարիմ. մէկ չէ՛, էրկու չէ՛, հարուր չէ՛, հաղար չէ՛ : Ամէն օր հէնց ինձ նուր—նուր միխտերի մէջ իք դցում :

S. Բարբարէն նկատելով որ իւր ամուսնու բարկու-

Թիւնը չափից պիտի անցնի, մտածեց մի փոքր մեղմութեամբ խօսիլ .

— Ա՛յ մարդ, բաս դու չի՛շտ ես իմանում աղջիկ պա-
չի՛ւր, վուրդիք մինձացնի՛ւր . ինչկլի չիմի նրանց դարդը
քաշիլ ինք, էստուձէն դէնը էլի պիտի քաշինք : Նրանց վրայ
մխոսածը կորած չէ . Աստուձ ինքը կուհասցնէ :

— Դիա՛խ, կուհասցնէ . . . կնոջ խօսքը կտրեց ճան-
ճուր Իվանիչը իւր դէմքի խորշումներին ծաղրական ձեւ
տալով : — Թէ գիդենաս մինք ինչ օրով ինք փուղ դադում,
էն վուխոն է՛հէնց չիս խօսի . մագրամ դուք ինչէմէն իք խա-
րար . տանը դինջ նստիլ իք, չէնց ասում իք՝ բերէք ուտինք,
բերէ՛ք հագնինք . . . :

Տ . Բարբարէն սկսեց զարմացած կերպով ծիծաղել
ամուսնու սյդ խօսքերի վրայ :

— Լաւ, էս ի՞նչէմէն է, խօսքը յառաջ տարաւ ճան-
ճուր Իվանիչը, վուր մինք էսքան տարի ներքի ատէժումը
եօլա ինք դնացի, չիմի կի Սոֆին չի կանացի եօլա—գնա :

— Էնդումէն է, վուր Սոֆին ինձ ու քիզ նման չէ
սորվի, պատասխանեց կինը :

— Նա արուղօվաննի է հա՛ :

— Վո՞ւնց արուղօվաննի չէ, վուր օխտը տարի կինք
է մաշի, յուսում է սորվի . ոսնակ կուղիս, Փրանցուղնակ
կուղիս բուլբուլի պէս խօսում է . փորտօպիանը, քանի հաւ-
նիս, ածում է . երգ ասելիս՝ հրեշտակի ձէն է հանում .
տանցէվատը խօմ աղունակի պէս խաղում է : Դուն վո՞ւնց
դիդիս : Գանա՛ տանցէվատը լէզդինկա է՛, վուր աղջկերքը
դիպլիպլիտօն ածին, ու նա վիր կենայ կտուրի վրէն Թռչկո-
տի : Մագրամ տանցէվատի համա տեղը լէն ու բօլ կուղէ,
զարդարած դալ, նխած, մոմած պօլ կուղէ . . . :

— Ես ու իմ հուզին, լաւ վուտանավուր իս դիդացի,
կատակելով կնոջ խօսքը կտրեց ճանճուր Իվանիչը :

— Ձէ, դուն մասխարա դցէ, պատասխանեց տ. Բարբարէն վշտանալով:

— Ա՛յ կնիկ, ի՞նչի իս խիւղք տանուլ տուի. ես վո՞ւնց վերի աստժը դնամ, վուր կենացողմէն տարէն յիսուն թումնից աւելի փուղ իմ վի կայնում: Էդքան փուղը միւր վո՞ւր դարդին դիդ չի անի

— Մաշ Սոփօն էս քօխէքումը վո՞ւնց պիտի վեչէրնիր տա, տղերք ու աղջկերք մեձրէ ու բալ սարքէ:

Տ. Բարբարէի վերջին խօսքերը բոլորովին կատաղեցրին ճանճուր Իվանիչին, որովհետեւ վեչէրն ու բալը մտցնել նրա խաղաղ եւ չափաւոր ընտանեկան կեանքի մէջ միեւնոյն էր, եթէ մինն այնտեղ հրաւիրէր ժանտախտ կամ խոլերա:

Միայն ճանճուր Իվանիչը կամենալով հեռացնել իւր կնոջը, որի ներկայութիւնն այնքան անտանելի էր թվում իրան, ասաց մի փոքր մեղմութեամբ.

— Ա՛յ կնիկ, քու հօրն օղորմի, ես էդ թաւուր բաների գլուխ չունիմ. ի սէր Աստուծոյ իմ տունս մի՛ քանդի. ես վեչէր, բալ չիմ դիդի:

— Հիմի դուն ինձ ի՞նչ պատասխան իս տալի, վրդօ՞վուելով հարցրեց կինը:

— Գնա՛, խաթրջամ կաց, ես առուտէհան Սոֆիի համա բաղադխանից հագնելու կտուրնիր կուառնիմ, ու էս կիրակի էլ կհհամ եարմուկա մէ քանի հատ ստօլ, մի քանի հատ էլ սկամի կուառնիմ. հալիլայ խօմ ունինք. դորդ է կտրած է, ի՞նչ վնաս, շինիլ կուտամ: Մաղբամա, էն վուր ասում ես վէրի ասէժումը կենանք, էդ իմ խիւղքի բան չէ. թէ Գրիտուս ինքն ասէ, էլի դարուլ չիմ անի:

Լսելով այդ խօսքերը տ. Բարբարէի զժգոհութիւնը չափից անցաւ: Եւ նա ասաց գլուխն արհամարհական կերպով շարժելով.

— Պրծաւ զնա՛ց... Սոփիի աչքը լուս... : Ա՛յ մարդ , էս ժուկումս վո՛ւր արուստիւննի աղջիկը բաղադխանի ճօթերին լայեղ կ'օնէ . ու էնէնց էլ վո՛ւրը եարմուկի ստօլ , սկամի հաւան կուկենայ :

— Էն վուր դուն ես ուզում , մաշ ես պիտի երզնքէմէն գէ՛վէր բերիմ . էդ է էլի՛ր , պատասխանեց Ճանճուր Իվանիչը իւր վայրենի աչքերը լայն բանալով կնոջ վրայ :

— Է՛հ , դու մարաքա ես սարքում , ես քու գլուխ շունիմ :

— Մաշ ի՞նչ ասիմ , վուր քիչ դուր դայ . Բիշարի ու Բլօտի մաղաղէքը ամէնը առնիմ , ինձմէն շնորհակալ կուլիս , վո՛ւնց չէ... :

Տ . Բարբարէն ոչինչ չպատասխանեց , որովհետեւ նա վաղուց դիտէր իւր ամուսնու խտասարտութիւնը , միայն մտածեց որեւիցէ կերպով համոզել , որ նա դո՛նեա՛ կատարէր իւր դատեր մի քանի պահանջմունքները :

— Փօրտօպիանի համա ի՞նչ իս ասում , հարցրեց նա :

— Էդ ի՞նչ դա՛հ ր ու մ ա ր է , երեսը խոտոռելով հարցրեց Ճանճուր Իվանիչը , առաջին անգամ լսելով մի այդպիսի օտարտախ բառի անուն :

— Էն վուր ածում ին , պատասխանեց կինը , որովհետեւ ինքը նոյնպէս ստոյգ չդիտէր , թէ ի՞նչ բան է պիանօն :

— Էդ էլ Փրանցուղի ճիանուր կուլի , կրկնեց ծիծաղելով Ճանճուր Իվանիչը :

— Ձէ՛ , էն վուր մատնիրով ածում ին :

— Բա՛ս ան սաղ կուլի , ան թէ չէ սանթուր :

— Ձէ՛ , մէ մինձ զանդուկի նման բան է :

— Դէ՛ օխնած , սաս՛ օրդան , էլ ո՞ւր իս դէս ու դէն պցում : Լաւ , զանա Սոփին միտք ունէ օրդանչի դառնա , հա՞օ :

— Է՛հ , քիչ վուչինչով չի ըլի բան հասկացնիլ , խօսեց տ . Բարբարէն վշտանալով :

Է

Գալով իւր դստեր մօտ տ. Բարբարէն ոչինչ չասաց նրան իւր ամուսնու սենեակում անցածի մասին. միայն օրէորդը իւր մօր գէմքի տխուր արտայայտութիւնից եւ նրա վրդովմունքից դուշակեց, թէ նրա դեսպանախօսութիւնը իւր ուղածների մասին, անյաջող ընդունելութեան է հանդիպել: Բայց տեսնելով որ մայրը ոչինչ չի յայտնում իրան, ինքը եւս չուզեց բան հարցնել:

Թէ տ. Բարբարէն եւ թէ օր. Սոֆին այն դիշերը խիստ անհանդիստ անցկացրին:

Առաւօտեան Քիտէսը յայտնեց իւր տիկնոջը, թէ աղան դիշերը հեռադիր է ստացել եւ այսօր պատրաստվում է դնալ Կաւկայ, կապալիի գործի համար, եւ իրան հրամայել է որ ճանապարհադիր հանեմ եւ սայլակ վարձեմ:

Այս յանկարծակի լուրն իսկոյն փարատեց տխրութեան սեւ թախիծը, որ դիշերուանից սկսած կուտակուել էր տիկնոջ գէմքի վրայ, եւ նրա գեղեցիկ աչքերը վառուեցան ուրախութեամբ: «Թո՛ղ նա դնայ, ես գիտեմ, թէ ինչ կ'անեմ»... ասաց նա իւր մտքում:

Միայն ճանճուր Իվանիչը, առանց ոչինչ յայտնելու իւր ընտանիքին Կաւկայ դնալու մասին, վաղ առաւօտեան տանից դուրս եկաւ եւ դնաց փողոց:

Այնտեղ նա ամբողջ օրը հազիւ կարողացաւ կարգադրել իւր գործերը: Երեկոյեան հարկաւոր պատուէրները տալով իւր գործակատարներին, նա վերադարձաւ տուն, ուր ճանապարհորդական սայլակն սպասում էր դրանը: Նա ուղղակի մտաւ իւր սենեակը եւ իսկոյն հրամայեց Քիտէսին տեղաւորել սայլակի վրայ իւր ուղեւորութեան հարկաւոր պիտոյքները, իսկ ինքն սկսաւ քրքրել իւր թղթերը:

— Նա այս գիշեր է կամենում դնալ, հարցրեց Քիտէսից տ. Բարբարէն :

— Հրամմել էք, աղջիկ պարոն, պատասխանեց իմերէլը :

Տ. Բարբարէն թէեւ մի կողմից ուրախ էր իւր ամուսնու հեռանալու համար, բայց միւս կողմից նրա սրտին տիրեց խիստ ցաւեցուցիչ տհաճութիւն երբ տեսաւ որ իւր ամուսինն օտար երկիր է գիմում՝ առանց իւր կնոջն ու ընտանիքին յայտնելու իւր դնալու պատճառի եւ նպատակի մասին :

Նա ասաց Գրիգօլին, որ դնայ տեսնէ, թէ իւր հայրը ո՛ւր է դնում, եւ ինչի՛ համար :

Պատանի գիմնազիստը մտաւ հօր սենեակը :

— Դէպի ո՛ւր էք պատրաստովում դնալու, հայրեկ, հարցրեց նա :

— Զհանդամը, պատասխանեց ձանճուր Իվանիչը խորին վրդովմունքով :

Իւր հօր այդ կոշտ պատասխանից Գրիգօլի լեզուն կապուեց, եւ նա՝ սիրտը կոտրած, մի քանի բոպէ հօր վրայ նայելուց յետոյ դուրս դնաց նրա սենեակից :

Նա ասաց իւր մօրը, թէ ինչպէս պատասխանեց իրան հայրը :

ձանճուր Իվանիչի մի այդպիսի վրդովմունքը եւ ջ հանդամ բառը պատճառ տուին տ. Բարբարէին մտածել, թէ իւր ամուսնու կաւկայի կապալի դործերը պիտի անյաջողութեան հանդիպած լինին, եւ որ նրա մի այդպիսի յանկարծակի ճանապարհորդութիւնը ոչինչ բարիք չէ գուշակում :

Նոյն բոպէին Քիտէսը իմացում տուաւ, թէ ազան պատրաստովում է դնալու :

Տ. Բարբարէն, օր. Սոֆին եւ նրանց միւս զաւակները, դուրս դնացին նրան ճանապարհ գցելու :

Նա արդէն նստած էր սայլակի մէջ :

— Մուղայիթ կացէք, բճերքն ու քօժը բան չգողնան ու դուք էլ հիօու կացէք անխելք մխտելէմէն, ասաց նա իւր վայրենի հայեացքը ձգելով ընտանիքի վրայ, որ աւելի սարսուտիւրի էր գիշերային մթութեան մէջ:

— Քչէ՛, հրամայեց նա սայլապանին:

Ձիաները առաջ խաղացին, սայլակի զանգակները հնչեցին, անիւններն սկսան գլորուել փողոցի ողորկ քարայտակի վրայ:

Տ. Բարբարէն եւ իւր զաւակները, երկար կանգնած դրանք նայում էին նրա յետեւից, մինչեւ զանգակների ձայնը լսեց եւ սայլակն անհետացաւ գիշերային խաւարի մէջ:

Նրանք խորին տխրութեամբ դարձան տուն:

— Նա մինչեւ անգամ մնաք բարով էլ չասաց մեզ, մայրիկ, ասաց օր. Սոֆին ողորմելի կերպով նայելով մօր երեսին:

Մայրը ոչինչ չպատասխանեց, միայն աղջիկը տեսաւ, որ նրա աչքերից գլորվում էին արտասուքի խոշոր կաթիլներ:

— Ահա՛ ի՛նչ է նշանակում հին մարդիկ, կրկնեց օր. Սոֆին. նրանց մէջ չկայ ո՛չ ծնողական սրտի քնքուշ զգացմունք եւ ո՛չ մարդավայել քաղաքավարութիւն...

Օրիորդը մի քանի խօսքերով մխիթարելով իւր մօրը, գնաց իւր սենեակը:

Այդ գիշերը բոլոր Հացի-Գէլենք անցկացրին ցաւեցուցիչ տրտմութեամբ: Հօր խտասարութիւնն առաւելապէս զգալի եղաւ օր. Սոֆիին:

«Այս էլ աշխարհը... արդեօք ի՞նչ վայելչութիւն կայ սրանում»... ասաց նա յողոց հանելով եւ իւր գեղեցիկ դուխր թաղեց բարձի մէջ:

Բայց քունը երկար ժամանակ մօտ չեկաւ նրա աչքերին:

Ճանճուր Իվանիչի բացակայութիւնը թէեւ մի կողմից անախորժ տպաւորութիւն թողեց իւր ընտանիքի վրայ,

այսուամենայնիւ միւս կողմից նա պատճառեց տ. Բարբարէին բաւական մեծ հաճութիւն, որ ազատուեցաւ իւր ամուսնու վշտացուցիչ ծանրութիւնից, եւ օր. Սոֆիին, որին այնքան ատելի էր հօր ներկայութիւնը :

Հէնց Ճանճուր Իվանիչին ճանապարհ դրած գիշերուայ առաւօտը տ. Բարբարէն պատրաստուեցաւ օր. Սոֆիի հետ միասին փողոց գնալ՝ նրա խնդրած իրեղէնները գնելու : Թէեւ նա հարկաւոր դումարը չունէր պատրաստի, բայց ամբողջ քաղաքի խանութներում ճանաչում էին հարուստ Ճանճուր Իվանիչի կնոջը, եւ այդ պատճառով նա ամէն տեղ մեծակշիւ վարկ ունէր :

Առաւօտեան տաս ժամին նրանք կառք նստեցին եւ իրանց հետ առնելով Քիտէսին, դիմեցին գէպի Գուլովինսկի պրասպեկտ :

Նրանք նախ եւ առջ մտան մի Փրանսիացու մ ո ղ ն ի մ ա գ ա ղ ի ն . այդտեղ Փարիզի նորեկ մուսայի ձեւերով, որ ընդունուած էր քաղաքում, պատուէր տուին օրիորդի համար ոտքից գլուխ կարել մի քանի ձեռք հազուստ՝ պարահան-դէսի համար առանձին, թատրոնի համար առանձին, հասարակ օրուայ, զբօսանքի համար առանձին եւ տանը հազ-նելու համար առանձին, բոլորն այլ եւ այլ տարազներով եւ գներով : Կար անող Փրանսուհին չափերը վերցրեց, նրանք գրաւ տուին եւ դուրս եկան :

Այնտեղից անցան մի այլ խանութ, ուր գնեցին կօշիկ-ներ, դոյնղդոյն ձեռնոցներ, զանազան տեսակ դուլպաներ, հովանի, հովահար եւ այլ այդպիսի կանանց հարկաւոր իրեղէններ :

Յետոյ մտան մի այլ խանութ, ուր վաճառում էին եւ-րոպական կարասիք. այդտեղ գնեցին աթոռներ, բազիկ-թոռներ, սոֆա, զանազան տեսակ սեղաններ եւ այլ տնային կահ-կարասիք :

Այնտեղից էլ անցան մի այլ խանութ, ուր վաճառում էին գրութեան պիտոյքներ եւ դրասեղանի դարձեր. այդտեղ գնեցին՝ թանաքաման իւր պարազաններով, դեղեցիկ աշտանակներ, դրասեղանի ժամացոյց, բրոնզից կամ կաւճեայ փոքրիկ կիսարձաններ, զանազան պատկերներ, մեծ հայելիք եւ սենեակի այլ դարձեր, ինչ որ օրիորդի գեղասէր ճաշակին դուր եկաւ:

Ճանապարհին նրանք մտան մի այլ խանութ, ուր օրիորդը գնեց զանազան նկարներով գրելու թղթեր, զանազան տեսակ նոյնպէս նախշուն ծրարներ, որոնցով միայն սիրահարական նամակներ են գրում օրիորդները սիրուն տղաներին:

Բայց դաշնամուրի գնելը նրանք թողին միւս օրուան, որովհետեւ կէս օրից երկու ժամ արդէն անցել էր:

Նրանք դարձան տուն, մի քանի թեթեւ բան առնելով իրանց հետ կառքի մէջ, մնացածը թողնելով, որ Քիտէսը տուն բերէ:

Օրիորդ Սոֆին գտնվում էր իւր հոգու զուարճալի գրութեան մէջ:

Գալով տուն, նա դրկեց իւր մօրը եւ շնորհակալութիւն յայտնեց:

— Այսուհետեւ, մայրիկ, ես այլեւս չեմ տխրիլ, ասաց նա: — Միայն մեր դնած իրեղէնները մեր այժմեան կացարանին, ինքզ կը վկայես, խիստ անյարմար են:

— Այդ մասին դու անհո՛ղ կաց, սիրեկան, պատասխանեց մայրը: Ես այդ եւս կը կարգադրեմ:

Եւ նոյն բոպէին տ. Բարբարէն իրանց տան վերի յարկի կեցողներին մի տոմսակ գրեց, որ նրանք մինչեւ առաջիկայ չաբաթ օրը բոլոր սենեակները դատարկեն, հակառակ դէպքում նրանց դուրս կ'անեն ոստիկանութեան միջոցով:

Որովհետեւ, կեցողները պայմանեալ ժամանակով չէին

վարձած իրանց կացարանը, այդ պատճառով ընդունեցին տանտիկնոջ պատուէրը :

Քիտէսը իւր հետ բերեց բեռնաւորուած մշակների մի ամբողջ կարաւան, եւ ճանճուր Իվանիչի տան ներքին սենեակները լցուեցան բազմաթիւ խայտաճամուկ իրեղէններով :

Լիզան իւր սովորական մեղամաղձական լուռութեամբ, իսկ Նլէնան իւր բնական մշտազուարճ դէմքով, նայում էին նրանց համար խիստ գարմանալի իրեղէնների վրայ : Օր. Սոֆին ինքն էր տեղաւորում նրանց : Տ. Բարբարէն կանգնած նայում էր իւր դստեր գործունէութեանը :

Բայց փոքրիկ Նլէնան դիմեց նրան այսպիսի հարցով :

— Մայրի՛կ, այդ բոլորը ո՞ւմն են :

— Սոֆիինը, պատասխանեց տ. Բարբարէն ծիծաղելով :

— Հապա ի՞նձ, հարցրեց վշտանալով փոքրիկ ազջիկը :

— Դու ի՞նչ ես ուզում :

— Մի հետ նոր խրճիկ, պատասխանեց Նլէնան իւր սիրուն գլուխը շարժելով :

— Ձէ՞ որ դու արդէն խրճիկ ունիս :

— Ձէ՛, մայրիկ, նա լաւը չէ, կրկնեց գժգոհելով փոքրիկ ազջիկը : — Նրա աչքերը կապոյտ են, մազերը դեղին, ես չե՛մ սիրում : Ինձ համար առէ՛ք մի այնպիսի խրճիկ, որ Սոֆիի նման սեւ աչքեր եւ սեւ մազեր ունենայ :

— Ձէ՞ որ քո աչքերն էլ կապոյտ են եւ քո մազերը գեղնազոյն, կրկնեց մայրը :

— Իմ աչքերը կապոյտ են, իբրւ է, բայց մեր Թինան ասում է, թէ յետոյ կը սեւանան, Սոֆիի աչքերի նման կը դառնան :

Տ. Բարբարէն ծիծաղեց փոքրիկ դստեր պարզ մտքի վրայ :

— Բայց չե՞ս ուզի որ Լիզի աչքերի պէս լինին, հարցրեց մայրը :

— Զէ՛, չեմ ուզում. ես Լիզի աչքերից վախում եմ :

Իսկ Լիզան մի կողմնակի հայեացք ձգեց քրոջ երեսին, եւ արդարեւ նրա աչքերը նոյն բոպէին սարսափելի էին :

Մայրը սաստեց իւր երեխին, որ այդպէս չխօսի քրոջ վրայ եւ խոստացաւ նրա համար դնել մի խրձիկ, սեւ աչքերով եւ սեւ մազերով :

Ելէնան դուրս վազեց յայտնելու իւր մօր խոստմունքը իրանց դրացու աղջկան՝ փոքրիկ Օլինկային :

Ը

Օրը կիւրակի էր :

Հացի-Գէլենց տների վերին յարկում, ընդարձակ, բաւական ճաշակով դարդարուած դահլիճի մէջ օր. Սոֆին հոտաւէտ իւղերով օծուած կանգնել էր մեծ հայելու առջեւ. Փրանսուհի կար անող կինը հազցնում էր եւ ուղղում նոր զգեստները :

Նրա մայրը եւ քոյրերը ուրախութեամբ նայում էին նրա վրայ :

Երբ օրիորդը բոլորովին հագնուեցաւ, երկու անգամ անց ու դարձ արաւ դահլիճի մէջ, հրճուելով նայեց իւր վրայ հայելու մէջ, եւ ապա հարցրեց Փրանսուհուց նրա մայրենի լեզուով .

— Ի՞նչպէս է :

— Խիստ յարմար է, օրիորդ, պատասխանեց կար անողը :

— Խիստ յարմար է, նոյնպէս կրկնեց տ. Բարբարէն :

Օրիորդն այդ լսելով, աւելի ուրախացաւ, ժպտաց եւ շարձեալ կանգ առաւ հայելու առջեւ, եւ մի փոքր եւս իւր հազուստով հրճուելուց յետոյ, նա մօտեցաւ իւր մօրը եւ նրա ձեռքը համբուրեց ու շնորհակալութիւն յայտնեց :

Մայրը նոյնպէս գրկեց իւր դստերը, շնորհաւորեց նրա հազուատը, «բարով մաշեա» ասաց եւ մաղթեց նրա համար բախտաւորութիւն :

Կար անող կիներ հեռացաւ :

Ժամը տասն էր :

Օր. Սոֆին խնդրեց մօրից կառքով զնալ մի փոքր զրօսեցիլ :

Նա ցանկանում էր իւր նոր հազուատով այն օրը երեւալ քաղաքի հասարակութեանը :

Քառորդ ժամից յետոյ փառաւոր կառքը կանգնած էր դրանը :

Նրանք նստեցին : Կառքը սահեցաւ :

Երկու անգամ նրանք պտոյտ տուին Գոլովինսկի պրասպէկտով, յետոյ դիմեցին դէպի Մուշտայիդ :

— Այդ ի՞նչ ապրանք է, հարցրեց իւր ընկերից ուսերէն մի հայ երիտասարդ, բուլվարի վրայից ցոյց տալով օր. Սոֆիին :

— Ապրանքը արդէն հիանալի է... բոլորովին նոր եւ թարմ... բայց ափսոս որ վաճառողը հրեայ է... պատասխանեց միւս երիտասարդը նոյն լեզուով, մասներով իւր նորարոյս ընչացքի հետ խաղալով :

— Ո՞վ է այդ :

— Հացի-Գէլենց ծանճուր Իվանիչը :

— Ախսո՛ւս, կրկնեց առաջինը : Խանութն անմատչելի է :

— Այդ ոչինչ, պատասխանեց երկրորդը : Այդ աղջիկն ինքը ճանապարհ կը տայ յաճախորդներին :

— Այո՛, ասաց առաջինը, համոզուելով ընկերի խօսքերից. դա եւս կ'ընտելանայ մեր աշխարհի պիտոյքներին, թէ եւ այժմ անհամբոյր է նա իբրեւ վայրենի եղջերու :

Նրանք զրօսանքից դարձան թուն երկու ժամին : Ծանճուր Իվանիչի զնալուց յետոյ Հացի-Գէլենց տանը դարձա-

նայի փոփոխութիւններ եղան, որոնք խիստ ազդու ներգործութիւն ունեցան օր. Սոփիի ներկայ եւ ապագայ կեանքի վրայ: — Նրանց կացարանն ընդունեց կատարեալ գեղաճաշակ կերպարանք: Ճաշի եւ ընթրիքի սեղանը օր ըստ օրէ ճոխանում էր եւրոպական խոհարարի նուրբ եւ համազամ խորտիկներով: Մասաների թուին աւելացաւ եւ մի մանկահասակ սպասաւոր, կարճ Փրակով, սպիտակ ձեռնոցներով եւ ճոճոսան կօշիկներով, իւղած եւ կոկած գլխի մազերով եւ բաւական ախորժելի դէմքով: Աղախիւնների թուին աւելացաւ եւ մի մանուկ ուսուսչի օրիորդ, կլորիկ, սպիտակ, շիկահեր, մշտազուարճ դէմքով, Մաշա անունով: Ախոռատան բակում միշտ պատրաստ էր փառաւոր տնային կառքը, զոյգ կապուտիկ ձիաներով եւ մանկահասակ կառավարով, հասալիկ ու կարմիր թշերով, սեւ մազերով եւ սեւ աչքերով, մի բարձրահասակ տղամարդ, Կազանի թաթարներից:

Զրօսանքները թէ՛ կառքով եւ թէ՛ ոտքով ամէն օրուայ սովորութիւններ եղան: Գիշերուայ խնջոյքները, որ նրանք տալիս էին նրբաճաշակ քաղցրաւենիքներով եւ հազուադիւս մրդեղէններով, հռչակ ստացան բոլոր քաղաքում: Թատրոնում մի յատուկ լոժա օր. Սոփիի անուան նուիրական պատիւը ստացաւ: Կար անող Փրանսուսին եւ վարսայարդար եւրոպացի տիկիւնները սկսան շուտ-շուտ երեւալ այնտեղ: Միով բանիւ, Հացի-Գէլենց ընտանեկան եւ տնտեսական կեանքի պարզ եւ աղքատիկ բնաւորութիւնն ընդունեց նրբութեան եւ շոյլութեան բոլոր կործանիչ ձեւերը:

Բայց դրանցից եւ ո՛չ մինը չէր բաւականացնում օր. Սոփիի դաղտնի բաղձանքներին: Նրա սիրտը դրանցով դարձեալ գոհ չէր: Նա երբեք ուրախ չէր լինում: Նա, ասես թէ, որոնում էր մի այլ բան: Բայց ի՞նչ բան: Նա ինքը որոշակի կերպով չէր կարողանում բացատրել իրան: Միայն յարաժամ թախծալի էր՝ անցկացնելով անքուն գիշերներ:

Նրա օրերն անցնում էին խիստ դատարկութեամբ։ Առաւօտները շատ անգամ մինչեւ տասը, կամ տասերկու ժամը նա չէր դուրս դալիս իւր ննջարանից։ Երբ որ դուրս էր դալիս, նրա դէմքը երբեմն լինում էր խիստ դունատ, եւ դալկացած. նա տաղտկալի էր, եւ կարծես թէ ծուլանում էր շարժուելուց։

Նա լուացվում է, սրբվում եւ դիմում է դէպի հայելին, ամբողջ ժամերով չէ հեռանում նրանից. սանրվում է, օժիվում է եւ հագնվում։

Յետոյ մտնում է նա դահլիճ, մօտենում է դաշնամուրին, մի քանի բոպէ նրա քնքուշ մատները խաղում են ստեղունքների վրայ. նա երգում է, ողևորվում է... բայց յանկարծ, որպէս թէ նրա սրտի կրակի վրայ սառը ջուր անէին, նրա միտքն է ընկնում մի բան, եւ նա դադարում է երգելուց... եւ խորասուզվում է խորին մեկամարդձական լուսութեան մէջ։

Այնուհետեւ նա մտնում է իւր առանձնասենեակը, կանգնում է մի պատկերի առաջ, որ դրած էր նրա գրասեղանի վրայ, եւ երկար հիացմամբ նայում է վրան։ Նրա միտքից անցնում են հազարաւոր մտածմունքներ... նա ժպտում է... նա համբուրում է պատկերը... եւ ապա թաքցնում իւր խորհրդաւոր պահարանի մէջ։

Նա նստում է գրասեղանի հանդէպ, առնում է մի գիրք եւ կամենում է զբաղուել ընթերցանութեամբ։ Մի քանի բոպէ նրա գեղեցիկ աչքերը վազում են ապած տողերի վրայով։ Յանկարծ փողոցից լսվում է մի կառքի ձայն։ Նա ձգում է գիրքը եւ վազում լուսամուտի հանդէպ։ Նայում է՝ եթէ անցնողը մի ծերունի աստիճանաւոր է, կամ մի վաճառական իւր իւղոտ Փուրաշկով եւ սեւ կարայով, ձեռքով միճկին կնքում է նրա ետնից եւ երեսի վրայ մի քանի արհամարհական ծամածուծութիւններ գործելով, տհաճութեամբ

վերադառնում է իւր տեղը: Իսկ եթէ անցկենողը մանկահասակ երիտասարդ է, փառաւոր հազնուած եւ վայելուչ կերպով թեք ընկած կառքի մէջ, իւր վարդազոյն շրթունքներով բռնած բարակ պապիրոսը, — նա կանգնում է, նա երկար ու երկար նայում է նրա վրայ, մինչեւ կառքը հեռանալով բոլորովին անհետանում է:

Նա այլեւս չէ հեռանում այն նուիրական լուսամուտից:

Նա տեսաւ որ մօր հետ անցնում է մի մանուկ օրիորդ, գեղեցիկ հազնուած, երերուն քայլերով. նրա հազուստի՝ ոչխարի դմակի նման ուռուցաւոր ձեւը հիանալի պճրանք են տալիս նրա ընթացքին: Օր. Սոֆիին դիւր է դալիս մի սյղպիսի արհեստական ձեւը: Նա վազում է դահլիճը, մօտենում է հայելուն, փորձում է ինքը եւս մի այնպիսի ձեւ տալ իւր իրանին: Նա կորանում է... Մի քանի անգամ անցուզարձ է անում հայելու առջեւ: Ուրախանում է... ժպտում է նա...: «Այսպէս լաւ է», ասում է նա իւր մտքում, եւ կարծես թէ ինքը իւր վրայ սիրահարվում է...:

Նա դարձեալ գիմում է դէպի նուիրական լուսամուտը:

Անցնում է մի այլ օրիորդ, որի հազուստի դոյնը եւ ծալուածոյքը իւրի նման չեն, նրանք բոլորովին այլ ձեւ ունին: Հաւանում է այդ օր. Սոֆին եւ հետաքրքրվում է գիտենալ, թէ այդ ո՞ր մաղաղինում է կարուած: Եւ միեւնոյն բոպէին ախտոտում է նա, թէ ինչո՞ւ ինքը եւս այնպէս չէ կարել տուել:

Կամ թէ տեսնում է նա մի օրիորդ, որի շագանակազոյն գիտակը խիստ թանձր է, կամ նրա աչքերը բաց երկնազոյն են եւ կամ նրա դէմքը խիստ դուռնատ է. դրանք նոյնպէս դրաւում են նրան, եւ նա տխրում է, թէ ինչո՞ւ իւր թշերը վարդի դոյն ունին, կամ իւր աչքերը սեւորակ են, եւ դլխի դիտակը սեւ սաթի նման, բայց ո՞չ անքան թանձր,

որպէս այն օրիորդինը, չմտածելով որ նրա դիտակի մէջ մի բաթման կեղծծած է դրած :

Եւ այդպէս՝ մեր փոփոխամիտ հերոսուհին ոչինչ բանով դո՛հ չէ : Նա չունի կիրթ ճաշակ դէպի գեղեցիկը, դէպի պատշաճաւորը եւ դէպի վայելուչը : Ամէն մի նոր երեւոյթ, ամէն մի նոր առարկայ, ծնեցնում էր նրա սրտի մէջ նորանոր ցանկութիւններ :

Արդարեւ, մի այնպիսի սեւաթորմիկ գերդաստանի զաւակը, մեծացած հասարակ ընտանեկան շրջանի մէջ, որպիսին Հացի-Գէլէնք էին, երբեք չէր կարող ունենալ կրթուած ճաշակ : Իսկ դպրոցի փակուած վանդակում նա չէր կարող ծանօթանալ արտաքին աշխարհի հետ : Այդ պատճառով նրա սրտում չկար ոչինչ հիմնաւոր բան, այլ ցնորական եւ երազամոլ երեւակայութիւններ միայն :

Ահա՛ այդպէս դատարկութեամբ էին անցնում մեր հերոսուհու օրերը :

Թ

Մի օր առաւօտ օրիորդ Սոֆիի մօտ եկաւ Աննա Եզորովնան :

Մանկահասակ օրիորդը տեսնելով ընկերուհու կացարանի փառաւոր զարդարանքը եւ նայելով իւր չորս կողմը ժպտալով նրա ձեռքն առաւ եւ ասաց ուսուերէն :

— Այժմ արդէն կարելի է շիկ տալ . . . :

Օր. Սոֆին նոյնպէս քաղցր ժպտալով, պատասխանեց նրան .

— Այո՛, այժմ կարելի է ասել, թէ ապրում ենք . . . :

Նրանք հարցնելով միմեանց առողջութիւնը, եւ ընդունելութեան սովորական ծէսերը կատարելուց յետոյ, օր. Սոֆին ման ածեց իւր ընկերուհուն բոլոր սենեակները, ցոյց տուաւ նրան իւր գնած իրեղէնները եւ իւր նոր հազուստները

մինչև վերջին թելը. յայտնեց իւր դիտաւորութիւնը նորոգութիւններ անելու համար :

Աննա Եղորովնայի դէմքը բացատրում էր ուրախութիւն, օր. Սոֆին նոյնպէս գտնվում էր իւր հոգւոյ զուարճալի տրամադրութեան մէջ :

— Այդ արդէն հրա՛ջք է, Սոֆի, ասաց նրան Աննա Եղորովնան : — Դու ի՞նչպէս կատարեցիր այս բոլոր յեղափոխութիւնը առանց պատերազմի եւ առանց զոհերի :

Աննա Եղորովնայի խօսքը Հացի-Գէլենց ընտանեկան կեանքի վերանորոգութեան համար էր :

— Մեր պատերազմը մնացել է հօրս վերադաձից յետոյ, պատասխանեց նա ծիծաղելով :

— Այդ ոչինչ... պատասխանեց Անիչկան, եւ նրա փափուկ դէմքի վրայ երեւեցան խիստ ծամածռութեան նշաններ :

— «Հարսանիքից յետոյ զուռնա չեն ածում» : Ամէն ինչ արդէն վերջացած է... :

Նրանք նստեցին օր. Սոֆիի կաբինէտում :

— Դու այսօր Ալեքսանդրեան այդո՞ւմն էիր, հարցրեց նրանից օր. Սոֆին :

— Այո՛, պատասխանեց Անիչկան :

— Ասա՛, խնդրեմ, ո՞վ էր այն երիտասարդը՝ բարձր հասակով, սեւ, դանդուր մազերով, նորարոյս ընչացքներով, դեղեցիկ դէմքով, սեւ բարխատեայ կարճլիկ սերթուկով... փոքրիկ ակնոցներով... :

Եւ սկսաւ նա նկարագրել դեղեցիկ երիտասարդին, որ այնքան զբաւել էր իւր ուշադրութիւնը :

— Դա՛, այդ դու Շերիմովին ես ասում, պատասխանեց Անիչկան : Նա նոր է աւարտել Մոսկովայի համալսարանը :

— Ա՛խ, ի՞նչպիսի փառաւոր պարոն է նա :

— Նա առաջին Ֆրանսոն է մեր քաղաքում : Դու հաւանեցի՞ր նրան :

- Ի՞նչպէս շահանէի :
- Ելիսաւէտն էլ նրա համար խելքից էլած է :
- Ո՞րտեղ է բնակում, հարցրեց հետաքրքրուելով
օր. Սոֆին :
- Նա բնակում է Սոլուակում :
- Նա մի՞շտ լինում է այդիում :
- Համարեա՛ ամէն օր :
- Եւ նրանք երկար խօսեցին Մոսկովայի համալսարանի ուսանողի մասին, մինչեւ օր. Սոֆին ասաց .
- Ես վճռել եմ անպատճառ ծանօթանալ նրա հետ :
- Այո՛, արժէ ծանօթանալ, կրկնեց Անիշկան խորին համոզմունքով :
- Դու լսե՞լ ես նոր համբաւ, խօսքը փոխեց նա :
- Ի՞նչ, հարցրեց օր. Սոֆին հետաքրքրուելով :
- Օր. Մահակեանը նշանուել է :
- Ասա՛, ինչդրեմ, ո՞ւմ վրայ, շտապով հարցրեց օր. Սոֆին :
- Տօլմա-ուտողի տղայ Սոսիկոյի վրայ, պատասխանեց Անիշկան ծիծաղելով :
- Ձէ՛, դու կատակ ես անում, Անիշկա, դարմանալով կրկնեց օր. Սոֆին :
- Ո՛չ, հաւատա, ես զորդ եմ ասում :
- Աստուած իմ, այդ ի՞նչ յիմարութիւն է :
- Ընդհակառակն, շատ խելօքութիւն է, նրա խօսքը, կարեց Անիշկան : — Գիտե՞ս որքան հարուստ է այդ Սոսիկօն :
- Դիցուք թէ հարուստ է, բայց նա ինչի՞նչ նման է :
- Եւ օր. Սոֆին սկսաւ նկարագրել նրա տգեղութիւնը :
- Գեղեցիկ երիտասարդներ միշտ կարող է դանել օր. Մահակեանը եւ նրա կին լինելուց յետոյ, բայց փող, ո՛չ ամենայն ժամանակ :
- Վերջապէս այդ յիմարութիւն է :

Անիչկան խորհրդաւոր կերպով դուրսը շարժեց եւ սասց . — Նա իւր հաշիւը լաւ դիտէ . . . նրան ասել են այդ , նա պատասխանել է , թէ ինձ այնպիսի ամուսին պէտք է , որ օրը մի տեսակ հագուստով հանդէս դուրս դամ :

— Նա հէնց վարժարանում այդպէս յիմար էր :

Մահակեանի նշանուէրու վրայ երկար խօսելուց յետոյ , Աննա Եգորովնան նորոգեց հարցը Նատոի Կոջորի անցքի մասին , որ մի քանի օր առաջ կիսատ էր մնացել . օր . Սոֆին լրացնելով իւր պատմութիւնը , աւելացրեց . — Այդ Նատոներից մի քանի հատ եւս այժմ աւելացել են մեր վարժարանում :

Աննա Եգորովնան սկսեց թախանձել , որ յայտնէ , թէ ովքեր են նրանք , բայց օր . Սոֆին պատասխանեց , թէ ինքը սովոր չէ յայտնել այլոց գաղտնիքները :

Հեռաբերելի օրիորդը վշտացաւ այդ պատասխանից , ասելով . — Սոֆի , դու բոլորովին անկեղծ չես ինձ հետ , մինչդեռ ես քեզանից բան չեմ ծածկում :

Օր . Սոֆին , նկատելով իւր ընկերուհու տրտուշը սասց . — Խղճմտանքի ընդդէմ է բամբասել նրանց այդպիսի յանցանքների համար . չէ՞ որ մենք ամէնքս էլ ունինք այդպիսի թուլութիւններ :

Աննա Եգորովնան ծիծաղեց :

Օր . Սոֆին հնչեցրեց դրասեղանի վրայի փոքրիկ զանդը :

Ներս մտաւ ուռտ աղախին Մաշան :

— Մաշա՛ , մի քանի տեսակ մ ու ը ր ա բ ա բ եր հրամայեց օրիորդը աղախինին :

— Հրամմել էք , ասաց թեթեւաշարժ աղախինը եւ շտապով դուրս դնաց :

Օր . Սոֆին դիմեց իւր հիւրուհուն :

— Այնպիսի լաւ մուրարէք ունիմ , Անիչկա՛ , մի խօսքով՝ հիանալի :

— Այժմ քեզ մօտ ամէն ինչ կը գտնուի, պատասխանեց հիւրուհին :

— Դեռ ո՛չ ամէն ինչ, Անիչկա... խորհրդաւոր ձայնով պատասխանեց օր. Սոֆին :

Աննա Եգորովնայն գուշակելով, թէ ինչ է կամենում ասել նա, ասաց ժպտալով. — Իմ կարծիքով մի այն մի բան պակաս է, Սոֆի :

— Ի՞նչ :

— Դու արդէն գիտես... :

Օր. Սոֆին ծիծաղեց : Նրա դէմքը բացատրում էր ներքին զուարճութիւն :

— Ի՞նչ խորամանկ ես դու, Անիչկա', կրկնեց նա :

Սոյն միջոցին Մաշան մի թանկագին արծաթեայ սկուտեղի վրայ ներս բերեց զանազան տեսակ ազնիւ մուրաբաներ, որոնք ածուած էին փոքրիկ յախճապակեայ ախտէների մէջ, եւ դրեց բոլորակ սեղանի վրայ, որի մօտ նստած էին նրանք :

Նոյն բոպէին ներս մտաւ տ. Բարբարէն, եւ տեսնելով իւր դուստրը եւ նրա հիւրուհին, շատ ուրախացաւ, ասելով .

— Ահա' այդպէս լաւ է :

Նրանք փոխեցին իրանց խօսակցութեան նիւթը... :

Ժ

Օր. Սոֆին, նոյն օրուայ երեկոյեան պահուն ստացաւ Աննա Եգորովնայի ուղարկած գրքերը : Դրանք մի քանի հատոր Տուրգենևի, Պրսեմսկու ռոմաններէց էին : Սկզբում մօր երկիւղից ստիպուած էր այդ գրքերը իւր բարձի տակ թաղցնել, կամ դիշերները զաղանի կարգալ, իսկ այնուհետեւ նա շարունակ զբաղուած էր այդ գրքերի ընթերցանութեամբ բոլորովին համարձակ. որովհետեւ նրա ծնողները

ևւ բոլոր տանեցիք ամենեւին հասկացողութիւն չունէին, թէ ի՞նչ է ուսման ասած բանը :

Այնուհետև օրիորդն այլևս դուրս չէր դալիս իւր առանձնատնակից, նա երևում էր իւր մօրը միայն առաւօտը, ճաշին ևւ ընթրիքի ժամանակ, ևւ մէկ էլ՝ երբ նրանց մօտ հիւրեր էին դալիս : Մայրը հարցնում էր նրան, թէ ի՞նչ է շինում նա ամբողջ օրը իւր սենեակում փակուած : Օրիորդը պատասխանում էր՝ «գրադուած եմ» :

Նա անդադար կարդում էր ևւ կարդում . . . ևւ այդ բանաստեղծական գրքերի անհատական աղբիւրից ձեւակերպում էր նոր գաղափարներ :

Այդ գաղափարները, օրըստօրէ տպաւորուելով ևւ կերպարանագործուելով նրա թարմ ուղեգի մէջ, ծնեցին նրա գլխում երևակայական ցնորքներ, որ շատ անգամ արթուն, կամ քնի մէջ ևւ երազում էր :

Երբեմն գիշերային քաղցր երազների մէջ նրան պատկերանում է մեծահանդէս բալ : Դահլիճը լուսաւորուած է կուրացուցիչ փայլողութեամբ : Հանդիսականները եռ են դալիս գոյնզգոյն հագուստներով : Մետաքսը, շալը, ոսկին, արծաթը ևւ գոհարեղէնները, արհեստի վայելուչ յարմարութեամբ, վառվում են, խշխշում են ևւ ալէկոծվում . . . :

Մեր երազամոլ հերոսուհին, վառուած աղամանդներով ու պծնուած դեղեցիկ հագուստներով, սիգաճեմ ընթացքով մտնում է բալի դահլիճը : Բազմութիւնը դղրդվում է : Բոլորի ուշադրութիւնը դառնում է դէպի նա : «Ահա գեղեցկութեան դիցուհին», լսելի են լինում հիացման ձայներ : Մուգիկան հնչում է, պարահանդէսը փոթորկվում է : Մի կարմրիկ տղամարդ, հաստ փորով ևւ ուռած թշերով, առաջարկում է օրիորդին իւր ձեռքը՝ պարելու : Նա հրաժարվում է : Մօտենում է մի այլը՝ մեծ եպղէսաներով ևւ օրդէններով պատած կուրծքով : Նա դարձեալ հրաժարվում է : Մօ-

տենում է քաղաքավարութեամբ մի այլը՝ պճնազգեստ երիտասարդ, բարձարահասակ, նրբակազմ, դանդաբան եւ խիստ գեղեցկադէմ: Օրիորդը կանգնում է: Նրանք պատվում են որպէս անիւ: Մի քանի անգամ օրիորդի փափուկ կուրծքը եւ կիսամերկ բազուկները հեղիկ շփվում են իւր պարընկերի թեւերին: Օրիորդը իւր մարմնի բոլոր կազմութեան մէջ զգում է ելեքտրական ցնցողութիւն: Պարի ձեւը փոխվում է: Օրիորդը իրան ձեւացնելով թէ յողնեց, նստում է: Նրա պարընկերը շնորհալի կերպով մօտեցնում է նրան աթոռ: Օրիորդը իւր գոհութիւնը յայտնում է գլխի հեղիկ շարժումով: Պարընկերը չէ հեռանում նրանից: Օրիորդը լսում է նրանից մի քանի քնքուշ խօսքեր...

Երբեմն մեր հերոսուհին երազում էր, թէ նա թատրոնումն է. ինքը փառաւորապէս նստած է լոժայի մէջ: Հանդիսականները վառվում են բիւրաւոր պճրանքով: Քաղցրաձայն մուղիկան հնչում է: Իտալուհին անուշ ձայնով երգում է: Լոժաները լիքն են սիրուն աղջիկներով: Բայց նրանցից եւ ո՛չ մինը իւր նման հաղնուած չէ: Հանդիսարանում աթոռներն ու բազկաթոռները լիքն են բազմաթիւ երիտասարդներով: Բայց նրանց ո՛չ մինը չէ նայում բեմին: Նրանց զիտակները ուղղուած են դէպի իւր լոժան...

Եւ երբեմն էլ երազում էր նա, թէ գտնվում է մի այգու մէջ, իւր գլուխը զարդարած է ծաղիկներով: Մի դեղեցկադէմ պատանի, չոքած իւր անջեւ՝ աղաչում է... Եւ արտասուքը մարդարտի նման գլորվում է նրա սիրուն աչքերից... «Ես սիրում եմ քեզ... Սոֆի»: Այդ մողական ձայները զարկվում են նրա ականջներին:

Ահա այդպէս մեր սիրուն հերոսուհին, իւր գիշերային հանգստեան մէջ, հրապուրվում էր այդպիսի երեւակայական պատկերներով: Եւ ամբողջ օրը նրա մտքից չէին հեռանում այդ գիշերային յիման երազները:

Այս՛, մի կատաղի արտ զարհուրելի կերպով բոցա-
վառվում էր նրա սրտի մէջ. — դա էր ս էրը :

Վերջին օրերը օր. Սոֆին մտածեց իւր երեւակայկան
երազներին տալ սրեւիցէ իրողական կերպարանք: Իսկ այդ
փափաղին հասնելու հնար չէր լինում մի քանի արդեւաութի
պատճառներով: Եւ գլխաւորապէս այն էր պատճառը, որ
չայց-Պէլենց ընտանեկան կեանքի շրջանը՝ ինչպէս յայտնի
է մեր ընթերցողին, խիստ նեղ էր, մուսլուտ եւ անմատ-
չելի: Թէեւ վերջին օրերը տ. Բարբարէն նրան բաւական ընդ-
արձակ եւ փառաւոր կերպարանք տուաւ, բայց այնու-
ամենայնիւ այդ արտաքին շքեղութիւնը բաւական չէր սրբե-
լու նրանցից հին կեղտը, եւ առիթ տար նրանց յարաբե-
րութիւն ունենալ հասարակութեան բարձր դասակարգի ան-
հատների հետ, ուր դեգերվում էր միշտ օր. Սոֆիի միտքը:
Նրանց երթեւեկները տակաւին հասարակ մարդիկ էին. —
մի քանի կարաւոր մորթէ դղակով փողոցի առեւտրական
տղամարդիկ, մի քանի աղջիկներ կոլորուած իրանց դերիա-
ների մէջ, նախշուն թասակրաւիներով, եւ մի քանի քաթի-
պաւոր կանայք իրանց մերձաւոր ազգականներէց: Բայց այդ
տեսակ մարդիկ ո՛չ միայն չէին կարող դրաւել օր. Սոֆիի
ուշադրութիւնը, այլ՝ սկսած նրա վարժարանի կեանքից,
ատելի էին նրան: Թէեւ նրանցից շատերը դիտէին մի քանի
հատ ու կտոր պ օ փ ո լ ու ս տ — մ օ փ ո լ ու ս տ ա ատել, եւ
գլուխ տալու, կամ ձեռք բռնելու միջոցին ոտքը դետնին
քսել, բայց այդպիսի կապիօրէն քաղաքավարութիւնները
առաւել զայրացնում էին նրան եւ նա չէր կարող յարգանք
զբաւ դէպի այդպիսի մարդիկ:

Միակ հիւրը, որին պատվում էր օր. Սոֆին, Աննա
Նեդորովնան էր, որ նրան զուարճացնում էր՝ բերելով եր-
բեմնապէս զանազան լուրեր:

Բայց վերջին օրերը օրիորդի ուշադրութիւնը գրաւեց

մի պատանի գիմնադիստ, վեցերորդ դասատան աշակերտ Նիկոլ Մայիլով անունով:

Մայիլովը տասն եւ ութ տարեկան էր, քնքուշ կազմուածքով, դեղեցիկ դէմքով, քաղցրաբարոյ եւ բարեսիրտ պատանի, հին, ազնուական տոհմից: Նա թէեւ խիստ փափուկ էր մեծացած, բայց բաւական բարեկիրթ, խելացի եւ ամօթխած էր: Մի փոքրիկ նկատողութիւնը կարող էր նրան վրդովմունք պատճառել եւ նա կարժրում էր մինչեւ ականջները:

Նա Գրիգօլի դասընկերն էր, եւ շատ անգամ գալիս էր նրա մօտ սերտողութեան համար:

Օրը կիւրակի էր:

S. Բարբարէն վաղ առաւօտեան զնացել էր մի ազգականի տուն: Օր. Սոֆին, միայնակ կանգնած, պատշաճօրից նայում էր դէպի բակը: Յանկարծ երեւեցաւ Մայիլովը մի քանի տետրակներ թելի տակին: Տեսնելով օրիորդին, նա մօտեցաւ, բարեւեց եւ կարժրելով հարցրեց.

— Ասացէ՛ք, խնդրեմ, տա՞նն է Գրիգօլը:

— Ո՛չ, նա մի քանի րոպէ առաջ դուրս զնաց, պատասխանեց օրիորդը ուսերէն:

Մայիլովը դարձեալ գլուխ տուաւ եւ կամենում էր հեռանալ:

— Ինչո՞ւ, Նիկօլ, այդպէս շուտ, ասաց նրան օրիորդը:

— Մի փոքր սպասեցէ՛ք, նա շուտ կը վերադառնայ:

Մայիլովը կանգ առաւ:

— Նե՛րս զնանք, ասաց օրիորդը:

Նրանք մտան դահլիճը:

Օրիորդը նստաւ լուսամուտի մօտ, որ նայում էր դէպի Մթա-ժմիրնդայի բաղը, եւ խնդրեց գիմնադիստին նստել իւր մօտ:

Օրիորդը հնչեցրեց զանգը, ներս մտաւ ազախինը:

— Մաշա՛, պատրաստեցէք սուրճ, կաթնով, եթէ սեր չկայ:

Աղախինը հեռացաւ: Օրիորդը դիմեց դէպի պատանի հիւրը այսպիսի հարցով:

— Ի՞նչ տետրակներ են դրանք:

— Մեր ուսանելի առարկաների, պատասխանեց Մայիլովը:

— Եթէ կարելի է, խնդրեմ, տաք ինձ նայեմ նրանց: Մայիլովը տուաւ նրան իւր տետրակները:

Օրիորդը դրեց լուսամուտի վրայ գիմնադիտի կեղտոտ եւ կիսամաշ տետրակները եւ ուշադրութեամբ նայում էր նրանց վրայ եւ թերթում: Նրանց մէջ, խառն եւ անորոշ դրչով, մի տեղ թանաքով, մի տեղ մատիտով, նշանակուած էին նկատողութիւններ դանազան առարկաներից. իսկ մի քանի տեղ նկարուած էին աշակերտական կեանքից խեղկատակ պատկերներ, օրինակ գլուխներ՝ ահագին եւ երկար քթով, կմախքներ այլանդակ կերպարանքներով եւ այլ պէս-պէս անորոշ եւ խառնուկնթոր գծադրութիւններ:

Մայիլովը շտապուեցաւ, երբ օրիորդն սկսեց նայել դրանց վրայ: Բայց օր. Սոֆին մի կողմ դրեց միւս տետրակները եւ մնաց նրա առջեւ միայն պատմութեան տետրակը:

— Երեւի դուք պատմութիւն շատ էք սիրում, ասաց նա դիմելով Մայիլովին, որովհետեւ ձեր պատմութեան տետրակն աւելի մաքուր է գրուած:

— Այո՛, սիրում եմ, պատասխանեց աշակերտը մեքենարար:

— Ի՞նչքան էք անցել:

— Հին եւ միջին դարերի պատմութիւնն արդէն աւարտել ենք. այժմ սովորում ենք նոր ժամանակների պատմութիւնը:

Օրիորդը մտածեց առաջարկել նրան մի քանի հարցեր,

կամենալով փորձել նրա հայեացքը, նրա մտքի ուղղութիւնը : Այդ պատճառով հարցրեց .

— Դուք յիշո՞ւմ էք մի կին Յունաց պատմութեան մէջ, որ եղաւ Տրոյեան պատերազմի պատճառը :

— Այո՛, Հեղինէն՝ Մենելայոսի կինը, որին փախցրեց Պարիսը՝ Պրիամոսի որդին, պատասխանեց Մայիլովը սքոլական ոճով :

— Ասացէ՛ք խնդրեմ, ժպտալով հարցրեց օրիորդը, ի՞նչպէս է ձեր կարծիքը Հեղինէի վարմունքի մասին :

Մայիլովը մի փոքր շփոթուեցաւ եւ ապա պատասխանեց . — Իմ կարծիքը Հեղինէի վարմունքի մասին շատ էլ լաւ չէ՛ :

— Ինչո՞ւ :

— Նրա համար որ նա պղծեց ողջախոհութեան օրէնքը՝ անհաւատարիմ գտնուելով դէպի իւր ամուսինը եւ եղաւ այնքան արիւնհեղութիւնների պատճառ :

— Չէ՞ որ նա սիրում էր Պարիսին :

— Աններելի է մի այնպիսի սնտոի սիրոյ համար այնքան զոհողութիւններ անել :

— Բայց ի՞նչպիսի կնոջ վարմունքն է աւելի դրաւում ձեզ պատմութեան մէջ :

— Հռովմայեցի Լուկրեցիայի :

Օր. Սոֆին ճանաչեց, թէ ի՞նչ սրտի աէր էր իւր խօսակիցը :

Աղախինը ներս բերաւ սուրճ, նախ տուեց Մայիլովին, իսկ նա ամաչելով հրաժարուեցաւ :

— Խնդրեմ, խնդրեմ, առանց քաշուելու, ասաց նրան օրիորդը :

Մայիլովին ընդունեց գաւաթը եւ դրեց իւր առջեւ սեղանի վրայ :

Խօսակցութիւնը նրանց մէջ դադարեցաւ : Օր. Սոֆին

մտածման մէջ ընկաւ՝ մերթ ընդ մերթ իւր ախտաբորբոք աչքերը սևեռեցնելով գիմնադիտարի ամօթխած, շառագունած եւ նոյն բողէին բաւական ախորժելի երեսին, որ խոնարհած նայում էր դէպի ցած :

— Դուք երբեւիցէ ոտման կարգացե՞լ էք, հարցրեց նրանից օրիորդը :

— Ո՛չ, իմ հայրս կը պատժէ, եթէ գիտենայ որ ես այդպիսի գրքեր եմ կարդում, պատասխանեց Մայելը վրաստակ եւս շփոթուելով :

— Ի՞նչու :

— Որովհետեւ ասում են նրանց մէջ յիմար—յիմար բաներ են գրուած, ուրեմն էլ ի՞նչպէս կարելի է կարդալ այդպիսի գրքեր :

Օրիորդը ոչինչ չխօսեց. միայն իւր մտքի մէջ ասաց. «Ո՛հ՛ դճ երեխայ, դեռ կաթնի հոտ է բուրում բերանից»...

Նրանց խօսակցութիւնն ընդհատեց Գրիգօլը, որ ներս մտաւ, ողջունեց ընկերոջը եւ նստեց նրանց մօտ :

Օր. Սոֆին մի քանի բողէից յետոյ վեր կացաւ եւ թողնելով նրանց միասին, դնաց իւր սենեակը :

ԺԱ

Մայելը ոչինչ չհասկանալով օր. Սոֆի այդպիսի խորհրդաւոր խօսակցութիւնից, միամտութեամբ շարունակում էր իւր երթեւեկութիւնը Հացի-Գէլենց տուն : Բայց մեր հերոսուհու սիրտը վառուած էր պատանի գիմնադիտարի դեղեկութեամբ, միայն նա ափսոսում էր պատանու պարզ եւ համարեա երեխայական վարուեցողութեան եւ նրա անկեղծ ամօթխածութեան համար, որոնք խուսառ բաւականացուցիչ չէին իւր ցանկութիւններէ համար :

Մի օր երեկոյեան պահուն Մայիլովը դարձեալ եկաւ Գրիգօլի մօտ, բայց նա տանը չէր, այդ պատճառով օր. Սոֆին հրաւիրեց նրան իւր սենեակը:

Նրա մայրը այդ երեկոյ դնացել էր հիւր իւր եղբօր տուն, քոյրերն իրանց սենեակումն էին, իսկ օրիորդը միայնակ էր:

Թէյ բերին կաթնով եւ պաքսիմատով: Մայիլովը իւր սովորական ամօթխածութեամբ ընդունեց դաւաթը եւ սկսեց կամաց-կամաց խմել:

Նա լուռ էր: Օրիորդը մտածեց զբաղեցնել նրան:

— Դուք սիրո՞ւմ էք մուղիկա, հարցրեց նրանից օրիորդը թէյ ըզմեւուց յետոյ:

— Սիրում եմ, պատասխանեց Մայիլովը:

— Ուրեմն դնանք դահլիճ, ես կը նուագեմ ձեզ համար պիանօի վրայ:

— Գնանք, ասաց գիմնադիստը եւ վեր կացաւ:

Նրանք գնացին դահլիճ, որ փառաւորապէս լուսաւորուած էր: Օրիորդը նստաւ պիանօի առջեւ. նրանից մի քիչ հեռու նստեց Մայիլովը: Պիանօն հնչեց. օրիորդը հիանալի ձայնով երգեց ուսերէն մի սոնետ . . . :

Օր. Սոֆիի քաղցր ձայնը իւր անուշ հնչիւններով միախառնուելով դաշնամուրի արուեստական ձայների հետ ձեւացնում էր հիանալի ներդաշնակութիւն: Մայիլովը, որ ոչինչ ճաշակ չունէր մուղիկայի մէջ, դարձեալ սքանչացած լսում էր. թէեւ նա չէր որոշում ձայների փոփոխութիւնները, բայց նրան դիւր էին դալիս միայն քաղցր հնչիւնները:

Օրիորդը դադարեց նուագելուց:

— Ի՞նչպէս է, ձեզ դուր եկա՞ւ, հարցրեց նա Մայիլովին, ուղղակի նայելով նրա աչքերի մէջ:

— Շատ լաւ էք ասում, պատասխանեց Մայիլովը: — Այլեւ հիանալի երգում էք:

— Կամենա՞ք ես կը սովորեցնեմ ձեզ դաշնամուրի վրայ նուազել:

— Ես շատ կը ցանկանայի, եթէ ժամանակս ներէր:

— Ինչո՞ւ, դուք ամէն օր կարող էք կէս ժամ պարապել, երբ դայիս էք այստեղ Գրիգօլի հետ դաս սովորելու եւ ես խոստանում եմ ձեզ սովորացնել:

Մայիլովի խելքին մտաւ օրիորդի ասածը:

— Ծնորհակալ կը լինիմ ձեզանից, ասաց նա ուրախանալով:

— Հիմա եկէք այս բոպէիս ցոյց կը տամ ձեզ մի քանի խաղեր:

Եւ Մայիլովը նստեց օրիորդի մօտ շատ մերձ:

Մի փոքր նուազելուց յետոյ օրիորդը հրաւիրեց նրան իւր առանձնասենեակը:

Օր. Սոֆին նստեց իւր առաջուան տեղը, նրա հանդէպ նստեց Մայիլովը: Երկուսի մէջտեղում դրած էր փոքրիկ բոլորակ սեղան, որի վրայ վառվում էր լամպարը:

— Դուք դարձեալ տխուր էք, Նիկօլ, ասաց օրիորդը ուղղակի նայելով նրա երեսին:

— Ընդհակառակն, ես խիստ ուրախ եմ այժմ, պատասխանեց Նիկօլը:

— Կամենաք, ես կը բաղեցնեմ ձեզ զուարճալի ընթերցանութեամբ:

— Ծնորհակալ կը լինիմ:

Օրիորդն ընտրեց իւր մատենադարանից փառակազմ մի գիրք, որի կազմի վրայ ոսկեգօծ տառերով դրոշմուած էր այսպիսի վերտառութիւն՝ — George Sande.

Նա դրեց գիրքը իւր առջեւ եւ մի փոքր թերթելով հարցրեց. — Դուք ծանօթ էք այս գրքի հետ:

— Ո՛չ, ես առաջին անգամն եմ տեսնում այդ, պատասխանեց Մայիլովը:

— Ուրեմն լսեցէք, ես կարդամ. սա ուժան է :

Եւ օրիորդը բորբոքուած կերպով սկսեց կարդալ : Ընթերցանութեան ժամանակ նրա դէմքն ընդունում էր դանազան արտայայտութիւններ՝ երբեմն կարմրում էր երբեմն գունատւում, իսկ երբեմն նրա աչքերը վառւում էին կատաղի կրակով :

Բայց Մայիլովը դէմքը խաղաղ էր, միայն երբ խօսքը դառնում էր սիրային կրակոտ եւ սուր արտայայտութիւնների, կամ սիրահարների համբոյրների եւ նրանց մեղմ քնքշութիւնների վրայ, նրա դէմքը նշմարելի կերպով շառագունւում էր, կարծես թէ, նա ամօթ էր դրում այդպիսի անպարկեշտ խօսքեր լսելու համար. իսկ երբեմն նրա նուրբ շրթունքների վրայ խաղում էր մի անմեղ ժպիտ :

Օրիորդը դադարեց կարդալուց եւ իւր ախտաբորբոք աչքերը ձգելով Մայիլովի երեսին, հարցրեց .

— Ի՞նչպէս է, հաւանո՞ւմ էք :

Պատանի գիմնադիտոր ոչինչ չպատասխանեց, այլ կարմրելով ժպտաց, եւ միեւնոյն բոպէին զգաց որ օրիորդի փոքրիկ ոտը սեղանի տակից խիստ քնքշութեամբ սեղմուեցաւ իւր ոտին. պատանին գողաց բոլոր մարմնով եւ ետ քաշեց իւր ոտը :

Մի քանի բոպէ տիրեց խորհրդաւոր լուսթիւն :

Օրիորդը տեսնելով իր խորամանկութեան անյաջողութիւնը, մտածեց ուրիշ կերպ գրադեցնել նրան :

— Ի՞նչ սիրուն մազեր ունի՞ք, Նիկօլ, ասաց նա ձեռք տանելով դէպ նրա գլուխը : Ի՞նչպէս փափուկ, դանդուր եւ խարտեաշ են. իսկ իմ գիտակիները սեւ են ու կոշտ, ամենեւին դանդուր չեն. ես շատ կը ցանկանայի որ իմ մազերը եւս ձերիկնայէս լինէին :

— Կամենո՞ւմ էք փոխենք, ծիծաղելով ասաց պատանին, եթէ այդքան ցանկալի է ձեզ իմ մազերը :

եւ ծոցում : Եւ դու եթէ գուշակես որ դրանցից մէկի մէջն է թաքցրած մատանին, կարող ես որոնել. եթէ այնտեղից դուրս եկաւ, տարած ես, եթէ մի այլ տեղից դուրս եկաւ, տարուած ես : Միայն այն պայմանով, որ ամէն անգամ նշանակած տեղերից միմիայն մինը կարող ես որոնել. բացի մէկ տեղից ուրիշ տեղ նայելու իրաւունք չունիս :

— Շատ լաւ, ես արդէն սովորեցի, ասաց Մայիլովը ուրախանալով :

Առաջ սկսում եմ ես, որ լաւ սովորես :

— Սկսի՛ր :

Եւ օրիորդը իւր երեսը շրջեց դէպի պատը եւ մի քանի բոպէից յետոյ դառնալով դէպի Մայիլովը, երկու ձեռք խփած պահելով, հարցրեց .

— Ո՞ւր է մատանին :

Մայիլովը բռնեց նրա աջ կուռփը ասաց .

— Այստեղ է :

Օրիորդը ձեռքը բաց արաւ. այնտեղ չէր. մատանին դուրս եկաւ նրա ձախ կողմի դրպանից :

— Այդ մի Փոռնտ կանֆէտ. դու տանել տուիր, ասաց օրիորդը :

— Մի անգամ եւս, ասաց պատանին :

— Դու մինչեւ հինգ անգամ նայելու իրաւունք ունիս, ասաց նրան օրիորդը եւ դարձեալ երեսը շրջեց դէպի պատը :

Մի քանի բոպէից յետոյ օրիորդը կանգնեց առաջուայ պէս եւ հարցրեց :

— Ապա ա՞յժմ :

Պատանին կարծելով թէ այս անգամ գրպանում դրած կը լինի, ձեռքը տարաւ նրա գրպանը, որ շատ խորն էր, եւ սկսեց որոնել. բայց ոչինչ չգտաւ : Միայն զգաց, որ օրիորդի փափուկ աչքերը իւր մատների հպաւորութեան միջոցին դողում էին...

— Փոխենք, պատասխանեց օրիորդը: — Բայց փորձենք կարելի՞ է վեր առնել:

Եւ նրա սպիտակ եւ նուրբ մատիկները սկսան շարժուիլ պատանու դանդուրների մէջ, եւ երբեմն էլ հեղիկ շփուել նրա երեսին:

— Ո՛չ, նիկօլ, ախոսս, չէ կարելի փոխել, ցաւելով ասաց օրիորդը:

Պատանին հեղիկ ծիծաղեցաւ. բայց նրա ծիծաղն արտայայտում էր երկխայտական անմեղութիւն:

Օրիորդ Սոֆին մտածեց մի այլ բանով զբաղեցնել նրան:

— Դու թուղթ խաղալ իմանո՞ւմ ես, հարցրեց նա եղակի:

— Ո՛չ, ես ոչինչ խաղ չեմ սովորած, պատասխանեց կարմրելով պատանին:

— Ես այս բողէիս կը սովորեցնեմ քեզ մի դիւրին խաղ:

— Լա՛ւ, տեսնեմ ո՛րպիսի խաղ:

— Տեսնում ե՞ս այս մատանին, ասաց օրիորդը, իւր մատից հանելով մատանին եւ նրան ցոյց տալով: — Ես այս մատանին կը թաքցնեմ. եթէ դու գուշակեցիր, թէ ո՛րտեղ եմ թաքցրել եւ դտար, տարած ես եւ դրա համար, ամէն մի գտնելուն, ես պարտաւորուած կը լինիմ քեզ տալ մի բան, դրօբինակ, ասենք, մի Փունտ կանֆէտ. բայց եթէ չկարողանաս գտնել, արդէն տարուած կը լինիս, այն ժամանակ դու կը պարտաւորուես ինձ տալ նոյնը:

— Ի՞նչպէս կարելի է գտնել, պատասխանեց Մայլիւովը. դու կարող ես թաքցնել մատանին մի այնպիսի տեղ, որ ես անկարող կը լինիմ գուշակել:

— Ո՛չ, այդ խաղն ունի իւր սահմանները, ասաց օրիորդը: — Միայն հինգ տեղ են նշանակվում թաքցնելու համար, այն է՝ երկու զրպանում, երկու ձեռքի ափերի մէջ

Այս անգամ մատանին դուրս եկաւ օրիորդի ծոցից :

Պապը կրկնուեցաւ :

Այս անգամ պատանին ձեռքը տարաւ դէպի նրա խորհրդաւոր ծոցը . բայց այնտեղ եւս ոչինչ չգտաւ . միայն երկու փափուկ ուռոյցներ քնքշարար հպուեցին նրա ձեռքին , եւ մի բան նրա կրծքի մէջ սաստիկ զարկում էր . . . :

— Այս անգամ նոյնպէս տանել տուիր , ասաց օրիորդը :

Վերջին խաղին պատանին երկար որոնելուց յետոյ գտաւ մատանին նրա զրպանում , որ երկու աղբրերի մէջ սեղմուած էր . . . :

— Այժմ տարար , ուրախութեամբ ձայն տուաւ օրիորդը :

Հերթը հասաւ Մայիլովին :

Նա նոյնպէս սկսաւ թաղցնել մատանին մերթ իւր անդրափարտիկի զրպանում , մերթ իւր ծոցում եւ մերթ պահում էր հուպ արած ձեռքերի մէջ : Բայց օր . Սոֆիի խուզարկու ձեռքը չէր ցանկանում բաժանուել այդ խորհրդաւոր պահարաններից , մանաւանդ երբ թաքցրած մատանին նրա ծոցումն էր լինում . . . :

— Ես տանել տուի , վերջապէս ասաց օրիորդը . նիկու , ի՞նչ վարպետութեամբ ես խաղում . . . :

Եւ օրիորդը փաթաթուեցաւ նրա պարանոցին . երկար իւր բոցափառուած շրթունքը չհեռացրեց Մայիլովի գեղեցիկ երեսից , մինչեւ պատանին ձայնեց .

— Սոֆի՛ , ի՞նչ ես անում , ամօթ է :

Յանկարծ միւս սենեակից լսելի եղաւ տ . Բարբարէի ձայնը :

Նրանք բաժանուեցան :

Մայիլովին այլեւս չմնաց օրիորդի սենեակում . նա դուրս եկաւ եւ սուանց բարի դիչեր ասելու տ . Բարբարէին , կամ Գրիգօլին տեսնելու , անխօս հեռացաւ Հացի-Գէլենց տանից :

ԺԻ

Մայիլովը՝ մի շաքաթից աւել էր չէր եղած Հայի-
Գէլենց մօտ: Օր. Սոֆիի վերջին անպարկեշտ վարմունքը
վատ տպաւորութիւն թողին նրա սրտում, նրան անախորժ
էր թվում այնուհետեւ կրկին տեսնել նրա երեսը:

Բայց օր. Սոֆին երկար սպասելով նրան, երբ տեսաւ
թէ նա չէ երեւում, մի օր հետեւեալ փոքրիկ տոմսակը գրեց
նրան.

«Իմ հոգեա՛կ Նիկօլ.

«Արդէն մի ամբողջ շաքաթ է, որ դու մեզ մօտ չես
եղել. մտածիր, թէ ո՛րքան երկար եւ ծանր է այդքան ժա-
մանակն ինձ համար՝ քեզ չտեսնելուս պատճառով: Բայց
ափսոս, որ չեմ դռնում այնպիսի բառեր, որոնցով կարողա-
նայի զգացածս քեզ բացատրել: Բայց եթէ դրելու եւս լինիմ,
դու չես հասկանալ. որովհետեւ դու տակաւին չդիտես, թէ
ի՛նչ է ս է բը . . . :

«Նիկօլ, ես սիրում եմ քեզ . . . արդեօք, իմանո՞ւմ ես,
թէ ի՞նչ եմ ասում . . . ես քեզ համար մեռած եմ . . . քո փո-
խադարձ սէրը կը կենդանացնէ ինձ, Մի՞թէ դու չես խզա-
լու ինձ. թէ այս շաքաթ եւս քեզ չտեսնեմ, ես կը դժուեմ:

Սոֆի»:

Նա նամակը ծրարեց եւ ուղարկեց իւր սպասաւորի
ձեռքով: Այնուհետեւ միայնակ իւր սենեակում նստած,
ձեռքը ծնօտին դրած, երկար եւ երկար սկսեց մտածել.
«Այո՛, նա դեռ երեխայ է», ասում էր նա, «նա դեռ անմեղ
է, դեռ ոչինչ չէ հասկանում . . . Բայց ի՛նչքան զեղեցիկ,
ի՞նչքան աղնիւ է նա . . . օ՛, ո՛րքան սքանչելի՛ է . . . Թող դայ
նա, թող դայ. թէեւ սիրոյ հրեշտակը դեռ չէ ձգել նրա սրտի

մէջ եւ ոչ մի կայծ երկնային հուրից, բայց ես, ես կը վառեմ նրա մէջ այդ աստուածային կրակը եւ նա կը սկսի բորբոքուել . . . Բայց նա փախչում է ինձանից. խեղճ երեխայ» . . . :

Եւ օրիորդը երկու ձեռքով բռնեց իւր դուռիւր. արտասուքն տկամայ սկսեց թափուել նրա աչքերից :

Մայիլովը կարդալով օր. Սոֆիի նամակը, մտածեց պատասխանը գրել: Նա նստեց զրասեղանի հանդէպ, վեր առաւ գրիչը, բայց որքան մտածեց մի բան գրել, մտքին ոչինչ չեկաւ: Նա գրիչը վայր ձգեց եւ սկսաւ կարդալ մի քանի գրքեր. օրինակ՝ խրիստոմատես եւ դրա նման գրքեր, որ նրանցից մի օրինակ վեր առնի: Մի փոքր ոգևորուելուց յետոյ վեր առաւ գրիչը: Մի քանի տող գրեց, ջնջեց, նկատեց որ ոչինչ միտք չկայ, դարձեալ տհաճութեամբ գրիչը վայր ձգեց, եւ որպէս արբեցած՝ շտապով վեր կացաւ, գլխարկն առաւ եւ քայլերն ուղղեց դէպի Հացի-Պէլենց տուն:

Երեկոյեան ժամի վեցն էր:

Նա դտաւ օր. Սոֆիին դահլիճում նստած մի քանի հիւրերի մօտ, որոնք բոլորն էլ հասակաւոր կանայք էին՝ նրանց հետու եւ մօտիկ ազգականներից:

Հիւրերին մատուցանվում էին թէյ. օրիորդը սպասաւորում էր թէյի սեղանի շուրջը:

Մայիլովը դուռիս տուաւ եւ լուռութեամբ նստաւ մի անկիւնում: Ո՛չ ոք ուշադրութիւն չգարձրեց նրա վրայ, միայն տ. Բարբարէն հարցրեց.

— Նիկօլ, ո՞ւր էիր այս քանի օրս:

— Մի փոքր տկար էի, ասաց Մայիլովը:

Այդ մի քանի խօսքով վերջացաւ նրանց մէջ խօսակցութիւնը:

Բայց օր. Սոֆիի դոյնն իսկոյն փոխուեցաւ, երբ տեսաւ պատանի գրիմնադիտտին: Նա մի դաւաթ թէյ իւր ձեռքով մատոյց նրան եւ հեղիկ շշնջաց. — «Ա՛խ, դու անխիղճ»:

Պատանու աչքերը վառուեցան: Նա շիմացաւ թէ ինչ-
պէս խմեց թէյը: Միայն յետոյ զգաց, որ բերանն սյրուել է:

Օրիորդը սրտնեղում էր տհաճութիւնից, թէ երբ եւ
կորչելու հիւրերը: Բայց տեսնելով, որ նրանք երկար պիտի
նստեն, մօտեցաւ իւր մօրը եւ ասաց նրան հաղիւ լսելի
ձայնով.

— Գլուխս ցաւում է, ես կամենում եմ դնալ իմ սե-
նեակը:

— Գնա՛, ասաց մայրը:

Ներողութիւն խնդրելով հիւրերից, օրիորդը դուրս
գնաց դահլիճից: Մի քանի բոպէից յետոյ, Մայիլովը նոյն-
պէս վեր կացաւ եւ գլուխ տուաւ եւ կամենում էր հեռանալ:

— Ո՛ւր, Նիկօլ, հարցրեց տ. Բարբարէն:

— Գնում եմ Գրիգօլի մօտ, ասաց նա:

Պատշգամբի վրայ սպասում էր նրան օր. Սոֆին: Նրանք
միասին մտան օրիորդի սենեակը:

Բայց թէ ի՛նչ խօսեցին, կամ ի՛նչ արին, աս. այժմ ես
չեմ կամենում դիպչել նրանց զաղտնիքներին, միայն այս-
քանը բաւական է ասել, որ պատանի գիմնադիստը այս ան-
դամին այնքան էլ ամօթխածութեամբ չէր վարվում նրա
հետ, որպէս առաջին անգամ երեւեցաւ նրա մօտ իւր տես-
բակներով:

Իսկ տ. Բարբարէն զբաղուած էր իւր հիւրերով, որոն-
ցից մի կնճռուած երեսով պառաւ դիմելով նրան ասաց
վրացերէն.

— Ծատ ապրի աղջիկդ, շատ շնորհալի աղջիկ է:

— Ի հարկէ ուսում առած աղջիկը մեզ պէս չի լինի,
պատասխանեց տ. Բարբարէն: Մենք մեր ժամանակը անց
ենք կացրել ոչինչ չսովորելով:

— Մաղամ Բարբարէ, կրկնեց մի այլը, հայերէն լե-
զուով, մաղեմուաղել Սոֆին զաւօդէմ է՞ն է դուրս եկի:

Այսինքն կամենում էր ասել, դաւեղէնիան է աւարտել :
 Բայց տ. Բարբարէն նոյնպէս չկարողանալով այդ այլազգի
 բառը կանոնաւորապէս արտասանել, պատասխանեց .

— Բա՛, դաւօղէմէն, կ ու ը ո ս ը պրծացրել է, ա տ ե-
 ս տ ա թ ունէ :

— Կուրսը ի՞նչ է, անմարթի չլինք, Հարցրեց Հիւրե-
 րից մինը :

Բայց տ. Բարբարէն չզիտէր, թէ ի՞նչ պատասխանէ,
 որովհետեւ իրան նոյնպէս յայտնի չէր այդ բառի նշանակու-
 թիւնը, որ դեռ նոր էր սովորած իւր աղջկանից : Նա մտա-
 ծեց եւ այդ Հարցին պատասխանեց նոյնպիսի մի դեռ եւս
 իրան անհասկանալի այլազգի բառով .

— Կուրսը օ բ ո ա զ օ ն ն օ ս թ է, ասաց նա :

Նրա խօսակիցը չհասկանալով, թէ ի՞նչ ասաց նա,
 կրկնեց իւր Հարցը .

— Ապա ատենտաթը ի՞նչ է :

Տ. Բարբարէն այս անգամ բոլորովին շիտթուեցաւ եւ
 չզիտէր, թէ ի՞նչ ասէ :

— Ատենտաթն էլ չի ն կուլի, պատասխանեց մի այլ
 կին, ազատելով տ. Բարբարէին այդ դժուարութիւնից :

— Գանա աղջկերքն էլ ին չին ստանճում, Հարցրեց
 առաջինը :

— Բա՛ս ինչի՞ Համա ին կարդում, պատասխանեց տ.
 Բարբարէն :

Պառաւնեւրը զարմացան, եւ իրանց սրտերում սկսան
 նախանձել տ. Բարբարէի բախտի վրայ, որ չի ն ո վ ն ի կ
 աղջիկ ունի :

— Ապա կար ու ձ եւ, օրինակ՝ թասակրաւի, լէչաք-
 նիր, նիշիլ, սուխրա դործիլ, ուրիշ էնպիսի բանիր էլ սոր-
 վեցնում ի՞նչ դաւօղում, Հարցրին տ. Բարբարէից :

— Թասակրաւին ու լէչաքն նրանց պէտքը չին, նրա

համա վուր նրանք շլապէք ին ծածկում, պատասխանեց
տ. Բարբարէն. ու կար ու ձեւ էլ ի՞նչ կ'օնին :

— Բաս աղջիկը առանց դրանք դիդենալու վո՞ւնց կա-
րա օջախ ու տուն պահի ու վուրդիք մինձացնի :

— Նրանց շուրիբը մօզնի շուրիբ ին՝ կարած, հաղիբ
մաղաղիէմէն ին առնում, էնդի փրանցուղի կնկտիք ին
կարում :

— Մաշ վուր շուրը մէ տեղէմէն մաշվում է, ան պատ-
ռվում է, էն էլ պիտի մաղաղունն կարկտնիլ տա՞ն :

— Է՛հ, քու հօրն ողորմի, դուն հէնց դիդիս նրանք
իրանց շուրը էնքան պիտի հազնին, ինչիլի մաշուի, ան
պատուելի՞. չէ՛, դեթաղվա, նրանք չուստ-չուստ փոխում ին,
էնդուր վուր, պիտի մօզի հիտ ժաժ դան :

Հիւրերի մէջ կար մի պառաւ կին, որ ուշադրութեամբ
լսում էր նրանց. դա Աղա-Մամադ-խանի Թիֆլիզ դալու
տարին տասնեւհինգ տարեկան աղջիկ էր եղած եւ հաղիւ
աղատուել էր ներքինի պարսկի դերութիւնից. նա միշտ սի-
րում էր պատմել այն ժամանակների դժբախտութիւնները
եւ դովաբանել հին կեանքի չափաւորութիւններն եւ անմե-
ղութիւնը՝ Այգ պառաւի անունն էր Մարիամ :

— Էտպէս է, տ. Բարբարէի խօսքը կտրեց Մարիամը :
Հիմի դիփունանքն էդ անիծած մօզի յետն էն ին թրեւ
դալի. եփոր մօզէն փոխվում է, նրանք էլ շուրը պիտին
փոխի : Մադրամ միբ ժուկով դէրիէքը սաղա էին հազնում,
առանց իւպիլի : Իժում սկսեցին տակէմէն-իլ լճէրի հաստու-
թինով իւփիէք հազնի, վունցոր ինչիլի հիմի Հաւլարբում
չատ կնկտիք հազնում ին : Մէ ժուկ էլ սկսեցին դէրիի տա-
կէմէն մաֆիթուլից շինած քթոցի նման մէ բան հազնի, խա-
րարդա թէ ի՞նչ դա հրում ար ին ասում, ու դէրիէն էն-
քան բացվում էր, մէ չադրի տօլ, էնպէս վուր էնդումէն
հաղած մէ աղջիկ արօտրօի վրից վուր անց էր կենում, էլ

տիղ չէր մնում խիղճ տղամարդերին անցկենալու: Լաւ անուն ին դրած — խաբարդօ, դրուստ վուր խաբարդօ: Էդ խօսկը թուրքի բառ է, նրանք ասում ին խաբար տուր (զղուչացիր): Մխաբս է դալիս, Աղա-Մամադ-խանի տարին եփոք թուրքերը բաղարէմէն էլով ան թէ ձիով բիռն էին անցկացնում, բղաւում էին՝ խաբարդօ, խաբարդօ, վուր մարդիկը ճամփայ տան: Էտպէս էլ միւր աղջիկպարներանց խաբարդօն ամէն տիղ ճամփայ է բաց անում: Մէ վուխտ էլ մէ եաքա շէփ շինեցին ու սկսեցին քուչէքը սրբելով թուղ բարձրացնի, մազրամ հիմի էտ էլ մօշլա էլաւ, ու էն մաֆթուլի քթոցի տիղ կաշու նման հաստ նշշտած իւփկէք էն հագնում, ու դէրբի փէշերքը վիւր ին քաշում, կ'օսիս թէ ցեխի մէջէմէն պիտին անց կենա: Էտպէս ին անում վուր միթօմ փէշերքը խառակ մնան, մազրամ իրանց իւփկի ուռնիրը, ան իրանց չուլքին ու տոտիքն ին ուղում խալխին շանց տա:

— Դուն չիս հաւնում էտո՛ւնք, հարցրեց տ. Բարբարէն մի փոքր վշտանալով պառաւի նկատողութիւններից:

— Էտունք ի՞նչ ին վուր հաւնիմ, պատասխանեց պառաւը: Միւր ժուկը լաւ էր. էտունք տնաքանդութիւն է... տղամարդն, ան հէրն ու մէրը վո՛ւնց կարան էդդադամի օխտէմէն դալ: Փռանցուղը սատանէմէն շատ բան դիտէ-տախնք թէ նա իր տղրանքը սաղացնելու համա ամէն օր մէ մօզա է դուրս բերում, միւր խալխը ինչի՞ է դժուի. մազրամ նա վունց վուր ածէ, նրանք էլ էնէնց պիտին պար դա:

Տ. Բարբարէն մտածելով, որ պառաւի այդպիսի նկատողութիւններն ուղղակի վերաբերում էին օր. Սոֆիին, իրբեւ ժամանակի յիմար ծէսերին հետեւողի, եւ կամենալով ջնջել, ոչնչացնել խոհեմ պառաւի խօսքերի, իւր կարծիքով, վատ տպաւորութիւնը իւր հիւրերի սրտից, խօսեց.

— Դէդի, ձիւր ժամանակն ուրիշ էր, հիմի ուրիշ. էն վուխտը աղջիկերքն ու կնկտիքը ինչդադամ բարի, էն դա-

դամ էլ տուտուց ին էլի. մազբամ մոռացիլ իս վաղուայ առակը — հին օրօք մէ սկեսուր է էլի. սա դնացիլ է հարեանի տուն, կ'օսէ, ու ասիլ է իր հարսին. «նստի՛ր, տեղէմէդ շժամ դաս»: Հարսը նստիլ է: Հարսի մօզ դրած է էլի մէ ամանի մէջ հում միս: Կատուն էկիլ է ու սկսիլ է միսը ուտիլ: Հարսը հեռուից հէնց ասիլ է. «փիշտ, փիշտ» ու ձեռքն էլ ժամ չէ տուի, ու չէ էլ կանացի տեղիցը վիբ կենա, էնդու համար վուր, սկեսուրը ասիլ է. «Տեղէմէդ շժամ դաս»: Կատուն էլ միսը դիփ կերիլ է:

Տ. Բարբարէի առակը մեծ զուարճութիւն պատճառեց նրա հիւրերին եւ նրանք բոլորեքեան սկսեցին յոգնելու չափ ծիծաղել:

— Էդ շատ անխելքութիւն է, ասացին բոլորը:

Բայց պառաւ Մարիամը մնաց անյողգոյզ եւ սառնարտութեամբ ընդհատեց նրանց ծիծաղը.

— Բարբարէի ասածը զրուտ է, էտ էլիլ է Թամար դէդօփալի օրով: Դրուտ է էն հարսի արարմունքի մէջը յիմարութիւն կայ, մազբամ էդ յիմարութիւնը շանց է տալիս նրա հնազանդութիւնը ու նրա անմեղութիւնը:

— Դրան կ'օսին կոյր հնազանդութիւն, պառաւ խօսքը կարեց տ. Բարբարէն, երեսի վրայ թեթեւ արհամարհական ծամածուծութիւններ դործելով:

Տ. Բարբարէի վերջին խօսքը բարկացրեց պառաւին, եւ նա բաւական բարձր ձայնով խիստ պատասխանեց.

— Մաչ էն լա՞ւ է, վուր ազջկերքը բաց դիլսով, տկլոր ուսերքով ու տկլոր դօշով քուչէք ին չափչիում եւ իրանց ծծիբը խալիսին նշանց ին տալի՛ր:

— Էտ շատ վատ է, ասացին միւս հիւրերը:

Տիկին Բարբարէն չդիտէր թէ ինչ պատասխանէ, երբ նկատեց որ ձայների բազմութիւնն անցաւ դէպի պառաւ Մարիամի կողմը. ուստի նա կարճ ասաց.

— Ամէն ժուկի աղաթի դօրա պիտի եօլա—դնա մարդ :

— Ի՞նչ աղաթ, պատասխանեց Մարիամը : Միդ համալար՝ միք պատպական աղաթն է . ինչ վուր միք հօրից ու մօրից տեհիլ ինք, էն պիտինք անի :

Տ . Բարբարէն եւ հիւրերից մի քանիսը սկսեցին հա—կատակել պառաւ Մարիամի կարծիքին, կամենալով նրան համոզել, թէ նոր ժամանակի սովորութիւնները եւ կեանքի ձեւերն աւելի լաւ են, քան թէ առաջուանը : Բայց նա դրա—կանապէս հերքեց նրանց կարծիքը, ասելով .

— Վուրթիք ես ձեզմէն աշխարհը աւելի շատ իմ տե—հած, միք օրօք աղջկերքը տասերկու տարեկան հէնց վուր դառնում էին, դելսքնուրի պէս խլխլում էին, մազբամ հիմի՞ . ասէք, տեհինք, ի՞նչէմէն է վուր աղջկերքը էդքան վէր ին թափած տանը ու մարդիկ նրանց թամահ չին անում : Էնդուամէն է, վուր աղջկերանց էտ թաւուր լսատածութիւնը, անխիւք միսիք անիւր ու բրօ—բրօ ապրիւր տեսնելով, խիղճ տղամարդի սիրտը ճաքում է, եփոք փիքք է անում, թէ իր դուքնով էնքան ի՞նչ պիտի դատի, վուր կանենայ էտ թա—ւուր կնիկ պահի, ու ասում է, լաւ է հէնց աղապ ապրիւմ ու դլուխս դինջ ըլի, քանց թէ կնկայ եսիր դառնամ : Ա՛յ էդ է պատճառը վուր աղջկերքը մնում ին : Ով վուր ունեւուր է, մինձ բաժինք ու փուղ է տալի, նրա աղջիկը մխավում է . ամա խիղճ քէսիրք ի՞նչ անէ . նա մնում է հիռու կանդնած իր աչքերը ճմրտելով, ու քէսիրի աղջիկը պառվում է հօր տանը : Մազբամ նրանք էլ ապրիլ կուզին, ու էնդուամէն դէնը ի՞նչ միդքերի մէջ չին ննդնում իրանց շուրի ու ապրուատի խաթրու :

Հիւրերից ոմանք համաձայնեցան Մարիամի հետ, որովհետեւ նրանցից շատերը պառաւ եւ հօր տանը թթուած ու քացախած աղջիկներ ունէին : Բայց տ . Բարբարէի հա—մար փոյթ չէր, որովհետեւ ինքը փող ունէր, նա իւր փո—

դով կարող էր վարադուրել իւր աղջկայ բոլոր արատները, եթէ կար, եւ առանց դժուարութեան կապել նրան մի անբախտ երիտասարդի գլխին:

Երկար այգւղիսի եւ դրա նման խօսակցութիւններից յետոյ հիւրերը վեր կացան եւ կամենում էին հեռանալ: Տ. Բարբարէն հրամայեց իմացում տալ օր. Սոֆիին, որ դուրս դայ հիւրերին ճանապարհ դնելու:

Նա դուրս եկաւ բոլորովին այլայլուած եւ շառագուռնած:

Հիւրերն սկսեցին առանձին-առանձին բարի դիչեր ասել եւ օր. Սոֆիին զանազան խօսքեր ուղղել՝ ոմանք որպէս խրատ, ոմանք որպէս օրհնութիւն եւ ոմանք որպէս զուարճախօսութիւն: Օրինակ. «Սոֆի ջան, շատ ապրիս»: — «Սոֆի ջան, բարով մուրաղիդ հասնիս»: — «Սոֆի ջան, մօրդ զադրն իմացի», եւ այլ այգւղիսի խօսքեր:

Բայց օրիորդը մինչ այն աստիճան շիտթուած էր, որ չգիտէր, թէ ինչ պատասխանէ:

Հիւրերը հեռացան:

Մի քանի րոպէից յետոյ օր. Սոֆիի սենեակից Մայրը դադանի դուրս եկաւ պատշգամբը եւ անտեսանելի կերպով հեռացաւ:

Օրիորդ Սոֆին թէեւ այլայլուած էր, բայց նոյն րոպէին նրա վառուող աչքերի մէջ փայլում էր զուարճութիւն եւ շառագունած երեսի վրայ խաղ էր անում բաւականութեան ժպիտը, որպէս թէ նա հասել էր իւր բողձանքին...:

Հիւրերի զնալուց յետոյ նա նստեց մօր մօտ: Մայրը նրանից մի քանի բան հարցրեց:

Բայց նրա պատասխաններն անորոշ եւ հատուկորր էին: Նա կարծես մտքով վերափոխուել էր մի այլ աշխարհ:

— Սոֆի, դու այս դիչեր յուզուած ես երեւում, ասաց մայրը:

— Դրուխս սաստիկ ցաւում է, պատասխանեց օրիորդը :
 — Դէ՛ գնա՛, հանդատացիր, սիրելիս :

Օրիորդը գնաց իւր ննջարանը. բայց քունը մօտ չեկաւ նրա աչքերին : Ամբողջ գիշեր նրա աչքերից չէր հեռանում Մայիլովի սիրուն պատկերը. կարծես կրկին զգում էր իւր սյուրբի վրայ պատանի գիմնագիտտի համբոյրները . . . :

Տ. Բարբարէն նոյնպէս այն գիշեր խիստ ուշ քնեց : Պառաւ Մարիամի խօսքերը մի քանի անախորժ տպաւորութիւններ թողին նրա սրտում : Նա նստած վառ ճրագի հանդէպ երկար մտածեց իւր աղջկայ ապագայի մասին . հազարաւոր արտուր եւ ուրախ մտքեր խառնվում էին նրա գլխում :

Միւս օրն առաւօտեան օր. Սոֆին դարթնեց սովորահանից խիստ ուշ, նա խիստ յոգնած էր եւ լաւ չէր զգում իրան :

ԺԿ.

Մեծ ճանապարհի վրայի՝ դաւառական Կ . . . քաղաքի պանդոկը անտաշ քարերից կառուցած մի հին շինութիւն էր, ուր իջեւանում էին ճանապարհորդները : Պանդոկի ներքին յարկի մի քանի կրպակներ, որոնք բացվում էին դէպի ճանապարհը, հասարակ գինեաներ էին, որոնց մէջ դարստած էին ահագին ուռմբիք Կախէթի գինով, արաղով լի տակաոներ կամ տիճորներ, մեծ ու փոքր շշեր՝ լիքը զանազան դոյնի ներկած արաղով : Առաստաղից քարշ էր արուած չորացրած ձկներ, ծխի ու փոշիների մէջ սեւացած խոզի ազգերը, մի եփած հնդկահաւի կիսան, որ ով գիտէ տասն օր առաջ եփուած կը լինէր, շաքարի կտորներ՝ չարածճի ճանճերի ծեռտերով նախշուած՝ եւ թէյի ու ծխախոտի կապոցների մօտ դրած, հին կօնֆէտ ապակէ ամանների մէջ : Դրանցից մի փոքր հեռու դրած էր սոխով լիքը կողովը, իսկ մի քիչ հեռու պատից կախած էին ճանապարհորդական սայլերի

ձիերի երասանակներ, մտրակներ: Մի անկիւնում առանձին փայտեայ ամանի մէջ անիւնների օծանելիք (կուլը), միւսում պատից քարշ էր ընկած խանութպանի թառը կարմիր գոյնով ներկած, սաղափով զարդարած, մօտը մի դահիրա եւ քամանչա, որոնցով շատ անգամ զուարճացնում էր իւր յաճախորդներին խանութպանը, որ մի հաստլիկ, ուռած փորով, կարմիր ու զուարթ երեսով մարդ էր. հազիւ շորերը փայլում էին կեղտից. կեղծաւոր ծիծաղը նրա երեսից շէր պահասում, նա մի դլուխ շատախօսում էր իւր յաճախորդներին հետ — ասում, լսում, հրհռում եւ ուրիշներին ծիծաղեցնում: Այդ բոլորն այնքան խառնուխիթօր, այնքան խայտաճամուկ, այնպէս տարօրինակ կերպով էին յարմարուել միմեանց հետ, որ նայողի սրտում սաստիկ անախորժ զգացմունքներ էին ծնեցնում:

Այդտեղ մ ու թ ի կ ն եր ը իրանց կեղտոտ թուլուխներով եւ հարբած սալդաթները իրանց սովորական երգը երգելով, ձեռքները ձգած նոյնպէս հարբած մի մատ ու շ կ ա յ ի վզով, խոզերը խորդալով, հնդկահաւերը կարկաշելով, շները կեղծաւորաբար իրանց պոչը շարժելով, — բոլորը ուրախ եւ համարձակ ել ու մուտ էին անում Բաքոսի սյդ պղծեալ սրբարանը, ուր հարայ-հրոց, երգ, ազաղակ, անէծք եւ համբոյր, բոլորը միախառնուած՝ խիստ անախորժ եւ վայրենի մի ներդաշնակութիւն էին ձեւացնում:

Այդ խանութների ետեւը ցանկապատած մի փոքրիկ բակ կար. սյդ պանդոկի նախադաւիթն էր, ուր կանդնած էին ճանապարհորդների սայլեր, մի կտորած կառք, ձիերի ախոռներ եւ տաւարի աղբի կոյտեր, որ բոլոր էին խոզերը կնճիթներով եւ իրանց համար կերակուր սրնում:

Այս դաւիթից՝ մաշուած Խանդուխներով մի մուտք տանում էր գէպի պանդոկի վերին յարկը, որ բազկացած էր

մի քանի կացարաններից ճանապարհորդների օթեւանելու համար :

Եթէ չի վշտանայ մեր պատուելի ընթերցողը, մենք կ'առաջնորդենք նրան այդ կացարաններից մինը այնտեղ կրկին անգամ տեսնելու ճանճուր Իվանիչի երեսը, նրա կաւկայ դալուց յետոյ :

Այդ կացարանը մի փոքրիկ սենեակ էր, շինուած ուղիղ ախոռատան վրայ, լուսամուտները նեղ, կոտրտած ապակիներով, որոնց տեղ կայցրած էին դրոտած թղթեր, մէջը կար նաեւ մի ահաղին քանդուած բուխարի : Յատակի վրայ, որի աղիւսները վաղուց մաշուելով կոարտուել էին, տեղտեղ անցքեր էին բացուել, որոնց միջից ախոռատնից ներս էր բարձրանում խմորուած թրիքների ժահահոտ եւ կծու գոլորչին : Սենեակի պատերը, որ առանց պաստառի էին, թէեւ սեւացած էին ծխից ու մխից, բայց տակաւին կարգացվում էին նրանց վրայ մատիտով կամ ածուխով մակադրութիւններ, որ դրել էին զանազան ճանապարհորդներ . մինը՝ մի յիմար ոտանաւոր, միւսը՝ թէ ինչպէս էր քէֆ արել այնտեղ, մի ուրիշը՝ թէ ինչպէս վատ էր անցկացրել այնտեղ, եւ թէ ի՞նչքան հայհոյանք է ուղարկել պանդոկապետի հասցէին իւր մասին լաւ չհոգալու համար, եւ իւր դրուածքի ներքեւ աւելացրել էր նաեւ այս անէծքը . «Ով որ ջնջէ, այսպէս, կամ այնպէս, լինի», — եւ այլ այդպիսի դատարկարանութիւններ :

Այդ սենեակի մի անկիւնում դրած էր մի հին մահճակալ եղեւնու փայտից, նրա մօտ նոյնպէս մի հին սեղան, որի երեսը տեղ-տեղ սյրուած էր, երեսի ճանապարհորդների համար բերած հէշտանոխ տակից թափուած կրակից : Սեղանի մօտ էլ երկու փայտեայ նստարան, անդոյն եղեւնու փայտից : Պատուհանում դրուած էր մի կոտրած փարչ, որի բերանին մոմ էր անցկացրած եւ ծառայում էր աշտանակի տեղ :

Դրանք էին միայն այդ տխուր ու տրտում բնակարանի յուր զարդարանքը՝

Մահճակալի վրայ ձգած էր մի ետփնջի, որի վրայ ճանճուր Իվանիչը թեկն էր տուել իւր ճանապարհի խուրջինին։ Նրա հանդէպ նստած էր մի ուրիշ անձնաւորութիւն՝ թթու եւ խորամանկ կերպարանքով, նիհար եւ ցամաքած դէմքով, երկայն քթով, ամիլած եւ սրածայր ծնոտով, փոքրիկ մոխրադոյն աչքերով, առանց թերթերունքի կարմիր կոպերով։ Նա հաղած էր երկայն, սեւ ս եր թ ու կ, կարճ անդրավարտիկ, կարճ ժ ի լ է տ, այնպէս որ տակից երեւում էր նրա աղտոտ շապիկը, հագին անագին կօշիկներ։

Նա իւր բարակ վզին փաթաթել էր հաստ սպիտակ փողպատ, որի տակին թաղուած էր շապիկի կեղտոտ օձիքը։

Այդ մարդը կոչվում էր Սիմոն Եազօրիչ, Հայր-Գէլենց Կաւկայի կապալի զործերի գլխաւոր զործակատարն էր դա։

— Բա՛ս էտպէս հա՛, Սիմոն Եազօրիչ, կրկնեց ճանճուր Իվանիչը կցելով իրանց ընդհատած խօսակցութիւնը։

— Ապա՛ էտպէս, պատասխանեց Սիմոն Եազօրիչը գլուխը տմբացնելով։ — Առաջուայ ինժինէրը տուտուց մարդ էր, օրինակ քիզ մէ էշ մենակ ակնջնիրն ու կուդին էր պակաս. նօխտէն անցկացրու գլխին ու ման ածա, վունցոր դուդիս... Ի՞նչ էր նրա նօխտէն. մէ քանի պաչկա պապիրոս, մէ գլուխ շաքար, մէ դրվանքայ շայ, մէ բօթիլ ոսմ նրա տուն տար, մէ քանի թուման էլ ձեռքը կոխէ, իժում թէկուզ թքէ էրեսին, ան ինչ դուդիս արա՛, նա քիզ հիդ բան չունէ...

— Էտ նուր էկածը վո՞ւնց է, հարցրեց ճանճուր Իվանիչը։

— Էտ նուր էկածը մէ բազրոյնիկ մարդ է, ջալդ խարուելու պտուղ չէ, տհաճութեամբ ասաց Սիմոն Եազօրիչը։

Նրա կարծիքով, ում որ ինքը չէր կարողանում խաբել, նա բարոյցնիկ էր եւ աւաղակ:

— Է՛հ, քու հօրն ողորմի, Ի՞նչ իս խօսում, նրա խօսքը կտրեց ծանճուր Իվանիչը: — Նս դրանց բոլորի խաւտաթը լաւ գիղիմ. մանէթի ճօնդը նշանց տու, էն սհաթին հողի կուտան:

Սիմոն Նազօրիչը ձեռքը շարժեց, կարծես երեսի վրայից ճանճ էր քշում:

— Էս խօմ էտէնց է, ասաց նա ներքին համողմամբ, համա էս անիծած ինժինէրը շատ տակէ տակ օքմին է երեւում:

— Քա՞նի վուխտ է վուր էկիլ է, հարցրեց ծանճուր Իվանիչը:

— Մէ ամիս կուլի՛:

— Մէ ամի՞ն, կրկնեց ծանճուր Իվանիչը, էտ վուչինչ-«Շամից էկած էլը մէ ամսից աւելի չի դուայ»: Նրանք օրթումի խաթրու իրանց դուլուղի առաջին մէ ամիսը քրթամից պաս ին մնում. ամա էնդումէն դէնը իրանք իրանց շաշկա-լօշկէն կուսկսին:

Այդ խօսքերը կարծես թէ մի փոքր ողեւորեցին Սիմոն Նազօրիչին. նա ողեւորուեցաւ, եւ նրա աչքերը անթարթ նայում էին ծանճուր Իվանիչին դմայլածի նման:

— Պսակուած է՞ էտ ինժինէրը:

— Պսակուած է ու վուրթիք էլ ունէ, պատասխանեց Սիմոն Նազօրիչը:

— Էտ ուվրօ լաւ. պսակուած մարդը աւելի փուղի կարօտ կուլի. հիմի ասա՛ տեհնիմ, քամի՞ տարեկան է:

— Քառասունից անց կուլի:

— Բաս դա հին դէլերէմէն է, ուրախութեամբ խօսեց ծանճուր Իվանիչը: — Էլ Ի՞նչ ինք հողում. նրա հիդ բանը խիստ հիշտ կուլի շինիլ:

— Տեհնինք, Աստուծ տայ, պատասխանեց Սիմոն Եազօրիչը: Ես վուր գիշերնիրը վատ էրապնիր իմ տեհնում... իմ խիւթին մէքիչ դժար է նստում ձիր ասածնիրը:

Սիմոն Եազօրիչը՝ շահասիրութեան այդ հին որսորդը, այնպէս պատկառանքով էր դատում այդ առարկայի վրայ, որպէս մի սուրբ իրողութիւն, եւ վշտացուցիչ տպաւորութիւն էր գործում նրա սրտին այն բանը, թէ ինչո՞ւ շուտ էն խափուում մարդիկ, որոնց հետ ինքը գործ է ունենում:

Նա հանեց դրօշանից քթախոտի տուփը եւ իւր ցուցամատի ու բխամատի նոյն դոյնով ներկուած պողուցով առաւ էնֆիան եւ վեր ուղարկեց դէպի քթածակերը: Եւ այդպիսով կծու փոշու գորութեամբ մի փոքր դրդիւ տալով իւր ուղեղին, մտաբերեց հեռու անցեալը, եւ յիշելով առաջուայ բարեսիրտ ինժեներներին, խօսեց.

— Աստուծ քու բանին ու գուրծին աջողութին տայ, Մաքսիմ Պետրովիչ... Ի՞նչ լաւ մարդ էր նա... Նրա վուխտին խէր բարաքաթ կար... Ի՞նչիւր էէր անում մարդ... սլօլիկ սալդաթներին տալու սպիրթի մէջ կէսը ջուր էի խառնում. դուքար Մաքսիմ Պետրովիչը, փորձելու համա սպիրթը կուտեհնէր, աչքերը կու խփէր, գլուխը ժաժ կուտար. «մօլդէց, Սիմոն Եազօրիչ, կ'օսէր, բարութից աւելի թունդ է»: Սալդաթնիրը կուրդաւէին ու կուճղաւէին, թէ արալի տիղ իրանց ջուր ին խմեցնում. «մօլլի, կ'օսէ, տի գուրակ. տի նիչալօ նի պանիմաեչ...»: »

— Էն մէկէլը խօմ, խօսքը առաջ տարաւ Սիմոն Եազօրիչը, — Վարլամպի Կալօշնիկովը, գրուստ Աստուծոյ դառը. նրա ժուկով կաղեօննի շինութեան փողբաթում պատերը մենակ թող ազուռ ըլին, մէջն ինչ գուղիս լըցրու... Ֆունդամէնտը խօմ... իստակ դեանի էրեսին. դուքար Վարլամպի Կալօշնիկովը, մտիկ կ'օսէր, մէքիչ էս կողմ, էն կողմ ման դուքար, մէ տիղ մէքիչ քանդիլ կուտար. ետոյ ձեռքը

մէջքիս կուխիէր. «մօլորէց, Սիմոն Եազօրիչ, կ'օսէ, շտարօնիբէ կահ բուստօ իղ ժիլէզա լիտօ»... Էտպէս բարի մարդ դժար կուլի, Աստուած դիտենայ... :

— Դրուստ վուր շատ լաւ մարդ է էլած, պատասխանեց Ճանճուր Իվանիչը: Խէր տուող մարդիկ ին էլած:

— Բաս էս անիծած Կուզմինի նմա՞ն, առաջ տարաւ Սիմոն Եազօրիչը բարկութիւն ցուցանելով աչքերում: Ինչքան դուզիս լաւ շինէ, դուքայ մտիկ կ'օնէ, անպատճառ մէ փուտ կուկպցնէ. էստեղ ծուռն է, կօսէ, էնտեղ մուռն է, կօսէ, ան թէ չէ կրելան լաւ չէ ծածկած, կօսէ, ան թէ ֆուռնդամէնար թոյլ է, կօսէ, մէկ էլ տեհնիս, էն սհաթեվէտ սասց. «լամա՛յ» ու քարուքանդ արեցին: Մէ խօսքով իստակ Աստուծոյ պատիժ է, խօմ մարդ չէ:

— Փիբբ չկայ, Սիմոն Եազօրիչ, մխիթարելով սասց նրան Ճանճուր Իվանիչը: — Ես քիզ սասցի, թէ դրանք իրանց դուլուզի առաջին ամիսը էտէնց կուլին, մազբամ ամիսը վուր անցկացաւ, վուզի լաղաթը տեհան թէ չէ, կամաց-կամաց կուսկաին «չ ու ր տ ու կ ու ւ ր տ ու ւ ն»:

— Աստուած տայ էտէնց բլի, պատասխանեց Սիմոն Եազօրիչը:

— Մազբամ դուն, Սիմոն Եազօրիչ, դիդիս ի՞նչ կ'օնիս. ասիմ քիզ. առուտեհան քաղքէմէն իմ բերած իքմիւրը կուզիբ ասնիս, կուտանիս էս Կուզմինի տուն. իրա համա ուրիշ է՝ իրան կուտաս. կնկայ համա ուրիշ է՝ կնկան կուտաս, Էրեխերքի համա ուրիշ է՝ Էրեխերքին կուտաս. ու կուտեհնիս տանը էլ ով կայ խէրով օքմին, մէբան էլ նրան կուտաս, իժու՛մ կ'օսիս. պաչօտնի դրածդանին աղա Ճանճուր Իվանիչն ուզում է ձիղ տեհնի. էնդի խօսքի միջում մէ թահր կույայտնիս, վուր օսկէ մինդալ էլ ունիմ. դուն խօմ դիդիս, քիզ ասիլ պէտք չէ. ետոյ նա ինչ վուխտ կ'օսէ, կ'եհանք նրան կուտեհնինք. ես նրա դուլսը էնպէս եղիմ,

վուր նա էլ էզուց ձեռը խփէ մէջքիդ ու ասէ՝ «ժօլօտէց, Սիմոն Եազօրիչ, վսէ խօրօջօ»։ Դուն գիշիս, ես սատանին կունալնիմ՝

Սիմոն Եազօրիչը խոստացաւ առաւօտեան կատարել նրա այդ պատուէրները, եւ իւր մտքի մէջ սկսաւ աղօթել վաղուան ձեռնարկութեան յաջողութեան համար։

Բայց ճրագուռի պատրոյզը բոլորովին վառուեցաւ։ Ներքեւի խանութիւններից ժամացոյցի յսպողը երկու անգամ ձայնեց «պու—պու»։

Գիշերից արդէն երկու ժամ անց էր։ Նրանք մի ժամի չափ եւս խօսեցին մթնում՝ Կուզմինի, Կալօշնիկովի եւ դրանց նմանների վրայ, մինչեւ մահճակալի վրայ հէնց այնպէս թեկն տուած ձանճուր Իվանիչի քունը տարաւ եւ նա սկսեց խեղդուողի նման խոխուալ։ Իսկ Սիմոն Եազօրիչը քնեց յատակի աղիւսների վրայ՝ փաթաթուելով իւր հին վերարկուռի մէջ։

ԺԳ

Միւս օրուայ երեկոյեան պահուն ձանճուր Իվանիչը, միեւնոյն մեզ նախածանօթ կապալով, միեւնոյն փափախով, նոյն անդրալարտիկով եւ նոյն խարաղի չաքմէքով, իւր հաստ մահակը ձեռքին Սիմոն Եազօրիչի հետ գիմում էր դէպի նոր ինժեների տուն։

— Գիղի՞ս ինչ կայ, Սիմոն Եազօրիչ, ասաց ձանճուր Իվանիչը, էս գիշեր ամէն ուստութիւն պիտինք բանեցնի, վունցոր ըլի բանը դրա հիդ սաղացնինք, թէ չէ՝ «խիւարը ծուրը կուհանաչի»։

— Էս ես վաղուց գիղիմ, պատասխանեց խոհեմ գործակատարը։

— Բայց դուն ինձ էն ասա՛, փէշքաշնրի համա ի՞նչ խօսեցին։

— Կնիկը վուր շատ ուրախացաւ, երեսերքն էլ էնպէս, ամա ինքը մէքիչ ուխը թթուեցրուց:

— Կնիկը ուրախացա՞ւ. էտ հերիք է, դրանց նոխտէն իրանց կնիկերանց ձեռին է. ինչի՞ չէր ուրախանա, նա իր կինքումը էնպիսի դէրիացուներ չէ տեհած, կուկարի ու կուհազնի. դուրերնատորի կնիկն էլ կունենայ էնպէսը ա՞յ, ու նրանց երեսերքը ե՞վ կերած կուլին էնթաուր կօնֆէտնիր կամ ունեցիլ ի՞նչ էնպիսի իզբուշկէք:

— Դա՞, պատասխանեց խորհրդաւոր եղանակով Սիմոն Եազօրիչը:

Նա կարծես նոյն բողէին մի ուրիշ բանի վրայ էր մտածում, այդ պատճառով ուշադրութեամբ չէր լսում ձանձուր Իվանիչին:

— Համա դուն ինձ էն ասա՛. թուղթ խաղո՞ւմ է էտ մարդը:

— Խաղում է, պատասխանեց Սիմոն Եազօրիչը:

— Խմելու հետ վո՞ւնց է:

— Իչի նման. մէ օր ուշեար չիս տեհնի:

Սիմոն Եազօրիչի վերջին պատասխանները ձանձուր Իվանիչի սրտին զգալի ուրախութիւն պատճառեցին եւ նրա երեսն ընդունեց ծիծաղկոտ կերպարանք:

— Բաս ասա՛, փուղի համա մեռած կուլի էլի՞, Սիմոն Եազօրիչ. էլ դարդ մի՛ անի. դրա հիդ բանը ուսիրօ լաւ կուլի սաղացնիլ, ասաց նա ուրախութեամբ, ինչպէս որ ուրախանում է դարանադործ որսորդը, երբ նկատում է թէ սրան ընկաւ նշանակեալ տեղը:

Բայց միեւնոյն միջոցին ձանձուր Իվանիչը դարմանում էր, թէ մի մարդ այդ բոլոր բա բ ի յ ա տ կ ու թ ի ւ ն ն երը, ինչպէս կոչում էր նա, ունենալուց յետոյ, ի՞նչպէս է կարողացել ազատուել Սիմոն Եազօրիչի ճանկերից, ու նրա կամքին դերի չէ դարձել: Այդ մտածումները ծնեցնում էր

Նրա մէջ մի փոքր անախորժ զգանցմունք, եւ նա ենթադրում էր, թէ Կուզմինը մի այնպիսի առանձնայատկութիւն ունի, որ չէ խորնարհւում Սիմոն Եագօրիչի խորամանկութեան կարող զօրութեանը: Բայց միեւնոյն բողբոջին նա իրան քաջալերում էր, ասելով. «Ինչ կուլի թող ըլի. փուղը նրան կատու կուշինէ»:

Մի փոքրիկ հասարակ տան մէջ, որ բաղկացած էր երեք սենեակներից, բնակվում էր Կուզմինը: Ճրագը մի ժամ առաջ արդէն վառել էին նրանց կացարանում: Ինժեները իւր գերզաստանի հետ բոլորած էին թէյի սեղանի շուրջը:

Կուզմինը կը լինէր աւելի քան քառասուն տարեկան, բարձր հասակով եւ լղար կազմուածքով: Նրա դլխի մազերը եւ դէմքը գետնախնձորի դոյն ունէին: Երեսը նիհար էր եւ երկայն, ծնօտները բարձր, քիթը կարճ եւ սրածայր, աչքերը նեղ, մոայլոտ, կապոյտ, յօնքերը լերկ, երեսի զծագրութիւնը կոշտ եւ արտայայտութիւնը սառն, անխորհուրդ եւ թմբած, ինչպէս որ առհասարակ լինում է դիմնամոլների դէմքը:

Նրա մօտ նստած էր մի հաստլիկ կինարմատ, որի ծնօտի ներքեւ մասնները այնպէս էին կախ ընկած, որ տեսնողը կը կարծէր, թէ երկու կզակ ունի. դէմքն ուռած էր. շատ գերութիւնից հաղիւ էին տեսնվում նրա պսպղում նեղ աչքերը եւ սրածայր քիթը: Նրա դիտակը շէկ դոյն ունէր, իսկ յօնքերը հաղիւ էին նշմարվում: — Դա Կուզմինի կինն էր:

Մի քանի մեծ ու փոքրիկ երեխայ ցածկոտում էին նրանց շուրջը. իսկ սեղանի մօտ թէյ էր պատրաստում ինժեների մեծ աղջիկը — մի նորահաս, կլորիկ օրիորդ, մօր նման կաղլիկ, սակայն բաւական անխորժելի կերպարանքով: Ինժեներին յայտնեցին ձանձուր Իվանիչի դալուստը:

— Ասա՛, թող դան, հրամայեց նա ծառային:

Նախասնեակում ձանձուր Իվանիչը հանդիպելով մա-

բուր հաղնուած փոքրաւորին, նրան տանտէրը կարծեց եւ փառաւորապէս դուրսը խոնահեցրեց. բայց Սիմոն Յազօրիչը զդուշացրեց, թէ նա չէ տանտէրը:

Նրանք ներս մտան:

Սիմոն Յազօրիչը, որպէս նախածանօթ, ներկայացրեց նրան Ճանճուր Իվանիչին:

Ճանճուր Իվանիչը իւր զիտցած բոլոր քաղաքավարութիւնները դործ դրեց. առաջ տանտիկնոջ ձեռքը սեղմեց, յետոյ տանտիրոջ, ապա աղջկայ եւ երբ մօտենալով կամենում էր երեսաների երեսը համբուրել, նրանք զարհուրելով նրա սարսափելի դէմքից, ճչացին ու փախան: Բայց Սիմոն Յազօրիչը նրանց հանդարտեցրեց, ասելով՝ թէ «մի՛ վախենաք, Ճանճուր Իվանիչը դեռ առաջ է կանգնած, որ ձեզ համար քաղցրուենիք եւ խաղալիքներ էր ուղարկել»:

Երեսայքը մի փոքր հանգստացան:

Ինժեներն ընդունեց Ճանճուր Իվանիչին խիստ ուրախ դէմքով եւ նստացրեց իւր մօտ կիսաթախտի վրայ: Առաջին խօսակցութիւնները՝ եղան սովորական հարց ու փորձեր միմեանց առողջութիւններից եւ թէ ո՞րքան ժամանակ է մնալու Ճանճուր Իվանիչը այդ քաղաքում:

Ճանճուր Իվանիչը ստից, զորդից, որքան ներում էր նրա լեզուի ճարտարութիւնը, բաւական դուրս տուաւ. պատմեց Թիֆլիզի նորութիւններից, աւելացրեց եւ մի քանի քաղաքական հին լուրեր, բայց իւր այնտեղ կարճ կամ երկար մնալու մասին ասաց, որ այդ կախուած է ինժեների բարեսրտութիւնից:

— Ես կ'աշխատեմ պատճառ չտալ ձեզ այստեղ երկար մնալու, պատասխանեց ինժեները:

Ճանճուր Իվանիչը մինչեւ դետին երկրպագեց:

— Ասացէք, ինդրեմ, Սիմոն Յազօրիչը զո՞ւ է ինձնից, հարցրեց ինժեները ծիծաղկոտ դէմքով:

— Ով որ ձեզնից դանդատի, կը նշանակէ, որ իւր աչքերիցն է դանդատում, պատասխանեց ծանճուր Իվանիչը: — Դուք այնքան բարի էք, որ անկարելի է ձեզնից դո՛ւ չլինել: Միմոն Եագօրիչը ո՛չ միայն այստեղ է շատ անդամ ինձ յայտնել որ շնորհակալ է ձեզնից, այլ այդ մասին գրել էր ինձ իմ Թիֆլիզ եղած ժամանակ:

— Ո՛չ, ես մի այնպիսի բան չեմ արած, որ որեւէ արժէք ունենար. բայց այսքանը դարձեալ բաւական կը լինի, եթէ Միմոն Եագօրիչը ինձնից դանդատաւոր չլինի:

— Нѣтъ, тотъ который маленькій не знаетъ и большой не знаетъ, պատասխանեց ծանճուր Իվանիչը, կամենալով յայտնել թէ նա՝ ով որ փոքր բարերարութիւնը չգիտէ, մեծն էլ չէ՛ կարող գիտենալ:

Կուզմինը ժպտաց:

— Ո՛րքան բարի մարդ էք, ծանճուր Իվանիչ, ասաց նա:

— Ես ամենայն կերպիւ պատրաստ եմ ձեզ ծառայելու, կրկնեց ծանճուր Իվանիչը:

— Այո՛, դուք բարի մարդ էք, միւս կողմից ասաց ինձ ժենէրի կինը ուրախութեամբ:

— Շնորհակալ եմ իմ մասին լաւ համարում ունենալուդ համար, դարձաւ դէպի նա ծանճուր Իվանիչը: Խնդրեմ ասէք, արդեօք հաւանեցա՞ք այն մատերխաները:

— Շատ լաւն էին, շնորհակալ եմ, պատասխանեց տիկինը:

— Բայց ես ձեզ յայտնում եմ այսուհետեւ ինչ որ ձեզ համար, կամ երեսխաների համար հարկաւոր կը լինի, ինձ գրեցէք, ես կ'առնեմ այնտեղից եւ կը ճամբեմ:

— Ո՛չ, հարկաւոր չէ՛ ձեզ նեղութիւն տալ, պատասխանեց տիկինը:

— Մայրի՛կ, խնդրեցէ՛ք ինձ համար մի դերխացու նոյն

կարից, որ ձեզ համար առել է, միւս կողմից խօսեց ին՝
ժենէրի մեծ դուստրը:

— Ա՛խ, ես մեղաւոր եմ ձեզ մօտ, բացականչեց ծան՝
ճուր Իվանիչը վեր կենալով նստած տեղից եւ դառնալով
դէպի օրիորդը՝ ձեռքը սրտին դնելով. — միայն մեծ յան՝
ցաւորը Սիմոն Եազօրիչն է, չէր յայտնել ինձ, թէ պարոն
Կուզմինը ձեզ նման հասուն եւ արժանաւոր դուստր ունի:
Ներեցէք խնդրեմ, ես քաղաք հասածիս պէս ձեզ համար
այնպիսի դէրիացուք կը ճամբեմ, որ ամէնքի նախանձը
չարժէք:

Օրիորդը իւր շնորհակալութիւնը յայտնեց՝ դուրսը
խոնարհեցնելով:

— Ի՞նչ էք անհանդատացնում դեռ ու չի ին, սաս՝
տեց նրանց Կուզմինը:

— Ո՛չ, պարոն Կուզմին, նրա ձեռքը բռնելով սասց
ծանճուր Իվանիչը, դուք վշտացնում էք ինձ, մենք արդէն
հատարակ ծանօթներ չենք, այլ մօտիկ բարեկամներ. ձեր
բոլոր պիտոյքները հոգալն այսուհետեւ լինելու են ինձ հա՝
մար ընտանեկան պարտաւորութիւն:

Կուզմինը հրճուելով գրկեց ծանճուր Իվանիչին.

— Ա՛խ, դուք բարի ծերունի, բացականչեց նա: Ես
արժանի չեմ ձեր այսչափ ազնուահոգութեանը:

Պօսակցութիւնը դնալով եղաւ ընդհանուր: Ծանճուր
Իվանիչը որսին բոլորովին տիրացած էր համարում: Բայց
տակաւին դորձ էր դնում իւր սովորական մարդահաճու՝
թեան գէնքերը: Սիմոն Եազօրիչը նոյնպէս մի փոքր քաջա՝
լերուելով ինժենէրի դիւրին անձնատուր լինելուց, շուտ՝
շուտ էնֆիլայից ճարակ էր տալիս իւր քթին մեծ բաւականու՝
թեամբ: Նրանք նշմարելով, որ բաւական նստեցին, Ծանճուր
Իվանիչը խնդրեց ինժենէրին, թէ նրա հետ առանձին խօսե՝
լիք ունի:

Կուզմինը վեր կացաւ. նրանք մտան կից սենեակը :

Ճանճուր Իվանիչը կարդաց մի ամբողջ գայլի շարական եւ վերջացրեց այս խօսքերով. — Դուք, պարոն Կուզմին, իբրեւ այս քաղաքում մի նորեկ մարդ, ձեր ծախսերից մի քիչ թեթեւանալու համար, խոնարհաբար խնդրում եմ, ընդունել ինձնից այս չնչին դումարը :

— Խնդրեմ, խնդրեմ, ճանճուր Իվանիչ, խօսեց Կուզմինը հրաժարուելով, ես իմ ծախսերի համար ոչինչ նեղութիւն չունիմ :

— Բայց եւ այնպէս. սեւ օրուայ համար պէտք կը դայ :

— Ես չեմ կարող ընդունել :

— Ես դիտեմ, որ դուք այնքան իստակ մարդ էք, որ իմ այսպիսի մի առաջարկութիւնը վշտացնում է ձեզ. բայց դուք աչքի առաջ ունենալով այն իրողութիւնը, թէ ընդունում էք ձեր հաւատարիմ բարեկամից ո՛չ թէ իբրեւ կաշառք, այլ իբրեւ բարեկամական օգնութեան մի նշան, յուսով եմ, որ դուք չէք մերժել իմ խնդիրը :

— Խնդրեմ, ճանճուր Իվանիչ, կրկնեց Կուզմինը. Դուք բռնաբարում էք իմ խրճմտանքս :

— Ես յուսով եմ, որ դուք այնքան բարի կը լինիք, որ բոլորովին դժուրեանակ ճանապարհ կը դնէք ինձ ձեր տանից : Կուզմինը լռեց :

Նրա լուսթիւնն արդէն նշանն էր հաճութեան : Ճանճուր Իվանիչը դրեց նրա զրպանը մի հաստ կապոց թղթադրամ :

Նրանք դուրս եկան սենեակից :

Սիմոն Եագօրիչը մի անգամ հազաց, կամենալով այդ խորհրդաւոր նշանով իմանալ, յաջողուեցաւ թէ ոչ :

Ճանճուր Իվանիչը երեք անգամ հազալով իմաց տուաւ, թէ գործը յաջողուեցաւ : Նրանք վերկացան, կամենում էին դնալ :

— Ո՛չ, չի կարելի այդպէս շուտ, ասաց Կուզմինը :

— Մնացէք ընթրիքի, խնդրեց կինը :

— Այժմ ներեցէք, միւս անգամ կը դամ երկար կը խօսենք, պատասխանեց ծանճուր Իվանիչը :

— Ուրեմն սպասեցէք, խնդրեմ, դոնէ մի—մի բաժակ պունչ, ասաց ինժեները :

— Այդ բարի բան է, պատասխանեց ծանճուր Իվանիչը : Ինժեների աղջիկը պատրաստեց երեք բաժակ պունչ ոսոմոյ : Նրանք վեր առան բաժակները, իրար չըխկացրին եւ՝ «ձեր հրամանոց կենացը, ձեր հրամանոց կենացը» ասելով ու միմեանց գլուխ տալով խմեցին :

Ծանճուր Իվանիչը ամէնի ձեռքերը մին—մին սեղմեց, բարի դիչեր ասաց, համբուրեց երեխաների երեսը, որոնք բաւական ընտելացել էին նրան, եւ նրանք հեռացան :

— Какой онъ славный человекъ! ասաց Կուզմինը նրանց գնալուց յետոյ :

— Да, очень благородный господинъ, պատասխանեց կինը :

Դուրսը շատ մութն էր : Նրանք խարխաբելով էին գնում ցիխերի միջով, որ դոյացել էր նորեկ անձրեւից :

— Հիմի հաւնում ե՞ս իմ խիլքը, ճանապարհին ասաց Սիմոն Եաղօրիչին ծանճուր Իվանիչը : — Տեհա՞՞ր, ա՛յ էտ—պէս կ'աւտունին (կը թովեն) մարդու հա՛ :

— Աստուծ դիդինայ, աղա, դուն զորբա ուստա իս էլի, պատասխանեց Սիմոն Եաղօրիչը : Իսկի չէի հաւատում վուր էտ շանվուրթին խիլքի գուքայ :

— Ուղուի գուղէ, Սիմոն Եաղօրիչ, խիլք դուղէ, իմաստութիւն գուղէ, ինչկլի բանը բան դառնայ. միւր աշխարքը ուստութիւնով ին կերած, չէ թէ զօռով : Փուղ դադիլը ամէն մարդու բան չէ, խօսեց ծանճուր Իվանիչը ներքին համոզմամբ :

— Աստուծ զիդենայ, դրուստ իս ասում, պատասխանեց Սիմոն Եազօրիչը, որպէս թէ լսում էր մի ճշմարտութիւն :

— Էս ինժենէրի աչքերը Քօնացրինք, էստումէն դէնը ինչ գուզիս արա, Սիմոն Եազօրիչ, էլ Կուզմինը քու շինութիւնների համա չի ասի լ օ մ ա յ : Դա էլ էն առաջուանների պէս էգուց էլօր ձեռքը կուխփէ մէջքիդ. «Տօլօղէց, Սիմոն Եազօրիչ, կ'օսէ, տըվայեա ստրօենիէ կրեպկի, կակ ժելէդօ» :

Սիմոն Եազօրիչը ուրախութիւնից սկսաւ ծիծաղել :

— Ես իսկի մտքէմէս չէի անցկացնում, վուր դա քըրթամ կուառնէ, ասաց նա :

— Ի՞նչ իս խօսում, օրհնած, մարդ կուլի՞ վուր փուղ չսիրէ : Աստուծ Ինքը քըթամը սիրում է. ինչկլի խոնկ, մոմ, մատաղ չիս անում, ինչկլի սրբերին բարեխօս չիս քցում, Նա քիզ չարից չէ փրկում, ասաց Ճանճուր Իվանիչը՝ դարմանալով իւր գործակատարի դատողութեան վրայ : Էս դուլուղի մարդկերանց ջէրը նրա համա ին ետնէն կարած, վուր նրանք խաչ-աւետարանի վրայ օրթում ին ուտում, վուր քըթամ չառնին, ու դրա համա էլ ձեռքով չին առնում. ամա վուր մարդ ետնէն ջիրն է կոխում, աչքով չին տեսնում, էլ չին խօսում :

Այդպիսի բաներ խօսելով, միմեանց իրանց սրտի ուրախութիւնը յայտնելով, ինժենէրների թուլութիւնների վրայ ծիծաղելով, Ճանճուր Իվանիչը իւր գործակատարի հետ ամենեւին չզգացին, թէ ինչպէս հասան պանդոկ :

Մտնելով իրանց կացարանը, Սիմոն Եազօրիչը մոմ վեր առաւ տարաւ ներքեւ խանութում վառելու, որովհետեւ լուցկի շուռնէին. բերելիս անիրաւ քամին հանգցրեց, կրկին դարձաւ, էլի հանգցրեց : Ճանճուր Իվանիչը վերելում, խաւարի մէջ կանգնած սպասում էր. երկար սպասելուց յետոյ նա դուրս եկաւ, տեսաւ՝ քամին չէր թողնում մոմը վառուի :

— Տօ՛, օրհնած, էտպէս կուրերի՞ն. մէ բան բուն է գլխին, էլ քամին չի կանա հանգցնի:

Սիմոն Եաղօրիչը շուտով շլապկէն գլխից առաւ եւ հովանի արեց մոմի վրայ: Այդ հնարքով թէեւ նա առանց հանդցնելու մոմը բերաւ իրանց կացարանը, բայց շատ ցաւեցաւ, երբ տեսաւ որ շլապկէն բաւական տեղ սյրուել է. ջուր ածելու փոխանակ թփեց սյրուած տեղի վրայ, մատներով հանդցրեց, մոմ ածողի ու կրակ մօզօնողի հէրն ու մէքը անիծեց, մի փոքր էլ բարկացաւ. բայց ձանձուր Իվանիչը նրան մխիթարեց, ասելով.

— Վնաս չունի, ջանըդ սաղ ըլի:

Սիմոն Եաղօրիչը հանդարտուեցաւ: Սենեակը լուսաւորուեցաւ: Ձանձուր Իվանիչը նստեց մահճակալի վրայ. նրա դէմքն արտայայտում էր լիակատար բաւականութիւն: Սիմոն Եաղօրիչը նստեց տարուրեաթի վրայ նրա հանդէպ. բայց նրա դէմքը դռհուռեղութիւն չէր ցոյց տալիս: Երեւի գլխարկի սյրուելը նրան ցաւեցրեց:

— Ի՞նչ իս ունքերդ կախ արի, ասաց նրան ձանձուր Իվանիչը: — Հիմի էլ ի՞նչ դարդ ունինք, էտ է՛ն էլ իօմ ցիւկմէն հանեցինք. դնա ներքեւ մէ չարէք գինի բի՛, էս գիշիւր մէ լաւ քէփ անինք, իժում գինջ քնինք:

Սիմոն Եաղօրիչը գնաց ներքեւ, եւ մի քանի բոպէից յետոյ դարձաւ չարէքանոցը լիքը գինիով:

Սեղանի վրայ դրուեցան խնձոյքի պատրաստութիւնները — երկու հատ չորացած հաց, մի կտոր հին դուրդէլ, ձանձուր Իվանիչի ճանապարհի պաշարից մնացած մի փոքր խաւեար, մի գլուխ սոխ եւ մի կտոր պանիր:

Սեղանը իւր բոլոր ճոխութիւններն ունէր երկու ընկերներին համար եւս:

Գաւաթները լցուեցան: Նրանց չրխկացրին. առաջին անգամ խմեցին միմեանց կենացը, յետոյ Կուզմինի կենացը,

այնուհետեւ կրկին եւ կրկին միմեանց կենացը, յետոյ նը-
րանց կենացը, ով որ ծովում փորձութեան մէջ է, ով որ
ղարբի է, ով որ հիւանդ է, վերջապէս ամէն նեղեալներ
կենացը: Եւ բախտաւոր շարէքանոցը մի անգամ եւս զնաց
եւ յետ եկաւ ներքեւից: Այնուհետեւ նրանց դուռխները տա-
քացան: Նրանք սկսան միմեանց հետ պոռօտի անել եւ ուրա-
խանալ. ծափ տալ, ուռուս դոռալ, մինչեւ ճանճուր Իվա-
նիչը իւր խոսքոս ձայնով երգեց վրացերէն. «Ա՛խ թվալէրօ,
թվալէրօ» երգը. Սիմոն Եղօրիչն էլ նրան ձայնակից
եղաւ: Այնուհետեւ ինքը՝ Սիմոն Եղօրիչը երգեց «Մօզի,
Լիզա ջան, իխրուկէ», նոյնպէս վրացերէն երգը: Խնճոյքը
տեւեց մի քանի ժամ, բայց տակաւին չարէքանոցի մէջ զինի
կար: Այն եւս սպառեցաւ: Սեղանի վրայ ոչինչ չմնաց ուտե-
լու: Մոմը բոլորովին վառուելով վերջապէս հանդաւ: Կա-
ցարանի մէջ տիրեց խաւար: Նրանք քնեցին:

Բայց ճանճուր Իվանիչի եւ Սիմոն Եղօրիչի փոխարէն
մոծակները, ճպուռները, լուերը եւ այլ միջատներ այնուհե-
տեւ սկսան տղվղալ եւ իրանց դիւային հարսանիքը կատա-
րել: Նրանք թէեւ իրանց խայթոցներով սկսան ծակոտել մեր
պարոնների մարմինը եւ ծծել նրանց արիւնը, բայց նրանք
ոչինչ չէին զգում, այլ խորին թմբութեան մէջ մրափում
էին:

ԺԵ

Մինչ ճանճուր Իվանիչը իւր դորձակատարի հետ,
պանդոկի կեղտոտ անկիւնում, իրանց աղքատին քէֆն էին
անում, Հացի-Գէլինց տանը մի փառաւոր զիշերային խնճոյք
էր սարքուած:

Գեղեցիկ զարդարուած դահլիճում վառվում էին զանա-
զան ճրագները: Ինքը օր. Սոֆին, բոլորովին սպիտակ՝
փրփուրի նման թեթեւ հաղուստով, ոսկի աղարանջաննե-

րով, ազամանդի քորոցը կրծքի վրայ, խիստ շնորհալի կերպով ընդունում էր հիւրերին :

Շուտով դահլիճը լցուեցաւ խայտաճամուկ բազմութեամբ : Նրանք ոչ միայն իրանց հաղուստի ձեւերով, այլ եւ իրանց սովորութիւնով ու բնաւորութեամբ զանազանվում էին միմեանցից : Նրանց մէջ կային ազջիկներ մօզնի հազնուած, բաց դուխներով, հոլանի բաղուկներով եւ կիսաբաց կրծքով ու թիկունքով : Նրանց մէջ կային ազջիկներ վրացի թասակրաւիններով եւ բաց կրծքով ու բաղուկներով : Նրանց մէջ, որպէս սեւ ազուաներ, դտնվում էին մի քանի թխազգեստ քաթիպաւոր քալրատօնօներ, որոնց հրաւիրել էր տ. Բարբարէն :

Տղամարդիկ թուով աւելի սահաւ էին, քան թէ ազջիկները : Այնտեղ պտըրվում էին մի քանի բուլվարի շրջիկ Փրանտներ, որոնք կտորատուելով այս կամ այն օրիորդի հետ քջիչում էին, եւ մի քանի կարտուղաւոր ու կարաւոր վաճառականներ՝ տ. Բարբարէի ազգականներից, որոնցից ամէն մինը նստած էր մի անկիւնում աթոռի վրայ. նրանք չէին շարժվում իրանց տեղից, կարծես թէ մեխուած լինէին աթոռին, միայն հեռուից իրանց աչքերը ճպճպացնելով, նախանձով դիտում էին, թէ ինչպէս Փրանտ երիտասարդները սեթեւեթում էին մտտազահաս օրիորդների հետ :

Օրիորդ Սոֆին թիթեռնիկի նման թռչկոտում էր այս կողմ եւ այն կողմ : Նա ուրախութեամբ դառնում էր մի ազջիկանից դէպի միւսը, նա դիմում էր դէպի երիտասարդները, որոնցից շատերը հրաւիրուած օրիորդների եղբայրներն էին, քաղցրախօսում էր նրանց հետ, ծպտում էր եւ պէս-պէս հրապոյրներով շահում բոլորի սրտերը :

Տ. Բարբարէն անշարժ նստած խօսում էր քաթիպաւորների հետ հին եւ նոր ազաթների վրայ : Իսկ Գրիգօշն ու Մայիլովը՝ մերթ այս, մերթ այն անկիւնում կանգնած նա-

յում էին. նրանք չէին համարձակվում խօսել օրիորդների հետ, մինչեւ նրանք չէին խօսացնում:

Խնճոյքը զնալով կենդանանում էր, ողևորվում էր, մինչեւ նա բոլորովին խռովեցաւ խօսակցութիւնների խառնաձայնութեամբ:

Ապա բաժանուեցան. աղջիկները կազմեցին փոքրիկ խմբեր: Եթէ որոշելու լինինք այդ խմբերը, նրանց տեսակները կը լինին այսպէս. — Մի կողմում հաւաքուած էին աղջիկները իրանց թասակրաւիներով, դրանց շատ անգամ երկչոտութեամբ մերձենում էին կարաւորները, եւ նրանց մէջ լսելի էր լինում վրացերէն քաղաքավարական բառերս — գենացվալէ, գէթաղվանէ, չէնի ճիբիմէ, թըքվէնմա սիցօցլալէմ, դիախ, եւ այլն. մի կողմում էլ մօզնի աղջիկները, ըստ մեծի մասին ռուսերէն լեզուով, եւ երբեմն վրացերէն խառնելով, խօսում էին թէ ի՛նչ նոր կտորներ են եկած, կամ այս ի՛նչ ու այն ինչ խանութում ի՛նչ նոր բաներ են վաճառում: Նրանց խօսակցութեան մէջ խառնվում էին եւ Ֆրանտները՝ այս կողմից, այն կողմից խօսք ու կատակ կցելով:

Իսկ Տ. Բարբարէի շուրջը բոլորել էին քաթիպաւորները եւ մի քանի կարաւորներ, գարձեալ վրացերէն, երբեմն հատուկօր հայերէն խառնելով, դուրս էին տալիս քաղաքի նորութիւնների կամ հացի եւ այլ ուտելիքների էժանութեան մասին:

Իսկ երբեմն այդ խմբերը դիմում էին միմեանց եւ խօսակցութիւնը լինում էր ընդհանուր: Բայց օրիորդ Սոֆին հանդիստ չէր մի տեղում, նա անդադար դառնում էր մի խմբից դէպի միւսը: Նա նշմարեց Մայիլովին եւ տեսաւ որ նա բոլորովին ուրախ չէ. մօտեցաւ նրան. — Ի՞նչ է, Նիկօլ, դու ինչո՞ւ ես այդպէս տխուր, հարցրեց նա:

— Ես տխուր չեմ, պատասխանեց Մայիլովը:

— Ո՛հ, դու այստեղ մենակ ձանձրանում ես : Գրիգօլը չէ՛ գրագեցնում քեզ, զնանք այնտեղ աղջիկներէ մօտ :

Եւ օրիորդ Սոֆին բռնեց նրա ձեռքից, բերաւ մօզնի աղջիկներէ մօտ, որոնք իրանց ուսումնս աւարտելով զանազան իզական վարժարաններում, իբրեւ ներկայացուցիչներ էին ուսնալ և կրթեալ օրիորդներէ . զրանք պիտի լինէին մայրերը նոր սերունդի :

Հիւրասիրութեան յառաջարանն սկսուեցաւ թէյով, որ մատուցին պերճմնիով և ոմանց լիմօնով : Սպասուորները մաքուր հազնուած անզաղար տանում ու բերում էին դաւաթները :

Նոյն միջոցին համարեա բոլորն էլ նստոտել էին զանազան տեղերում և խօսում էին :

Բայց ի՞նչ էին խօսում :

Եթէ չի ձանձրանայ մեր պատուելի ընթերցողը, մենք նրան մի քանի բողբոջ կը մօտեցնենք կրթեալ օրիորդներէ խմբին, և նա կը լսէ մեր ապագայ մայրերի զրոյցները, որ թէյի քաղցր հեղուկը խմելով կցել էին նրանք :

Թէեւ աղգային բարբառով չէր նրանց խօսակցութիւնը, բայց մենք զնում ենք նրանց հայերէն թարգմանութիւնը :

— Այնպիսի մի կիսակօշիկներ է ստացել մադամ Տօլլէն, որ հրաշալի՛, ասաց մի շիկամագ օրիորդ, զո՞ննատուելով, կու՛զ գալով խմելու միջոցին, որ կարծես թէ մի սքանչելի իրողութիւն էր պատմում :

— Ջանջուղաղովի մազաղինում նոյնպէս լաւերն են ծախում, ևս իմս տասը մանթիով առայ շատ հիանալի բաներ են, առաւելապէս կրունկները . ճոճոցը խօմ պատմել չէ կարելի, ասաց մի այլ օրիորդ սեւ դիսակով, թուխ դէմքով, և և միեւնոյն ժամանակ վեր քաշելով իւր զգեստի փէշերը, ցոյց տուաւ իւր փոքրիկ ոտքը :

— Իմը ես առեւ եմ ութ մանէթով . իմ կարծիքով քոնից լաւն է, նրա խօսքը կտրեց առաջին շիկամազը :

— Նայեցէք՝ ինչպէս են ճոճոտում :

Եւ նա վեր կացաւ մի պտոյտ արաւ եւ դարձեալ նստեց : Եւ արդարեւ նրա կիսակօշիկները ոչ թէ ճոճոտում էին, այլ կարելի է ասել որոտում էին :

Լսողները վճռեցին թէ շիկամազի կիսակօշիկները աւելի լաւն են քան թէ թխամազինը :

— Ջանջուղազովի մաղաղինում թէեւ կիսակօշիկները աւելի դովելի չեն, բայց լաւ ձեռնոցներ են ծախում, — մէջ մտաւ մի այլ օրիորդ մեծ-մեծ, վառվռուն աչքերով եւ նիւհար դէմքով եւ կամեցաւ ցոյց տալ իւր ձեռնոցները, որ դնել էր այնտեղից :

— Է՛հ, այդ հայերը հէնց խարում են, նրա խօսքը կտրեց մի այլ օրիորդ, կարծես թէ ինքը հայ չլինէր : — Դուք քանիսո՞վ առաք ձեր ձեռնոցները, Մակա՛, հարցրեց նա վառվռուն աչքերով օրիորդից :

— Մանէթուկիսով, պատասխանեց Մական :

— Բայց ես Բլօսից առել եմ վեց ապաստով եւ ձերիցը վատ չէ, պատասխանեց օրիորդը :

Մական լռեց :

Բայց օր . Սոֆին նոյն բոպէին խօսում էր մի երկտասարդի հետ, եւ Աստուած դիտէ ինչեր էր խօսում . միայն նրանից բաժանուելու միջոցին, կրկին դարձաւ դէպի նա եւ ժպտաց . — Ա՛խ դու անխիղճ, ասաց եւ հեռացաւ : Նա եկաւ եւ կանդնեցաւ օրիորդների մօտ, որոնք խօսում էին կիսակօշիկների մասին :

— Սոֆի, դուք օղբկօլօնը եւ դուխը ումից էք դնում, հարցրեց նրանից մի օրիորդ մեծ քթով եւ հասա շրթունքներով :

— Բիշարից, պատասխանեց օր . Սոֆին :

— Ի՞նչ անոյշ հոտ է դալիս ձեզանից, կրկնեց մեծ քթանին:

— Մի՞թէ ձեզ ախորժելի է, փպտալով հարցրեց օր. Սոֆին եւ ուրախացաւ, որովհետեւ իւր վրայ լաւ նկատողութիւն էին անուս:

— Ես էլ այսուհետեւ այնտեղից պիտի դնեմ, ասաց առաջինը:

— Սոֆի ճանճուրեւեմա, աւելի քաղաքավարութեամբ կոչեց նրան մի այլ աղջիկ զուարթ եւ ուրախ դէմքով:

— Ի՞նչ է', դարձաւ դէպի նա Սոֆին:

— Այս կիւրակէ այգուսն էի՞ք:

— Այո', այնտեղ էի:

— Դուք տեսա՞ք այն երկու ուսու օրիորդներին. Ի՞նչ գեղեցիկ հաղնուած էին:

— Այո', տեսայ, բաց-երկնագոյն՝ աղիւսաւոր կտորից, ես արդէն առել եմ ինձ համար մի դէրիացաւ ծուրինովի մազազինից, պատասխանեց Սոֆին:

— Ես էլ անպատճառ պիտի առնեմ այն կտորից, մէջ մտաւ մի այլ օրիորդ: — Ես էլ տեսայ նրանց, ինձ եւս շատ դիւր եկաւ նրանց հաղուտը. մանաւանդ ծալուածքը հիանալի էր, թէ եւ բուզմէքը հին մօզայի ձեւով էին:

— Ո՞չ, Ի՞նչպէս թէ հին. այդ նոր եւ վերջին մօզան է, նրա խօսքը կարեց զուարթադէմ օրիորդը:

— Ո՞չ, հին էր, նոյն ձեւով կարել էր տուել Կմախովի աղջիկը երկու ամիս առաջ, պատասխանեց երկրորդը:

Եւ նրանք սկսեցին վիճել այն երկու ուսու օրիորդների հաղուտի բուզմէքի հին կամ նոր մօզայի ձեւով լինելու մասին. վէճը սաստկացաւ: Միւս օրիորդները մէջ մտան պարզելու, թէ ո՞վ է ուղիղը եւ ո՞րի կողմն է իրաւունքը: Գննութեան գիւտն բաց եղաւ նրանց խմբի մէջ:

Բայց մինչ նրանք վիճում էին, երկու օրիորդ, բաժան-

ուած այդ խմբից, հետու մի անկիւնում նստած, միմեանց հետ քչփչում էին, միւսներին անլսելի ձայնով: Նրանցից մինը մի բարձրահասակ օրիորդ էր, սեւ ու փայլուն աչքերով եւ ախորժելի դէմքով. նա կոչվում էր Անիշկա: Միւսը մի նրբակազմ օրիորդ էր, քնքուշ դէմքով. դա կոչվում էր Լիզա:

— Դուք սիրում էք նրան, Անիշկա, մի՛ խարէք ինձ, ասաց նրբակազմ օրիորդը:

— Ո՛չ... նա այնպէս երբեմն դալիս է մեր տուն, եղբորս հետ շատ ծանօթ է, եւ ինքն ուսումնական տղամարդ լինելով, ես յարգում եմ նրան, պատասխանեց Անիշկան:

— Դուք ուղիղը չէք խոստովանում ինձ, խօսեց Լիզան. ես ձեզանից ծածոնկ ոչինչ չունիմ, բայց դուք ինձ մօտ սրտաբաց չէք:

— Ես կը խնդրէի որ այդ մասին ինձնից ոչինչ չհարցնէք:

— Դուք վշտացնում էք ինձ, Անիշկա:

— Ես խնդրում եմ հանդիսա թողնել ինձ:

Մինչ Լիզան կամենում էր եւ մի երկրորդ հարց տալ, նրանց խօսակցութիւնն ընդհատեց օր. Սոֆին.

— Միմեանց ի՞նչ էք խոստովանվում այս անկիւնում, հարցրեց նա:

— Ոչինչ, խօսում ենք էլի, պատասխանեցին նրանք:

Օր. Սոֆին կանգնեց եւ սկսաւ մի քանի նկատողութիւններ անել Քրանտ երիտասարդներէ մասին. մինին զփաստանեց, միւսի վրայ ծիծաղեց. նրա քիթը ծռուն է, միւսի գլխի մազերը խոզի են նմանում, այն միւսը թէեւ սիրուն է, բայց շատ հպարտ է, այն մինի դէմքը ախորժելի է, բայց աչքերը խիստ փոքր են. եւ այլ այդպիսի կատակներով խօսում էր նա եւ անընդհատ ծիծաղում:

— Անվայել է այդպիսի նկատողութիւններ անել իւր հիւրերի վրայ, նկատեց նրան Անիշկան:

— Ինչ անտանկի է, երբ մարդիկ զեղեցիկ չեն, ասաց
օր. Սոֆին եւ հեռացաւ զնաց Մայիլովի մօտ :

— Նա խելքից ելած է այդ գիմնադիտտի համար, ասաց
Անիչկան օր. Սոֆիի գնալուց յետոյ :

— Մի՞թէ, զարմանալով հարցրեց Լիզան, չէ՞ որ նա
գեռ երեխայ է :

— Ի՞նչ փոյթ, օրինորդ Սոֆին այդ տեսակ ճաշակ ունի
ընտրութեան մէջ :

— Ա՛յ յիմար, կրկնեց Լիզան :

Բայց օր. Սոֆին թողեց Մայիլովին եւ սկսեց քաղցրա-
խօսել մի բարձրահասակ երիտասարդի հետ :

Լիզան եւ Անիչկան կցեցին իրանց ընդհատուած խօսակ-
ցութիւնը :

— Դարձեալ չէ՞ք ասելու, հարցրեց Լիզան :

— Ի՞նչ, ասաց Անիչկան :

— Դուք սիրում էք նրան :

— Ի՞նչու չսիրել նրան, պատասխանեց Անիչկան : Նա
չառ արժանաւոր տղամարդ է, մեծ ուսումով եւ ազնուա-
բարոյ. նա այնքան գեղեցկախօս է, որ մարդ ախորժում է
միշտ լսել նրան. նրա ձեւերի, նրա շարժուածքի, նրա բոլոր
դոյութեան մէջ այնքան հրապուրանք կայ, որ չէ՛ կարելի
չսիրահարուել նրա վրայ :

— Ի՞նչպէս է նրա անունը, հարցրեց Լիզան :

— Այդ մի պատմական անուն է, որով կոչվում էր
Հայկազանց երեւելի տներից մինը Վասպուրականում, պա-
տասխանեց Անիչկան :

— Իրանք նոյն տնից են :

— Յայտնի չէ՛, միայն ազնուատոհմիկ են :

— Ի՞նչ գործով է պարապում նա :

— Նա եկած է մեր քաղաքը երեսի հիւանդութիւնը

բժշկելու համար, եւ մասնաւորապէս փաստաբանութիւն է անում:

— Նա նոյնպէս սիրում է՞ ձեզ:

— Զգիտեմ, ցաւելով պատասխանեց Անիշկան, միայն նա խիստ սառն է ինձ հետ: Բայց դուք սաղացրի՛ք նոյնի հետ, խօսքը փոխեց նա:

— Սաղացրի, ժպտալով պատասխանեց Լիզան. այսօր ստացայ նրանից այս տոմսակը:

Եւ Լիզան հանեց իւր ծոցից մի փոքրիկ թուղթ, տուաւ իւր խօսակցին. նա շտապով տողերը աչքի անցրեց: Տոմսակի մէջ զբուած էր. «Զեր տանն արգելում են մեզ... շարաթօրը երաժշտական կրօնօկոսմ դիմակահազէս կը լինի. այնտեղ կը սպասեմ ձեզ»:

— Ուրեմն այդպէս, Լիզա, հա՞, նրա երեսին նայելով ասաց Անիշկան: Դուք ինձնից բախտաւոր էք:

— Ի՞նչպէս, հարցրեց Լիզան եւ ծիծաղեց:

— Այո՛, մեծ զանազանութիւն կայ նրանց մէջ, որոնցից մինը հասած է իւր նպատակին, իսկ միւսը ապրում է լոկ յոյսերով, պատասխանեց Անիշկան:

Օր. Սոֆին դարձեալ ընդհատեց նրանց խօսակցութիւնը:

— Զեր մէջ անշուշտ մի բան կայ, որ այդպէս թաքուն-թաքուն խօսում էք, ասաց նա:

— Ի՞նչ պիտի լինի:

— Ո՛չ, կայ, ես գիտեմ... միայն վե՛ր կացէք, խնդրեմ, աջկերքը կամենում են պարել:

Անիշկան եւ Լիզան դուրս եկան իրանց անկիւնից եւ գնացին միւս աջկերանց մօտ:

Պարերը նոյնպէս եղան այնպէս զանազան, ինչպէս որ զանազանում էին նրանք իրանց հազուստներով եւ իրանց մտքերի հայեացքով:

Ուսուսել օրիորդները ցանկացան պարել տանց: Ահսո՛ս որ չկար կանոնաւոր մուգիկա: Այնուամենայնիւ նրանք բանը գլուխ բերին: Օր. Սոֆին նստեց պիանօի առջեւ, պիանօն հնչեց խիստ հիանալի կերպով, եւ զոյգերն սկսեցին պտոյտ դալ:

Յետոյ մի այլ օրիորդ սկսաւ ածել եւ օր. Սոֆին՝ ազատուելով պիանօից, վեր կացաւ եւ խառնուեցաւ պարողներին հետ: Նա ընտրեց իրան պարընկեր Մայիլովին:

Այդ եզանակը նոյնպէս վերջացաւ:

Դրիզօն ածեց ջութակի վրայ վալս:

Օրիորդ Սոֆին այս անգամ պարեց բարձրահասակ ֆրանսի հետ:

Եւրոպական պարերը վերջացան:

Որովհետեւ թատախրաւիով աղջկերքը՝ եւրոպական պար չգիտենալու պատճառով անմասն մնացին պարելուց, ուստի նրանք ցանկացան պարել առիական խողեր: Եւ իսկոյն կազմեցին մի շրջան. նրանցից մինն սկսաւ ածել դայրա, միւսը գիմպլիպիտօ եւ մինն էլ հնչեցրեց փոքրիկ հարմօնը, իսկ միւսներն սկսեցին ծափահարել. ապա նրանցից մինն սկսաւ խողալ լիզդինկա: Նա փոխուեցաւ: Նրա տեղ անցաւ մի այլը: Եւ այնքան խողացին մինչեւ բոլորն էլ յոգնեցան:

Պարերը վերջացան: Բոլորն էլ նստուեցին հանգստանալու: Մատուցին թարմ միրգ:

Այնուհետեւ օր. Սոֆին դարձեալ սկսաւ ածել պիանօի վրայ եւ երգել: Նրա ձայնը այն դիշեր բոլորովին հիանալի էր: Ամէնքը ծափահարեցին եւ խնդրեցին կրկնել:

Օրիորդը կրկնեց:

Տ. Բարբարէն հետուից հրճուանքով նայում էր իւր դստեր արժանաւորութեան վրայ, մանաւանդ երբ նկատեց, որ երիտասարդներն առանձին համակրութեամբ էին լսում նրան: Նա մի քանի հաճոյական խօսքեր եւս լսեց իւր մօտի

կնիկներէց, որոնք ասացին նրան՝ «Շատ ապրի աղջիկդ, Բարբարէ, Աստծու աչքը նրա վրայ ըլի. շատ շնորհալի աղջիկ է»:

Մի քանի օրիորդներ նոյնպէս ածեցին եւ երգեցին, բայց ոչ այնպէս, ինչպէս որ օր. Սոֆին:

Այնուհետեւ բոլոր աղջկերքը շարուեցան մի երկայն սեղանի շուրջը եւ պատրաստուեցան լոտո խաղալու: Նրանց ընկերացան եւ մի քանի երիտասարդներ, բայց մնացեալ երիտասարդները բաժանուեցան նրանցից եւ սկսան խաղալ պրօֆերանս:

Լոտո խաղացող աղջիկներէց ոմանք մէջ բերեցին փող, մինը իւր մատանին, մինը իւր քորոցը, մինը իւր ազարանջանը. մի խօսքով, ով ինչ լաւ բան որ ունէր՝ առաւելապէս իւր ընկերուհիներին ցոյց տալու համար, դրաւ մէջտեղ: Մի աղջիկ կարգուեցաւ դանձապետ: Նրա մօտ դրուեցան երկու ափսէ եւ մէջն ածեցին լօրիի հատիկներ՝ հաշիւները պահելու համար: Խաղի թղթերը բաժանուեցան: Գլուխը կապած աղջիկներէց մինը, որ լաւ չգիտէր ուսերէն համարել, սկսաւ դուրս հանել թուերի կէնճիքը եւ բարձրաձայն ասել թլուատ լեղուով. տ ու ն ս ց ի տ (տասերկու), պ ի տ լ ա ց ի տ (տասնեւհինգ), փ ե տ կ ա (հինգ), տ ե ս ե տ ն ի կ (տասն), կ ո ս տ օ (իննսուն): Աղջկերքն սկսան ծիծաղել նրա արտասանութեան վրայ, նա կարճեց եւ դարձեալ սկսեց շարունակել՝ պ ի տ ե ս ա թ ր օ վ ն օ (յեսուն), տ ու զ ի ս ու զ ի (վաթսունինը): Աղջկերքը դարձեալ սկսան ծիծաղել նրա այդ զուարճալի փոխարեբութիւնների վրայ:

Նրանցից մի փոքր հեռու մօզնի երիտասարդները կոչում էին թրխկացնելով սեղանին — ս ե մ պ ի կ կամ չ ե ր վ ի եւ կամ բ է զ կ օ զ ր է յ, եւայլն:

Բայց նրանցից հեռու տ. Բարբարէն մի կարաւոր հաստափորի հետ խաղում էր դուրաչկա: Օր. Սոֆին անցաւ

Նրանց մօտից : Նրանք հրաւիրեցին իրանց հետ խաղալու : Բայց օրիորդը հրաժարուեցաւ, ասելով՝ Թէ ինքը չէ կամենում փրնրչու խաղ խաղալ :

Մի կողմում էլ նստած էին կարաւորները : Նրանք ձգում էին նարդիի դարը կոչելով — շէ շ ու ր է շ, խալխալ ևւայն : Մի քանի հոգի էլ, նոյն կարգի մարդկանցից, նստած նայում էին նրանց խաղին կամ ուղղում էին նրանց սխալը :

Մի քանի ժամ տեւեց նրանց լտօսն, կէս ժամ էլ տեւեց հաշիւը, մինչև լօրիով որոշեցին, Թէ ով ո՛րքան տարած է, կամ ո՛վ որքան տանել էր տուած : Տանողն առաւ, տանել տուողը տուաւ : Խաղը վերջացաւ :

Գիշերային խնջոյքի վերջարանն եղաւ զանազան քաղցրաւենիք, տեսակ-տեսակ մուրաբէք, որոնք ճաշակելուց յետոյ մի փոքր եւս խօսեցին, մի փոքր եւս քչիչացին : Կէս գիշերից արդէն երկու ժամ անցած էր, երբ հիւրերը շնորհակալութիւն անելով սկսեցին հեռանալ Հացի-Գէլենց տանից, իսկ ոմանք գիշերեցին այնտեղ :

Այդ միեւնոյն ժամանակ Ճանճուր Իվանիչը իւր աղքատին քէֆը վերջացնելով Սիմոն Եագօրիչի հետ, վաղուց քնած էին պանդոկի կեղտոտ եւ խոնաւ սենեակում : Թէեւ լուերը եւ մլուկները շարաշար ծակոտում էին նրանց մարմինը եւ ծծում նրանց արիւնը, բայց նրանք խորին քնի մէջ մրափում էին եւ ամէն մինը մի սարսափելի երազ էր տեսնում : Սիմոն Եագօրիչին երեւում էր, իրբ Թէ ինժեներ կուղմինը քննելով նրա շինութիւնները, պակասութիւններ էր գտել եւ հրամայում է քանդել : Իսկ Ճանճուր Իվանիչին երեւում էր տ. Բարբարէն, որ ներս գալով նրա սենեակը՝ պահանջում է Սոֆիի առաջարկութիւնները :

ԺԳ

Հասաւ յուլիս ամիսը :

Տօթը դնալով աւելի սաստկանում էր . փոշին մարդ էր խեղդում , եւ եղանակը օրէցօր անտանելի էր դառնում : Բուր երեւելի դերդաստանները դնացել էին ամալանոց , եւ քաղաքում մնացել էին միայն այսպիսի մարդիկ , որոնք չեն կարող բաժանուել կեանքի հողաերից :

Սայիլովը նոյնպէս չէր երեւում Հացի-Գէլինց տանը , նա մի շարաթ առաջ մնանք բարով ասելով օր . Սոֆիին , դնացել էր Կօջօր : Բայց մեր հերոսուհին օր ու դիշեր հեծում էր տիրութիւնից՝ իւր սիրոյ առարկան մօտը չլինելու համար , մինչեւ մի օր փոքր ինչ ուրախացաւ , երբ նրանից ստացաւ մի այսպիսի նամակ .

«Իմ հոգու հատոր ,

սիրելի իմ Սոֆի .

. » :

— Հրաշալի՜ փոփոխութիւն . . . բացականչեց օրիորդը . Ա՛խ , սէ՛ր , սէ՛ր , ի՛նչպիսի աստուածային զօրութիւն է թագուցած քո մէջ . . . : Նա բաց է արել մունջ լեզուն , նա վառել է նրա սրտում երկնային կրակ , նա շնչել է նրա հոգում այսպիսի քնքուշ զգացմունքներ . . . եւ սառնարին սքօրական համբակը՝ ոգեւորուած այսպիսի նամակ է գրել . . . :

Նա երկրորդ եւ երրորդ անգամ կարգաց նամակը , սեղմեց նրան իւր կրծքին եւ հիացմամբ սկսաւ զմայլիլ իւր սիրոյ առարկայի վրայ :

Յանկարծ դրսում լսելի եղան ճանապարհորդական սայլակի զանգուլակների ձայն , եւ մի քանի րոպէից յետոյ ծառան յայտնեց , թէ աղան եկաւ Կաւկայից :

Հօր դարուստն առաւել եւս ուրախացրեց օրիորդ Սօֆիին, որովհետեւ նա մտածում էր, թէ այնուհետեւ անարգել կարող են ամարանոց գնալ:

Օրիորդն ուրախութեամբ դուրս վազեց եւ գտաւ իւր հօրը դահլիճում բոլորովին արեւից այրուած եւ փոշոց սեւացած. օրիորդը քնքշութեամբ զրկեց նրան եւ համբուրեց նրա ձեռքը, հայրն էլ համբուրեց նրա երեսը:

Շուտով շրջապատեցին նրան տ. Բարբարէն, նրա միւս աղջկերբը՝ Լիդան եւ Ելէնան, սկսան փաթաթուել նրա վզով: Ճանճուր Իվանիչը խիստ ուրախութեամբ ընդունեց իւր զաւակների զգուանքը, եւ նրա գէմքը թէեւ արեւի կիզող ճառագայթներից այլայլուած, բայց արտայայտում էր զոհունակութիւն, որով երեւում էր, թէ նրա զործերը յաջողել են կաւկայում: Նա հանուեցաւ. ծառաները ջուր բերին լուացուելու:

Կէսօր էր: Ճանճուր Իվանիչը լուացուեցաւ, ճանապարհի փոշին թօթափեց իւր փափախից, կարայից եւ արխալուզից, ճաշեց եւ պատրաստուեցաւ շուկայ գնալ նոյն հալուստով:

Տ. Բարբարէն խնդրեց, որ այդ օր փողոց չգնայ, այլ մնայ տանը հանդստանայ, երեկոյեան պահուն բաղնիք գնայ, այնուհետեւ միւս օրը դուրս գայ փողոց: Բայց Ճանճուր Իվանիչը չյօժարեցաւ — իմ հանդստութիւնը իմ զործերս են, ասելով, տանից դուրս գնաց, թէեւ վրայից սարսափելի անախորժ թթուահոտ էր բուրում:

Ճանճուր Իվանիչի գնալուց յետոյ տ. Բարբարէն եւ օր. Սոֆին մնացին միայնակ միասին:

— Տեսնում ե՞ս, մայրիկ, այսօր արեւը տօթային է, սաայ օր. Սոֆին:

— Հա՛, Սոֆի, պատասխանեց տ. Բարբարէն, դուրսը

կարծես տաքացրած փուռը լինի. խեղճ հայրդ ի՞նչպէս է եկել այս տաք օրին :

— Յայտնի բան է մեծ նեղութիւնով, Բայց, մայրիկ, ես չեմ կարող տանել այս տօթը, խօսքը փոխեց նա, եթէ այս ամառ քաղաքում անցկացնեմ, անպատճառ կը հլաւնդանամ :

— Ուրեմն միտք ունիս ամարանո՞ց դնալ, հարցրեց մայրը :

— Ես արդէն սովորած եմ. մենք վարժարանում եղած ժամանակ ամէն ամառ դնում էինք, պատասխանեց օրիորդը :

— Շատ լաւ. մի քանի օր համբերի՛ր, ես այդ մասին կը խօսեմ հօրդ հետ եւ անպատճառ կը տնօրինեմ, որ այս ամառ Կօջօր դնանք :

S. Բարբարէն թողեց իւր աղջկան միայնակ եւ դուրս դնաց ծառաներին պատուէրներ տալու. իսկ օր. Սոֆին մտաւ իւր սենեակը, ներսից դուռը կողպեց, էլի մի անգամ կարգաց նամակը, որ ստացել էր Մայիլովից եւ սկսաւ պատասխանը գրել :

Աւելորդ եմ համարում մեր հերոսուհու նամակի պատճէնը հաղորդել ձեզ, պատուելի ընթերցող, մտածելով, թէ դուք շատ անգամ կարգացած կը լինիք նամակներ, թէ ի՞նչ են դրում սիրուհիք իրանց սիրականներին : Նրանց ս'չ միայն խօսքերը, ոճը, եւ պարբերութիւնները շնչում են ամբողջ բանաստեղծութեամբ, այլեւ թուղթը, նրա դոյնը, նրան կարները, թանաքը, կնքամոմը, ծրարը, — այդ բոլորը պարունակում են իրանց մէջ սիրոյ զաղտնիքներ :

Մենք հանգիստ թողնենք օր. Սոֆին իւր նամակը գրելու, այժմ տեսնենք, թէ ուր դնաց ճանճուր Իլյանիչը :

Նա իւր տանից դուրս գալուց յետոյ ոտքով մի քանի ժամուայ մէջ շրջեց բոլոր գլխաւոր տեղերը, ուր գործ

ունէր: նախ եւ առաջ զնայ ի նժեռնէրն ոյ է ոււրաւ-
լէն ի էն. իսկոյն լուսեցին ծառայողներ ի ողջոյնները. «բա-
րով, բարով, Ճանճուր Իվանիչ», կոչեցին զանազան ձայ-
ներ: նա մօտեցաւ այս կամ այն ծառայող աստիճանաւո-
րին, սեղմեց նրանց ձեռքը, մի փոքր խօսեց, մի փոքր ծի-
ծաղեց, մի փոքր սրա եւ նրա ահանջուժ քչիւնաց: Այնտեղից
զուրս եկաւ բիրժի առջեւ: Կեղծաւորաբար մօտեցաւ սրան,
նրան, «բարով, Իսակ Մարտինիչ», «բարով, Գարասիմ Եւ-
կուլիչ», ասելով մօտեցաւ զանազան մարդկանց, սկսաւ
երկար ու բարակ հարցնել նրանց քէ՛Քը, նրանց տանեցոց
առողջութիւնը. մի փոքր զուարճարանեց, մի փոքր փա-
զաբչեց, այնուհետեւ զլուխ տալով հեռացաւ, իւր մտքի մէջ
հայհոյելով նրանց ծնունդը. «քու հէրն անիժած» ասելով,
նա սկսաւ զիմել զէպի Միջի-փողոց: Այնտեղ եւս զանազան
մարդկանց զլուխ տալով, ամէն մինի հետ մի քանի բոպէ
խօսելով, անցաւ բազաղխանա:

Բայց ուշադրութեան արժանի է այն, որ երբ մարդիկ
նրանից հարցնում էին, թէ ի՞նչպէս անցան իւր Կաւկայի
կապալները, շահաւէտ էին, թէ ո՛չ: Ճանճուր Իվանիչը ցոյց
էր տալիս անչափ դժգոհութիւն, ասելով թէ նա պիտի բաւա-
կան վնաս ունենայ Կաւկայում, թէեւ այն տարի նրա Կաւկայի
կապալները խիստ շահաւէտ եղան. բայց Ճանճուր Իվանիչը՝
վնաս ցոյց տալու մէջ ունէր իւր փոքրիկ քաղաքական խորա-
մանկութիւնը, այն է, որ միւսները այնտեղի կապալները
վնասակար համարելով չմտնեն այնտեղ:

Ման գալով բոլոր շուկան, Ճանճուր Իվանիչը մինչեւ
անդամ զնայ Շիրաչխանէն, իմացաւ թէ քանիտով է ծախ-
վում զինին, զնայ Շէյթան փողոցը, այնտեղ իմացաւ, թէ
քանիտով է ծախվում ալիւրը, ինչպէս է ծախվում դարին,
այնտեղ իմացաւ նաեւ հնդկահաւի, ձուի ու ցօցխալի մա-
զանդան, թէեւ այդպիսի բաներին նա փող տուողը չէր,

բայց մտնելով դասաբխանա, դնեց խորովածի համար կէս չարէք չալադաջի եւ բերաւ տունն:

Երեկոյեան դանդակները դարկում էին:

Տանը նա պատրաստ դտաւ թէյը:

Նա չզնաց իւր սենեակը, ինչպէս սովորութիւն ունէր առաջ, այլ ուղղակի մտաւ սեղանատուն, ուր նրա դերդաստանը նոյն ժամուն հաւաքուած էին թէյի սեղանի շուրջը: Քիտէսը չմոռանալով իւր աղայի հին պատուէրը, դրեց նրա քուրսին, եւ ձանձուր Իվանիչը նստեց նրա վրայ:

Նա սկսաւ խօսել ու ծիծաղել իւր երեխաների հետ. նրանք նոյնպէս ուրախ էին իրանց հօր դալստեան համար: Բայց օր. Սոֆիի դէմքը չէր ցոյց տալիս օրեկոյէ ուրախութիւն, նա նոյն բոպէին մտածում էր ամառանոցի մասին:

Յանկարծ յայտնուեցաւ Սամիլ Պետրովիչը:

Անհասկանալի է, թէ շարանախանձ բամբասողը ո՛րտեղից էր առել ձանձուր Իվանիչի դալստեան լուրը. ստերի մի պարկ թելի տակին եւ ղինաւորուած մի քանի նոր բամբասանքներով, նա մտաւ Հացի-Գէլենց տուն՝ Երեկոյեան թէյն պնտեղ խմելու, իսկ եթէ Աստուած կը յաջողի, նաեւ ընթրիքին մնալու:

— Բարով, բարով, ձանձուր Իվանիչ, ասաց նա ուրախ դէմքով եւ մօտենալով առաւ նրա ձեռքը:

— Բարով, Սամիլ Պետրովիչ, կրկնեց ձանձուր Իվանիչը:

Նրանք ձեռք ձեռքի տուն եւ պուօշտի արին:

Այնուհետեւ Սամիլ Պետրովիչը քաղաքավարութեամբ գլուխ տուաւ ա. Բարբարէին ու միւսներին եւ նստեց:

— Ի՞նչ բարին հարցնինք, խօսեց Սամիլ Պետրովիչը: Փառք Աստուծոյ, էլի սաղ-սալամաթ էկաք ձեր օջախին արժանի էլաք: Բարբարէ, աչքդ լուս, դարձաւ նա դէպի տանտիկինը:

Տ. Բարբարէն գլուխ տալով յայտնեց իւր շնորհակալութիւնը :

— Ի՞նչ շատ քաջից սափարդ, ծանճուր Իվանիչ, հարցրեց Սամիլ Պետրովիչը : Աւելցնելու հէնց քու ճամփին էր մնացի. ասում էինք՝ էսօր դուքայ, էգուց դուքայ :

— Հա՛, շատ քաջից, էրկու ամսից աւել է, պատասխանեց ծանճուր Իվանիչը :

— Ջանրդ սաղ ըլի. մարդը դիփ աշխատելու համա է ծնուած, կրկնեց Սամիլ Պետրովիչը՝ Հալա մէ ասա՛ տեհնինք, քու դուրծերի համա ի՞նչ շինեցիր :

— Գուրծերիս համա էլ մի՛ հարցնի, Սամիլ Պետրովիչ, էս տարի ի՛նչ չկայ, շատ մնաս կ'ունենամ :

— Ջանրդ սաղ ըլի, դարդ մի՛ անի. զօջաղ կայ. աշխարքի մալը աշխարքում կու՛մնայ, ի՞նչ պիտի տանինք միդ հիդ : Ա՛մա ասա՛, տեհնիմ, Սիմոն Եազօրիչն ի՞նչ է շինում, Եփօր դուրծիրը, ինչպէս ասում իս, վատ ին դնում : Հիմի Ես դիդիմ, բուռնութիւն քաշում կուլի, ու ախ ու վախ անելիս կուլի. էտէնց չէ՞, Ես նրա խասեաթը դիդիմ :

— Էտէնց է, Աստուծ դիտենայ, ծիծաղելով պատասխանեց ծանճուր Իվանիչը :

— Արմնալու մարդ է էտ Սիմոն Եազօրիչը. ուրիշը մնաս կ'օնէ, համա դուսէյնը նա կուքաչէ :

— Մտղրամ շատ չէստնի մարդ է, պատասխանեց ծանճուր Իվանիչը. քսան տարի է իմ դուրծերու՛մն է, Ես նրամէն մէ խայինութիւն չիմ տեհած :

— Ես էլ դիդիմ, որ չեստնի մարդ է, կրկնեց Սամիլ Պետրովիչը :

Սամիլ Պետրովիչին մատուցին թէյ : Նա առաւ ձեռքը, մի քանի խում ընդունեց, ապա ասաց .

— Ի՞նչ լաւ չայ է, ի՞նչ լաւ համ ու հուտ ունէ. դըրմանքէն մո՞ւնց իք առնում :

— Երեք մանէթով, միւս կողմից պատասխանեց տ. Բարբարէն :

Թէյի գրվանքան առնուած էր տասը մանէթով : Բայց երեք մանէթի ձայնը լսելիս դարձեալ ձանճուր Իվանիչի դէմքը մոայլուեցաւ . որովհետեւ նրա կեանքում վեց պատանոցից աւել թէյ նրա տուն չէր մտած :

Սամիլ Պետրովիչը նկատելով, որ թէյի հարցը լաւ ընդունելութիւն չգտաւ լսողներէց, խօսքը փոխեց .

— Կիրակի օրը դուրս էկած կուլիք . էտէնց չէ՞, հարցրեց նա :

— Հա՛, կիրակի առուտեհան դուրս եկանք, պատասխանեց ձանճուր Իվանիչը :

— Ծամփին խօմ շատ շուք չէ՞ր :

— Ի՞նչ չուք, մարդ մըսում է . խալիսը հէնց ջանիրը նեժնի ունին պահած, մէքիչ արեւ ըլելիս, ասում ին շուք է . շուքն ի՞նչ է . մարդը ջանը պիտի դայիմ ըլի, վուր շուքին էլ դիմնայ, ցրտին էլ :

Օր . Սոֆիին ձանճրացրեց դրանց խօսակցութիւնը, մանաւանդ ձանճուր Իվանիչի նկատողութիւնները շոքի մասին փոքր ինչ թուլացրին նրա յոյսերը ամառանոց գնալու մասին : Նա վեր կացաւ եւ դուրս գնաց պատշգամբ ու սկսեց նայել դէպի շուկան :

— Էլ ի՞նչ բարին հարցնինք, խօսեց Սամիլ Պետրովիչը . հա՛, միւր Սերգէյին տեհա՞ր էանկ :

— Սերգէյին իս ասո՞ւմ . ա՛յ Աստուծ վուչ դիտանայ նրա գլուխը հա՛, տեհայ . պատասխանեց ձանճուր Իվանիչը մի փոքր զուարթութեամբ :

— Ի՞նչ է շինում :

— Ղազարի ձիաների խտրը փողբաթով ունէ վիբ առած :

— Ծահի բիստի ունի՞ ձեռքում :

— Ի՞նչ գիդիմ, աթմորթու բանը սատանան է խարար :

— Լաւ էս էլ էտէնց . ասա՛, տեհնիմ՝ էրկաթէ ճամփէն
ինչկլի ս՛ւր ին բերի :

— Քութայիսէմէն անցին կացրի :

Ճանճուր Իվանիչը բլրորովին յոգնեցաւ շատախօս Սա-
միլ Պետրովիչի հարցմունքներին պատասխանելով : Եւ կա-
մենալով նրան խօսել տալ, ինքը մի այսպիսի հարց
տառջարկեց .

— Ասա՛, տեհնիմ, Սամիլ Պետրովիչ, քաղաքում ի՞նչ
նուր խարար կայ :

— Նուր խարար իս ուղո՞ւմ . Վ...ովը քվէրը մարդու
էրիս :

Այդ լուրն իսկապէս շարժեց տ . Բարբարէի հետա-
քրքրութիւնը եւ նա կամեցաւ գիտենալ այդ մասին ման-
րաման այդ պատճառով հարցրեց .

— Վ...ովը քվէրը մարդի էրիտ հա՛ . ո՞ւմ :

— Ղ...ովի աղին :

— Էտ լաւ է, լաւ փեսայ է ճանգի, ասաց տ . Բար-
բարէն :

— Լաւ է, մազբամ ետուսուն հազար մանէթ վրէն
գրեց, ինչկլի բանը գլուխ էկաւ :

— Ետուսուն հազար մանէ՞թ, դարմանալով հարցրեց
Ճանճուր Իվանիչը :

— Հա՛ . էտքան փուղին մէ էտքան էլ բաժինք կուլի,
գիդի՞ս, կրկնեց Սամիլ Պետրովիչը :

— Քու տուտուց հէ՛րն անիծա՛ծ, խօսեց Ճանճուր
Իվանիչը բարկանալով . էտքան փուղ աղջկան տալ կուլի՞,
էտ ի՞նչ բան է :

— Լաւ, ինչէ՞ է տուտուց, նրա խօսքը կտրեց տ .
Բարբարէն . փուղ ունէ, տալիս է . յետոյ գիդի՞ս փեսէն ի՞նչ
աղայ է :

— Ի՞նչ տղայ է. էգուց էլ օր ետառանն հազար մանէթը բոլ-բոլ կուտէ, կուժխտէ, ու փուղ դադողի հէքն ու մէքը ուշուեց կուտայ, ասաց ձանճուր Իվանիչը:

— Ինչի՞, դժուիլ է՞, կրկնեց կինը:

— Մուքթա փուղը ում ձեռը տաս, կուզժուի:

— Լաւ, ջէր դրանք թող մնան, նրանց խօսքը կտրեց Սամիլ Պետրովիչը, մագրամ մարդ պիտի էնպէս կամուրջ շինէ, վուր ուրիշն էլ կանենայ անց կենա: Ասինք թէ նրա հէքը մի սկուպոյ մարդ էր, վուչ ինքը կուտէր, վուչ ուրիշին կուտացնէր, իր կինքումը մէ աղքտի կոպէկ տուած չկայ, ընկերներին կողոպտեց, ուսումնարանի ու էգեղեցու փուղիբը կերաւ, էտպէսով մօղ արաւ, մօղ արաւ, իժում գօս-գա-գօս էլլաւ, ու վուրթկերանցը մինձ դօվլաթ թողից: Հէքը տարիներով մէ դադաքի արխալուղով էր եօլա դնում, հի-միկի տղէն տարէնը էրկու հազար մանէթ հէնց փերչաթկի փուղ է տալիս: Էտպէս մուքթա փուղը հալլաթ կնքան կուտան փեսին: Էն էլ հայ բէքը, դուխը քարը, հայ էլ չէ՛:

— Լաւ, ասինք թէ, նա մուքթա փուղ ունէ (գլուխն ուտէ իրա փուղը), այնումը չէ գցում ու տալիս է, բաս խիղճ քասիր-քուսուրն Ի՞նչ անէ: Չէ՞ վուր նրանք էլ աղջիկ ունին, նրանք էլ փեսայ դուղին, խօսեց տհաճութեամբ ձանճուր Իվանիչը:

— Քէսիրն էլ իրա դօրա թող տայ, պատասխանեց տ-Բարբարէն. շատ չունէ, թող քիչ տայ:

— Նրանից ո՞վ է հարցնում՝ շատ ունէ, թէ քիչ, պատասխանեց ձանճուր Իվանիչը: Նրան կ'օսին էսքան հարիւր թուման կուտաս, աղջիկը կուտանինք, չիս տայ, չինք տունի, թող մնայ ու պառուի... Թող կնդումէն դէնը խարաղը դնայ հէնց կաշի կրծէ, ու օսկերիչը շաքուճ խփէ, ինչկիլ հարուր թումանը դրստէ, վուր իր աղջիկը կանենա մարդու տա:

— Միւր աղղի տունը էն վուխար դանդուեցաւ, նրանց

խօսքը կտրեց Սամիլ Պետրովիչը, և փոր մինք միւր պապենական աղաթները փոխեցինք: Գիդի՞ք ինչպէս է էլած միւր պապերու վուխար. ասում ին, թէ փեսէն է փուղ տալիս բլում աղջկայ հօրը: Հարսնիքի ժամանակ էն փուղը վուր փեսէն տուի է, հարսնիքը իրանց մէջ Հաւաքելիս ին էլի, ու փեսին տալիս, էնպէս վուր փեսէն էլ մէջտեղում իր հարսնիքի ծախսը մուքթա էր քցում: Հիմի ջէր ղզլբաշի երկրում ու Հայաստանում էտ աղաթը մնում է:

— Էս սուսօրան միւր տունը քանդեց, պատասխանեց ձանճուր Իվանիչը. էտէնց լաւ է էլած. մաշ վո՞ւնց: Տեհնում իք մէ մարդ մէ կոյ է ունենում, ան թէ մէ էշ է ունենում, և փոր դրանք ուրիշին հարկաւոր է ըլում, ասանց փուղի չէ՛ տալիս: Ամա աղջիկը միւր քաղքում կովից էլ, էշից էլ վատ է էլած. ինչկի փուղ չիս տալի, չին տանում:

Ձանճուր Իվանիչի վերջին խօսքերը վատ ներգործութիւն ունեցան ա. Բարբարէի սրտին, և նա խօսեց վրացերէն.

— Մոռնիքի համար ի՞նչ դանազանութիւն կայ դաւակների մէջ. նրանց համար թէ տղէն, թէ աղջիկը մէկ է: Եթէ նա ունի հարստութիւն, ամէնին էլ հաւասար բաժին պիտի տայ. էլ ինչի՞ աղջիկը պիտի զրկուած մնայ հօր կայքից:

— Չանազանութիւն չատ կայ տղի ու աղջկայ մէջ, նրան պատասխանեց ձանճուր Իվանիչը, նրա համա վուր օջախը, հօր անունը տղէն է պահում. քաղաքական հարկերի համա տղէն է պատասխանատու: Մոռնիքի վերջում տղէն է պահում: Մէ խօսքով տղի ծախսերը չատ ին. չէ կարելի տղի հացը կտրել ու տալ աղջկան, վուր նա տանէ ուրիշ տղամարդու հիդ քէ՛Ք անէ:

— Էտ ուր իք ասում, մէջ մտաւ Սամիլ Պետրովիչը, տղամարդու ատաւելութիւնը աղջկանից թող հիւռու մնայ.

բայց բանն էնպէս է փոխուել, վուր տղամարդը ժառանգութեան մէջ խիստ ստոր է մնացել աղջկանից, եւ շատ անգամ եղբայրը ուրախ է զրկուել հօր կայքից, գէթ նրա քոյրերը կարողանան մարդու գնալ: Ձիզ մէ օրինակ ասիմ մի հայր ունէ երկուհարիւր թուման փուղ, երկու աղջիկ, երկու տղայ. եթէ հաւասար բաժին անէ նրանց մէջ, ամէն մէկին կուհասնէ յիսուն թուման. էտ գումարը բոլորն էլ գնում է աղջիկների վրայ, բայց դարձեալ չէ կարողանում մարդու տալ:

— Էտ է պատճառը վուր եփ մարդու տանը մէ քանի աղջիկ կայ, նա բազարում էհտիրար (վարկ) էլ չէ ունենում: Էն մարդը վուր փուղը տալիս է ապրնքի ու գցում է ծովի երեսը, նրան փուղ տալիս ին, ու չին վախնում, թէ կարելի է նաւը ծովակուլ լինի, համա էն մարդուն, վուր աղջիկներ ունէ, նրան փուղ չին տալի, ու էտպիսով մարդիկ ճարահատեալ իրանց աղջիկները օտար ազգերի ին տալի. պատճառ վուր հայ տղի համա պաս է էլած անփուղ աղջիկ առնիլը: Ինչպէս մինձ. պասին՝ բարեկենդանի մնացած կերակուրները չուտելու համար տալիս ին թուրքի ան աղքատի, վուր չհոտին, ասաց ձանձուր Իվանիչը:

— Ի՞նչ կորուստ է այդ հայրերի համար, պատասխանեց տ. Բարբարէն կրկին վրացերէն. դիցուք թէ մի հայր ունի աղջիկ եւ նրան տալիս է փող. միեւնոյն ժամանակ նա ունի տղայ, որ իւր նշանածի հետ բերում է փող: Այդպիսով առաջինի կորուստը լցուցանում է երկրորդը:

— Այդ միեւնոյն է, եթէ մի մարդ թոյլ տայ աւագակներին իրան կողոպտել, մտածելով, թէ փոխարէնը ինքը կուկողոպտէ ուրիշին, պատասխանեց ձանձուր Իվանիչը:

Վէճը նրանց մէջ այսպէս անկատելի կերպով երկարեց մինչ մերձակայ սենեակում ժամը զարկեց տասը: Բայց թէ ձանձուր Իվանիչը եւ թէ Սամիլ Պետրովիչը չկարողա-

յան համոզել տ. Բարբարէին, թէ փողով աղջիկ մարդու տալը շարաշար մնասում է հասարակութեանը: Նրանք կէս ժամ եւս վիճեցին, մինչեւ ծառան ներս մտաւ եւ յայտնեց որ ընթրիքը պատրաստ է: Սամիլ Պետրովիչը դղակն առաւ եւ այնպէս ձեւացրեց, թէ կամենում է դնալ, բայց նրան խընդրեցին մնալ իրանց հետ ընթրելու:

ԺԷ

Առաջին օրը ձանձուր Իվանիչի համար անցաւ բաւական խաղաղութեամբ, որովհետեւ նա չգիտէր թէ Կաւկայ գնալուց յետոյ իւր տան ինչ ու ինչ փոփոխութիւններ են եղել: Բայց միւս օրուայ առաւօտեան պահում իւր տան մէջ ամէն մանրամասնութիւններ քննելուց յետոյ, նա իջաւ ներքին յարկի յեանակողմեան բակը՝ որ առաջ թոնրատունն էր, նայելու հաւերին: Նա զարմացաւ, երբ տեսաւ որ փոքրիկ դռան տեղ, մի ահագին երկփեղկեան դուռ բացվում էր գէպի շուկան, եւ նախկին թոնրատան փոխարէն շինուած էր մի նոր ծածկ, որի ներքեւ կանգնած էր մի փառաւոր կառք եւ նրան կից ախոռ, մէջը կանգնած մի զոյգ սպիտակ, կապոյտ պիտակներով, անդդիական աղնիւ ձիեր:

Նա առաջ այնպէս կարծեց, թէ կարելի է կառքը պատկանում է ներքեւի կեցողներին, բայց յետոյ մտածելով որ նրանք այնպիսի մարդիկ չեն, որ կարողանային կառք ունենալ, այդ պատճառով, չհաւատաց իւր կարծիքին: Եւ զարմանալով առաջ գնաց՝ ստուգելու այդ նոր երեւոյթը:

Մանկահասակ Կազանեցի թաթար կառավարը՝ շէկ մագրով, կարմիր շապիկով եւ կարմիր վարտիկով, կապոյտ աչքերով, տեսնելով նրան, դիտարկն առաւ եւ խոնարհութեամբ դուռի տուաւ նրան: Ձանձուր Իվանիչը հարցրեց թէ ո՞ւմն է պատկանում կառքը:

— Կառքը պատկանում է ձեր բարեծննդութեանը, տէր իմ, պատասխանեց թաթարը:

Ճանճուր Իվանիչը զարհուրանքից փետացաւ:

— Ի՞նչպէս թէ դրանք ինձ են պատկանում, հարցրեց նա կատաղած կերպով:

— Այո՛, տէր իմ, պատասխանեց թաթարը, ձեզ են պատկանում:

— Աստուած իմ, բացականչեց Ճանճուր Իվանիչը եւ դուրս եկաւ ախոռատնից:

— Կը հրամայէ՞ք լծել կառքը, հարցրեց թաթարը, կարծելով թէ իւր տէրը եկել է կառքն ու նոր ձիաները փորձելու: Բայց Ճանճուր Իվանիչը ոչինչ չպատասխանեց, այլ արջի նման մըթմըթալով գնաց վերեւ:

Նա մտաւ իւր սենեակը: Նա բոլորովին կատաղած էր եւ չգիտէր, թէ ի՞նչ անէ: Նա առաջ վճռեց կնոջը կանչել իւր մօտ եւ աշխարհի բոլոր անէծքներն ու հայհոյանքը թափել նրա գլխին՝ կառքը գնելու համար: Բայց մտածեց, թէ այդ չէ կարելի: Յետոյ իւր մտքում վճռեց իւր դստերը՝ օր-Սոֆիին կանչել, եւ ըստ կարգին յանդիմանել նրան, իրրեւ այդ բոլոր չարիքների սկզբնապատճառի: Մտածեց որ այդ նոյնպէս «չի՛ կարելի»: Յուսահատութիւնը խեղդում էր նրան: «Ես դրանց հետ (կնոջ եւ դստեր) չեմ կարող կեանք վարել այսուհետեւ», ասաց նա իւր մտքում: «Լաւն այն է, որ ես ինքս այս լուսամտից ներքեւ ձգեմ, փչրուիմ քարերի վրայ, դուցէ՛ ազատուիմ այդ կերպով այս վշտերից»: Վերջին խորհուրդը եղաւ նրան բոլորովին հաւանական, նա ներսից կողպեց սենեակի դուռը, մօտեցաւ լուսամտտին: Նրա բոլոր մարմինը դողում էր բարկութիւնից: Նրա սարսափելի դէմքը արտայայտում էր կատաղի խռովութիւն:

Նա ձեռքը տարաւ բաց անելու լուսամուտը:

Յանկարծ նրա միտքն եկան Կաւկայը, կապալները, Սի-

ման նապօրիչը, կուղմինը եւ իւր միւս գործերը: Նրա ձեռքը
 թուրացաւ: Նա դարձաւ եւ նստեց մահճակալի վրայ, նրան-
 ում գորութիւն չէր մնացել: Նա պատկեց: Քրտինքը պղբիւրի
 նման բղխում էր նրա մարմնից: Նա վառվում էր, կարծես
 թէ, կրակի մէջ: Մի տաքութիւն, որ աւելի նման էր ջեր-
 մասխտի, տիրեց նրան: Նրա աչքերի առջեւ սեւացաւ: Նա
 մնաց անզգայ իւր մահճակալի վրայ:

Բոլոր օրը շանճուր Իվանիչը մնաց նոյն դարճուրելի
 թմբութեան մէջ: Ոչ ոք ներս չմտաւ նրա սենեակը, որով-
 ճեառեւ կարծում էին, թէ նա փողոցումն է: Նա սթափուեցաւ
 միայն երեկոյեան. տեսաւ որ սենեակը մութն է, ճրագ
 վառեց եւ խկոյն հրամայեց կանչել իւր քաղաքի գործակա-
 տարին՝ նրա հաշիւները տեսնելու համար:

Մի ժամից յետոյ նրա սենեակում յայտնուեցաւ մի
 կարճիկ եւ կլորիկ մարդ, երկիւղած դէմքով, թեւի տակին
 մի գալթար: Նա բարի իրիզուէն ասաց եւ նստեց:

Ճանճուր Իվանիչը հրամայեց նրան ցոյց տալ բոլոր
 հաշիւները, որ եղել են իւր բացակայութեան ժամանակ:

Նրանք նստեցին գրասեղանի մօտ. Ճանճուր Իվանիչը
 հաշուակալը գրաւ իւր առջեւ, խսկ գործակատարն սկսեց
 հաշիւները կարդալ:

Բոլոր հաշիւներից յետոյ գործակատարի վրայ մնաց
 հինգ հազար մանէթ:

— Էս հինգ հարիւր թումանն ո՞ւր է, հարցրեց Ճան-
 ճուր Իվանիչը:

— Էս հինգ հարիւր թումանն ինձմէն ստացիլ է տ.
 Բարբարէն, պատասխանեց գործակատարը:

— Տիկին Բարբարէն, դարճուրելով հարցրեց Ճանճուր
 Իվանիչը:

— Հրամմել էք. խօս սուտ չիմ ասում. էս էլ նրա
 բասպիտիէքը, ասաց գործակատարը՝ հանելով իւր թղթա-

պահի միջից մի քանի ստացական տոմսակներ եւ տալով ճանճուր Իվանիչին :

Ճանճուր Իվանիչը միայն նայում էր տոմսակներին :

— Էսքան փուղն ի՞նչ է արել էտ անիծածը, հարցրեց ճանճուր Իվանիչը :

— Ձեր գնալուց յետոյ շատ ծախս է էլի :

— Հինգ հարիւր թուման ծա՞խս, կոչեց կատաղի կերպով ճանճուր Իվանիչը : Էտ ի՞նչ տնաքանդութիւն է :

— Ես ի՞նչ գիղիմ, պատասխանեց դործակատարը . փայտօն ին առի, ձիանիբ ին առի ու ուրիշ մխար ին արի :

— Մէ կոպէկ ինձ բնդունելի չէ՛ . դուն գլուխդ քարովն իս տուի, վուր նրանց էտ դադա փուղ իս տուի :

— Ես ի՞նչ մեղաւոր իմ :

— Մաշ ո՞վ է մեղաւորը, շուն շանորթի, դոռաց ճանճուր Իվանիչը : Ես եփ իմ ասի վուր դուն էտքան փուղ տաս էն անիծածներին :

Խեղճ դործակատարը մնաց քարացած, երբ ճանճուր Իվանիչն սկսաւ գահդանարար դոռալ նրա վրայ : Եւ երբ նա նշմարեց որ այդ անպատուութիւնը չափից անցնելու է, վեր կացաւ եւ առանց մի բան խօսելու, դուրս եկաւ ճանճուր Իվանիչի սենեակից :

Գործակատարի գնալուց յետոյ նա առաւել եւս կատաղեցաւ . որովհետեւ քանի նա այնտեղ էր, ճանճուր Իվանիչը էլի փոքր ինչ մխիթարվում էր իւր բարկութեամբ, երբ իւր հայհոյանքի առարկան այնպէս հնադանդութեամբ տանում էր իւր խոշոր յիշոցները, բայց նրա գնալուց յետոյ այդ բախտից եւս զրկուեցաւ ճանճուր Իվանիչը :

Մի՞թէ աշխարհում սակաւ բաներ կային, որոնց ճանճուր Իվանիչը կարող էր հայհոյել եւ իւր սրտի տասը դովայնել :

Եւ նա սկսաւ հայհոյել կառք մօզօնուլի (յօրինողի) հէ-

րըն ու մէրը, եւ իրանց երկրում այդ զահրումարն ազաթ պցոյին էլ խառնեց նրա հետ: Նա սկսաւ հայհոյել թատրոն մօզօնողի օխտը սորտը եւ հանդուցեալ թամամշովին էլ մասնաւորապէս յիշեց, որ նրա կարծիքով, մի այդպիսի սատանայական բոյնը դրեց իւր քարվանսարի կենդրոնում: Յետոյ մտքով նա ներս մտաւ մօզնի մազադինները եւ յիշեց մօզա դուրս պցոյի մեռելն ու կենդանը: Այնտեղից անցաւ Աղէքսանդրեան այգի, Մուշաէիդ, բուլվար եւ ամէն տեղ սկսաւ թափել իւր հայհոյանքների կայծակները, եւ այդ նրա համար որ այդ դրօսարանները, այդ գուարճութեան տեղերը այդպէս սխերիմ կերպով դինաւորուել էին նրա դէմ եւ նրա քսակից անիրաւարար քարշում էին արծաթներ: Այնուհետեւ մակարերելով, թէ բոլոր այդ չարիքների գլխաւոր պատճառները՝ կինը, որդիքը, աղջկերքն ու ընտանիքն է, ձանճուր Իվանիչը իւր հայհոյանքի կայծակների տարափը զարձրեց դէպի ընտանեկան կեանքը, դէպի ամուսնութիւնը եւ դէպի... Ի՞նչ տեսմ՝ աւելի սուրբ բաներ...:

Եւ այդպէս առատ հայհոյանքով բաւական կազդուրելով իւր սրտի թուլացած դօրութիւնը, որ պատճառեց կառավարի յանկարծական լուրը ախոռատան բակում, ձանճուր Իվանիչը վճռեց, թէ նրա ընտանեկան կեանքում այդ մեծ եւ կործանիչ վերանորոգութեան գլխաւոր բէֆօրմատօրը ոչ այլ ոք էր, բայց միայն օր Սոֆին: Եւ եղբականցներով թէ իւր աղջկան դէպի մի այդպիսի չարադորճութեան հարկադրող պատճառներն էին ուսումն ու դիտութիւնը, ձանճուր Իվանիչը իւր հայհոյանքի մնացորդ մասը թափեց ուսումնարանների եւ դիր ու կարգալ մօզօնողների վրայ:

Եւ մինչ ձանճուր Իվանիչը իւր փոքրիկ սենեակի խորքից արձակում էր հայհոյանքի կայծակներ դէպի Աթենասոյ սրբարանները, յանկարծ ներս մտաւ Սամիլ Պետրովիչը: Նա այն դիշեր նախ մտնելով տ. Բարբարէի մօտ, մասնաւորա-

պէս տեղեկացել էր, թէ այնօրը ինչ էր անցել նրանց տան մէջ, որովհետեւ նա այնտեղ վրայ հասաւ, երբ դորձակատարը նստած պատմում էր տ. Բարբաբէին բոլոր անցքը, որ անցաւ իւր տիրոջ սենեակում: Եւ ջրի պղտորութեան մէջ ձուկ որսալը Սամիլ Պետրովիչի էական կանոններից մինը լինելով, նա մտածեց օգուտ քաղել այդ խոտվութիւնից:

Մինչեւ ձանձուր Իվանիչի սենեակ գալը նա մտածում էր, թէ արդէն կատաղած ձանձուր Իվանիչը իսկոյն կը սկսէ դարձեալ հայհոյել, անիծել, լաց լինել եւ բողոքել իւր ընտանեկան անկարգութիւնների դէմ, իսկ ինքը փոքր ինչ կը խրատէ նրան, կը հանդատացնէ, կը մխիթարէ, այնուհետեւ կը տանէ նրան իւր ընտանիքի մօտ, այնտեղ կը բարիչացնէ նրան իւր կնոջ եւ աղջկայ հետ: Եւ այդպիսով լինելով միջնորդ հաշտութեան նրանց միջեւ ու բաւական խորը մտնելով նրանց ընտանեկան զաղտնիքների մէջ, նա կարող է Հացի-Գէլենց գերտաստանի շրջանում իւր բարձի համար հիմնաւոր սեղ զտնել:

Բայց մտնելով ձանձուր Իվանիչի սենեակը, Սամիլ Պետրովիչը գտաւ նրան ոչ այն, ինչ որ սպասում էր:

Թէեւ բնականաբար երկու ծայրայեղ իրողութիւն, զորօրինակ՝ ծնունդ կամ մահ, ծիծաղ կամ լաց, ուրախութիւն կամ տխրութիւն, միշտ չափազանցօրէն զրգուում են ու բորբոքում կրքերը, եւ մարդ այդպիսի բողոքներում միշտ կարօտում է կարեկցի, բայց ընդհակառակն, ձանձուր Իվանիչի այդ տեսակ կատաղի դրութեան մէջ Սամիլ Պետրովիչի ներկայանալը իւր նպատակին համաձայն ընդունելութիւն չգտաւ:

Որովհետեւ ձանձուր Իվանիչն այն տեսակ մարդկանցից էր, որ գիտէր տիրել իւր կրքերին: Նա գիտէր հաղարարութիւններով կեղծաւորել իւր արտաքին կերպարանքը, եւ խիստ

խոտութեամբ պահպանել իւր ընտանեկան յուզմունքները
 դադանիքը արտաքին աշխարհից :

Այլ պատճառով՝ նկատելով բամբաստողի գալուստը, նա
 իւր մի բողոք ատաջ վայրենացած դէմքին առաւ աւելի մեղմ
 արտայայտութիւն, եւ ծիծաղի պէս մի բան, որ աւելի
 նման էր դիւահարի դէմքի սոսկալի ցնցողութեան, երեւաց
 նրա անճոռնի երեսի վրայ :

— Բարով, Սամիլ Պետրովիչ, էս ո՞ւր էք, քանի օր է
 չիք երեւում, էնպէս շուտ-շուտ դնացէք, եկեք, վուր մէկ-
 դմէկու լաւ ճանչնանք, ասաց Ճանճուր Իվանիչը ուրախու-
 թեամբ ձեռք տալով բամբաստողին :

— Քանի օր էր մէ քիչ քէփ չունէի, տանէմէն դուրս
 չէի գալի, պատասխանեց Սամիլ Պետրովիչը տնքալով,
 որով կամենում էր ցոյց տալ, թէ տակաւին բոլորովին չէ
 սոսոջացել :

Բոլորովին սուտ էր խօսում Սամիլ Պետրովիչը, նրա
 համար որ թեթեւ հիւանդութիւնները չէին կարող հար-
 կադրել նրան տանը մնալ :

— Հիմի խօմ, փառք Աստուծոյ, լա՞ւ իս, հարցրեց
 Ճանճուր Իվանիչը :

— Փառք Աստուծոյ, լաւ իմ. դուք ի՞նչպէս էք :

— Ի՛հ, կա՛նք էլի՛ . . . աշխրբի հիդ եօլա ինք դնում . . . :

Սամիլ Պետրովիչը նկատելով նրա խորին սառնասրտու-
 թիւնը, ինքը եւս իրան սյնպէս ձեւացրեց, իրբեւ ոչինչ չէ
 լսած նրանց տան անցքից :

Նրանք կցեցին իրանց խօսակցութիւնը :

Սամիլ Պետրովիչը իւր սովորութեան համաձայն խօ-
 սեց քաղաքի մէջ պատահած նոր բաներից եւ կցեց իւր բամ-
 բաստողները : Ապա աւելացրեց մի քանի դուարձախօսու-
 թիւններ, սյնուհետեւ սկսաւ խնդալ սլոց անբախտութեան
 վրայ. թէ ո՞վ մնասունեց առեւտուրում, ո՞վ դատաստանատ-

ներում իւր դործը տանել տուաւ եւ այլ այդպիսի չարախընդու թիւններ :

Բայց ճանճուր Իվանիչը լսում էր այդ բոլորը առանց համակրութեան, միմիայն բամբասողի սիրտը շահելու համար, որովհետեւ նա նոյն բոպէին մտածում էր մի այլ իրողութեան վրայ :

Ճանճուր Իվանիչի կեանքում ամէն մի երեւոյթ՝ թէ եւ լինէր շատ շնչին, դարձեալ ունէր իւր էական պատճառները : Յանկարծ կատաղի բարկութիւնից մտնել խարերայ կեղծաւորի կերպարանքի մէջ, այդ ճանճուր Իվանիչի մէջ իւր հարկադրիչ պատճառն ունէր :

Նա մտածում էր Սամիլ Պետրովիչի ներկայութիւնը շահաւէտ կացուցանել իւր նպատակներին :

Ճանճուր Իվանիչը տակաւին չէր մոռացել Սամիլ Պետրովիչի այն խօսքը, որ նա ասաց օր. Սոփիի ուսումնարանից իրանց տուն դալու առաջին գիշերը, երբ խօսք բացուեց օրէորդին մարդու տալու մասին : Ճանճուր Իվանիչը մտածում էր նորոգել նոյն խօսակցութիւնը, որ այնպէս անխոհեմարար առանց ուշադրութեան թողեց առաջին անգամ : Թէ եւ նա բոլորովին չէր հաւատում Սամիլ Պետրովիչի ասածներին, բայց որպէս առածն ասում է. «խեղդուող մարդը դէպի ծեղն էլ է ձեռք մեկնում» :

Բայց թէ ի՛նչպէս խօսք բաց անէր այդ մասին, նա դժուարանում էր :

Ճանճուր Իվանիչը դիտէր, որ իւր աղջիկը «ի՛նչ սանրի կտաւ է» : Բայց դարձեալ իւր ապրանքը չէր կամենում էժան գնով ծախել :

Այդպիսի բնաւորութիւնը յատուկ էր նրա համաքաղաքացիներին : Ով որ եղել է թիֆլիզում, նա գիտէ, թէ թիֆլիզեցին ո՛չ միայն իւր լնւ ապրանքը, այլ իւր ամենավատ ապրանքը եւս փ ա՛հ - փ ա՛հ - ով է ծախում : Եթէ

մեր ընթերցողը երբեմն անցել է բաղադրանի, մրդավաճառների սոջևեից, նա տեսած կը լինի, թէ ինչպէս մրդավաճառները, հոտած խնձորը, կամ տհաս տանձը, ածած թարսներում, ձայն են տալիս եւ դուռում՝ «արա՛ լաւ ինձորը, լաւ տանձը, լաւ բողկը... պա՛... պա՛... պա՛...» կամ թէ այլերի Մէյրանով բաղնիք դնալու միջոցներում ի հարկէ նա տեսած կը լինի, թէ ինչպիսի դովասանքներով են ծախում ծլած բակլան, բորբոսնած ջօնջօլը եւ հոտած խրամուլին:

Ճշմարիտն ստած, մենք միտք չունինք վատարանել մեր քաղաքացի ազգայիններին կծու կատակներով իրանց արդար շահատիրութեան համար, երբ մեր աչքի առաջ ունինք սփրկան կեանքի պահանջմունքները: Մենք կը բաւականանք մեր պապերի սուածով, թէ «ոչ ոք իւր թանին թթու չի ստիլ»:

Այնու ամենայնիւ չի կարելի սառն աչքով նայել այն հետաքրքրական տեսարանի վրայ, որ վաճառքի նիւթը՝ բողկ, կամ ջօնջօլ եւ կամ խրամուլի չէ, այլ մեզ նման մարդու մի սիրուն ազջիկ:

Արդարեւ զանազան կողմերում մենք տեսել ենք հայաբնակ քաղաքներ եւ գիւղեր, ուր հայրը վաճառում է իւր դուստրը, որպէս իւր տան շորքոտանին, չնչին արծաթի զնով, որ նա ստանում է իւր փեսայի հօրից: Բայց այդ քաղաքի ազջիկների առեւտուրը լինում է բոլորովին հակառակ մեր տեսածներին: Այստեղ ազջիկը ծախվում է վրադիր փողով՝ այսինքն հարսնացուի հայրը վճարում է արծաթ իւր փեսային, որ կարծես թէ, ցաւալի է ասել, մի մարդ վարձատրում է մշակին, որ տանէ եւ հեռացնէ նրա տանից մի անպէտք բան:

Ցաւալի՜ դրութիւն. ո՛րքան ոտնակոխ է եղած գեղեցիկ սեռի պատիւն ու իրաւունքը: Այստեղ փեսայի աչքում իւր

ընտրելու հարանայուի զեղեցկութիւնը, սէրը եւ նրա բոլոր արժանաւորութիւնները ոչինչ նշանակութիւն չունին, եթէ նա իւր հետ չի բերում արծաթ: Եւ ընդ հակառակն՝ աղճկոյ տգեղութիւնը, բարոյական եւ հոգեկան արատները, բոլորը ծածկվում են փեսայի աչքերից, երբ նա իւր հետ բերում է շատ փող:

Բայց մեր չքնաղագեղ հերոսուհին բախտաւոր է այդ կողմից: Նա ունի ոչ միայն զեղեցկութիւն եւ ուրիշ արժանաւորութիւններ, այլ եւ փող: Բայց դարձեալ նա կարօտ է դ ա լ ա լ ի, որ դտնի նրա համար, ինչպէս ասացինք, մի մշակ՝ նրան իւր հօր տնից հեռացնելու համար:

Հող չկայ, մի կարգ մարդիկ պարապում են այդ դալալութեան արհեստով. դրանք կոչվում են մ օ ց ի ք ու լ ն եր: Թէեւ մենք խորին կերպով այդ լեզուին տեղեակ չենք, որ Հայոց խօսքով բացատրենք այդ վրացերէն բառի նշանակութիւնը. միայն մեր կարծիքով՝ մ ի է ց ի փ ու լ ի խօսքից է, որ նշանակում է «տո՛ւր փող»․ այդ արհեստով պարապողները համար խիստ յարմարաւոր անուն:

Հրաւիրում ենք այսուհետեւ ծանօթանալ Սամիլ Պետրովիչի՝ այդ կարգի մարդկանց պատուաւոր անդամներից մէկի հետ:

Մեզ յայտնի է, որ ծանճուր Իվանիչը կեանքի փորձերում եփուած մարդ է: Նա եւ՛ բազկալի աշակերտ է եղել, եւ՛ բազադի: Նա գիտէ դորձ դնել բոլոր փ ա հ - փ ա հ ը իւր վաճառելի ապրանքի համար: Բայց դժբախտութիւնը նրանում էր, որ նա մտածում էր բանն այնպէս բերել, որ Սամիլ Պետրովիչն ինքը այդ մասին խօսք բաց անէ:

Ծանճուր Իվանիչի այդ իզձը նոյնպէս կատարուեցաւ:

Սամիլ Պետրովիչը վաղուց նկատել էր, թէ Հացի-Գէլենց տան ընտանեկան անհամաձայնութիւնների գլխաւոր պատճառը ա. Բարբարէի անտանելի ծախսերն են, որոնք

լինում էին օր. Սոֆիի առիթով: Այս իրողութիւնից նա եզրակարգեւէ էր, թէ օր. Սոֆին սնից հեռացնելը ձանձուր Իվանիչի գլխաւոր ցանկութիւններից մինն է լինելու: Եւ մտածելով թէ այն օրուայ անցքն առաւելապէս դրդած պիտի լինի ձանձուր Իվանիչի մի այդպիսի ցանկութիւնը, նա յարմար դատեց այդ մասին խօսել նրա հետ, դուցէ կարողանար օրիսրդի սովորան բարեշացնել մինի հետ եւ մէջտեղից մի քանի հարիւր մանէթ փող դնել:

— Զէր դրանք թող մնան, խօսեց վերջապէս Սամիլ Պետրովիչը, հալա դուն ինձ ասա՛, տեսնիմ, ձանձուր Իվանիչ. Սոֆիին ե՞՞վ պիտի մարդի տա, վուր մենք էլ մէ քանի շահի խէրուինք:

— Ի՞նչ իս խօսում, Սամիլ Պետրովիչ, պատասխանեց այդ անտկնկալ հարցի համար ուրախացած ձանձուր Իվանիչը: Սոֆիի ջէր ի՞նչ վուխան է:

— Ինչի՞ վուխալը չէ. թթու իս դրե՞, ինչկէ քացիսի, չիս ծախի՞:

— Զէ, նա ջէր տասնուչորս տարեկան է:

Արդէն հինգ տարի կը լինէր, որ ձանձուր Իվանիչը հէնց ամէն հարցնողին պատասխանում էր, որ «Սոֆին տասնուչորս տարեկան է»:

— Տասնուչորս տարեկա՞ն, կրկնեց Սամիլ Պետրովիչը: Իմ հօքին դիտենայ, հէնց լազաթի մարդու տալու վուխան է:

— Զէ, Աստուծ դիտենայ. Սոֆին ջէր էրեխայ է:

— Թէ ինձ կու հարցնիս, աղջիկը վուրքան չուտ մարդու տաս, չիս փոշնի. նրա համա վուր աղջիկը պահելու աղբանք չէ:

Ձանձուր Իվանիչը մի քանի բոպէ լոնց ու որպէս թէ դժուարանում էր այդ հարցին պատասխանել.

— Լաւ, ո՞ւմ տանք. ո՞վ է էտպէս լաւ օմքին. ամէն

մարդու էլ խօս՝ չի ըլի աղջիկ տալ, — որպէս թէ ահամայից համողուելով՝ խօսեց ճանճուր Իվանիչը :

— Լաւ մարդիկ իս ուզո՞ւմ, հարցրեց Սամիլ Պետրովիչը : Էդուց էվէտ հազարը ճարիմ : Քանի վուխտ է վուր քանի՛-քանի օրինաւոր օքմիր ինձմէն խնդրում ին Սոֆիի մասին :

— Ո՞վքեր :

Եւ Սամիլ Պետրովիչը սկսաւ անունները մէկ-մէկ յիշել՝ ամէն կարգերից եւ ամէն աստիճաններից : Եւ ապա աւելացրեց .

— Հիմի քու կամքն է, դրանցից վուրն ուզում իս, ջօզէ . շինովնիկ իս ուզում, ասա՛, դօխտուր իս ուզում, ասա՛, առուտրական մարդ իս ուզում, ասա՛, փէշաքար իս ուզում, ասա՛ : Ես ամէն ջուտիցն էլ քիզ նշանց տուի . վուրը դուզիս, ջօզէ, ամէն մէկին մէ մազանդա ունէ . դուն էլ դիդիս վուր շինովնիկի ան դօխտուրի մազանդան բարձր է . իժում սովդաքարն է, իժում փէշաքարն է ու էդպէս սանդուխտներով դէվէր է դալի :

Ճանճուր Իվանիչը մի քանի բոպէ մտածելուց յետոյ պատասխանեց .

— Ղուրթ է, իմ Սօփօն թաքավուրի խարջ աղջիկ է, մազրամ ամէն մարթ իր բար մարթ պիտի դիժնէ : Միզ համա աւելի լաւ է միւր համքրի մարդու հիզ բարեկամութին սարքինք :

— Հա՛, էտպէս . մէ հալալ կաթ կերած... փուլ՛ դադող, իմանում ե՞ս...

— Աչքիս վրայ . ումը վուր մտքումդ ունիս՝ ինձ ասա՛, ես հէնց առուտեհան բարիչացնիմ :

— Մասխտենց Խէչօն վո՞ւնց է :

— Իմ հօքին դիտենայ, շատ օրինաւոր օմքին է, պատասխանեց Սամիլ Պետրովիչը, իւր մտքում դարմանալով

Ճանճուր Իվանիչի տարապայման ընտրողութեան վրայ :
 Շատ լաւ մարդ է, մէկ կտուր հաց ունէ, միւր քաղաքացի է,
 ինքը փուղ դաղող․ քուիքը մարդու է տուի, աղբէր չունէ․
 ինքն է ու իր չոր դլուխը ու մէկ էլ իր պառաւ տատը :

— Նա ի՞նչ բանով ուզի կուլի :

— Հիմի վուչինչ չիմ կանա ասի, ինչկլի իրան
 չանհնիմ :

— Վուրքան կարաս քիչով բանը շինէ :

— Հայրաթի, քիզմէն խօմ չիմ խլի վուր նրան տամ․
 հաղար վուր բլի, էլի քու դէյրաթը պիտիմ քաշի, մինք
 մէտի հաց ինք կերի ու ախպէրութին ինք արի․ մաշ ախպէ-
 րութինն էլ վո՞ւր օրուայ համա է․․․

Աւելորդ չէր լինել մեր ընթերցողին ծանօթացնել Մա-
 խոխէնց Խէչոյի՝ Ճանճուր Իվանիչի ընտրած փեսացուի հետ :
 Դա մի քառասունհինգ տարեկան մարդ է, ալեխառն մա-
 դերով, գորշ եւ մեղմադճոտ դէմքով, նիհար եւ ցամաքած
 կազմուածքով : Ծիծաղ կոչուած բանը երբէք չէ տեսնուած
 նրա ախրամած դէմքի վրայ․ նրա դժգոհ աչքերից խօսում է
 մամանայի ժանգոտ ոգին, որ կարծես թէ վաղուց բոյն է դրել
 նրա սրտում :

Նրա հայրը աղքատ մարդ էր․ քիւան թեւի տակին ման
 ածելով՝ մախոխ էր ծախում Շէյթանի փողոցում, եւ մեռաւ
 դառն չքաւորութեան մէջ միայն իւր արհեստի անունը ժա-
 ուանդութիւն թողնելով իւր զաւակներին :

Բայց Խէչօն այնքան խելօք տղայ էր, որ կարողացաւ
 այնուհետեւ այնքան փող աշխատել, մինչեւ մարդու տուաւ
 իւր երեք քոյրերը, եւ ինքը այնքան դումարի տէր դարձաւ,
 որ Միջլի-փողոցում ունէր մի հասարակ խանութ մանրավա-
 ճառի, այլեւ պարապում էր փոքրիկ փողբաթներով : Բայց
 որպէս եւ իցէ Մախոխնց Խէչօն առեւտրականների խիստ
 ստոր տեսակիցն էր :

Բայց զարմանալու արժան է ճանճուր Իվանիչի մի այդպիսի ընտրողութիւնը, թէ ի՛նչ նպատակով նա այնքան բազմութեան միջից որոշեց Մախոսի տղին :

Հարցը խիստ պարզ է :

Ճանճուր Իվանիչին զրդողը դէպի մի այդպիսի ընտրողութիւն, որի մասին ասաց Սամիլ Պետրովիչին, առանձին համակրութիւնը չէր դէպի իրան համափիճակ եւ արհեստակից մարդիկ. նա դրանում ունէր իւր գաղտնի նպատակը, որի մէջ թաքուցած էր տնտեսական խնայողութիւն : Նա մտածեց, թէ մի շնչին գումարով կարելի կը լինի մի այդպիսի մարդու գլխին կապել իւր աղջիկը :

Այդ պատճառով նա իւր փեսայի ընտրողութեան մէջ վարվում էր այնպէս, ինչպէս իւր փողբաթներում, որոնց մէջ նա փորձուած էր : Այն նիւթերը, որոնցից պիտի կառուցանէր արքունական մի շինութիւն, կամ այն պաշարները, որոնցով պէտք է կերակրէր արքունի զօրքը, որքան պատրաստվում էին վատ տեսակներից, որքան էժան էին նստում, այնքան առաւել շահուոր էին լինում նրա համար :

Բայց արդեօք օր. Սոֆին կ'ընդունէ՞ր նրան թէ ոչ, կամ թէ կարո՞ղ էր իւր գուսարը բախտաւոր լինել մի այնպիսի ամուսնու հետ, դրանք ճանճուր Իվանիչի համար մտածելու իրողութիւններ չէին, քանի որ նա իւր աչքի առաջ ունէր զրամի հաշիւը եւ հաստատ գիտէր, որ քիչ արծաթով կարելի էր որսալ մի այնպիսի փեսայ :

Սամիլ Պետրովիչը նոյն գիշեր բոլոր պայմանները կապեց ճանճուր Իվանիչի հետ եւ խոստացաւ երեք օրից յետոյ նրան վճռական պատասխան բերել : Եւ այդպիսով հանդատացնելով ճանճուր Իվանիչին, տարաւ նրան կնոջ սենեակը, այնտեղ բոլորը միասին ընթրեցին : Եւ ճանճուր Իվանիչը չուզեց այնուհետեւ կառքի կամ միւս ծախսերի պատճառով խոզիլ իւր ընտանիքի հանդատութիւնը, մտա-

ծելով թէ օր. Սոֆին միայն մի քանի օրուայ հիւր է իւր տան մէջ, նրան ճանապարհ դցելուց յետոյ ինքը գիտէ, թէ կասքն ու կառավարը ո՛ր ջհանգամը կը կորցնէ:

Մօցիքունն այն դիշեր հեռացաւ նրանց տանից տասն եւ երկու ժամին:

ԺԸ

Ճանճուր Իվանիչի սրամտութեան այդ փոթորիկը, որ յարուցել էին նրա մէջ իւր կնոջ անկարգ շոյլութիւնները, նոյնպէս անցաւ բաւական լուրթեամբ՝ տ. Բարբարէին դեռ եւս անյայտ պատճառներով: Եւ Հացի-Գէլենց տան խաղաղութիւնը կրկին վերականգնեցաւ ու ամենայն բան սկսաւ դնալ իւր կարգով:

Ճանճուր Իվանիչը ոչինչ չյայտնեց իւր կնոջը Մախոխի տղի մասին, մտածելով որ նա կ'արգելէր այդ բարբի գործը: Միայն թէ սկսեց խաղաղութեամբ վարուել նրա հետ, մինչև նպատակը իրական կերպարանք կը ստանար:

Իսկ տ. Բարբարէն զարմանում էր իւր ամուսնու բնաւորութեան մի այդպիսի տարօրինակ փոփոխութեան վրայ եւ չգիտէր, թէ ի՛նչ է պատճառը նրա ներողամտութեան՝ գործակատարի հետ այն զարհուրելի խռովութիւնը բարձրացնելուց յետոյ. մինչդեռ ինքն սպասում էր նրանից կատաղի յանդիմանութիւններ, յանկարծ հանդիպում է նրա խաղաղ դէմքին: Այդ պատճառով տ. Բարբարէն մտածում էր, թէ Ճանճուր Իվանիչի այդպիսի վարուեցողութեան մէջ անտարակոյս թաքնուած է մի որեւէ խորհրդաւոր զազանիք:

Այնու ամենայնիւ օգուտ քաղելով Ճանճուր Իվանիչի՝ թէեւ կեղծաւոր ներողամտութիւնից, տ. Բարբարէն մի օր խնդրեց նրան ամարանոց դնալու մասին: Բայց Ճանճուր Իվանիչը վճռողաբար մերժեց նրա խնդիրը:

Տ. Բարբարէին անչափ վշտացրեց այդ՝

Բայց ձանճուր Իվանիչը ամարանոց դնալն արգելելու մէջ ունէր երկու նպատակ. մին որ՝ նա շուղեց աւելորդ ծախսերի տակ ընկնել, եւ մէկէլ՝ որ ամարանոց դնալը, նրա կարծիքով, կը յետաձգէր իւր դստեր պսակը Մախոխի տղի հետ:

Բայց կամենալով ջնջել այն վատ տպաւորութիւնը իւր դստեր սրտից, որ ինքը պատճառեց՝ ամարանոց դնալն արգելելով, ձանճուր Իվանիչը իւր մօտ կանչեց օրիորդ Սոֆիին, խիստ փաղաքշանքով ու կեղծաւորութեամբ նրա հետ խօսեց վրացերէն.

— Սոֆի, իմ սիրեկան, գիտեմ որ դու քո մօր պէս թեթեւամտ չես, նրա համար որ դու ուսում ունիս, գիտութիւն ունիս, խելք ունիս, ուրեմն հօրդ խրատը չի դառնացնիլ քո սիրտը: Սոֆի, ճշմարիտ է, ես արգելեցի ձեր ամարանոց դնալը, բայց եթէ դու գիտենաս, թէ ի՞նչ էր իմ գիտաւորութիւնը, երբէք չես վշտանայ. ես արգելեցի ամարանոց դնալն այն պատճառով, որ ազատուիմ աւելորդ ծախսերից: Դու գիտես որ առանց դրան էլ այս տարի չափազանց ծախս է եղած: Բայց իմ դորձերի այժմեան դրութիւնն այնքան էլ յաջողակ չէ, որ ես կարողանամ տանել այդ խոշոր ծախսերը: Ուրեմն պէտք է այնպէս ապրենք, որ միշտ կարողանանք ապրել: Թէեւ օտարները մեզ շատ հարուստ են կարծում, եւ շատ կարելի է դու էլ ու քո մայրն էլ այնպէս էք մտածում, թէ ձանճուր Իվանիչը այն հարուստ չճշուրի (Քոտշիւրի) չափ փող ունի: Բայց Աստուած է վիպ, որ այդպէս չէ. իմ հարուստ կարծուիլս մի դատարկ անուն է, որ նրանով կարողանամ պահպանել իմ վարկը եւ իմ համարուժը մեր հասարակութեան մէջ: Այլեւ մտածեցէ՛ք, թէ ես ի՞նչ դժուարութիւններով եմ փող աշխատում. մեծ անխղճութիւն է՝ իմ դառն քրտինքի պտուղներն այդպէս անի-

բաւարար վառանկ: Բայց մեր ժամանակը վատ է, ապրուստի հոգսերը բաղձացել են, իսկ աշխատանքի դռները փակուել մեկ նման մարդկանց համար, եւ մեր երկրի օգուտները ֆրանցուզն ու նեմէջն է տանում, մենք էլ մէջտեղում զուր չախիկ — չուխիկ ենք անում:

Այդպէս երկար խօսեց ճանճուր Իվանիչը, բայց նրա այդ խրատները այնպէս էին գլորվում օր. Սոֆիի գլխից, ինչպէս ընկոյզը մինարէթի դմբէթից, եւ երկար լսելուց յետոյ օրիորդը պատասխանեց.

— Եթէ մեր ամբարանոց գնալը կը ծանրարեննի ձեզ աւելորդ ծախսելով, ես սիրով կը հրաժարուեմ այդ վայելչութիւնից. միայն իմ կարծիքով ամբարանոցը թեթեւացնում է ծախսերը, որովհետեւ այնտեղ աւելի մխսելու առիթներ չկան:

— Մենք բոլորեքեանքս չենք կարող գնալ, պատասխանեց ճանճուր Իվանիչը. դերդաստանը կը բաժանուի երկու մասն, այն ժամանակ ծախսը եւս կը լինի կրկին — մէկը քաղաքում, իսկ միւսը ամբարանոցում:

— Այդ նոյնպէս փաստ չէ, խօսեց օրիորդը. իմ կարծիքով մի ամբողջ, երբ բաժանվում է երկու հաւասար մասերի, նրա մասերն ունին նոյն չափը, նոյն կշիւրը եւ նոյն համարումը, ինչ որ ունէր ամբողջը: Դիցուք թէ մեր բոլոր դերդաստանը քաղաքում ունի ամսական հարիւր մանէթ ծախս, իսկ բաժանուելով երկու մասի՝ հաւանական է որ ամէն մի բաժինը կ'ունենայ յիսուն մանէթ:

— Մտթեմաթիկա ես չգիտեմ, բայց այնքան մանրամասնութիւններ կան այստեղ թաքնուած, որ չէ կարելի մի առ մի համարել, պատասխանեց գլուխը շարժելով ճանճուր Իվանիչը: Բայց թող դրանք մնան. Սոֆի, ես ուրիշ նպատակ ունիմ քեզ համար, այդ պատճառով վախում եմ ամբարանոց գնալն արդեւ լինի... դիտե՞ս:

— Թէ դուք ինչ նպատակ ունիք իմ մասին, այդ ես չգիտեմ. միայն մենք այնքան հեռու չենք գնում քաղաքից, որ իմ բացահայտութիւնս արդեւիք լինէր ձեր նպատակին. մինչեւ Կօջօր ընդամէնը տասն եւ վեց վերստ է :

Ճանճուր Իվանիչը նկատելով, որ օր. Սոֆին չէ համազովում, ընդունեց փոքր ինչ խիստ կերպարանք :

— Դու լսի՛ր, ինչ որ ասում են քեզ. քո հայրը կեանքի փորձերում աւելի հմուտ է, քան թէ դու, եւ գիտե՞ս որ հայրը միշտ իւր դաւակներէ բարին է մտածում, ասաց նա :

— Նս չեմ ընդիմանում ձեր կամքին, պատասխանեց օրիորդը դժգոհութեամբ. սակայն առողջութիւնը ամենապիտանորն է, եւ ծնողները պիտի մտածեն դեռ իրանց զաւակներէ առողջութեան համար :

Ճանճուր Իվանիչը ոչինչ չպատասխանեց : Եւ օրիորդը մի քանի բռնկէից յետոյ խորին տրամութեամբ դուրս գնաց չօր սենեակից :

Ճանճուր Իվանիչի խտասարտութիւնը կայծակի հարուած եղաւ օր. Սոֆիի սրտին, եւ այնքան ամարանոցի զուարճութիւնների ցանկութիւնը չէր, որքան պատանի Մայիլովի կարօտը, որ սկսաւ օր ըստ օրէ մաշել նրան, մինչեւ նա ուղիղ հիւանդացաւ :

Միւս օր առաւօտեան օրիորդը դուրս չեկաւ իւր ննջարանից : Տ. Բարբարէն գնաց նրա մօտ եւ դտաւ նրան վառուելիս ջերմութեան մէջ : Զարհուրեցաւ խզճալի մայրը եւ իսկոյն հրամայեց բժիշկ կանչել :

Յայտնուեցաւ բժիշկը՝ մի փոքրիկ մարդ ալեխառն մազերով եւ ակնոցներով : Նա նայեց հիւանդին. «Թեթեւ տաքութիւն է, շուտով կ'անցնի», ասաց : Եւ զրելով մի զեղատոմս, հիւանդի մասին մի քանի հարկաւոր պատուէրներ տուաւ եւ հեռացաւ :

Երեկոյեան տաքութիւնն աւելի սաստկացաւ եւ նա

սկսեց դատանցել. «Նիկօլ, թո՛ղ տուր ինձ», յաճախ այդպիսի խօսքեր լսելի էին լինում նրա մտաւոր ցնորքներէ մէջ:

— Հիւանդի դրութիւնը վատանում է, քանի օրից յետոյ յոյանեց բժիշկը: Պէտք է դործ դնել խիստ հնարներ. եթէ շուտով չվերադարձուի նրա առողջութիւնը, հիւանդը կորած է:

Օր. Սոֆիի հիւանդութիւնը ցաւալի ներդործութիւնս ունեցաւ Հացի-Գէլենց տան վրայ, միայն ճանճուր Իվանիչն էր, որ սառնասիրտ էր դէպի իւր դուստրը, որ շատ էլ հետու չէր գերեզմանից. սակայն տ. Բարբաբէն չէր հետանում նրա անկողնի մօտից, նոյնպէս Մաշան՝ ոռու աղախինը, օր ու գիշեր սպասաւորում էին նրան:

Լսելով օրիորդի հիւանդութիւնը Հացի-Գէլենց տանը յոյանուեցաւ նաև Մայիլովը: Նա մտաւ հիւանդի սենեակը, երբ միայն Մաշան էր նրա մօտ: Փետացած մնաց խղճալի պատանին, երբ տեսաւ հիւանդի մաշուած եւ գունատուած դէմքը: Նա խելքը կորցրեց եւ կատաղածի պէս ուղեց խիւղն գրկել նրան, բայց աղախինն արգելեց, ասելով. — Նիկօլ, ի սէր Աստուծոյ, մի՛ վրդովէք հիւանդին:

— Նա մեռնում է՝... կոչեց պատանին ձեռքով զարկելով իւր ճակատին:

— Այսօր նրա դրութիւնն աւելի լաւ է, պատասխանեց Մաշան:

— Ո՛չ, նա անդգոյ է... ես սպանեցի նրան, բացահանչեց պատանին աւելի եւս ցաւալի կերպով...:

ԺԹ

Հացի-Գէլենց գերդաստանը ամարանոց գնալուց յետոյ ճանճուր Իվանիչը գլխաւոր հոգատարութիւնը եղաւ իւր առեւտուրը վերջացնել Մախոխի տղի հետ:

«Թէ վուր Սամիլ Պետրովիչը կարաց էտ սովդան շինի, խօս բաննիրս աջ է», մտածում էր Ճանճուր Իվանիչը: «Մէ կուզմէն մուքքա փեսի տէր կուդառնամ, մէկ էլ կուզմէն էտ դաճուամ ար ծախսերէմէն կուպրծնիմ: Ա՛խ, ի՞նչ զաղամի վատ է էլի արժորթու հալը... նա պիտի տուն պահէ, կնիկ պահէ, վուրթիք մինձացնէ. դրանք ուզում ին հաց, հագուստ, ու ուրիշ ինչե՛ր շին ուզում... ու էտ ամէնը փուղ դուղէ... ու էնքան դժուարութիւնով շահի-շահի դաղած կուզէկնիրը պիտի տայ հացի. — մէ սնաթից յետոյ էլի ուզում ին... պիտի տայ հագուստի, — որ շուտով մաշվում ոչնչացնում է... Մագրան, վո՛ւրքան բախտաւոր ին միզմէն ծտիրը, շուրս վուտնանիքը, թէզուզ շնիրը... Նրանց վուրթիքը հաց շին ուզում, ջուր շին ուզում, նրանք մօղա շունին, պարտնոյ շունին... էնքան էլաւ վուր ծնեցին, մի քանի օրից յետոյ իրանց դիւեմէն ուալ ին անում իրանց լակոտնիրը, վուր գնում ին իրանց համա ապրում: Դու տեսնում իս բազի ճուտը հէնց ձուէմէն դուրս է գալի թէ չէ, իրա համա ուտելիք է գթնում, ու թէ վուր ջուրը դցիս, լիզ տալն էլ գիդէ, ասել է թէ, առանց ուտի իրա փէշակը ձուի միջում սորված է ըլում: Համա միւր վուրթիքը ծնելէմէն ետքը հէնց մէ գունդ միս ին ըլում. վուշինչ շին իմանում, հէնց լաց ին ըլում ու լաց ին ըլում. ի՞նչ է. — տուէք ուտինք, տուէք հագնինք՝ վուր մինձանանք: Էնդումէն դէնը՝ դէ՛ քօծ ու բիճ բոնէ, ու շիս գիդի ուրիշ ինչիր շին ուզում քիզմէն... ու էտպէս տարիներով պահում իս, պահում իս, հէնց վուր մէքիչ մինձացաւ, մէրան էլ նուր է լուս ննդնում, — ուտում էլ դուզէ, ասում ին: Էտ պատիժն էլ աչքիս վրէն: Վուրթիդ, ան աղջիկդ մէ քանի տարի գնում ին բչիօլերում թրեւ ին գալի: Միւր պարունները գալիս ին հօր տուն: Ի՞նչ ին բերի բչիօլէմէն: — Սաւանան գիտէ նրանց դուխը: Նրանց մէջ մէ օրինաւոր բան

չիս տեհնի: Մաղբամ սկսում ին իրանց պապենական աղաթ-
նիրը չհաւնիլ, հէրն ու մէրը ինչ վուր խրատում ին, նրանք
ծիծաղում ին, մասխարա ին քցում. լաւ ուտիլ, լաւ հագնիլ
ու քէփ սիրում ին: Էա է ձիւր ուսումը, թքեմ ես դրա
ուխիւն: Մաղբամ ի՞նչ անիս, վո՞ւր ջուրն ընկնիս, ո՞ւմ
հասկացնիս, վուր էա թափուր դարդակ բանին փուղ մսխիլը
մինձ անխիլքութիւն է...

Վերջին խօսքերը բաւականին դայրացիին ճանճուր
Իվանիչին եւ նա սկսաւ հայհոյել հասարակութեան ունեցած
կարծիքը ուսման եւ գիտութեան վրայ, եւ այդպէսով փոքր
ինչ գովացնելով իւր սրախ բորբորքը, դարձեալ մտաւորա-
պէս դարձաւ դէպի իւր վիճակը:

«Հորէս ես, շարունակեց նա, տուն իմ դրի, վուրթիք
իմ մինձացրի, օձի նման հազար դամ շապիկ իմ փոխի,
ի՞նչկլի մէ քանի շահի ձեռք իմ դցի. հիմի իմ կինքիս
վերջին օրում ուզում ին ձեռնէմէն խլի. դէ՛, արի՛, մարդ
բլի ու սրտաճաք չըլի՛... իմ հոգին գիղենայ, վուր անա-
սունիւրը միգմէն լաւ ին, վուր էս դարդիրը չունին: Էրնէկ
ես շուն բլէի ու մարդ չլէի... Ամա չէ՛, մէ բան կայ —
մի նոր գաղափար նրան զղջալ տուեց իւր ասածից. — «մէ
բան կայ, կրկնեց նա, վուր մինք փուղ ունինք, համա շնիրը
չունին, դրանով մարդը մէքիչ լաւ է նրանցմէն: Թէ վուր
էդ չլէր, վա՛յ քու միղկը, մարդ, էն ժուկը քու օրը ի՞նչ
պաի բլէր, ու ի՞նչով պաի մխիթարուէիր դուն...»

Ահա՛ այդպիսի տխուր եւ տրտում խորհրդածութիւն-
ները մէջ ընկզմած, ճանճուր Իվանիչը միայնակ նստած իւր
սենեակում, կարծես թէ մէկին սպասում էր: Յանկարծ
դուռը ճաց, ներս մտաւ Սամիլ Պետրովիչը: Ճանճուր Իվա-
նիչը տեսնելով մօցիքուլին, փոխեց իւր դէմքի թթու ար-
տայայտութիւնը, եւ ահամայ ուրախութիւն կեղծելով երեսի
վրայ, ընդունեց շնորհալի կերպարանք: Բայց միեւնոյն բո-

սէին դադանի կասկածը կրժում էր նրա լերդը, թէ ինչ կը լինի իւր վիճակը, եթէ Սամիլ Պետրովիչի բերած լուրը դոհացուցիչ չլինի: Այդ պատճառով սկզբից նա չուղեց այդ մասին հարցնել, ինչպէս մի մարդ, որ չէ կամենում շուտով զարհուրեցնել իրան անյուշալի լուրի կայծակով:

— Բարով, բարով, Սամիլ Պետրովիչ, հրամմեցէք, ասաց նա ակամայ ծիծաղելով:

— Բարով, պատասխանեց մօցիքուլը եւ ձեռք տուաւ ձանճուր Իվանիչին, յետոյ նստեց նրա առջեւ աթոռի վրայ, եւ երկու ձեռքով բռնելով իւր հաստ զաւազանի դլիսից, ծնօտը ամրացրեց նրա վրայ եւ սկսեց աղուէսի նման նայել ձանճուր Իվանիչի երեսին:

— Փառք Աստու, լաւ ինք, պատասխանեց Սամիլ Պետրովիչը:

— Ի՞նչ նուր խարար կայ:

Սամիլ Պետրովիչն սկսեց պատմել նրան մի քանի նորութիւններ, բայց նրանցից ոչ մէկը չգրաւեց ձանճուր Իվանիչին, նրա միտքը Մախոխի տղի վրայ էր, եւ նա հարցրեց:

— Էն մասին, Սամիլ Պետրովիչ, կարացի՞ք մէ բան շինի:

— Մախոխի տղի մասին իս ասո՞ւմ, հարցրեց Սամիլ Պետրովիչը: Այ նրա ժանդատ հէլն անիծած, վուրքան չալիչ էկայ, չկանացի սովդան դլուխ բերի, պատասխանեց Սամիլ Պետրովիչը տհաճութեամբ:

ձանճուր Իվանիչը զարհուրեցաւ:

— Ձի՞ ստում է փուղը քիչ է, հարցրեց նա:

— Ձէ, փուղի բան չէ՞. թէ մենակ փուղի բան ըլէր, գլուխը քարը, մէքիչ աւելով, մէքիչ պակասով կուղրասէի. մաղրամ նա ուրիշ զալաթ է ամուսն:

— Ի՞նչ է ասում, իմ անջկանից լաւ անջկկ պիտի ասնի, թէ՞ ինձմէն լաւ մարդու փեսայ պիտի դառնայ:

— Գրուստ է, նա էլ ասում է՝ Հոգի ունիմ Ասածուն տարու. — աղջիկը լաւ, սիրուն աղջիկ է, իստակ, իսպահնի, ու ուսումսով, մաղբամ ի՞նչ անիս, ուսումը սովաւաբար օգնի խարջ չէ: Ասում է՝ ես պիտի էնպէս կնիկ ուղիմ, վուր իմ կամքին ըլի, իմ երեսէրքիս ի՞նչ շուր կը Հարկաւուրի, կարէ, տուն պահէ, լուացքէմէն ու կարէմէն մուլայիթ կենայ, մէ խօսքով, տանտիկին ըլի: Բայց ես ի՞նչ կ'օնիմ էնպէս աղջիկը, ասում է, վուր դիշիր ցերեկ Հալիլի առջեւից չհեռանայ, իր օրը զուքսիրով կանցկացնի ու թրէատրում, վիչէրնիրում թրեւ կուգայ, էտպէս կնիկը, կ'օսէ, միզ նման քէսիր մարդու խարջ չէ:

— Շուն շանվուրթի, բարկանալով Մախոխի տղի ասածները վրայ, պատասխանեց ճանճուր Իվանիչը: Տի՛ս, թէ ի՞նչ բուխիիր է ուսում. դանա իմ Սօփօն էտէնց է՞, վուր հէնց իր զուքսի հիզ ըլի՛. Աստուծ դիտենայ իմ Սօփօն հէստի տանտիկին է, վուր խիլի Հատը չկայ ու ամէն բան գիդէ. կարի ու ձեւի մէջ իսմ մատնիրով մարդ կուստեղծէ. չուրս լիզու խօսիլ է իմանում, ու մէ վարդապետից էլ շատ գիրք է կարգացի. սիրունութիւնով, շնորքով իսմ Հատը չկայ:

— Ես գրանք ամէնը գիտիմ, պատասխանեց Սամիլ Պետրովիչը. ամա դուն արի միր պարներանց Հասկացրու. հէնց վուր դուրսը բաց, ան շլապաւոր աղջիկ ին տեհնում, սրտաճաք ին ըլում. նրանցն է թասահրաւին ու իրենց դէրիէքում պօլօլուած աղջկիրքը:

Ճանճուր Իվանիչը մի փոքր մտածման մէջ ընկաւ, յուսահատութիւնը դժգոհութեան հետ, նկարուած էին նրա դէմքի վրայ:

— Մաշ դուն ի՞նչ ասեցիր էն Հաստադլսին, Հարցրեց նա:

— Ի՞նչ միզքս պահիմ, պատասխանեց Սամիլ Պետրո-

վիչը սառնասրտութեամբ, սուտից, զորդից շատ բաներ ասեցի, էդէբա մէ թահարով գլխում նստացնիմ՝ մազբամ նա էնպէս մէ ժանդուտ օմքին է. «սատկած էչի է ման դալի, վուր նալիբը հանէ»:

— Հիմի ի՞նչ պիտինք անի, տհաճութեամբ հարցրեց Ճանճուր Իվանիչը:

— Ախպէր ջան, փոքր ինչ քաղցրութեամբ պատասխանեց Սամիլ Պետրովիչը. թէ ինձ կուհարցնիս, զուր տիղը աղջիկդ մի՛ կորցնի, ու էնէնց շների ձեռը մի՛ դցի. դրուստն ասիմ, քու աղջիկը սովդաքարի, փէշաքարի, մէ խօսքով, հայի խարջ չէ՛. դուն լաւ կ'օնիս վուր մէ ոսի դուլլուդի մարդու տաս. համ քիչ փուղ կ'եհայ, համ էլ չինովնիկ փեսայ կ'ունենաս:

— Էտ չիմ կանայ պիտի, պատասխանեց Ճանճուր Իվանիչը գլուխը բացասաբար շարժելով:

— Էտ չիս կանա անի, հայ չինովնիկի տուր:

— Ես չինովնիկին աղջիկ չիմ տա, ինչ ազգէմէն դուրէ ըլի՛:

— Լաւ, չինովնիկին չիս տա, մաշ բաղաղը, ան թէ սովդաքարը ի՞նչ կ'օնին ուսում առած աղջիկը. նրանք ուղում ին էնպէս կնիկ ունենան, վուր տանտիկին ըլի, ու իր նշանածին հնազանդի, վուր համ իր երեխեքանց շուրը կարէ, համ կուխնին մանի. մօզի եզնից թրեւ չդայ, մի դերթա հաղնի, էլի էն կտուրը ուրիշ տեսակ փոխէ, մաշ ուելուց յետ էլ կարէ իր երեխեքանց համար կարէ, ան թէ իր համա բուփկա շինէ:

Յաւալի է մտածել անգամ, թէ մինչեւ ո՛ր աստիճան ուսման եւ կրթութեան վարկը կտարած է այստեղ ուսմիկ հասարակութեան աչքում, որոնք ուսումն ու կրթութիւնը բնդուսում են ինչպէս միմիայն. շոյլութեան ազրիւր, կարծելով թէ ուսեալ օրիորդը չէ կարող լինել ոչ հմուտ տան-

տիկինն եւ ոչ հողատար մայր: Մենք յայտնապէս իրաւունք չունինք ուսման եւ կրթութեան վրայ որեւիցէ մեղ դնել, եթէ նրանք լինէին օրինաւոր պայմանների մէջ. բայց չեմ կարող չմեղադրել մեր կրթեալ օրիորդներին, ինչպէս թիւր կրթութեան ներկայացուցիչներին, որոնք իրանց վարքով տեղիք են տուել այդ կարծիքին ռամիկ հասարակութեանը, որ մինչեւ անգամ Մախոխի տղան էլ խորշում է նրանցից:

Ճանճուր Իվանիչը ընկղմուեցաւ դարձեալ տխուր մը-տածման մէջ:

Վերջապէս նա համոզուեցաւ Սամիլ Պետրովիչի առաջարկութեան:

— Լա՛ւ ճարէ մինը, թող չինովնիկ ըլի, ասաց նա: Մտորան սպեւածների չունենայ. ան զօխտուր ըլի, ան դահօնչիկ, ու հայ ըլի:

— Գրանցից դտնիլը հիշտ է, պատասխանեց Սամիլ Պետրովիչը, ամա դուն ուզում իս մէ երկու հարուր, երեք հարուր թումնով աղջիկ մարդու տա, բայց զօխտուրը, ան գահօնչիկը հազար, էրկու հազար թումնից պակաս չին առնի:

— Էրկու հազար թումա՞ն, դարհուրելով կրկնեց Ճանճուր Իվանիչը:

— Մաչ ի՞նչ էիր փեքր անում. երկու հազար թումնից էլ աւել տուողներ կան. Տ...նի տղէն չէ՞ր, վուր իրեք հազար թումնով աղջիկը զօխտուրի էրիտ, Ա...նի տղէն չէ՞ր, վուր չուրս հազար թումնով քվիրը դահօնչիկի էրիտ. էլ ուրիշ վո՞ւրն իս ուզում ասիմ. դանա դուն միր քաղքի բանը չիս դիդի՞:

Հազար թումանները կրկին փոխեցին Ճանճուր Իվանիչի համոզմունքը:

— Աստուծ ձեր տունը քանդէ. էս ի՞նչ փիս աղաթներիք դնում միր աղդի մէջ ասաց նա: Չէ՛, Սամիլ Պետրովիչ, դարձաւ նա դէպի մօջիքուլը. ես չինովնիկ չիմ ուզում, դու

էլի պտուէ, բաւքա մէ փողոցի մարդ գլխնիս՝ ես շինովնիկի դարդը շիմ կանա քաշի, վուր իմ հալալ աշխատանքս տամ տանի իր համա քէփ անի. ու ամէն վուխա էլ իմ տուն գալիս պիտի նրա առաջ կուչ գամ, ծալապատիկ ըլիմ, ի՞նչ է՛, փեսէն եկիւ է. դէ՛ չայը լիմոնով բերէք, դէ՛ սուխարի, դէ՛ մուրաբէք, դէ՛ շիմ գիտի ի՞նչ գ ա ՚ Ր ու մ ա ր, էլի ի՞նչիբ ասիս վուր շին մօզօնելու:

— Շատ լաւ, ես վուրքան կանամ, չալիս գուքամ:

— Դուն չալիչ արի, Սամիլ Պետրովիչ, քիզ վուր տասը թուման էի խոստացի, քան էլ կուտամ, ու փեսին ինչկիլ իրիք հարուր թուման էի ասի, հինգ հարիւր էլ կուտամ, թէ իմ սրտի ուզած լաւ տղայ ըլի:

— Շատ լաւ, կրկնեց մօցիքուլը եւ վեր կացաւ. մագրամ մէ բան ձեռաց տուէք, ես շուտով ձիզ խարաբ կուրերիմ:

Ճանճուր Իվանիչը դողդողուն ձեռքով տուաւ նրան տասն մանէթանոց մի թղթագրամ:

Մօցիքուլը հեռացաւ:

Սամիլ Պետրովիչի գնալուց յետոյ Ճանճուր Իվանիչն սկսաւ ծանր քայլերով անցուղարձ անել իւր սենեակում եւ բարկացած խօսել ինքն իրան. «էս էլ քու ուսումը... ի՞նչ ուսում... գ ա ՚ Ր ու մ ա ր ուսում... աղջիկս զայր փուղ շինից... հիմի ում վուր տալիս իմ, շին առնում... ես թքեմ էտհանդի ուսումի մէջ... իմ հէրն անիծած, թէ էն մնացած աղջկերանցս թողնիմ այբուբենն էլ սորվին...: Գուհէրը գօբրագօս ըլի, բաժինք մօզօնող. ա՛խր էս ի՞նչ կրակ ու ցաւ պեցիբ խալխի սրտում...: Ախր ես իրիք աղջիկ ունիմ, ես վուրդանց ամէն մէկին հաղար թուման տամ, վուր գլխմէս կարենամ ուղ անի... ա՛խր տարիքըս հիմի յիսունէմէն անց է. էլ վուչ հոգի է մնացի, վուչ մարմին, դիփ էլ կորցրիւ իմ, անջաղ մէքանի թուման փուղ իմ յիս

զցի ու էա էլ վուր մխտիմ աղջկերանցս վրէն, էլ ես ինչո՞վ պտիմ ապրի... Ա՛խ, քու հէրը գօրբազօռ ըլի, բաժինք մօզօնոզ, շների, դէլերի բաժին դառնաս, քիզ տեհնիմ, վուր սատանէքանց փայ ըլիս»... :

Դուրս գալով Հացի-Գէլենց տնից, Սամիլ Պետրովիչը միայնակ դնում էր բուլվարով. կարծես թէ նա յոգնեցաւ եւ՝ — բարով, Աղալօ Գերասիմիչ, — ասելով, դնաց նստեց կրտաթախտի վրայ, ուր նոյն ժամուն նստած էր եւ մի մանկահասակ տղամարդ, որ թեք ընկած եւ պապիրոսը բերանին դրած նայում էր անցուդարձ անողններին :

Երիտասարդի արտաքին կերպարանքը, նրա երոպահան հաղուսար, որ բաւական մաքուր եւ վայելուչ էր, ցոյց էին տալիս, թէ նա շատ ու քիչ պատուաւոր վաճառականները կարգից է :

Սամիլ Պետրովիչը թէեւ այդ պարոնի հետ մօտ ծանօթ չէր, բայց նա իւր սովորական կեղծաւորութեամբ կարողացաւ նրա հետ խօսակցութեան մէջ մտնել, որ մի քանի բողէ նրանց մէջ տեւելուց յետոյ այսպիսի կերպարանք ստացաւ .

— Դուք ի՞նչ իք շինում, Սամիլ Պետրովիչ, հարցրեց երիտասարդը համակրարար նրա երեսին նայելով : Միւր առուսուրը վուր էսպէս վատ է դնում, փօղբաթի խէրը դուրս է էկի. պոռանների կոխը առուսուրը յիտ ղցից. մէ խօսքով՝ միւր բողարը քէսատ է. ձիւրը վո՞ւնց է :

— Իմ փէշակը բարի փէշակ է, չի ըլի, վուր նա քէսատութիւն ընկնի, պատասխանեց Սամիլ Պետրովիչը : Օրինակի համա տսիմ, մէ կաղեօննի շինուածքի մտիկ անելիս դուք ձիւր մտքում ասում իք՝ նէտավի էս տունը քանդուէր, ես փօղբաթով վիւր առնէի, էսքան մանէթ աշխատէի. կամ թէ ամբարնիրում հաց ունիս, ամէն առուտեհան աղօթք իս անում, վուր սով ըլի, բաւքա վութը տաս մանէթով ծախիս :

Մագրամ միր փէշակը վուշ թէ ձերիցը, բայց տէրտէրի փէշակէմէն էլ լաւ միտք ունէ. տէրտէրը մէ մարդու մտիկ անելիս, իլլահճի վուր մէքիչ տարիքը անցած է ըլում, իր մտքում ասում է՝ «էտ անիծածը ե՞փ պտի մեռնի. վուր դրա շիլափլաւն էլ ուտիմ, շուրերը պլօկիմ», ու կնէնց էլ հաքիմը, վո՛ւր հարուստին տեհնի, կ՛օսէ «էս շանորթին իսկի չէ՛ հիւանդանում»։ մագրամ, ինչպէս ասացի, միր փէշակի միտքը բարի է. մինք չալիշ ինք դալի, վուր ուրիշները կնկայ տէր դառնան, իրանց համա քէփ անին, մինք սովդան բարիչացնինք։

Սամիլ Պետրովիչի կիսազուարճալի ոճը շարժեց երկտասարդի ծիծաղը, եւ նա եռանդով դարձաւ դէպի նա, ասելով.

— Եփ վուր էտէնց է, ինչի՞ ինձ համա մէ բան չիս չինում :

— Քիդ համա՞, կրկնեց մօցիքուլը ուրախութեամբ, օրհնած, դուն ե՞փ ասեցիր, վուր ես չչինեցի :

— Հիմի ասում իմ :

— Քիդ համա հէստի աղջիկ ունիմ, վուր սաղ քաղքում հատը չկայ :

— Ո՞վ է, ախորժանօք հարցրեց երկտասարդը :

— Գանա էտպէս հիշտութիւնով. կ՛օտի՞մ, պատասխանեց Սամիլ Պետրովիչը, կամենալով աւելի արժանաւորութիւն տալ իւր խօսքերին :

— Դուն ուզում իս լեզուիդ էլ քրթամ աս՞մ :

— Մաշ վու՞նց :

— Կիրակի օրը մէ լաւ դօնադլղի խօսք իմ տալի քիդ : Սամիլ Պետրովիչն սկսաւ ծիծաղել ինքնարաւական դուարճութեամբ :

— Լաւ թէթեւ բանով ուզում իս խօսք քաշի ինձմէն հա՞, նկատնեց նա :

— Էս ջէր յառաջարանն է, էնդումէն դէնը դիդիս վուր ամէն բան կուլի:

Սամիլ Պետրովիչը նկատելով, որ որսը մօտենում է իւր նպատակին, բայց անյարմար համարելով այնտեղ խօսք բայ անել, ուր անցուղարձ անող մարդիկ կարող էին իրանց խանդարել, նա վեր առաւ Երիտասարդին իւր հետ, և և մտան Աղէքսանդրեան այգի, և հետու մի անկիւնում նստեցին մի ծառի հովանու տակ:

— Հիմի ասա՛, խօսեց Երիտասարդը:

— Հացի-Գէլենց ճանճուր Իվանիչի աղջիկ Սոֆին վո՞ւնց է. հատը Փարիզում էլ կա՞յ, մէ խօսքով հրեշտակ է, խօմ ազմորթի չէ՞:

Երիտասարդը մի քանի բոսկէ մտածման մէջ ընկաւ, և նրա դէմքի նախկին գուարթութիւնը մոայլուեցաւ, որսողն մի ձկնորս, որ նկատելով կարթի նշանը և կարծելով թէ բռնել էր որսը, դուրս է քաշում ջրից չանդալը, և ձկան փոխարէն օձ է դուրս գալիս:

— Հա՛, նա սիրունութիւնով առաջինն է միւր քաղքում, մազբամ...

— Ի՞նչ մազբամ, նրա խօսքը ճարպիկութեամբ կըստրեց Սամիլ Պետրովիչը. վունչիչ փանելու տիղ չունէ, ի՞նչ վուր խօսիս, հոգուդ միղք կ'օնիս:

— Չէ՛, Սամիլ Պետրովիչ, դրուստն ասիմ, նրա համալու չին խօսում:

— Լա՞ւ չին խօսում, կրկնեց Սամիլ Պետրովիչը դարմանք ձեւացնելով իւր դէմքի վրայ: Ի՞նչ ին խօսում, դանա դուն միւր քաղքի բամբասանքը չիս դիդի՞. վաղուայ առակը չի, թէ ճաղուէսի դունչը խաղողին չհասաւ, ասեց խակ է՞:

— Էս դրուստ է, մազբամ նա իրա հալի աղջիկ չէ՞:

— Վո՞ւնց:

— Ասում ին, ջահել տղերանց շինքով փաթըթուել սիրում է:

— Վա՛յ մէ, միղք է, էտէնց մի՛ խօսի. նա հրեշտակի բնութիւն ունէ:

— Ես իմ լսածն իմ ասում, մազբամ աղջկայ սիրտը Աստուծ գիղէ:

Սամիլ Պետրովիչը իրան ձեւացրեց փոքր ինչ բարկացած:

— Ո՛վ վուր խօսում է, դուխը քարովն է տալի, պատասխանեց նա: Պարուն Մատուր, դուն օրթում խօս չիս ուղում վուր ուտիմ, ամա էս «անուն Հօրը» վկայ է, եւ նա խաշակնքեց երեսը — եւ Գրիտոսի Սաչ-Աւետարանը ինձ խռով կենան, թէ սուտ ըլիմ ասում, նա հրեշտակի պէս իստակ է:

Երիտասարդը ոչինչ չպատասխանեց:

— Վո՛ւրքան փուղ ունէ, հարցրեց նա մի քանի բողէից յետոյ:

— Փուղն ի՞նչ կ'օնիս, դուն ուղում իս համ լաւ նշանած ունենաս, համ փուղ առնի՞ս, պատասխանեց հանաքով Սամիլ Պետրովիչը:

— Էս ժուկում առանց փուղի աղջիկ ո՞վ է առնում միւր քաղքում:

— Հինդ հարուր թուման էլ փուղ ունէ:

— Հինդ հարուր թումա՞ն, ծիծաղելով պատասխանեց երիտասարդը: Հինդ հարուր թումանը նրա մէ տարուայ փէրչատի, դուխի ու փայտօնի փուղը չի դուրս բերի:

— Լաւ իս ասում, հեղնօրէն խօսեց մօցիքուլը, ամա նա հէստի խոզէիկա է, վուր նրա ձեռքի տակից կոպէկ չի վիւր ննդնի. նա աւել մսխիլ չէ սիրում:

— Վունց չէ՛ սիրում, վուր ճանճուր Իվանիչը իր կին-

քումը մէ հասարակ սէլի վրայ նստած չունէ, նա կի նրան կառէթ առնիլ էրիտ :

— Էտ վուչինչ. քու կնիկ դառնալուց դէնը վունց վուր դուզիս, էնպէս կուպահիս :

— Փուզի բանը ետա կուգնայ, Սամիլ Պետրովիչ, ես փառք Աստծու, փուզ ունիմ, ու աչք չիմ դրի, վուր կնկայ փուզով ապրիմ. մազբամ ճանճուր Իվանիչի աղջիկը իմ խորջ չէ, դուն լաւ կ'օնիս մէ էնթաուրը գթնիս, վուր հայի աղաթի րի :

Սամիլ Պետրովիչն սկսաւ սարսափելի երդումներով հաւատացնել նրան, թէ օր. Սոֆին հրեշտակ է, սուրբ է, եւ մինչեւ անգամ ասաց, որ նա Աստուածածնի պէս մաքուր է :

— Չէ', Սամիլ Պետրովիչ, պատասխանեց երիտասարդը, էնպէս չէ', վուր ես նրան չճանչնամ. քանի անգամ թէատրում, վէչէրնիրում, կրութօկում եւ ուրիշ շատ տիղ նրան տեսիլ իմ. նա իրա հալին աղջիկ չէ. նա էս սհաթիս ուրիշ ալի վրայ սիրահարուած է, նա էնպէս մարդ կուզի, վուր իրան գերի դառնայ, դադածը իրա վրայ միտէ, ու ինքը կի ուրիշների հիգ քէփ անէ : Կուլի վուր դուն լաւ չիս իմանում, բայց մինք վուր աղջիկների մուշտարի ինք, դրանց լաւ կուճանչնանք :

— Ուսում առած աղջիկը իսկի էտէնց չի րի :

— Ի՞նչ ուսում. ստանան էլ շատ գիտէ, ամա վուր չար բնութիւն ունէ', ի՞նչ կ'օնիմ նրա գիտութիւնը :

Սամիլ Պետրովիչը երկար աշխատեց դանադան փաստերով հերքել երիտասարդի կարծիքը օրիորդի մասին, բայց հնարք չեղաւ, նա դարձեալ սկսաւ պնդել իւր համոզմունքը օրիորդի անվայելուչ բարոյականութեան վրայ : Քառորդ ժամ եւս տիրեց նրանց մէջ վէճը եւ Սամիլ Պետրովիչը բաժանուեցաւ նրանից բոլորովին դժգոհ :

Ի

Հացի-Գէլենց կացարանը Կօջօրում մի բլրակի գաղաթի վրայ էր: Նա իւր բարձր դրութեամբ կարծես թէ իլտում էր իւր գեղեցիկ շրջակայքին: Նրա չորեքկողմում ուր եւ նայում էիր, պատկերանում էին Հիանալի տեսարաններ — մի կողմում կանաչազարդ հովիտներ, խոտաւէտ արօտամարդեր, որոնց մէջ արածող շորքոտանիք հրաշալի երեւոյթներ էին ձեւակերպում. մի այլ կողմում թփապատ բլրակներ, անտառախիտ լեռներ, իրանց գաղաթների բարձրութեամբ նկարուելով երկնքի կապուտակութեան մէջ, հանդիսացնում էին սքանչելի պատկերներ: Մի այլ տեղ մշակուած դաշտերում երկրազործը իւր սովորական երգը երգելով, հերկում էր գետինը:

Այդ բոլոր Հիանալի տեսարանները, այդպէս շքեղաբար միախառնուելով միմեանց հետ, հանդիսացնում էին Կովկասեան հրաշալի բնութեան գեղապատկերը:

Փոքրիկ տունը, ուր կենում էին Հացի-Գէլենց, հովանաւորուած էր ծառերի անթափանցիկ ստուերի ետև: Նրա բակի պարտէզը՝ զարգարուած ծաղիկներով եւ վայրի ծառերով, տալիս էր այդ գեղեցիկ բնակարանին առանձին բանասեղծական շքեղութիւն:

Արեւի ոսկեղօժը դեռ նոր փողփողում էր լեռների կանաչազարդ կատարների վրայ. օդը, արբած զիշերային զովութեամբ, բուրում էր անուշահոտութիւն: Երգող թռչունները բարձր եւ բարձր հնչեցնում էին իրանց առաւօտեան տաղերգութիւնները:

Գեղեցիկ ամառային առաւօտ էր:

Բաց լուսամուտի հանդէպ, խորին մտայնույթեան մէջ, նստած էր օր. Սոֆին եւ նայում էր դէպի գեղեցիկազարդ հեռուն: Նա նայեց, երկար նայեց եւ բնութեան այդ գե-

դարուեստ պատկերները ծնեցրին նրա հոգում հազարաւոր դուարձայի զգացմունքներ :

Նրա մօտ, բոլորովին դմայլած օրիորդի էջխով, նստած էր Մայելովը :

Այդ օրը արշալոյսն այնպէս վարդազեղ ներկելով իւր գէմքը, կարծես թէ մրցել էր կամենում օրիորդի թշերի ալ դոյնի հետ, որ իրրեւ գեղեցկութեան դիցուհի իւր սրբաբանից իշխում է բնութեան վրայ :

— Տեսնում ես, Նիկօլ, ասաց նա հրճուելով, ի՞նչ գեղեցիկ ասաւօտ է այսօր... : Նայիր, տես թէ քանի՞ հրապուրանքով ծառերի տերեւները, ծաղիկները փնջերը դարձարած սուաւօտեան ցօղի գոհարներով, ժպտում են արեւի առաջին ճառագայթների հետ :

— Այո՛, հիանալի է, պատասխանեց պատանին խորին համակրութեամբ :

— Լսում ե՞ս, Նիկօլ, թէ ինչպէս սոխակը անհոգ եւ քաղցրաձայն հնչեցնում է իւր երգը : Բնութեան այդ շքեղութիւնները՝ ասես թէ ոգեւորում են թռչունների պօչտին :

— Լսում եմ, կարճ պատասխանեց Մայելովը :

— Երանի՛ր թէ մարդը նոյնպէս ունենար նրա գեղեցկասէր ճաշակը, խօսեց օրիորդը զգացումով :

Օրիորդի վերջին խօսքերը մոզական աղղեցութիւն ունեցան պատանի Մայելովի վրայ եւ նա կարծես թէ զարթեցաւ իւր մտաւոր թմբութիւնից :

— Դու կարծում ես մարդը չէ՞ կարող սիրել գեղեցիկը, հարցրեց նա ուղիղ օրիորդի երեսին նայելով :

— Ի՞մ կարծիքով ո՛չ այնքան... որովհետեւ մարդու զգացմունքները խիստ կոշտ են, պատասխանեց օրիորդը վհատութեամբ եւ նոյն բողբոջին երեսը շրջեց եւ սկսաւ նայել գէպի հետուն :

— Բայց ե՞ս...

— Քեզ պէտք է դեռ եւս շատ ուսանիլ...

— Սէբը արուեստական իրողութիւն չէ՛, նա ուսում չունի:

— Իրաւ, այդպէս է. բայց մի սիրտ, որ չունի զարգացած կրքեր, նա դատարկ թմբուկ է:

— Բայց մենք եւս շնախանձե՞նք սոխակին:

— Ինչպէ՞ս, հարցրեց օրիորդը:

— Այնպէս՝ որ եթէ դու թոյլ տայիր, ես այս բոպէին կը փաթաթուէի քո պարանոցով եւ մի քանի համրոյր կը քաղէի քո թշերից, որպէս սոխակը, որ այնպէս տարփանքով դրկում է դեղեցիկ ծաղիկները եւ այնպէս բորբոքուած ծծում նրանց անուշահոտութիւնը:

Օրիորդը ժպտեցաւ:

— Դու ցանկանո՞ւմ ես այդ:

— Շա՛տ...

— Կարող ես:

Եւ Մայիլովը քնքշութեամբ դրկեց նրան եւ երկար նրա շրթունքները չէին հեռանում օրիորդի նոյն բոպէին բոցազառուած թշերից:

Միւս սենեակից լսելի եղաւ ոտքի ձայն:

— Բաւական է, Նիկոլ:

Ներս մտաւ Մաշան:

— Այստե՞ղ էք հրամայում բերել ձեզ համար թէ՛յ, հարցրեց նա:

— Մայրս վե՞ր է կացել քնից, հարցրեց օր. Սոֆին:

— Դեռ եւս ոչ:

— Ուրեմն այստեղ:

Աղախինը հեռացաւ:

Ներս մտաւ Գրիգօյը սուլելով եւ զուարթ դէմքով: Նա անխոյթ կերպով ձեռք տուաւ իւր դասընկերին եւ սկսաւ դարձնալ սուլելով պտտիլ սենեակում:

— Ո՞ւր էիր, Գրիգօլ, այսպէս վաղ առաւօտեան, ես մի ժամ աւելի է, սպասում եմ քեզ, Հարցրեց նրանից Մայիլովը :

— Ես ամէն առաւօտ արեւածագից առաջ դնում եմ դրօսանքի, պատասխանեց գիմնագիտութիւնը: Այնպէս չէ՞, Սոֆի. բայց ես պատմեմ ձեզ մի նորութիւն. մինչեւ այսօր ես ոչ ոքի չէի հանդիպել, որ ինձնից առաջ դուրս եկած լինէր դրօսանքի, բայց այսուհետեւ չեմ կարող հպարտանալ դրանով, որովհետեւ այսօր մի պարոն ինձնից առաջ էր դուրս եկել դրօսներու :

— Ի՞նչ պարոն, Հարցրեց օրիորդը :

— Մի պարոն, Պետերբուրգի Համալսարանն աւարտած. նա նոր է եկել սամարանոց եւ մեզ դրացի է :

— Մեզ դրացի է՞, Հարցրեց օրիորդը :

— Այո՛, մեզ դրացի :

— Երիտասարդ է :

— Նորահաս, գեղեցիկ երիտասարդ, համարեա՛ր քսան եւ չինդ տարեկան, խիստ վայելուչ կերպով հագնուած :

Վերջին խօսքերը զրգուեցին օրիորդի հետաքրքրութիւնը եւ նա շարունակեց իւր Հարցուփորձը.

— Նա խօսե՞ց քեզ հետ :

— Խօսեց :

— Ի՞նչ ասաւ :

— Նա Հարցրեց թէ ես ո՛րտեղ եմ բնակվում. ես նրան ցոյց տուի մեր կացարանը եւ ասացի որ մօրս եւ քոյրերիս հետ եմ բնակվում :

— Նա մի ուրիշ խօսք չասա՞ց :

— Նա ասաց, թէ ձեր քոյրն ա՞յն օրիորդն է, որ այն երեկոց բակում ման էր դալիս սպիտակ հագուստով. ես պատասխանեցի, այո՛. յետոյ նա ասաց, թէ ես իմ լուսամտից տեսնում էի ձեզ :

— Էլ ի՞նչ ասաց, հարցրեց օրիորդը, չբաւականանալով լսած տեղեկութիւններով:

— Էլ ի՞նչ պիտի ասէր, մի-վոքը պի՛նդ ձայնով պատասխանեց Գրիգօլը, ես արդէն նրա հետ մօտ ծանօթացայ:

— Ի՞նչպէս, Գրիգօլ, քո հոգուն մասաղ, դարձեալ հարցրեց օրիորդը:

— Մենք զբօսանքից դարձանք միասին, խօսեց Գրիգօլը, անցնելով նրա կացարանի մօտից, նա ինձ հրաւիրեց իւր մօտ. մենք միասին թէյ խմեցինք, նա խոստացաւ ինձ օգնել դասերս սերտելու: Մի խօսքով նա շատ ազնիւ եւ բարեսիրտ տղամարդ է:

Մայիլովը լուռ ականջ էր դնում քոյր ու եղբոր խօսակցութեանը, մինչեւ նա տաղտկացաւ լսելուց եւ դարձաւ դէպի իւր դասընկերը հարցնելով.

— Գրիգօլ, բերել ե՞ս Լերմօնտովի երրորդ հատորը:

— Ո՛չ, մոռացել եմ, տանն եմ թողել, պատասխանեց Գրիգօլը:

— Ես ուզում էի միանգամ եւս աչքի անցնել...

— Բայց դու ասա՛, Գրիգօլ, նրանց խօսակցութիւնը ընդհատեց օրիորդը, ի՞նչպէս է նրա ազգանունը:

— Նա ասաց իւր անունը եւ տոհմանունը, բայց ես մոռացայ, պատասխանեց Գրիգօլը:

— Ի՞նչ մոռացկոտն ես, Գրիգօլ:

— Դէ ի՞նչ ես շտապում, դու շուտով կը ծանօթանաս նրա հետ. ես միտք ունիմ այս երեկոյ հրաւիրել նրան մեր տուն թէյ խմելու:

— Այո՛, շատ լաւ կ'անես, ուրախութեամբ պատասխանեց օրիորդը: Բայց դու ասա՛, Գրիգօլ, քա՞նի օր է, ինչ որ նա եկել է քաղաքից:

— Այս երկրորդ օրն է՛:

— Ուսե՞ալ մարդ է:

— Մեր դիրեկտորը նրա մօտ ինչպէս մի աշակերտ :

— Հրաւիրի՛ր, հրաւիրի՛ր, Գրիգօլ, համարեա հըր-
ճուանքով ստաց օր. Սոֆին :

Յանկարծ ներս մտաւ տ. Բարբարէն. նա ողջունեց իւր
գաւակնիրին, նստեց եւ սկսեց պատմել մի երազ, որ տեսել
էր այն գիշեր :

Խօսակցութիւնը քոյր եւ եղբօր մէջ ընդհատուեցաւ :

ԻԱ

Որքան յայտնի է մեր ընթերցողին, Հացի-Գէլենք իբրեւ
ստորին դասակարգի մարդիկ, զուրկ էին ընտանեկան յա-
րակցութիւններից այն գերզատանների հետ, որոնք պատ-
կանում էին հասարակութեան բարձր դասին : Եւ ամարա-
նոցի բնակիչները լինելով ըստ մեծի մասին զանազան աստի-
ճանաւորների եւ զանազան ազնուականների գերզատաններ,
Հացի-Գէլենք զրկուած էին ամենայն յարաբերութիւններից
նրանց հետ : Որովհետեւ նոր երեւոյթ էր քաղաքում, որ
հասարակ վաճառականի ընտանիքը յանկարծ յայտնուել էր
ամարանոցի շրջանում :

Այդ հանգամանքների պատճառով ամարանոցի կեանքը
Հացի-Գէլենց համար դեռ եւս մի առանձին զուարճութիւն
չունէր. այլ ընդհակառակն նրանք անց էին կացնում շատ
տխուր, առաւելապէս օր. Սոֆին շատ էր տխրում, թէ եւ
պատանի Մայիլովի այցելութիւնները բաւական մխիթարում
էին նրան :

Նոյն առաւօտ իւր թեթեւամիտ եղբօրից լսելով Պե-
տերբուրգի համալսարանի ուսանողի մասին, օր. Սոֆին ան-
համբերութեամբ սպասում էր երեկոյին, երբ նա Գրիգօլի
հրաւիրելով պիտի դար իրանց տուն : Ուսանողի անունը,

ուսանողի կեանքը վաղուց տպաւորել էին նրա երեւակայութեան մէջ զանազան ախորժելի դաղափարներ:

Բայց օրիորդը բոլորովին չէր հաւատում իւր եղբոր խօսքերին, այդ պատճառով այն օր նա չէր հեռանում լուսամտից, դուցէ տեսնէր իրանց դրացի նորեկ հիւրը, բայց նրա աշխատութիւնները իզուր անցան, նա ոչ մի նոր մարդ չտեսաւ:

Ճաշից յետոյ երբ նրա մայրը գնաց քնելու, օր. Սոֆին քաղցրութեամբ ղիմեց իւր եղբորը.

— Գիզօլ, հարցրեց նա, դու երեկոյեան պիտի հրաւիրե՞ս այն երիտասարդին, որի մասին առաւօտեան խօսում էիր:

— Անպատճառ, պատասխանեց Գրիզօլը: Միայն խընդրեմ, քոյրիկ, լա՛ւ ընդունիր իմ հիւրին:

— Անհո՛ղ եղիր, պատասխանեց օրիորդը. միայն, Գիզօլ, դու կանչիր ինձ մօտ փոքրաւորին, որ պատուիրեմ քանի մի տեսակ մրգեղէն՝ գնէ, իսկ մուրաբէք ունինք ամէն տեսակի:

— Ա՛խ, շնորհակալ եմ քեզանից, Սոֆի, կոչեց Գրիզօլը ուրախանալով եւ գրկեց իւր քրոջը եւ շուտով վազեց կանչելու սպասաւորին:

Օր. Սոֆին՝ տալով հարկաւոր պատուէրները փոքրաւորին եւ իւր աղախնին երեկոյեան հիւրընկալութեան մասին, այն օրը իւր սովորութեան համեմատ չքնեցաւ, այլ զնաց լուսամտի մօտ, որ նայում էր դէպի մեծ ճանապարհը եւ իւր մօտ կանչեց Գրիզօլին:

— Դու ասացիր այն պարոնը դեռահաս է, հա՞, հարցրեց եղբորից օրիորդը:

— Դեռահաս է եւ սիրուն տղամարդ, պատասխանեց Գրիզօլը:

— Լա՞ւ է հաղնուած:

— Խիստ շիկոյ, նրան առաջին Ֆրանսոբ կարելի է համարել ամարանոցի բոլոր երիտասարների մէջ:

Օրիորդը զաղանապէս հրճվում էր եղբօր նկարագրութիւններով:

— Ահա', ահա', Սոֆի, ահա', այն պարոնը, որին ես պիտի հրաւիրեմ թէյի, կոչեց Գրիգօլը ցոյց տալով լուսամտից դէպի դուրս:

Արգարեւ օր. Սոֆին տեսաւ մի վայելչակազմ նորահաս երիտասարդ ամարային թեթեւ հագուստով, որ իւր ճկուն գաւազանը ձեռքին խաղացնելով անցնում էր, հաղիւ լսելի, բայց մետադի հնչման ձայնով սուլելով մի մեղեդի:

Տեսնելով անցաւոր երիտասարդին Գրիգօլը լուսամտից ողջունեց նրան եւ նա էլ բարձրացրեց իւր յարդեայ թեթեւ գլխարկը եւ շնորհալի կերպով դուրս տուաւ նրան: Նոյն բոսկէին օր. Սոֆիի աչքին ընկան նրա ուսանողական երկայն եւ մետաքսի նման փափուկ մազերը, որոնք փառաւորապէս թափուած էին նրա ուսերի վրայ:

Նա անցաւ, շուտով մտաւ մերձակայ տան բակը եւ համարեա վաթղելով բարձրացաւ սանդուխտներից:

— Տեսնո՞ւմ ես, Սոֆի, ինչպիսի ծանօթ ունիմ ես, ասաց Գրիգօլը հպարտանալով:

— Այո', հիանալի տղամարդ է, պատասխանեց օր. Սոֆին: Բայց ի՞նչ լեզուով է խօսում:

— Նա առաջ ինձ հետ խօսեց հայերէն, բայց երբ տեսաւ որ չգիտեմ, յետոյ խօսեց ռուսերէն:

— Ախտո՞ւս, որ նա խօսում է հայերէն, ասաց օրիորդը:

Վահէ Արամեանը, — այդպէս էր կոչվում այն երիտասարդը, որին նոյն օրուայ երեկոյեան պահուն սպասում էին Հացի-Գէլենց տանը, — աղնուական տոհմի որդի էր: Նա իւր տասն տարեկան հասակում որբ մնաց հօրից, որ

մեռաւ քառասունեւհինգ տարեկան՝ «ստատսկի սօվետնիկի շինով», թողնելով իւր իւր զաւակներին բաւականաչափ ժառանգութիւն :

Նրա մայրը իւր ամուսնուց յետոյ խնամակալ եղաւ մանուկ Վահէի կրթութեանը՝ յանձնելով նրան մի դերմանացու դիշերօթիկ վարժարան . այդտեղ պատրաստուելով նա մտաւ դիմնադիօնի շորրորդ դասատուն : Երեք տարուց յետոյ պատանի Վահէն մեծ յառաջադիմութեամբ աւարտեց դիմնադիօնի դասընթացը եւ զնաց Պետերբուրգ : Այնտեղ նա մտաւ համալսարանի արեւելեան լեզուադիտութեան բաժինը :

Եւ պատանի ուսանողը թէեւ ստանում էր իւր մօրից բաւականաչափ արծաթ, բայց նրա համալսարանական կեանքը ո՛չ միայն չափաւոր էր, այլ հասնում էր աղքատութեան : — Նա հազնվում էր հնամաշ, ուտում էր առանց բնորոշութեան, էէր կտրում եղունգները, թողնում էր երկայն մազեր, ձմեռը կենում էր ցուրտ սենեակում եւ միշտ խօսում էր Կէկէլի ու Փէփէլի վրայ : Բայց նա օգնում էր խեղճ ուսանողներին եւ իւր վերջին կոպէկը բաժանում նրանց հետ :

Մի այդպիսի տարապայման կեանքը ո՛չ միայն չզրկեց նորահաս Արամեանին իւր ուսման յառաջադիմութիւնից, այլ պատճառ տուաւ նրան իւր այնքան դրամական միջոցներով հեռու մնալ Պետերբուրգի հրապուրիչ զուարճալիքներից եւ գտնաւ իւր հայրենիք մ ա գ ի ս տ ր ո ս ի դ ի պ լ օ մ ր ծ ոց ու մ : Բայց վերադառնալով Կովկաս, նա մտապաւ եւ՛ Կէկէլը եւ՛ Փէփէլը . նրա հմամաշ հազուսան ստացաւ փառաւոր եւ վայելուչ ձեւ, եւ նա իւր կեանքին տուաւ առաւել շքեղ կերպարանք, բայց նրա մարդասէր ձեռքը երբէք չխորշեցաւ աղքատներից :

Գալով իւր մայրենի քաղաք, Արամեանը չկարողացաւ շուտով գտնել արժանաւոր պաշտօն, եւ քաղաքում ձանձրաւ

նալով անդործութիւնից, նա դիմեց ամարանոց դռնեա կազմութիւն առողջութիւնը՝

Արամեանք մի օր առաջ տեսնելով օր. Սոֆիին իրանց բախում, նեւսիկ պրօսպեկտից հեռանալուց յետոյ, Կովկասում նա առաջին անգամ հանդիպեցաւ մի օրիորդի՝ որ հազնուած լինէր այդպէս վայելուչ կերպով եւ բարեձեւ ինչպէս մի փարիզուհի զեղաճաշակ տիկին։ Եւ ցանկանալով մօտենալ նրան, նա հարկաւոր համարեց նախ եւ առաջ գրաւել Գրիգօլին, որ առաջին անգամից երեւեցաւ նրան թեթեւամտ, այնուհետեւ եղբօր միջոցով ծանօթանալ քրոջ հետ։

Նոյն օրուայ երեկոյեան պահուն օր Սոֆիին վայելուչ կերպով հազնուած, իւր մօր հետ սպասում էին Արամեանին։ Պատանի Գրիգօլը ինքը անձամբ գնացել էր նրան հրաւիրելու։

Արամեանք ներս մտաւ, հասարակ բայց պատշաճաւոր հազնուած. նա շնորհալի կերպով ողջունեց բոլորին եւ Գրիգօլը ծանօթացրեց նրան իւր մօր եւ քոյրերի հետ։

Ընդունելութեան ծէսը վերջանալուց յետոյ, նորահաս մագիստրօսը իւր յարգեաց գլխարկը գրեց պատուհանում եւ նստեց նրա հանդէպ, մի փոքր հեռու օր. Սոֆիից եւ նրա մօրից։

Նրանց առաջին խօսակցութիւններն եղան զանազան հարցուփորձեր — որ տ. Բարբարէն սկսաւ հարցնել Արամեանից, թէ է՛րբ է եկել նա Պետերբուրգից, քա՛նի տարի է այնտեղ մնացել, ի՞նչ է սովորել։ Նա մի քանի բան հարցրեց նոյնպէս Պետերբուրգի հասարակական եւ այնտեղի սովորութիւնների մասին։

Արամեանք տալիս էր թէեւ կարճ, բայց նրանց համար բաւական հետաքրքրական պատասխաններ։ Օր. Սոֆին հետուից հրճուանքով լսում էր նրան եւ Գրիգօլը նոյնպէս ուրախ էր իւր հիւրով։

Տ. Բարբարէն Համարեա սպառեց իւր խօսակցութեան բոլոր պաշարը եւ տեսնելով որ իւր զրոյցները այնքան էլ չեն գրաւում հիւրին եւ մանաւանդ նրա հայերէն խօսակցութեան ոճը շատ էլ հասկանալի չէ իրան, մտածեց եւ օր. Սոֆիին խառնիլ իրանց խօսակցութեանը:

— Շատ ազրիս, վուրթի, ասաց նա, լաւ իքժին է ուսումը. հորէս իմ Սոֆին էլ ուսում է տուի. հէստի ուրախացնում է ինձ, վուր շիմ կանա ասի:

— Օրիորդ Սոֆի՞ն, կրկնեց Արամեանը ազնիւ ուրախութիւն ցուցանելով իւր դէմքի վրայ:

— Ասացէ՛ք խնդրեմ, դարձաւ նա դէպի օրիորդը, ո՞րտեղ էք աւարտել դուք:

Օր. Սոֆին շառագունեց, նա չգիտէր թէ ինչ է հարցնում իրանից:

Գրիգօյը յայտնեց Արամեանին, որ նրա հետ ուստերէն խօսէ...

Արամեանը միեւնոյն հարցը կրկնեց ուստերէն. սակայն շատ վատ տպաւորութիւն թողեց նրա վրայ օրիորդի՝ իւր մայրենի լեզուին անտեղեակ լինելը:

— Ինստիտուտ, պատասխանեց օրիորդը վրդովուելով: Պօսակցութիւնը Արամեանի եւ օր. Սոֆիի մէջ տւեց բաւական երկար, որի միջոցում օրիորդը իւր ինստիտուտական թուրքալի նման մի քանի սերտած զրոյցներով (Ֆրազներով) թափում էր իւր բոլոր ճիզը, որքան կարելի է իւր խօսքերին տալ բազմախորհուրդ նշանակութիւն՝ իրան երևցնելով իւր խօսակցի առջեւ ուստալ ոմն: Բայց Արամեանը նրա խօսակցութեան սկզբից ճանաչեց, թէ «ի՛նչ սանդրի կտաւ է նա», երբ նշմարեց նրա մէջ՝ ամէն լաւ բան կործանող, այդ քաղաքում նոր մօզա դարձած, նիզիլիստապան ուղղութիւն...

ԻՅ

Արամեանը սկսաւ շուտ շուտ յաճախել Հայր-Գէլենց տուն, և շատ անգամ մնալ նրանց մօտ ճաշի և ընթրիքի: Տ. Բարբարէի գլխում հէնց առաջին օրից միտք ծագեց՝ ուսեալ և մայրաքաղաքում կրթուած տղամարդուն ընտրել իւր փեսայ: Սոֆիի խելքը գնում էր նրա խելացի խօսակցութիւններից և շնորհալի վարուեցողութիւնից:

Մայիլովը վաղուց կորցրել էր իւր նշանակութիւնը: Եւ նրա վրայ Հայր-Գէլենց տանը ո՛չ միայն օր. Սոֆին, սլլև սմէնքը նայում էին որպէս երեխայի վրայ:

Բայց Արամեանի սրտում չկար և ոչ մի միտք փեսայի, կամ տարփածուի: Արդարեւ նրան ախորժելի էր նորահաս օրիորդի գեղեցկութիւնը, բայց ոչինչ սէր նրան չէր հրապուրում գէպի գեղեցիկ օրիորդը. միայն վերջին օրերում, Արամեանը նկատելով նրա մէջ խիստ խորին ասելութիւն գէպի իւր ազգը, կրօնը և մայրենի լեզուն, աշխատում էր, որքան կարելի է, հեռացնել նրանից սլլգ վնասակար գազափարները, որ տպաւորուել էր նրա հոգում իւր ինստիտուտական տարապայման կրթութիւնից:

Մի առաւօտ, երբ արեւը բաւական բարձրացել էր հորիզոնի վրայ, Արամեանը և օր. Սոֆին միայնակ նստած էին բայ լուսամուտի հանդէպ: Գրիգօլն ու Մայիլովը գնացել էին գրօսանքի, տ. Բարբարէն միւս սենեակումն էր:

Արամեանը երկար նրան պատմելով, թէ ինչ նշանակութիւն ունի ազգայնութեան գաղափարը, խօսում էր նրան նոյն բողէին Հայոց ազգի հին և նոր պատմական կեանքից, և բացատրում էր նրան, թէ ի՛նչն էր Հայոց գլխաւոր թշուառութիւնների պատճառը:

Սօսքը հասաւ լեզուին, թէ ազգային կեանքում ի՛նչ

նշանակութիւն ունի լեզուն: Եւ Արամեանը խիստ քաղաքավարի կերպով հարցրեց օրիորդից, թէ արդեօք նա չի՞ ցանկանում սովորել իւր մայրենի լեզուն:

Արամեանի այդպիսի հարցմունքը շարժեց օրիորդի ծիծաղը, եւ նա պատասխանեց երգիծական ոճով.

— Ի՞նչ ախորժանք սովորել մի լեզու, որով կոտները միայն կարող են խօսել:

Արամեանը խիստ վշտացաւ այդ պատասխանով:

— Ինչպէ՞ս, հարցրեց նա ուղիղ օրիորդի երեսին նայելով:

— Այնպէս՝ որ այդ լեզուն այնպիսի լեզու չէ, որով ուսեալ մարդը կարողանայ բացատրել իւր միտքը:

Ոսուելով լեզուի վրայ, օրիորդը փոխանակ ասելու Հայոց լեզուն, ասում էր այդ լեզուն, կամ ձեռ լեզուն, կարծես թէ մեղք էր բերան առնել հայ բառը:

— Ինչո՞ւ, հարցրեց Արամեանը:

— Նրա համար, որ նա ուսումնական եւ արհեստական բառեր չունի, նա բաղկանում է միայն այնպիսի բառերից, որով մի բազազ դիտէ կեղծաւորուել, սուտ երգուել, հայհոյել, անիծել եւ այլ այդպիսի կեղտոտ բաներ արտասանել:

Արամեանը բարկութեան շափ վշտացաւ վերջին խօսքերից:

— Ներողութիւն, օրիորդ, բոլորովին սխալ է ձեռ կարծիքը, ասաց նա:

— Ներողութիւն, պ. Վահէ, ի՞նչու էք դուր հակառակում, խօսեց օրիորդը աւելի յամառութեամբ: — Ոչ միայն ուսումնական բառեր, այլեւ կեանքի մէջ հասարակ, բնտանեկան բառեր չունի այդ լեզուն: Օրինակի համար, ձեռ լեզուով ի՞նչպէս պէտք է ասել՝ շլեապա, շլէյֆ եւ այլն:

Արամեանը ոչինչ պատասխան չտուաւ, միայն ծիծաղեցաւ օրիորդի թեթեւամտութեան վրայ :

— Երեւի այդ բառերը դուք չգիտէք, կատակելով Հարցրեց օրիորդը. ասացէք, խնդրեմ, ի՞նչպէս պէտք է ասել սամօվար, սպիշկա, չէ՞ որ դրանք գիւրին բառեր են :

— Հեշտաւս, լուցիկ, պատասխանեց Արամեանը :

— Ե՛ր... ր՛որ... լո՛ւց, ... լուց, ... կի՛... ս՛ւֆ, պզճվում է մարդու լսելիքը... ի՞նչ բառեր են դրանք. կարծես թէ կտորած սայլակ է ճոնչում, կամ բարբառն են ասում, պատասխանեց օրիորդը դէմքը խոժոռելով, որպէս թէ լսում էր անստորժ ձայներ :

— Բոլորովին ներելի չէ՛ ձեր կողմից դատողութիւն անել մի լեզուի վրայ, որ դուք չգիտէք, նրա խօսքը կարեց Արամեանը խորին ահաճութեամբ : — Դուք տակաւին չգիտէք որ այդ բառերը, որ այդպէս ողբերգաւորաւ ճնչում էք, չեն պատկանում այն լեզուին, որով խօսում էք դուք, այլ դրանք ուրիշ ազգերի սեպահականութիւններ են. եթէ Հայն էլ կամք ունենար օտարներին նման մինչեւ երեսուն Հազար բառ մուրալ ուրիշ ազգերից, ոչ ոք չէր արդելիլ նրան, այն ժամանակ եւ մենք այդպիսի բառեր ամբողջապէս կ'ունենայինք մեր լեզուում : Բայց Հայոց լեզուն այնքան ճոխ է, որ ասանց ուրիշից փոխ աննելու եւս կարող է ստեղծել իւր Համար բառեր :

Օր. Սոֆին նկատելով Արամեանի մինչեւ վերջին ասածանի վշտանալը, պատասխանեց նրան կատակով :

— Թէ Աստուած կը սիրէք, թողնենք այս դատարկ խօսակցութիւնը. մի՞թէ արժէ ժամանակ վատնել այսպիսի չնչին զրոյցներով :

— Եթէ այդպէս է, պատուելի օրիորդ, ես չեմ կամենում ձեր թանգ ժամանակը վատնած լինել չնչին զրոյցնե-

րով. Թնանք բարով, — ասաց նա, գլխարկն առաւ եւ գլուխ տալով դուրս գնաց:

— Պ. Վահէ, պ. Վահէ, կանչեց օրիորդը նրա ետեւից վարդելով, բայց Արամեանը չկանգնեց եւ խորին սրտմտութեամբ դուրս եկաւ Հացի-Գէլենց բնակարանից:

ԻԳ

Մի քանի օր Արամեանը շերեւաց Հացի-Գէլենց տանը. օրիորդ Սոֆին, խիստ անհանգիստ էր այդ մասին. նա միայն հեռուից մի քանի անգամ տեսաւ նրան, զրօսանքից վերադառնալիս, կամ գլուխը կախած անց ու դարձ անելիս իւր կացարանի բակում: Բայց երբէք առիթ չեղաւ նրա հետ խօսելու, կամ հեռուից գլուխ տալու, ինչպէս առաջ սովորաբար անում էին:

Օրիորդի սրտում վառուել էր մի կայծ, որ բորբոքում էր նրա սէրը դէպի վայելչադեղ երիտասարդը:

Մի գիշեր Գրիգօլը յայտնեց նրան, թէ Արամեանը միտք ունի թողնել ամբարնոցը եւ գնալ քաղաք: Այդ լուրը կայծակի հարուածի ազդեցութիւն ունեցաւ օրիորդի սրտին, երբ մտածեց, թէ նա պիտի բաժանուի իրանից բոլորովին խոռոված կերպով:

Առաւօտեան նա շուտով վերկացաւ, հագնուեցաւ, առաւ հովանին եւ դիտենալով այն ժամը, երբ Արամեանը գնում էր զրօսանքի, դուրս եկաւ կացարանից այն յուսով թէ դուցէ հանդիպի նրան:

Բարեբախտաբար օրիորդը հանդիպեց նրան, երբ Արամեանը նոր էր դուրս գնում:

— Բարեւ, պ. Վահէ, ասաց օրիորդը ձեռքը մեկնելով նրան:

— Բարով, կրկնեց Արամեանը սեղմելով նրա ձեռքը:

— Ո՞ւր այդպէս :

— Դէպի անտառ, պատասխանեց Արամեանը :

— Կարո՞ղ եմ ընկերանալ ձեր գրօսանքին :

— Կարող էք :

— Տուէք թեւզ, խնդրեց օրիորդը :

Արամեանը տուաւ նրան իւր թեւը. նրանք գլխեցին
դէպի անտառ :

— Ես լսեցի, որ դուք միտք ունիք այսօր դնալ քաղաք,
իրա՞ւ է, Հարցրեց օրիորդը :

— Պիտի դնամ Երեկոյեան պահուն, պատասխանեց
Արամեանը :

— Ի՞նչ պատճառով :

— Իմ համալսարանական ընկերս քաղաքում հիւանդ է,
դնում եմ նրա մօտ :

— Ուրեմն կը մնա՞ք նրա մօտ :

— Եթէ նա համաձայնի կամ կարողանայ այստեղ դալ,
ես կը բերեմ նրան, բայց թէ չկարողանայ, պիտի մնամ
նրա մօտ :

Օրիորդը մի քանի բոպէ լռեց :

— Եւ դուք առանց ինձ հետ հաշտուելու պիտի դնա՞ք,
Հարցրեց նա, սղորմելի կերպով :

— Մի՞թէ ես կուուել եմ ձեզ հետ, խօսեց Արամեանը :

— Ո՞չ, անցեալ օրը ես բարկացրի ձեզ, եւ դուք մաս-
նաւորապէս խոսված էք ինձնից, այնպէս չէ՞ :

— Ինչո՞ւ պիտի խոսվեմ ձեզանից. կամ ի՞նչ իրաւունք
ունիմ բարկանալ ձեզ վրայ. միայն ես ցաւում եմ, որ մեր
ազգի ուսեալ օրիորդները՝ որոնց վրայ մենք դրել ենք մեր
յոյսը, թէ նրանք պիտի լինին ապագայ կրթեալ սերնդի
մայրերը, խիստ զղուանքով են նայում իրանց ազգի վրայ :

— Ներողութիւն, եթէ այդ վշտացրել է ձեզ :

— Աւելորդ է ներողութիւն խնդրել. ես աւելի ուրախ կը լինիմ, երբ դուք սիրէք մեր ազգը:

— Ես այսուհետեւ չպիտի հակառակիմ ձեզ այդ մասին:

— Ես կամք չունիմ բռնարարել ձեր համոզմունքը, պատասխանեց Արամեանը:

— Ես պիտի ուսանեմ հայերէն խօսել. այդ լա՞ւ է, կրկնեց օրինորդը ժպտալով:

— Այդ ձեր ազգային պարտաւորութիւնն է, պատասխանեց Արամեանը սառնութեամբ:

Նրանց մէջ տիրեց լուռութիւն: Արամեանը ամենեւին չէր հաւատում օրինորդի խոստմունքին, թէ նա կը սովորի իւր մայրենի լեզուն, թէեւ նա կիսակատակի ոճով խոստացաւ այդ:

— Դուք ասացիք թէ համալսարանական ընկերդ հիւանդ է, հարցրեց օր. Սոֆին. ո՞վ է նա եւ ի՞նչպէս է կոչվում:

— Նա մեր քաղաքացի չէ, եւ կոչվում է Սմբատ Քաջբերունի, պատասխանեց Արամեանը:

— Ի՞նչ օտարոտի անուն է այդ, պ. Վահէ, պատասխանեց օրինորդը նուրբ ծիծաղելով:

— Ուրեմն եւ իմ անունս պիտի օտարոտի թուի ձեզ, որովհետեւ այդ եւս ձեզ անծանօթ պատմական անուն է:

— Ներեցէք, խնդրեմ, որ չեմ կարող ասել՝ ոչ, ասաց օրինորդը:

Արամեանցի դէմքը դարձեալ մոայլուեցաւ:

— Բայց ի՞նչպիսի անուններ էք սիրում դուք:

— Ես սիրում եմ ահա՛ այսպիսի անուններ. Վաննա, Սաշա, Կօլեա...:

— Դրանք դերասանների եւ արտիստների անուններ են:

— Ի՞նչ փոյթ, բայց քահրահանջիւն են. հապա ի՞նչ էն սրանք. Կիրակոս, Մարտիրոս, Սէջօ եւ այլն, խօսեց օրինորդը:

որդը՝ Երեսի վրայ ձեւացնելով արհամարհական ծամածռութիւններ :

— Անունները ոչինչ նշանակութիւն չունին մի ազգի լաւ կամ վատ յատկութիւնների համար, պատասխանեց Արամեանը : Միմիայն օտարամոլութիւնը ծնեցել է ձեր մէջ այդպիսի դադափարներ : Բայց այն, որ վերաբերում է իմ եւ իմ ընկերիս անուններին, եթէ դուք կարգապէք Հայոց ազգի պատմութիւնը, այն ժամանակ կը գիտենայիք, թէ ո՛վքեր էին Քաջբերունիք, ո՛վքեր էին Սմբատը, Արամը, եւ Վահէն. եւ նա սկսաւ պատմել նրան այն ժամանակներից, երբ Հայերը ունէին թագաւորութիւն եւ թէ ովքեր էին Քաջբերունիք, Սմբատը, Արամը եւ Վահէն :

Արամեանի պատմութիւնը բաւական ազդեցութիւն սրաւ օրիորդի սրտին եւ նա զղջալով իւր խօսքերի համար, ասաց .

— Ներողութիւն իմ անգէտ նկատողութեան համար. կարելի է վշտացրի ձեզ :

— Ես չեմ վշտանում, միայն ցաւում եմ, որ դուք չդիտէք մեր ազգի պատմութիւնը :

— Ես ի՞նչ մեզ ունիմ, չեն սովորեցրել, պատասխանեց օրիորդը զգալի եղանակով :

Արամեանը լռեց :

— Ասացէք, խնդրեմ, ի՞նչպիսի մարդ է այդ պարոնը — ձեր համալսարանական ընկերը, հարցրեց օրիորդ Սոֆին մի քանի րոպէից յետոյ :

— Նա մի գործունեայ, խոհեմ եւ ուսեալ մարդ է, պատասխանեց Արամեանը :

— Շա՞տ ուսեալ է :

— Նա այժմ փիլիսոփայութեան եւ իրաւարանութեան դօքտօր է :

— Ո՞րտեղ է աւարտել :

— Իրաւարանութիւնը՝ Պետերբուրգի համալսարանում ,
իսկ փելիսոփայութիւնը՝ Գերմանիայում :

— Ուրեմն երեւելի մարդ է, կրկնեց օրիորդը . — բայց
ասացէ՛ք՝ երիտասա՞րդ է :

— Նա այժմ կը լինի մօտ երեսուն եւ հինգ տարեկան :

— Դուք նրան կը բերէ՞ք ամարանոց :

— Յոյսս մեծ է :

— Եւ կը ծանօթացնէ՞ք ինձ նրա հետ :

— Այո՛ :

Երկու կողմից եւս տիրեց լուսթիւն :

Օր . Սոֆին մտածում էր Քաջբերանու վրայ եւ իւր
մտքի մէջ զանազան կերպարանքներով նկարագրում փելի-
սոփայութեան եւ իրաւարանութեան դօքտօրին , թէ ո՛րքան
վայելուչ կերպով հազնուած պիտի լինի , ո՛րքան շնորհալի
վարուեցողութիւն ունենալու է , ի հարկէ դրանց հետ երեւա-
կայում էր նրա մէջ եւ նորահաս երիտասարդական զեղեց-
կութիւն :

Բայց բոլորովին այլ առարկայով էր գրադուած նոյն
բոսկէին Արամեանի մտածողութիւնը : Նա խորհում էր այն
քաղաքի հայ օրիորդների կրթութեան եւ ուսման բոլոր թոյլ
կողմերի վրայ : Նա ցաւելով մտաբերում էր այն մեծ ազ-
դային կորուստը , որով ուսումը եւ ուսումնարանները պատ-
բաստում էին հայերից այնպիսի ուսեալ օրիորդներ , որոնք
ոչինչ տեղեկութիւն չունին իրանց ազգային պատմութիւնից ,
որոնք ո՛չ միայն չեն սիրում իրանց հայրենական աւանդու-
թիւնները , այլ հայութիւնը նրանց աչքում նախատինք է
համարվում : Ահա՛ այդպիսի տխուր մտածութիւններ խո-
վել էին Արամեանի սիրտը , եւ նա մտածում էր , թէ ինչպէս
պէտք է այդ ազգային վէրքերին դարման լրանել :

Նրանք այդպէս՝ ամէն մինը պաշարուած իւր մտածու-
թիւններով , լուռ գնում էին , ուշք չզարձնելով թէ սրբան

անցել են դէպի անտառի խորքը, մինչև օր. Սոֆին յողնածուփին զգալով խնդրեց Արամեանին նստել մի փոքր հանդրատանալու: Արամեանը սիրով կատարեց նրա խնդիրը եւ նրանք նստեցին կորած ծառերի կոճղերի վրայ:

Օր. Սոֆին, որ մտածում էր փիլիսոփայ ուսանողի վրայ, նորոգեց խօսակցութիւնը Քաջբերունու մասին:

— Ուրեմն երևելի մա՞րդ պիտի լինի ձեր համալսարանական ընկերը, խօսեց նա:

— Այո՛, պատասխանեց Արամեանը:

— Այդ պարոնը ի՞նչ նպատակով է եկել մեր քաղաքը:

— Նպատակներ շատ ունի նա... բայց նա մեր քաղաքում մնալու մտքով չէ եկել, հիւանդութիւնը պահեց նրան սյասեղ, նա եկել է որ զնայ ճանապարհհորդելու Հայաստան, եւ ուր որ Հայեր կան:

— Ի՞նչ կայ աւերակ Հայաստանում, պատասխանեց օրիորդը ահածութեամբ, նա աւելի լաւ կ'անէ զնայ ճանապարհհորդելու Եւրոպա:

— Նա տեսել է Եւրոպան, օտար աշխարհները նրան այնքան չեն դբաւում... նա զործ ունի իւր հայրենի աշխարհի հետ...

— Մի՞թէ նրա համար առաւել ախորժելի չէ կեանք վարել, զորօրինակ, Փարիզում, հարցրեց օրիորդը:

— Քաջբերունին աղքատ մարդ է:

— Այդքան ուսեալ եւ աղքատ, զարմանալով կրկնեց օրիորդը:

— Այո՛, նա աղքատ է, առաւելապէս նրա համար, որ շատ ուսեալ է:

Վերջին խօսքը շարժեց օրիորդի հետաքրքրութիւնը, եւ նա հարցրեց.

— Ի՞նչպէս:

— Այնպէս, որ նա թոյլ չէ տալիս իրան խոնարհուիլ

այն անարգ հանգամանքներին, որով մեր այստեղի թերուս երիտասարդներից շատերն իրանց համար ձեռք են բերում հաց եւ պատիւ:

— Ուրեմն Քաջբերունին շա՞տ մեծահոգի է, պատասխանեց օրիորդը, բոլորովին չհասկանալով, թէ ի՞նչ հանգամանքներ էին, որոնց նա չէր ստորացնում իրան:

— Այո՛, նա մեծահոգի է, պատասխանեց Արամեանը եւ լռեց:

Օրիորդը նոյնպէս մտածման մէջ ընկաւ, բայց մին էլ նշմարեց նա որ արեւը բաւական բարձրեցել է հորիզոնի վրայ, եւ միեւնոյն բոպէին, մի դադանի, նրան եւս անհասկանալի զարհուրանք պատեց, երբ տեսաւ իրան միայնակ, մանուկ տղամարդու հետ, այդպէս հեռու, անտառի խորքում . . . :

Նա ոտքի ելաւ:

— Վերադառնանք, պ. Վահէ, ասաց նա:

— Վերադառնանք, կրկնեց Արամեանը:

Եւ նրանք սկսեցին դնալ հազիւ նշմարելի շաւղով, որ ձգվում էր ծառերի միջից: Մացառներն անընդհատ պատրուտում էին օրիորդի հագուստը, բայց նա այնքան պաշարուած էր իւր մտքերով, որ չէր նկատում այդ, այլ Արամեանն էր աղատում նրա հագուստը սուր-սուր փշերի ճանգերից:

Նրանք երկար դնում էին, բայց տակաւին չէին դուրս եկել անտառից:

— Ես յողնեցայ, տո՛ւէք ինձ ձեր թեւը, պ. Վահէ, ասաց օրիորդը մի փոքր թոյլ ձայնով:

Արամեանը տուաւ նրան իւր թեւը:

— Պ. Վահէ, երբ Քաջբերունին դայ այստեղ, զուք ինձ կը ծանօթացնե՞ք նրա հետ, հարցրեց օրիորդը:

— Կը ծանօթացնեմ, պատասխանեց Արամեանը:

— Ի՞նչ լեզուով է խօսում նա:

— Նա լեզուներ շատ դիտէ՝ միայն առաւել սիրում է հայի հետ խօսել հայերէն :

— Ախոս'ս, ես հայերէն չգիտեմ խօսել, կրկնեց օրիորդը, Եթէ ոչ Քաջբերունին աւելի կը համակրէր իմ խօսակցութեանը :

— Այո՛, նա սիրում է, երբ հայ օրիորդները խօսում են նրա հետ մաքուր հայերէն բարբառով :

— Ի՞նչ մեղ ունինք մենք, որ չգիտենք մեր մայրենի լեզուն, պատասխանեց օրիորդը: Մեր ընտանեկան լեզուն վրացերէն է. քանի մասուկ էի, այդ լեզուով էի խօսում, իսկ երբ ուսումնարան մտայ՝ ուսուերէն :

— Այդ ցաւալի է, — խօսեց Արամեանը :

Նրանք դուրս եկան անտառից : Արամեանին դարձեալ դրողեցրեց այդ քաղաքի հայ օրիորդների կրթութեան հարցը : Եւ խօսակցութիւնը նրանց մէջ ընդհատեցաւ :

Ճանապարհին նրանց հանդիպեցան երկու չափահաս օրիորդ, բաւական ակորժելի դէմքով, ճաշակով հազնւած, որոնք նոյնպէս վերադառնում էին առաւօտեան դրօսանքից իրանց մօր եւ մի մանկահասակ աստիճանաւորի հետ : Այդ օրիորդները թեթեւ գլուխ տուին օր. Սոֆիին եւ ժպտալով անցան :

— Ճանաչո՞ւմ էք դրանց, հարցրեց Արամեանից օրիորդը :

— Ո՛չ, պատասխանեց Արամեանը :

— Դրանք կենազ Նօւլի աղջիկներն են. այն կիներ նրանց մայրն է, իսկ ջահէլ աստիճանաւորը փոքր քրոջ տարիածուն :

— Մե՞թէ, հարցրեց Արամեանը, յետ նայելով՝ միւս անգամ նայելու նրանց :

— Այո՛, երկուսն էլ բաւական լավ տաժներ են :

— Այդ ցաւալի է, որ մեր հայ օրիորդները այստեղ ըստ

մեծի մասին բարոյապէս լաւ չեն կրթվում, խօսեց Արամեանը: — Եւ մի օրիորդ, որ ունի փոքր ի շատէ մաքուր բարոյականութիւն, առաւելապէս դտնվում է անկիրթ դասերի մէջ, քան թէ կրթուածներին... արդարեւ ցաւալի է այդ...:

Օր. Սոֆին ոչինչ չպատասխանեց:

Այն երկու օրիորդները որ անցան իրանց մօր հետ, կրտսերը դադտնի ասաց իւր երէց քոջը.

— Տեսա՞ր Անիչկա, այն մանուկ տղամարդը, որ գնում էր Սոֆիի հետ:

— Տեսայ, պատասխանեց Անիչկան. բայց ի՞նչ սիրուն տղամարդ է, Լիզա, ո՞րտեղից է գտել նրան Սոֆին:

— Նա արդէն վարպետ որսորդ է, պատասխանեց կրտսեր քոյրը: Բայց դիտե՞ս, Անիչկա՛, ասում են այդ պարտնը միտք ունի պսակուել Սոֆիի վրայ:

— Բախտաւոր է Սոֆին, պատասխանեց երէց քոյրը խորին նախանձաւորութեամբ:

Բայց Արամեանը եւ օր. Սոֆին արդէն հասան տուն: Օրիորդը խնդրեց նրան իրանց մօտ ճաշելու, բայց Արամեանը հրաժարուեցաւ, ասելով թէ պիտի պատրաստուի քաղաք գնալու: Նրանք բաժանուեցան միմեանցից:

Մանկով իւր սենեակը, օրիորդը երկար միայնակ նստած մտածում էր: Արամեանի վերջին խօսքերը կրթութեան մասին սաստիկ տպաւորութիւն թողեցին նրա սրտում: «Մի օրիորդ, որ ունի փոքր ի շատէ մաքուր բարոյականութիւն, առաւելապէս գտնվում է անկիրթ դասերի մէջ, քան թէ կրթութուածներին...»: Նա յիշեց նաեւ նրա վերջին խօսքը: «Ուրեմն ես ոչինչ եմ նրա աչքում»... մտածեց նա վշտանալով. «Այո՛, ես ոչինչ եմ...: Այո՛, ես արժանի չեմ նրան... նա այնքան բարի է եւ խելացի... բայց ե՞ս»...: Եւ նա երկու

ձևաքով ծածկեց իւր երեսը եւ արտասուքն սկսաւ գլորուել նրա աչքերից :

Յանկարծ նա լսեց զանգակի ձայն, վաղեց դէպի լուսամուտը եւ տեսաւ որ Արամեանը կառքով դնում է քաղաք : Մանուկ երիտասարդը մնաք բարով ասաց նրան իւր յարդեաց դիտարկի շարժումով : Եւ մի քանի բոպէից յետոյ կառքը չքացաւ օրիորդի աչքերից :

Նոյն օրուայ երեկոյեան պահուն Հացի-Գէլենց տուն եկաւ Մայիլովը : Նրան դեռ եւս անհասկանալի մի ախտ, որ շատ նման էր նախանձի, կրծում էր խղճալի պատանու սիրտը : Նա տիրում էր, ինչո՞ւ օր. Սոֆին իւր հետ այնպէս սիրով չէ, ինչպէս առաջ, նա չէր կարողանում տանել նրա համարձակ վարուեցողութիւնները Արամեանի հետ :

Նա ուղղակի մտաւ օրիորդի սենեակը : Բայց գտաւ նրան ախտուր եւ գունատ դէմքով :

— Ինչո՞ւ ես այդպէս գունաթափուել, հարցրեց Մայիլովը :

— Գլուխս ցաւում է, ստոնութեամբ պատասխանեց օրիորդը :

— Դու հիւանդ ես, Սոֆի, կրկնեց պատանին :

— Ո՛չ, Նիկօլ, միայն խնդրեմ ինձ միայնակ թողնես, Գրիգօլը միւս սենեակումն է, դնա՛ նրա մօտ :

Մայիլովը առանց մի բառ խօսելու դուրս եկաւ օրիորդի սենեակից. «Նա արտաքսում է ինձ»... արտաթեամբ ասաց նա իւր մտքում եւ դուրս դնաց Հացի-Գէլենց տնից այլեւս չմտնելով Գրիգօլի մօտ :

ԻՌ

Ամարային վարդազեղ արեգակը աւետում էր սոյժառ առաւօտ :

Գերմանացոց զաղթարանի մի խոււլ անկիւնում, ցածրիկ տան մէջ, փոքրիկ սենեակում, նեղ լուսամտի առջեւ, որ բացուած էր դէպի ոչ այնքան ընդարձակ պարտէզը, միայնակ նստած էր մի երիտասարդ, եւ ձեռքը ծնօտին դրած, լուռ նայում էր պարտէզի կանաչազարդ ծառերին, որոնք ախորժանքով ձգել էին աղքատիկ բնակարանի վրայ իրանց զովացուցիչ հովանին :

Այդ մանուկ տղամարդը կը լինէր ոչ աւելի քան երեսունեւերեք տարեկան. բայց նրա տարիքը համեմատելով նրա երեսի գծադրութեան հետ, թվում էր թէ նա արդէն ծերացած է : Նրա դէմքը չէր ցոյց տալիս ոչինչ ուրախութիւն, կարծես թէ հիւանդութիւնը վաղուց արդէն ծանօթ է եղած նրան. դալուկը թողել էր նրա նիհար թշերի վրայ իւր դեղնագոյն ներկը : Նրա սեւ աչքերը, թէեւ նուազած էին, բայց նրանց մէջ վառվում էր խորհրդաւոր հուր, որ տալիս էր նրա մոայլոտ դէմքին ազդու կենդանութիւն : Բայց խորշոմը վաղուց արդէն դրել էր նրա բարձր ճակատի վրայ իւր չարագուշակ կնիքը : Նրա նուրբ գեոարոյս ընչացքը ծածկում էր գունատ շրթունքը եւ նրա նոսր մօրուքը տալիս էր նիհար դէմքին փոքր ինչ բոլորակութիւն : Այտուամեանայնիւ նրա երեսի գծադրութիւնը թէեւ խոշոր, բայց բաւական կանոնաւոր էր. իսկ դէմքի արտայայտութիւնը հանճարեղ ու վսեմ. «գործունէութիւն եւ աշխատասիրութիւն» կարգացվում էր նրա լայն ճակատի վրայ :

Սենեակը, ուր կենում էր այդ տղամարդը, գուրկ էր ամենայն դարդարանքից. երկու աթոռ, մի հին մահճակալ, մի սեղան, անկիւնում մի հին կաշուէ չէմօղան, մի քանի

Հաս դրբեր պատուհանում ընկած, այնտեղ եւ կօշիկներ, այնտեղ եւ կրկնակօշիկներ, այնտեղ էր դրուած եւ լուացուելու անօթը. մի խօսքով, այդ սենեակը նմանում էր ճանապարհի վրայի փօստատաների իջեւաններին, ուր տարածած իջեւաներով ուղեւորը, չէր ցանկանում ոչինչ կարգի բերել, մտածելով որ առաւօտեան շուտով պիտի թողնի նրան:

Յանկարծ դռները յետ գնացին, ներս մտաւ մի դերմանուհի աղջիկ, կլորիկ, առողջ, թէեւ Հասարակ բայց մաքուր հագնուած: Նա մատուցարանի վրայ բերաւ մի մեծ գաւաթ սուրճ կաթնով, հետն էլ մի ամանի մէջ սպիտակ հաց կարագով: Աղջիկը դրեց սեղանի վրայ մատուցարանն ու հեռացաւ:

Երիտասարդը շարժուեցաւ լուսամտի առջևից, միւսնայն բողբոջներեան եկաւ նրա բարձր հասակը, որ կորացել էր կարծես հոգսերի հարուածների ներքոյ:

Նա սկսաւ վայելել սուրճը:

Նախաճաշիկից յետոյ նա վառեց իւր ծխամորճը եւ սկսաւ ծխել ու դարձեալ լուսամտից նայել դէպի պարտէզը:

Յանկարծ ներս մտաւ Արամեանը ոտքից ցզլուխ հագնուած սպիտակ եւ թեթեւ ամարային հագուստով:

— Բարով, Վահէ, ասաց նրան առաջին տղամարդը, ամենեւին չչարժուելով իւր տեղից:

— Բարով, Սմբատ, ասաց Արամեանը եւ ուրախութեամբ մօտեցաւ սեղմեց նրա ձեռքը եւ կանգնեց նրա առջև:

— Ի՞նչպէս ես այժմ, հարցրեց նա. քո հիւանդութիւնը շատ վախեցրեց ինձ, բայց յոյս ունիմ, թէ այժմ լաւ ես:

— Մաշուած եւ աւերուած մեքենան վաղ կամ ուշ վերջապէս պիտի դադարի գործելուց, նրա վրայ յուսալ իզուր է, պատասխանեց Քաջբերունին:

— Դարձեալ պէտք է պահպանել կեանքը, պատասխանեց

Արամեանը: Թէ չէ՛, ամէնիս դռանը մահը խիստ մօտ է կանգնած:

— Ե՛հ, մեր կեանքը ինքն ըստ ինքեան ի՞նչ նշանակութիւն ունի, որ հարկաւոր լինի երկիւղ կրել մահից:

Արամեանը մի պտոյտ տուաւ նեղ սենեակի մէջ եւ դարձեալ կանգնելով իւր ընկերոջ առջեւ, ասաց.

— Գիտե՞ս, Սմբատ, ես եկել եմ քեզ մօտ այն նպատակով, որ քեզ հրաւիրեմ ամարանոց, որ առողջութիւնդ վերականգնի: Ես այնտեղ վարձել եմ մի դեղեցիկ կացարան, որ երեք սենեակ ունի. մինն ինձ, մինը քեզ եւ միւսը մեր ծառաներին: Դու պատրաստուիր, կամենաս այսօր երեկոյեան, կամենաս վաղը առաւօտեան հովով դնանք Կօջօր:

— Ես չեմ կարող, պատասխանեց Քաջբերունին սառնութեամբ:

— Ինչո՞ւ չես կարող. այժմ, իմ կարծիքով, այնքան տկար չես, որ մինչեւ Կօջօր ճանապարհորդութիւնը վնասէ քեզ:

— Այդ չէ արգելում, ասաց նա:

— Ուրիշ ի՞նչ է արգելում, մի՞թէ դու միտք ունիս այդ մոսյլոտ բնակարանի մէջ միանգամայն վատնել քո առողջութիւնը:

Արամեանը մի պտոյտ եւս տուաւ սենեակի մէջ եւ դարձեալ կանգնեցաւ Քաջբերունու առջեւ:

— Ասա՛, դալ՞ու ես ինձ հետ, հարցրեց նա:

Փոխանակ պատասխանելու Քաջբերունին նայեց նրա երեսին, այնպիսի մի կերպով, որպէս մինը նայում էր անմեղ երեխայի վրայ եւ ծիծաղելով ասաց.

— Ինչո՞ւ չես նստում. վախենում ես իմ փոշոտ աթոռ աղտոտէ՞ հաղուսող:

— Ո՛չ, պատասխանեց Արամեանը. բայց դու ասա՛, կը դա՞ս ինձ հետ, թէ չէ:

— Այնտեղ լաւ է՞, դարձեալ ծիծաղելով հարցրեց Քաջ-
բերունին :

— Այնտեղ բնութիւնը հիանալի տեսարաններ է ներ-
կայացնում, պատասխանեց Արամեանը մի փոքր ոգևորուած
սճով. սքանչելի առաւօտներ, մաքուր օդ, թռչունների երգ,
ծաղիկների անուշ բուրմունք... :

Կատակելով նրա խօսքը կտրեց Քաջբերունին : — Ծա-
ռերի սօսափիւն, ջրերի խոխոջմունք, սկիւ արեւ, կապուտակ
երկինք, վարդազեղ արշալոյս, հովաշունչ դեփիւս... դէ՛,
բանասեղծէ՛, սօ՛հա, ասաց նա դարձեալ ծիծաղելով :

Արամեանը մի փոքր կարմրեց եւ բռնելով նրա ձեռքը,
ասաց .

— Է՛հ, Սմբատ, դու կատակում ես, բայց ես անպատ-
ճառ պիտի տանեմ քեզ :

— Ձե՛՛ հոգիս, ես չեմ կարող հեռանալ այս անկիւնից,
պատասխանեց Քաջբերունին անկեղծութեամբ, իմ միջոցներս
չեն թոյլատրում ինձ վայելել սակի օրեր :

— Ինչո՞ւ :

— Դու արդէն դիտես, որ ես աղքատ մարդ եմ :

— Ի՞նչ ես խօսեմ, դէ՛մքը մի փոքր խոփոսելով կրկնեց
Արամեանը, ես ասում եմ քեզ, թէ՛ ես վարձել եմ այնտեղ
կացարան եւ մեզ համար պատրաստ են այնտեղ կենալու
ամենայն յարմարութիւններ :

— Ես չեմ կարող աւելորդ բեռ լինել քեզ վրայ :

— Քո խօսքերը ինձ դարմացնում են, Սմբատ. մինչեւ
այսօր ոչինչ խորութիւն չէ եղել մեր մէջ, մենք սկսած մեր
համալսարանական կեանքից ապրել ենք միասին որպէս եղ-
բայրներ, բայց այժմ կամենում ես իմուքոյութի՞ւն դնել
մեր մէջ :

— Այլ է համալսարանի կեանքը, հոգիս, եւ այլ բուն
կեանքը, պատասխանեց Քաջբերունին ծանրութեամբ : Այն-

տեղ ուսանողն ասլրում է մի այլ երկնակամարի տակ, այն-
տեղ նա պատրաստ է ոչ միայն իւր վերջին լուման պահել իւր
եղբոր համար, այլև իւր կեանքը: Բայց երբ որ ուսանողը
մտնում է այս աշխարհ, երբ որ նա ծանօթանում է մամոնայի
հետ, արդէն համալսարանի երազական դադափարները չողի-
ների նման ցնդվում են նրա դլսից:

— Մի՞թէ մենք եւս պատկանում ենք այդպիսի ուսա-
նողների թուին, մի փոքր վշտանալով ասաց Արամեանը:

— Ինչո՞ւ չէ. միտքդ գալի՞ս է, որ մենք քանի Պետեր-
բուրգումն էինք, մեր հայրենիքի համար ի՞նչպէս էինք ուխ-
տում, ի՞նչեր էինք երզվում, բայց այժմ ի՞նչ շինեցինք:

— Այդ իրաւ է, որ մենք՝ հայերս մեր հայրենիքը աւելի
ենք սիրում՝ դեռ քանի որ նրանից հեռու ենք, պատասխանեց
Արամեանը: Բայց այժմ թող մնան դրանք. իմ կարծիքով
մենք միեւնոյն հողին ունինք, ինչ որ ունէինք համալսարա-
նում. բայց դու ասա՛ դալո՞ւ ես Կօջօր, թէ ո՛չ:

— Ես ասացի, թէ ո՛չ:

— Մտրատ, դու վշտացնում ես ինձ, նրան գրկելով ա-
սաց Արամեանը: Ես չեմ թողնիլ որ դու այստեղ մնաս:

Քաջբերունին ոչինչ չխօսեց:

— Ասա՛, դալո՞ւ ես ինձ հետ:

— Ի՞նչ եւս այդքան թախանձում ինձ, թաթոս:

Թաթոս անուշը նրանց մէջ ընդունած անուն էր, որով
նրանք կոչում էին յիմար ուսանողներին:

— Լա՛ւ, ասա՛, կը դա՞ս, թէ ոչ:

— Ես արդէն ասացի. բայց դու պատմի՛ր փոքր ինչ,
թէ ինչպէս եւս անցկացնում այնտեղ:

— Ես քեզ մի լաւ պատմութիւն կ'անեմ, միայն խոս-
տացիր:

— Դէ՛ ասա՛:

Արամեանը ժպտալով խօսեց բոպէսական լուսթիւնից յետոյ .

— Սմբատ, Կօջօբուժ եւ բարեկամացայ մի այնպիսի, սիրուն աղջկայ հետ, որ կատարեալ հրաշք է . ի՞նչ սիրաբորբոսք աչքեր, ի՞նչ քաղցրութեամբ լի շրթունք, ի՞նչ վարդագեղ երես, մի խօսքով, կատարեալ հրեշտակ . . . :

Քաջբերունին ժպտալով լսում էր իւր մանուկ ընկերի նկարագրութիւնները :

— Այլևս ի՞նչպէս, շարունակի՛ր, ասաց նա :

— Նրա խօսակցութիւնը ամբողջ պօէզիա է, նրա ժպտը հիանալի է, նրա շրթունքների մէջ թաղուցած է երկնային համբոյր, իսկ նրա ծոցում անմահ կեանք . . . :

— Բաւական է, գլուխս մի՛ տանիր . այժմ հասկացայ, որ սիրահարուած ես, նրա խօսքը կտրեց Քաջբերունին :

— Ո՛չ, այդպէս մի՛ կարծիր, միայն դու գիտես որ ես գեղեցկատէր ճաշակ ունիմ :

— Այո՛, ես գիտեմ . . . Միայն ասա՛, ի՞նչ ազգից է քո նկարագրած յաւերժահարսը :

— Նա հայ է : Բայց, Սմբատ, եթէ ես լինէի պնտկերահան եւ կամենայի ընծայել աշխարհին գեղեցկութեան գիցուհու կատարելատիպը, ես միայն նրան զաղափար կ'ընտրէի իմ գործին :

— Այդ արդէն չտիպանցութիւն է :

— Ո՛չ, Սմբատ, քանի որ չես տեսել, կարելի է այդպէս կարծել, բայց դու արդէն խոստացար զալ ամարանոց, ես կը ծանօթացնեմ քեզ նրա հետ եւ դու անտարակոյս կը գտնես նրա գեղացկութիւնը :

— Կրթուա՞ծ է :

— Այդ մասին լեզուս կարճ է . . . այո՛, նա կրթուած է, որքան կարող է կրթուել մի հայ աղջիկ այստեղի դպրոց—

ներում : Գիտէ՞ ռուսերէն , Ֆրանսերէն , վրացերէն , հիանալի
երգում եւ նուազում է :

— Իսկ հայերէն :

— Հայերէն չգիտէ . հայութիւնը նրա դափթթարումը
զբուսած չէ :

— Ի՞նչ դրքեր է շատ կարդացել :

— Ռոմաններ :

— Պրծաւ դնաց . . . արդէն յայտնի է , թէ նա ի՞նչ
պտուղ պիտի լինի :

Պօսակցութիւնը նրանց մէջ ընդհատեցաւ , երբ Քաջ-
բերունին սկսաւ վառել իւր ծխամորճը :

— Ծճմարիտ դարմանալի է թէ դու ինչպէս ես անցկաց-
նում այստեղ միայնակ , հարցրեց Քաջբերունուն Արամեանը :

— Հապա ի՞նչպէս պէտք է անցկացնել , պատասխանեց
Քաջբերունին անփոյթ կերպով . պարապում եմ քանի չեմ
յողնել , բայց երբ յողնում եմ , նստում եմ այս լուսամուտի
հանդէպ եւ նայում եմ պարտիզին :

— Բայց դու աւարտեցի՞ր քո « Հայկական կեանքը » :

— Աւարտեցի :

— Ու՞ր է :

Քաջբերունին ցոյց տուաւ պատուհանում մի քանի հաս-
տետրակներ : Արամեանը մօտեցաւ , վեր առաւ նրանցից
մինը , որ զբուսած էր խոշոր եւ խոտն զրչոյ՛ , եւ սկսաւ
նայել :

— Ե՞րբ պիտի տպագրութեան տաս այս աշխատու-
թիւնդ , հարցրեց Արամեանը :

— Ո՞րտեղ եւ ո՞ւմ համար :

— Արդարեւ այստեղ չի տպուի , բայց ինչո՞ւ ո՞ւմ
համար :

— Ո՞վ պիտի կարդայ :

— Դու կարծում ես մերայինք ուշադրութիւն չե՞ս դարձնել մի այսպիսի դրքի վրայ :

— Ամենեւե՞րն :

— Ուրեմն էլ չե՞ս դրում :

— Ո՛չ :

— Այստեղ տաղտկալի չե՞ք քեզ միայնակ :

— Ես միշտ միայնակ չեմ մնում, այլ լինում են ինձ մօտ եւ Հիւրեր, պատասխանեց Քաջբերունին ծանրութեամբ : Գիշերները շատ անգամ դալիս է ինձ մօտ տանտիկին գերմանուհի պառաւը, նստում է եւ ամբողջ ժամերով սկսում է շատախօսել, նա պատմում է իւր մանկութիւնից, իւր հանգուցեալ ամուսնուց, իրանց հայրենիքից, նա պատմում է ինձ եւ այլ զանազան դատարկ բաներ : Եւ ամէն առաւօտ վիզիտով մտնում է ինձ մօտ տանտիրոջ կատուն, նա մոմալով պտտվում է իմ չորս կողմը, որպէս թէ կամենում էր ինձ հետ պարել, պոչը կամարածեւ բոլորում է մէջքի վրայ, մի քանի անգամ քամովում է իմ ոտերին եւ հեռանում : Բայց նորահաս գերմանուհի աղջիկը, որ ծառայում է ինձ, մի քանի բոսի է միայն ինձ մօտ մնում. մայրը վախում է նրան երկար ինձ մօտ թողնել :

Երկու ընկերների մէջ այդպէս կէս ժամ եւս տեւեց խօսակցութիւնը. մինչեւ Արամեանը վեր կացաւ եւ ասաց .

— Այսօր ես մի քանի տեղ ունիմ դնալու. դու պատրաստուիր, Սմբատ, երեկոյեան հովին ճանապարհ կ'ընկնենք :

— Ես կը դամ, միայն մի քանի օրով :

— Այդ ոչինչ, միայն պատրաստ եղիր երեկոյեան : Արամեանը հեռացաւ :

ԻՅ

Ինչ որ ձանճուր Իվանիչի ընտանիքը գնացել էր Կօջօր, նա դոնէ մի անգամ շէր եղել նրանց մօտ: Բայց քաղաքում խորովուելով յուլիսեան արեւի տաքութիւնից, փոշի կուլ տալով, իւր հաստ փափախը դլխին, քարշ էր գալիս իւր դորձերի ետեւից: Սպասաւորներից նրա մօտ մնացել էր միայն խմէրէլ Քիտէսը: Նա ձանճուր Իվանիչի համար եւ թէյ էր պատրաստում, եւ խորոված էր խորովում, եւ նրա շաքճէքն էր մաքրում, հարկաւոր ժամանակ նաեւ փօստը նամակ էր տանում:

Մի օր երեկոյեան պահուն, ձանճուր Իվանիչը փողոցից տուն վերադառնալով, միայնակ նստած էր պատշգամբի վրայ, նրա առաջեւ յենարանի վրայ դրած էր մի բաժակ թէյ, նրա մօտ մի կտոր շաքար: Բայց տաք ըմպելին վաղուց սառել էր, եւ ձանճուր Իվանիչը, պաշարուած խառն մտածութիւններով, մոռացել էր խմել:

Յանկարծ երեւան եկաւ Սամիլ Պետրովիչը:

Տեսնելով մօցիքուլին, ձանճուր Իվանիչը թղպամած դէմքը մի փոքր պարզուեցաւ, ինչպէս մինը, որ հեռուից նշմարում է իւր աւետարները:

— Բարով, բարով, Սամիլ Պետրովիչ, դռնից ձանճուր Իվանիչը: Հէ՛ր օրհնած, ո՞ւր իս, էսքան վուխ չիս էրեւում, աչքիւս արաքեցան քու ճամփին մտիկ տալով:

— Բարով, կրկնեց Սամիլ Պետրովիչը, ձեռք տալով ձանճուր Իվանիչին, ապա կարտուզը վերառաւ գլխից եւ նստեց:

— Ո՞ւր իս, էսքան վուխ է չիս էրեւում, դարձեալ հարցրեց ձանճուր Իվանիչը:

— Ո՞ւր պտիմ ըլի, քեզ համա չալիչ իմ դալի, պատասխանեց Սամիլ Պետրովիչը: Դուն քու դուրձերի ետնէն

իս, իսկի խարար չունիս, էլ չիս ասում, վուր Սամիլ Պետրովիչի հոգին դուս էկաւ դէս ու դէն ման դալով, վուր քիզ համա փետոյ ճարէ :

— Դէ՛ լաւ, մունաթ մի՛ դնի. մաշ վո՞ւնց, դանա իմ աղբէր չի՞ս. դուն վուր իմ փեքքը չքաշիս, մաշ ո՞վ պիտի քաշէ, պատասխանեց ձանճուր Իվանիչը կեղծաւորուելով :

— Ա՛՛յ, աղայ Բիտէս, չայ :

Բիտէսը շուտով մատուցարանի վրայ բերաւ թէյ : Սամիլ Պետրովիչը մի քանի կում ընդունելով ասաց .

— Ի՛նչ լաւ չայ է, ի՛նչ լաւ համ հուտ ունէ :

— Հա խիստ լաւն է, պատասխանեց ձանճուր Իվանիչը . նալաթովի քարվանսարի թուրքի դաղազներէմէն գրվանքէն վեց աղատով իմ առի :

Բայց թէյը ամենամանպիտան թէյ էր, ո՛չ համ ունէր եւ ոչ հոտ, մանաւանդ որ պատրաստուած էր իմերէլ Բիտէսի ձեռքով :

Բայց ինչպէս մեր ընթերցողին յայտնի է, ձանճուր Իվանիչը դիտէր կեղծաւորուել, նա, ինչպէս ասում են, սասանային կը նայնէր :

Այգիում մանուկ աղամարդու անյաջող առաջարկութեան օրից սկսած Սամիլ Պետրովիչն անդադար այս կողմ այն կողմն էր ընկնում, դուցէ ձանճուր Իվանիչի համար մի փետոյ գտնէ, եւ իբրեւ մի դալալ մարդ՝ նրա ապրանքի սով դաւն բարելւացնէր մի անբախտի հետ, որպէս զի իւր համար մի քանի մանէթ մէջտեղից որսայ : Բայց Սամիլ Պետրովիչի ջանքերը բոլորն իզուր անցան մի քանի պատճառներով . — մին որ ձանճուր Իվանիչը այնքան փող չէր տալիս, որ գտնեա փեսաները փողի առաւելութեանը նայելով, իրանց ամուսնացուի բարոյական արատները հաշուի չառնէին, մին էլ՝ ձանճուր Իվանիչը կամք չունէր օտարազգի

չինովնիկի տալ, որի վրայ դիւրութեամբ կարելի էր մ'ի ս եւ լ մի այնպիսի օրիորդ, որպիսին Սոֆին էր: Բայց ծանծուր Իվանիչը կամք ունէր, ինչպէս մտածում էր, երկու բարիք միասին վայելել, մին՝ հինգհարիւր թումանով աղջիկը իւր գլխից ու առ անել, մին էլ՝ վաճառական եւ հարուստ փեսայ ունենալ:

Այդ հանգամանքներն աւելի ճշտութեամբ յայտնի լինելով Սամիլ Պետրովիչին, նա դիտէր, որ շէր կարող կատարել ծանծուր Իվանիչի պահանջմունքները: Այդ պատճառով, նա խիստ տահաճութեամբ պատասխանեց, երբ ծանծուր Իվանիչը հարցրեց թէ ի՞նչ շինեցիր:

— Քու բանը, ծանծուր Իվանիչ, դժար գլուխ դալու բան է, պատասխանեց Սամիլ Պետրովիչը գործազէտ մարդու եղանակով: Առաջին վուր, քու արշինը կարճ է, քու սովդան չի ըլի շինել. դուն ուղում իս, մէ հինգ հարուր թումանով լաւ փեսայ ճարիս, էտ մեր քաղաքում վո՞ւնց կուլի: Հէնց ասում իս, թէ ուսում առած աղջիկ է, պտի առանց փուղի մարդու տամ. մազբամ չիս իմանում, ես անիծած ուսումը աղջկերանց մաղանդան վունց կտորից: Սրամէն առաջ եփորը շիօլէմէն դուս էկած մէ աղջկայ սովդէն էի շինում, ու եփ վուր տղին թամահ քցելու համա ասում էի, աղջիկը էսքան փուղ ունէ, էսքան բաժինք ունէ, էսպէս սիրուն է, ու եփոր աւելցնում էի, թէ ուսում էլ ունէ, ըշիօլումը օխաը տարի կարթայիլ է, ոսնակ, փրանցուղնակ ջրի նման խօսում է, ու՛ ինչ միղքս պահիմ, եփոր մի քանի սուս էլ պօջին էի կպցնում, էտունք աղէն լսելիս ուրախութենից խիլքը գնում էր: Ա՛մա հիմի եփոր տղին ասում իս, թէ աղջիկը էսքան փուղ ունէ, էսպէս է, էնպէս է, դովում իս, ու իժում ասում իս թէ ըշիօլէմէն դուս է կիի, կուբը պրծիլ է, աղէն էն նմուտին մնդիրթը կախում է, ու քիղ ասում է, թէ էտ փուղը նրա մէ տարուայ թրիտարի, վեչէրի, դուխի ու

պօժարի միտքը չի դուս բերի: Հիմի իմացա՞ր, Ճանճուր
Իվանիչ, ուսուսն էլ մօզից ննդաւ:

Ճանճուր Իվանիչը դրանից աւելի լաւ էր հասկացնել. նա
վաղուց էր ասել՝ «է դ. դա հր ու լ մ ար ու լ ու լ մ ք ա դ ը-
կա ս զ ա լ ր փ ու ղ շ ի ն ի ց, ու լ մ վ ու լ ր տ ա լ ի ս ի մ
չ ի ն ա ո ն ու լ մ»: Բայց նա միտք չունէր իւր սիրտը միան-
դամոյն բաց անել Սամիլ Պետրովիչի առջև: Այդ պատճա-
ռով իւր ապրանքի արժանաւորութիւնը չկտրելով, նա ասաւ
թուրքի առածը. — Փիքը չկայ Սամիլ, Պետրովիչ, «զառ
զաղրի զարգեար բիւրք» — (ոսկու կշիւրը — յարզը ոսկերիչը
կ'իմանայ): Իմ Սոֆին էնպէս ապրանք չէ, վուր նրան
մուշտարի չճարուի: Ի՞նչ իմ հօղում, ջէր նրա ի՞նչ մարդու
տալու վուխան է. թող մէ քանի տարի էլ մնայ, մինչև
բախար բաց կուլի:

Սամիլ Պետրովիչը նկատելով որ իւր անկեղծութեամբ
խօսելը լաւ հետեւանք չունեցաւ, մի առժամանակ եւս Ճան-
ճուր Իվանիչի սեղանից ձրի ճաշ կամ ընթրիք որսալու
համար մտածեց նրա գլուխը փչել մի քանի զատարկ
յուսերով:

— Գիղի՞ս ինչ կայ, ասաց նա. թէ զարիւր օճքնու կու-
տաս, մէ լաւ մուշտարի կայ:

— Վո՞ւրդանցի է, հարցրեց Ճանճուր Իվանիչը մի փոքր
հանդատանալով:

— Ստամբուլէմէն է, պատասխանեց մօցիքուրը:

— Անունը ի՞նչպէս է:

— Նրա անունը Անուշիկ-աղա Թութունջեան է:

— Էստեղ ի՞նչ է շինում, կրկնեց Ճանճուր Իվանիչը
բոլորովին չհաւատալով իւր տեղանքներին: Ո՞վ գիտէ ի՞նչ
թոկից փախած կոօ կուլի:

— Ի՞նչ իս խօսում, հէրը միլիօնչիկ է. ինքն էլ էկիլ
է՛ միք քաղքում միտք ունէ մահուդի փարբիկա բաց անի,

մէ ջեհէլ, սիրուն տղայ է, ուսում առած, տասերկու լիդու խօսել է իմանում :

Միլիօնի եւ մահուղի Փարբիկայի անունը խիստ հաճելի եկաւ ձանձուր Իվանիչի ականջներին, եւ նա հարցրեց :

— Ուզում է պսակուի ու հստի մնա՞յ, թէ կուզնայ իրա երկիրը :

— Ու՞ր կուզնայ, մարդն ուզում է էստեղ Փարբիկա բաց անէ :

— Կարա՞ս միւր տուն բերի :

— Ջէր տուն բերել դժար է, նրա համա վուր աղջիկը տանը չէ, պատասխանեց մօցիքուլը : Բայց թէ դուզիս, առուտեհան գնանք. նա կենում է Արծրունու քարվանսրում, բուլվարի, վրայ, էստեղ քիզ նշանց կուտամ :

— Շատ լաւ. ամա ասա՛ տեհնիմ, փուղ խօս շատ չէ ուզում :

— Նա մէ կոպէկ փուղ չէ ուզում. ասում է փուղն ի՞նչ կօնիմ. ասում է, աղջիկը սիրուն ըլի, կ'օսէ, խելօք ըլի, ուսում ունենայ, հերիք է, ասում է :

— Իմ հուզին գիտենայ, մարդավարի օժքին է էլի էա տղէն, խօսեց ձանձուր Իվանիչը ուրախութեամբ : Ես իմ աղջիկը կուտամ դրան :

— Օրինաուր մարդ իմ ասում. հասր սաղ քաղքումը չկայ :

— Մազբամ, ասա՛, տեհնիմ, Սամիլ Պետրովիչ, նա միւր Սոֆիին տեհի՞լ է :

— Մէ օր բաղումը տեհիլ է ու հաւնիլ է. մէ խօսքով՝ Սոֆիի համա գժուած է :

ձանձուր Իվանիչը նկատելի կերպով հրճուեցաւ :

— Բիտէս, ձայն տուաւ ծառային, արտղ բէ :

— Արաղն ի՞նչ կօնինք, հարցրեց Սամիլ Պետրովիչը :

— Պունչ կուչինինք. գիդի՞ս, Սամիլ Պետրովիչ, ա-

ուանց պունչի չայլ էնէնց է, վունց վուր խաշը առանց սխաուրի:

Սամիլ Պետրովիչը ծիծաղեցաւ:

Քիտէնն արաղը բերաւ, նրանք մի մի բաժակ խմեցին թէյի հետ խառնած:

Այդ յանկարծահաս լուրը մինչեւ այն աստիճան ուրախացրեց Ճանճուր Իվանիչին, որ նա չկարողացաւ պահել իւր սրտի հրճուանքը. նա խնդրեց Սամիլ Պետրովիչին մնալ այն գիշեր իւր մօտ՝ մի լաւ քէֆ անելու համար: Սամիլ Պետրովիչը յօժարութեամբ ընդունեց: Ճանճուր Իվանիչը հրամայեց ծառային, որ գնայ բաղարից խորովածացու միս առնէ: Նրանք այն գիշեր մի փառաւոր ուրախութիւն արին:

— Հիմի, աստ՛, տեհնիմ, Սամիլ Պետրովիչ, առուտեհան մինք էն մարդուն վուրդի կանանք տեհնի, հարցրեց Ճանճուր Իվանիչը գիշերուայ երկու ժամին մօցեքուլին ճանապարհ զցելու ժամանակ:

— Առուտեհան ես կանգնած կուլիմ Թամամչովի քարվանսարի առաջ, դուն կուգաս էնտեղ, ինձ կուգտնիս. իժում մինք միասին կ'եհանք Արծրունու քարվանսարա, ես էն տղին կուգանիմ, դուն հեռուից մտիկ կ'օնիս, ինչ տղի հիդ վուր խօսացի, ու իրիք անդամ հաղացի, իմացի վուր նա է. հիմի իմացա՞ր:

— Իմացայ, մաղբամ մէքիչ զայիմ հաղա վուր կանեհամ լսի:

— Շատ լաւ, զահիմ կու հաղամ, հիմի բարի գիշեր, ասաց Սամիլ Պետրովիչը եւ դլորուելով սկսաւ հեռանալ Հացի-Քէլենց տնից:

— «Լաւ էրաղ է... թէ Աստուծ բարին կատարէ...», ասաց իւր մտքում Ճանճուր Իվանիչը՝ մօցեքուլին ճանապարհ զցելուց յետոյ:

ԻԶ

Նոյն երեկոյ երբ Ճանճուր Իվանիչը ողևորուած ապա-
 դայ յոյսերով Սամիլ Պետրովիչի հետ խօսում էին Թուրքունջ-
 եանի վրայ, Կօջօրում, Հացի-Գէլենց կացարանի մօտից զը-
 ուարով անցաւ ճանապարհորդական մի կառք, որ շուտով
 կանգնեց ոչ այնքան հեռու նրանց բնակարանից. կառքից
 դուրս եկան երկու մանուկ տղամարդ: Իրանցից մինը Քաջ-
 բերունին էր, միւր Արամեանը:

Միւս օրուայ առաւօտեան Արամեանը վաղ վերկենարով
 մահճից, պատրաստովում էր հոգալ իւր հիւրի համար նախա-
 ճաշիկ, մինչև ե նա կը զարթէր քնից, բայց նա զարմացաւ՝
 տեսնելով Քաջբերունուն բոլորովին հազնուած, զբսից ներս
 մտնելիս: Նա նայեց նրա կօշիկներին, տեսաւ որ նրանք թըր-
 ջուած էին առաւօտեան ցողով:

— Բարի լոյս, ասաց Արամեանը ժպտալով, ես կար-
 ծում էի, թէ դու քնած կը լինիս. լաւ շուտ ես զարթե՛լ:

— Այո՛, ես այժմ սովորել եմ առաւօտները վաղ զար-
 թել, պատասխանեց Քաջբերունին:

— Բայց դու դբսից ես զալիս:

— Ես զնացել էի պտըտելու եւ դիտելու ձեր ամարա-
 նոցի շրջակայքը, պատասխանեց Քաջբերունին, եւ նստեց
 լուսամտի հանդէպ, իսկ Արամեանը դուրս գնաց սենեակից:

Երկար այնպէս նայում էր Քաջբերունին զէպի կանա-
 չազարդ հեռուն եւ հրճվում էր զեղեցիկ տեսարաններով:
 Եւ մէկ էլ մի դադանի ողևորութեամբ բացականչեց նա
 հաղիւ լսելի ձայնով. «Հրաշալի՛ Կովկաս, հայրենիք զեղեց-
 կութեան, բայց ախոս՛ս...», եւ նրա երեսի զոյնը վտխուե-
 ցաւ ներքին վրդովմունքից:

Ներս մտաւ Արամեանը՝ արդէն հազնուած եւ լուաց-
 ուած:

— Դու թէ՛յը կաթնո՞վ ես սիրում, հարցրեց նա :

— Այո՛, պատասխանեց Քաջբերունին. միայն ասա՛ շուտ ասան, մի քիչ կարագի եւ հացի հետ. ես այժմ դայլի պէս սոված եմ :

— Երեւի տաւուտեան գրասն՝քը եւ լեռնային օդը զըր-
դուել են քո ախորժակը. ահա՛ ամառանոցի զանազանութիւնը
քաղաքի ապականուած մթնոլորտից, կրկնեց Արամեանը
ձայն սալով ծառային, որ շուտ բերէ :

Մտտան ներս բերաւ հեշտանոր եւ մի քանի բոպէից
յետոյ նրանց ասջեւ պատրաստուեցաւ թէ՛եւ չափաւոր բայց
ախորժելի նախաճաշիկը :

Նախաճաշիկից յետոյ նրանք սկսեցին ծխել :

Քաջբերունին իւր սովորութեան համեմատ նստեց լու-
սամուտի առջեւ, Արամեանը ֆոյնպէս նստեց նրա հանդէպ :

— Ինչո՞վ ես պարագում այժմ, Վահէ, հարցրեց Քաջ-
բերունին :

— Համարեա թէ՛ ոչինչով, պատասխանեց Արամեանը :

— Մի՞ թէ ծուլացել ես :

— Ո՛չ, միայն այն՝ ինչ որ ես ցանկանում եմ, ժամա-
նակի է կարօտ, եւ պահանջում է շատ զործել. բայց այժմ ես
զեւ ոչինչ չեմ կարող անել :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ որպէսզի կարելի լինի արուեստականա-
պէս բացատրել Հայոց լեզուի ծագումը եւ նրա պատմական
եւ զործնական ձեւակերպութիւնը, պէտք է հիմնաւորապէս
ծանօթ լինել այն լեզուներին, որոնցից մեր լեզուն ծագումն
է առել, այդ պատճառով ես հարկաւոր եմ համարում հիմ-
նովին ուսանել պարսից եւ սանսկրիտ լեզուները :

Քաջբերունին ժպտաց :

— Ո՞րտեղ պիտի սովորես դու այդ լեզուները, հարց-
րեց նա :

— Ես միտք ունիմ զնալ Հնդկաստան, պատասխանեց Արամեանը :

— Լաւ, մինչեւ զնալդ անգործ պիտի մնաս :

— Ես այժմ բոլորովին անգործ չեմ, այլ քերականութիւն եմ պատրաստում մեր նոր աշխարհաբար լեզուի. այլևս պատրաստում եմ մի համառօտ բառարան եւրոպական ուսումնական եւ արուեստական բառերի, որպէսզի մեր զրոզները ստիպուած չլինին յունական, լատինական կամ այլազգի բառեր մուրալ :

— Մի այդպիսի աշխատութիւն անօգուտ չի լինիլ մեր այժմեան գրականութեան համար, պատասխանեց Քաջբերունին : Թէեւ առաջին անգամից այդ հայերէն թարգմանած տերմինները խորթ կը թուան, բայց հետզհետէ գործածութեան մէջ մտնելով, քաղաքացիութիւն եւ իրանց բուն նշանակութիւնը կը ստանան :

— Բայց մեզ մի ուրիշ բառարան եւս պէտք է, խօսեց Արամեանը, այսինքն մի բառարան մեր նոր եւ կենդանի լեզուի : Մեր գրաբար բառարանները պարունակում են իրանց մէջ ըստ մեծի մասին Աստուածաշունչ զրքի եւ մեր հին գրականութեան բառերը. այդ պատճառով նրանք խիստ ազբատ են նոր լեզուի կենդանի բառերով : Այդպիսի բառեր մենք նորից հնարելու կարօտութիւն չունինք, որովհետեւ կեանքն ինքը ստեղծում է բառերը : Այդ պատճառով մեր այժմեան կենդանի լեզուն ունի իւր մէջ այնպիսի բառեր, որոնք չկան մեր հին լեզուի մէջ, որ մնացել է մեզ թղթի կամ մազազաթի վրայ : Օրինակի համար՝ մի հայ որ բնակվում է անտառի մօտ, նա գիտէ այդ անտառի բոլոր ծառերի, աունկերի, պտուղների, խոտերի եւ ծաղիկների անունները, որոնք չկան մեր զրքերում կամ բառարաններում : Այդպէս էլ հայ երկրագործը գիտէ իւր արհեստին վերաբերեալ բոլոր գործիքների եւ պարագանների անունները, որոնք ըստ մեծի

մասին մեզ անծանօթ են. մի խօսքով՝ հայ մարդը իւր գիւղական եւ հովուական կեանքում հնարել է իրան համար շատ բառեր, որոնք նոյնպէս պէտք են մեր նոր լեզուի ճոխութեան համար: Առհասարակ մենք՝ քաղաքացիքս չգիտենք այնքան անտեսական բառեր, որքան գիտեն գիւղացիք: Նրանք առաւել քան անշունչ մագաղաթը հաւատարմութեամբ կարողացել են պահպանել իրանց հայրենական բարբառը: Բայց եթէ այդպիսի բառեր չհաւաքուեն, նրանք անտարակոյս կը հորչին, երբ գիւղացիների կեանքը այլ կերպարանք ու ձեւ ստանայ:

— Այո՛ պէտք է հաւաքել, պատասխանեց Քաջբերունին, բայց ո՞վ պիտի հաւաքէ:

— Ես մտադիր եմ այդ նպատակով մի ճանապարհորդութիւն անել, պատասխանեց Արամեանը:

— Դուք շատ գատարկ բաներ էք մտադիր անելու, նրանց խօսքը կարեց մի երրորդ ձայն, եւ նոյն բողբոջներէն յետոյ մի կարճ լիկ, մանուկ տղամարդ, երեսը շան ունի նման, գեղին, երկրոյն մօրուքով եւ փոքրիկ աչքերով:

«Անուն Հօր եւ Որդւոյ», երեսը խաչակնքելով ասաց Արամեանը. — Թաթո՛ս, այս ո՞րտեղից յայտնուեցար:

Բայց նորեկ պարոնի անունը Թաթոս չէր, նա կոչվում էր Քրիստափոր Դիաչկով, միայն այդ անունով նորահաս ուսանողները կատակի համար կոչում էին յիմար ուսանողներին իրանց համալսարանական կեանքում:

Նորեկ պարոնին թէեւ յայտնի էր մի այդպիսի կոչման նշանակութիւնը, բայց նա ամենեւին չվշտացաւ, եւ շատ սիրելի կերպով մօտեցաւ, ողջունեց նրանց եւ նստեց նրանց մօտ:

— Դէ՛, Հոմերոս, այժմ շարունակի՛ր քո ճառը, խօսեց Դիաչկովը ուսաց լեզուով ուղղակի Արամեանի երեսին նայելով:

— Ի՞նչ հարկաւոր է, քանի որ իմ ճառը չի կարող քեզ գրաւել, պատասխանեց Արամեանը:

— Այդ իրաւ է, որովհետեւ ես վաղուց վճռել եմ չհաւատալ հրաշքներին, այդ պատճառով դիտեմ, որ մեռելին կրկին կեանք տալ անկարելի է. ահա՛ այդ դրութեան մէջ են Հայոց ազգը եւ լեզուն: Այնպէս չէ՞, Պղատոն, դարձաւ նա դէպի Քաջբերունին:

Բայց Քաջբերունին ոչինչ չպատասխանեց, միայն ծիծաղեցաւ նրա թեթեւամտութեան վրայ:

— Վահէ, — սակայն ներողութիւն, պէտք է ասել՝ արքայ Հայոց. չէ՞ որ Վահէն Հայոց թագաւոր էր: — Գիտէ՞ք ես ինչ պատճառով եմ եկել ձեզ մօտ. դու էլ լսի՛ր, Սմբատ. ես եկել եմ յայտնել ձեզ՝ կամ համաձայնեցէք որոշել ինձ մի անկիւն ձեր կացարանում եւ կամ ես վարձը բարձրացնելով ձեզ կ'արտաքսեմ այստեղից:

— Ի՞նչն է ստիպում քեզ այդ անել, հարցրեց Արամեանը:

— Ներեցէ՛ք, ի՞նչպէս կարելի է դուք միայնակ բնակուիք այստեղ եւ հրճուիք մի այնպիսի հրաշալեզ գրացուհիով, իսկ ես հեռուից սառն աչքով նայեմ ձեր բարերախտութեան վրայ: Ըշմարիտն ասած, նախանձը խեղդում է ինձ:

Արամեանը ծիծաղեցաւ:

— Սմբատ, դու տեսե՞լ ես նրան, հարցրեց Դիաչկովը Քաջբերունուց:

— Ո՛չ, ես երեկոյեան եմ եկել այստեղ, պատասխանեց Քաջբերունին:

— Լաւ է, որ չես տեսել, եթէ ո՛չ, քո խելքն էլ նոյնպէս կը տանէր դեղեցկուհին, ինչպէս տարել է իմը, խօսեց Դիաչկովը:

— Մի՞թէ քո գլխում դո՞նէ քիչ խելք կար, որ տանէր, հարցրեց Քաջբերունին ծիծաղելով:

— Ինչպէս չէ՛, ինձ արդէն կոչում են մեր քաղաքի մօշթօրը :

Կարճիկ տղամարդը փաստարան էր :

Երկու բնիկերները ծիծաղեցան Դիաչկովի պարծենկոտութեան վրայ :

— Դիտե՞ս, Սմբատ, հրաշագեղ օրիորդը, ասում են, խելից գնացած է Վահէի համար :

— Ձեմ կարծում, պատասխանեց Քաջբերունին :

— Վերջապէս, այդ հարցը ինքն ըստ ինքեան կը լուծուի ապագայում, միայն դուք այս բողէիս վճռեցէ՛ք՝ տալի՞ս էք ինձ մի անկիւն ձեր կացարանում, կրկնեց Դիաչկովը :

Մանուկ տղամարդիկը նշմարելով որ Դիաչկովի առաջարկութիւնը կատակ չէ, այդ պատճառով Արամեանը պատասխանեց .

— Մենք չենք կարող համաձայնել քեզ հետ, մին՝ որ մեր կացարանում աւելորդ տեղ չկայ, երկրորդ՝ եթէ տեղ եւս լինէր, քեզ չենք կարող ընդունել մեզ մօտ, որովհետեւ դու կ'արգելես մեզ պարսպել :

— Այսինքն ես կ'արգելէի ձեզ դատարկ պարսպմունքներէ, որպիսիք են քո հայկական քերականութիւնը, աշխարհարար բառարանը եւ Սմբատի՝ Հայկական կեանքը . հը՛ այնպէս է՞, կրկնեց Դիաչկովը երգիծարանելով :

Արամեանը բարկութեամբ նայեց նրա երեսին :

— Դու շատ անխիղճ ես, Վահէ, դոնեա թո՛յլ տուր ինձ երբեմն զալ այստեղ, եւ այս լուսամուտից նայել դեպի նուիրական բնակարանը, խօսեց Դիաչկովը եւ մօտեցաւ լուսամուտին, որտեղից ուղղակի երեւում էր Հացի-Գէլինց կացարանը :

— Ձի կարելի, դարձեալ պատասխանեց Արամեանը :

— Պարոններ, նայեցէ՛ք, ահա՛ երեւեցաւ գեղեցկութեան գիցուհին, կոչեց Դիաչկովը ուրախութեամբ :

Մանուկ տղամարդիկը վաղեցին լուսամուտի հանդէպ ,
ուր կանգնած էր Դիաշկովը :

Եւ արդարեւ երեւեցաւ օրիորդ Սոֆին ամարային
թեթեւ եւ սպիտակ հագուստով . նա իւր եղբօր հետ դնում
էր առաւօտեան դրօսանքի : Օրիորդն անցաւ նրանց լուս-
մուտի առջեւից , մի կողմնակի հայեացք ձգելով դէպի մա-
նուկ տղամարդիկը : Բայց Դիաշկովը չկարողացաւ համրե-
րել եւ առանց մնաք բարեաւ ասելու , առաւ դիտարկը ,
դուրս վաղեց եւ սկսաւ հեռուից հետեւել դնացողներին :

— Յիմար , ասաց նրա դնայուց յետոյ Արամեանը . այս
եւս մեր նոր սերունդը . . .

— Նա առաւել բախտաւոր է քան թէ մենք , պատաս-
խանեց Քաջբերունին :

— Ինչո՞վ :

— Նրանով , որ նա թէեւ թերուտի մինն է , բայց ուղիղ
ասաց նա , թէ այժմ կոչվում է Ռօշֆօրը իւր քաղաքի , եւ
դրանով շահել է իրան համար աւելի քան քսան , երեսուն
հազար մանէթ . բայց ես ու դու , մեր մազիտարի ու դօքտօրի
դիպլօմներով , ծախսի փող էլ չունինք :

— Այդ ինչի՞ց է :

— Պատճառը խիստ պարզ է . նա տիրացու Սաքոյի
որդի Սաչատուրն է , բայց այժմ կոչվում է Խրիստաֆօր
Դիաշկով , կին բերեց իւր հետ մայրաքաղաքից եւ պարտա-
ւոր է կուռքի նման նրան պաշտել . . . բայց մեր ճակատին
կարգացվում է ուրիշ բառ եւ մենք պարապում ենք , որպէս
նա ճշտութեամբ արտասանեց , դատարկ բաներով՝ դու քո
Հայոց քերականութեամբ եւ բառարանով , խոկ ես իմ՝ Հայ-
կական կեանքով . . .

— Մի այդպիսի բախտ , որ ժառանգել է նա , ամենեւին
նախանձելի չէ , պատասխանեց Արամեանը , որովհետեւ Վա-
սակները միշտ շահում են ոսկի :

— Իրաւ, նախանձելի չէ, բայց մի... .

— Մի՞ թէ... այլապէս չէ՞ր կարելի ապրել:

— Այո՛, մենք կարող ենք ապրել, եթէ ուսած լինէինք կոշկահարութիւն կամ դերձակութիւն, բայց մենք սպառնացինք մեր ասոջութիւնը եւ լցրինք մեր գլուխը չոր ու ցամաք ուսմամբ... .

— Բայց մենք երբէք չենք ցանկանալ վասակութիւն գործել՝ մեծաքանակ ուճիկ ստանալու համար. մենք կը մնանք ճշմարիտ հայ, որպէս ենք, կը սիրենք մեր ազգը եւ կը կերակրուենք նրա սեղանից, պատասխանեց Արամեանը դրականապէս:

— Այդ կը լինէր, եթէ Հայ ազգը կատարէր իւր Փրկչի խօսքը. թէ «պէտք չէ իւր մանուկներէ հացը ձգել օտարներին»: Բայց դժբախտաբար մենք մեր ազգի սեղանի փշրանքներից էլ դուրի ենք մնում:

— Ի՞նչ ենք դործում մենք ազգի համար, որ նա պարտաւորուի մեզ հաց տալ:

— Իրաւ, մենք դեռ ոչինչ չենք դործել եւ իմ ցանկութիւնս այդ չէ, որ մենք Կօջօրում, մեր սենեակում ցիգար ծխենք եւ ազգից ձրի հաց պահանջենք. այո՛, հարկաւոր է նախ եւ առաջ դործել: Բայց գլխաւոր հարցն այստեղ այն է, որ մեր ազգը այնպիսի սարսափելի կերպով մոլորուած է դէպի օտարազգիք, որ իւր օգուտը տալիս է օտարներին: Օրինակի համար՝ դու բաց արա ուսումնարան օրիորդաց համար, որի մասին շատ անգամ յայտնել ես քո ցանկութիւնը. հաւատացնում եմ քեզ, որ ոչ ոք չի յօժարիլ քեզ աշակերտուհի յանձնել, թէկուզ Հոգին Սուրբ լինիս եւ մի բողբոջում նրանց գլուխը ուսմամբ լցնես: Բայց մի մազամ Զիւարթին հարիւրներով աղջիկ կը յանձնեն, թէեւ նրա ուսումնարանում աղջիկները մտնում եւ դուրս են գալիս դատարի գլխով: Բայց գլխաւոր բանն այն է, որ այս դէպ-

քում եւս ծնողները իրանց ծուռը հաշուի մէջ դարձեալ չեն սխալուում. նրանց ցանկութիւնը իրանց աղջկերանց բան սովորեցնելը չէ, այլ նրանք միայն մի քանի հաշիւներ աչքի առջեւ ունին. մին՝ որ մադամի անունը նրանց ականջներին դիւր է դալիս, մին էլ՝ որ իրանց աղջիկը մարդու տալու միջոցին մօցիքուլը փեսին գրաւելու համար իւր բոլոր ճարպկութիւնը դորձ դնելուց յետոյ, թէ «էհէնց սիրուն է աղջիկը, էհէնց խելօք է աղջիկը, էսքան փուղ ունէ, էսքան բաժինք ունէ» — յետոյ կ'աւելացնէ, — «մադամ Զիւարօղի մօտ ուտում է առի, տանցօվատ, պիանօ, ոսնակ ջրի պէս սերտած ունէ...»:

— Ուրեմն ի՞նչ պէտք է արած, հարցրեց մի փոքր համոզուելով Արամեանը:

— Պէտք է ազդի աչքերը բաց անել, նա զեռ կոյր է, մինչեւ որ նա ճանաչէ, թէ ո՛վ է իւր արժանաւոր մշակը, որի աշխատութիւնները պարտաւոր է վարձատրել:

ԻԷ

Նոյն օրուայ երեկոյան պահուն Արամեանը միայնակ դնաց Հացի-Գէլինց մօտ, նրան ընդունեցին խիստ քաղցրութեամբ, մանաւանդ օր. Սոֆին մի քանի նոր ցոյցերով յայտնեց իւր բարեկամական անկեղծութիւնը դէպի նա: Բայց Արամեանը երկար չմնաց նրանց մօտ եւ յայտնելով, թէ իւր ընկերը միայնակ է, շուտով հեռացաւ: Տ. Բարբաբէն եւ օր. Սոֆին նրանից խնդրեցին, որ միւս օրուայ առաւօտը իւր ընկերօջը բերէ իրանց հետ ծանօթացնելու: Արամեանը խոստացաւ:

Միւս օրուայ առաւօտեան պահուն Քաջբերունին եւ Արամեանը հասարակ ամբարային հազուատով դնացին Հացի-Գէլինց տուն: Նոր հիւրի ներկայանալու եւ ծանօթանալու

ծէար մի քանի սովորական բառերով, աջ ու ահեակ գլուխ տայր վերջանալուց յետոյ, նրանք նստեցին :

Օր. Սոֆին այդ օրը հաղնուած էր պարզ, բայց շատ ճաշակով եւ մայելուէ՛ նա համեստութեամբ նստած էր իւր մօր մօտ :

Տեսնելով Քաջբերունուն, օր. Սոֆին զգաց իւր սխալը : Արամեանից լսելով փիլիսոփայութեան եւ իրաւաբանութեան մագիստրոսի անունը, նա յոյս ունէր տեսնել մի որեւէ գերբնական էակ : Բայց Քաջբերունու զէմքի կոշտ դժադրութիւնը, նրա ստոն եւ անփոյթ վարուեցողութիւնը, որոնք մանուկ կուտի աչքում հասնում էին մինչեւ անքաղաքավարութեան, հաճելի տպաւորութիւն չգործեցին նրա սրտին : Այնուամենայնիւ նա չէր կարողանում հասկանալ, թէ ի՛նչ կարող էր դանուել մի այդպիսի տարապայման գոյութեան մէջ այնպէս հրաշալի, որ պատճառ էր տուել Արամեանին, ինչպէս յայտնի էր, պաշտել նրան, որպէս մի գերբնական էակի :

Նրանց առաջին խօսակցութիւնը եղան, ինչպէս սովորաբար լինում է, ոչ այնքան նշանաւոր : Տ. Բարբաբէն հարցրեց Քաջբերունուց քաղաքի տոթի եւ զովութեան մասին եւ ժողովրդի զուարճութիւններից եւ նոր ու հին լուրերից : Քաջբերունին տաղտկութեամբ մի քանի հատ ու կտոր պատասխաններ տուաւ :

Օրինորդ Սոֆին թէյի սեղանի մօտ իւր հիւրերին թէյ էր մատակարարում :

Արամեանը, որպէս այս տան նախածանօթը, աւելի ընտանեբար էր վարվում. նա միւսներից ծածուկ մի քանի նկատողութիւններ արաւ օրինորդին, որով կամենում էր ուղղել նրա սխալը : Երեւում էր, որ նա ցանկանում էր Հայր-Պէլենց գերդաստանական շրջանը ներկայացնել իւր ընկերին աւելի գեղայարմար կերպարանքով :

Թէ՛յ խմելը վերջացաւ :

S. Բարբարէն մտածեց իւր աղջկան հանդէս դուրս բերել, երբ նկատեց, որ նրա վրայ ուշադրութիւն չէին դարձնում : Նա խնդրեց աղջկան, որ մի փոքր նուագէ դաշնամուրի վրայ : Օրիորդը կատարեց մօր խնդիրը :

Քաջբերունին սկսաւ ուշադրութիւն չդարձնել նրա նուագելուն, երբ չէնց առաջին անգամից նշմարեց որ լաւ չէ նուագում : Օրիորդը վերջացրեց նուագելը, իսկ Քաջբերունին յայտնեց իւր նկատողութիւնները նրա նուագելու մասին, որոնք բոլորովին վշտացրին օրիորդի ինքնասիրութիւնը : Այսուամենայնիւ մայրը նրան ծածուկ նշանացի աբաւ զբաղեցնելու հիւրերին :

Օրիորդը նախ սկսաւ հարցնել Պետերբուրգից. օրինակ՝ քանի՞ թատրոն կայ այնտեղ. կայսրը ո՞ր թատրոնն է դնում. Նեւսկի պրոսպեկտը քա՞նի վերստ երկարութիւն ունի. այնտեղի այգիքը եւ զբօսարանները գեղեցի՞կ են : Այնուհետեւ նա խօսքը դարձրեց համալսարանի վրայ եւ հարցրեց ուսանողների կեանքից, հարցրեց, թէ՛ կա՞ն այնտեղ աղջիկ ուսանողներ եւ այդ աղջիկ ուսանողների մէջ կա՞ն նշանաւոր եւ տաղանդաւոր օրիորդներ : Այս հարցմունքներից յետոյ նա խօսակցութեան մէջ ներս բերաւ «կանանց ազատութեան հարցը» : Լսելով Քաջբերունու դալու մասին, մի քանի օր նա եռանդով կարդում էր Մտուարդ Միլլը եւ զինաւորելով իւր միտքը մի քանի փաստերով, նա սկսաւ տաքութեամբ պաշտպանել կանանց լիակատար ազատութիւնն ու հաւասարութիւնը տղամարդկանց հետ :

Քաջբերունին առաջ չուղեց այդ խնդրի վրայ խօսել օրիորդի հետ, մտածելով որ այդ հարցը բարձր է նրա հակացողութիւնից, բայց կամենալով նրան դուրս բերել այդ տեսակ մտաւոր մոլորութիւնից, ասաց .

— Աւելի լաւ է, որ դուք ձեր միտքը զազափարական

երպոյնքով չհրատարակէք, այլ ուսումնասիրէք կեանքի իրական կողմերը:

— Եւրեջէք, պարոն, պատասխանեց օրիորդը. մի՞թէ գտեալփարական երազ կարող է հարմարուիլ այն, որ ես ասում եմ, թէ կանանց դրութիւնը ստրուկի դրութիւն է, եւ նրանց պէտք է հաւասար իրաւունք տալ մարդկային ընկերութեան մէջ:

— Այդ դարձեալ երազ է, խօսեց Քաջբերունին սառնութեամբ, որովհետեւ քանի կէնը բարոյսպէս եւ իմացականապէս լաւ չէ կրթուած ի բրեւէ մարդ, նա չունի իրաւունք պահանջելու ձեր ասած ազատութիւնը կամ հաւասարութիւնը:

— Կրթութիւնը ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ նրա համար, երբ նա ճշուած է տղամարդու բռնակալութեան ներքոյ:

— Կրթութիւնը կը տայ նրան իրաւունք ներս մտնել հասարակական կեանքը որպէս մարդ, իւր կատարեալ ազատութեամբ. բայց կանացի սեռը, մանաւանդ արեւելեան ազգերի մէջ զեռ շատ անկիրթ է: Պէտք է աշխատել կրթել գրանց:

Օրիորդ Սոփին վշտացաւ եւ կարմրեցաւ:

Քաջբերունին նշմարելով նրա վրդովմունքը խօսեց.

— Արդարեւ, կանանց սեռի հարէմն երի մէջ վաղուած դրութիւնը վաղուց ցոյց տուաւ լուսաւոր աշխարհին գրա վատ հետեւանքները: Այսուամենայնիւ ես չեմ կարող համաձայնել, որ կանայք, մանաւանդ մեր ազգի մէջ, բոլորովին արձակ եւ ազատ հանդէս դուրս գան իբրեւ հասարակական ընկերութեան անդամներ, երբ նրանք այդ մասին ամենեւին պատրաստուած չեն. նրանք զեռ եւս շատ պէտք է ուսանեն:

• Օր. Սոփին ոչինչ չպատասխանեց: Քաջբերունին նըշ-

մարեց, որ իւր նկատողութիւնները վատ տպաւորութիւն գործեցին օրիորդի վրայ, նա խօսքը կտրեց եւ դարձաւ զէպի տ. Բարբարէն:

Նոյն միջոցին օրիորդ Սոֆին, հազիւ լսելի ձայնով ասաց Արամեանին.

— Ձեր ընկերը խիստ անխիղճ է զէպի կանացի սեռը. բայց ցանկալի էր ինձ դիտենալ, թէ ի՞նչպէս է նայում նա մանուկ օրիորդներէ վրայ:

— Դուք արդէն նկատում էք նրա սառնասրտութիւնը, պատասխանեց Արամեանը:

Տ. Բարբարէն, իբրեւ անուս եւ հասարակ զերզատանի աղջիկ, զուրկ էր այն հնարներէց, որով մի բարեկիրթ տանտիկին կարող էր զբաղեցնել իւր հիւրերին: Այդ պատճառով նա առաւելապէս աշխատում էր իւր հիւրերին հրապուրել քաղցրաւենիքով, դրա համար, նա հրամայեց թէից յետոյ մատուցանել թարմ միրգ եւ զանազան տեսակ մուրաբաներ: Բայց նրանք երկար չնստեցին, այլ մի քանի րոպէից յետոյ հեռացան: Նրանց ճանապարհ գնելու ժամանակ օր. Սոֆին բռնեց Քաջբերունու ձեռքը եւ խնդրեց նրանից պատուել իրանց իւր յաճախակի այցելութեամբ, աւելացնելով թէ նրա կարծիքներին բոլորովին համակրեց ինքը:

— Ի՞նչպէս թուեցաւ քեզ այդ օրիորդը, հարցրեց Արամեանը Քաջբերունուց, երբ նրանք հասան իրանց կացարանը:

— Մի պաճուճեալ խրճիկ, ուրիշ ոչինչ, պատասխանեց Քաջբերունին զէմքը խոթողով:

— Բայց տեսա՞ր, ի՞նչքան օժտուած է նա բնութիւնից:

— Ուրեմն դու եւս Դիաչկովի նման կոչիր նրան զեղեկութեան զիցուհի:

— Ձէ կարելի ուրանալ, թէ նա զեղեցիկ է:

— Գիցցուք թէ գեղեցիկ է, բայց ի՞նչ կարելի է յուսուլ նրանից :

— Շատ բան, պատասխանեց Արամեանը :

— Այո՛, կարելի է հաստատ յոյս ունենալ, թէ նա կարող է լինել հրապուրիչ սիրուհի իւր տարփածուի համար, բայց ոչ երբէք ժրագլուխ տանտիկին եւ հաւատարիմ ամուսին :

— Նա ի՞նչ մեղաւոր է, կրկնեց Արամեանը :

— Ես գիտեմ որ մեղաւոր չէ այդ Աստուծոյ դատուկը, այլ մեղաւոր են նրա յիմար ծնողները եւ իւր կրթութիւնը, որ այնպէս կեղծել են նրան :

— Նայելով այդ հանդամանքներին, ասաց Արամեանը, գարձեալ թող շատ ապրին մեր Հայաստանի պարզ եւ չքնադպեղ օրիորդները. նրանք թէեւ մի գունդ միս են, նրանք թէեւ կրթութիւնից զուրկ են խոսքաւ, բայց նրանց բարոյականութիւնը մնացել է անկոծ եւ անխարզախ, այդ պատճառով եւ նրանք լինում են հաւատարիմ ամուսիններ եւ աշխատասէր տանտիկիններ :

Եւ այնուհետեւ նրանք երկար ու երկար սկսան խօսել կանացի սեռի դատարարակութեան վրայ :

Բայց բոլորովին այլ խորհրդածութեան մէջ էր օր. Սոֆին : Նա ոչինչ պակասութիւն չէր նկատում իւր թէ ուսման եւ թէ կրթութեան մէջ. նա իւր գեղեցիկութեամբ այնքան հպարտացած էր, որ կարծում էր, թէ կ'իշխէ բոլոր ազամարդկանց վրայ : Եւ միտ բերելով Քաջբերունու սառնասրբութիւնը դէպի ինքը եւ նրա հերքողական պատասխանները իւր կարծիքների դէմ, չէր կարողանում ոչինչ կերպով համոզուել, թէ այդպիսի վարմունքը եւ այդպիսի վէճը կարող էին առողջ պատողութեան ծնունդ լինել :

Բայց Արամեանի փափուկ բնաւորութիւնը, նրա քաղցր խօսակցութիւնը եւ շնորհալի վարմունքը, խելագարութեան

շափ հիացրել էին ակտաբորբոք օրիորդին և ևս սպասում էր նրա մէջ գտնել իւր սրտի ցանկալին :

Բոլորովին այլ էր տ. Բարբարէի մտածութիւնները. նա շատ ուրախ էր մանուկ տղամարդերի այցելութեամբ, նա շատ գոհ էր իւր դասեր խօսակցութիւնից նրանց հետ, թէև իրան բոլորովին անհասկանալի էր այդ : Միևնոյն ժամանակ նրա գլխի մէջ պտըտվում էր մի այսպիսի խորհուրդ՝ պսակել իւր դուստրը մայրաքաղաքի այդ բարեկիրթ ուսանողներից միին հետ :

Ի՞նչ

Կօջօրի սառն, հովասուն օդը և և խոնաւ կլիման, փոխանակ ուղղելու Քաջբերունու առողջութիւնը, խիստ վատ ներգործութիւն արեցին նրա վրայ : Նրա աւերուած թոքերը դարձեալ ցաւազարուեցան և ևս սկսաւ ծանր կերպով հագալ : Նա փակուած էր իւր կացարանում և ամենեւին դուրս չէր դնում տանից :

Արամեանը խիստ տխուր էր սիրելի ընկերոջ տկարութեան համար և ամբողջ օրը շէր հեռանում նրա մօտից : Այդ պատճառով մի շաբաթից աւելի էր նա չէր եղած Հացի-^{Գր}թէլինց մօտ :

Մի գիշեր նա երկար նստած Քաջբերունու մահճակալի մօտ, դառն մտածութեան մէջ էր. հիւանդն անպազար հագում էր և յօգւոց հանում : Արամեանը նշմարելով որ նա քնեց, յուշիկ, ոտքի մասնների վրայ հեռացաւ նրա քնարանից : Նա դուրս եկաւ բակը մի փոքր թարմ օդ շնչելու :

Հիանալի լուսնիկայ գիշեր էր : Բոլոր շրջակայքում թրթրում էր ամառային եղանակը տաք, մանկական, ակտաբորբոք կենսութիւն : Անցնելով Հացի-Գիթէլինց կացարանի մօտից, յանկարծ լսեց նա քնքուշ ձայն. — սլ. վահէ :

Մին էլ երեւան ելաւ օրիորդ Սոֆիի վայելչահասակ էր պարանքը, որ նոյն բողէին նմանում էր գիշերային յաւերժահարսի :

— Օր. Սոֆի, այդ դո՞ւք էք, մօտեցաւ նրան Արամեանը :

— Այո՛, պատասխանեց նա :

— Այս խորին գիշերային պահո՞ւն :

— Այնպէս դուրս եկայ... ևս ինքս չգիտենալով թէ ինչո՞ւ համար...

Արամեանը տեսաւ որ նրա գէմքը այնպէս գունատուած էր, ինչպէս սառն մարմարիօն ևւ նրա գիսակները խառնուած էին ևւ աչքերը վառվում էին կատաղի կրակով :

— Դուք այլևս չէք երեւում, պ. Վահէ, հարցրեց օրիորդը :

— Ընկերիս հիւանդութիւնը չէ թողնում ինձ տանից հեռանալ, պատասխանեց Արամեանը :

— Այժմ ի՞նչպէս է նա :

— Լաւ չէ՛ :

— Վա՛յ, ախոս՛, ի՞նչ է նրա հիւանդութիւնը :

— Բարակացաւ :

— Վաղո՞ւց է :

— Այո՛, վաղուց, համալսարանում ևւս ունէր :

Օրիորդը մտածման մէջ ընկաւ : Կարծես այդ լուրը արեւորեց նրան :

— Տեսնո՞ւմ էք, պ. Վահէ, ի՞նչ հիւանալի գիշեր է, խօսեց նա բողէական լուսթիւնից յետոյ :

— Այո՛, հիւանալի է, պատասխանեց Արամեանը :

— Պ. Վահէ, բարի եղէք, գնանք մի փոքր շրջելու. չէ՞ որ դուք ևւս սիրում էք լուսնկայ գիշերը :

— Ես սիրում եմ, միայն այժմ խիստ ուշ է. գիտէ՞ք, ժամը երկուսն է :

— Խնդրում եմ... գնանք. ձեզ ասելու բաներ ունիմ, այսեղից մի քիչ հեռանանք...:

Արամեանը յակամայից համաձայնեցաւ:

— Դէպի ո՞ւր, հարցրեց նա:

— Դէպի անտառ, պատասխանեց օրիորդը. տուէ՛ք ինձ թեւ:

Արամեանը տուաւ նրան իւր թեւը եւ նրանք սկսան դիմել դէպի անտառ:

— Ամբողջ շաբաթ է, որ դուք չէք եղել մեզ մօտ, ասաց օրիորդը:

— Այո՛, բայց ինձ անկարելի էր դալ, պատասխանեց Արամեանը:

— Ես շատ ցանկանում էի ձեզ տեսնել:

— Դուք ինքներդ կարող էիք դալ մեզ մօտ, երբ ցանկանում էիք:

— Քանի անգամ ես կամեցայ դալ, միայն մտածեցի, դուցէ կը բարկացնէի ընկերոջդ, չէ՞ որ նա այնպէս խստասիրտ է:

— Ո՛չ, ընդհակառակն՝ նա խիստ բարի տղայ է, նա ուրախ կը լինէր, թէ դուք նրա մօտ գայիք:

— Ուրեմն առաւօտեան ես կը դամ նրան տեսնելու: Քաջըրուծնու հիւանդութիւնը ինչի՞ց առաջացաւ:

— Անհանդիստ պարագմունքից, եւ մի քանի զժրախտութիւններից... նրա կեանքը միշտ կապակից է եղել թշուառութիւնների հետ:

— Ափսո՛ս... կրկնեց օրիորդը:

Այդպէս տաքացած խօսակցութեամբ նրանք բաւական հեռացան իրանց բնակութիւնից, եւ օրիորդը նկատեց, որ իրանք անտառումն են:

— Ես յոգնեցայ, Վահէ, մի փոքր հանգստանանք այստեղ, ասաց նա:

Նրանք նստեցին մետաքսանման փափուկ խոտերի վրայ : Արամեանը պատկեցաւ, իսկ Սոֆին խիստ մօտ նստեց նրա մօտ եւ իւր թեւով կրթնեց նրա կրծքին :

Այս դրութեան մէջ, անշարժ եւ լուռ մնացին նրանք մի քանի րոպէ, մինչեւ օրիորդն ասաց .

— Վաճէ, տուր ինձ ձեռքդ :

Արամեանը տուաւ նրան իւր ձեռքը :

Օրիորդը բռնեց նրան իւր ափերի մէջ :

— Մ'ըքան սառն է քո ձեռքը, ասաց նա :

— Այո՛, սառն է, պատասխանեց Արամեանը :

— Թո՛ւյլ տուր ես նրան տաքացնեմ ծոցիս մէջ :

— Կարող ես :

Եւ օրիորդը նրա ձեռքը սեղմեց իւր փափուկ կրծքի վրայ, որ նոյն րոպէին սաստիկ կերպով զարկում էր ինչ-պէս արկիոճեալ ծով :

— Այժմ տաքացա՞ւ, Հարցրեց օրիորդը :

— Ես ոչինչ չեմ գիտում, պատասխանեց նրան Արամեանը :

— Այո՛, դու անզղայ ես, պատասխանեց օրիորդը . րոպե շօշափի՛ր կուրծքս :

Արամեանը ձեռքը դրեց նրա սրտի վրայ :

— Քո սիրտը սաստիկ կերպով զարկում է, պատասխանեց նա :

— Այդտեղ անհանդստութիւն կայ, այնպէս չէ՞, Հարցրեց օրիորդը :

— Այո՛, դու վրդովուած ես :

Օրիորդը ոչինչ չպատասխանեց . երկու կողմից եւս սիրից բողբոջեց լուսթիւն :

— Վաճէ՛, այնպէս չէ՞, ես խիստ անհամեստ եմ, Հարցրեց օրիորդը նրա ձեռքը հանելով իւր ծոցից :

— Ես այդպիսի կարծիք չունիմ քո մասին, պատասխանեց Արամեանը:

— Դու այդպէս ասելով միայն չես կամենում վշտացնել ինձ, բայց ես զգում եմ, որ ոչ միայն անհամեստ եմ, այլև յիմար, ցնորուած...:

Արամեանը ոչինչ չպատասխանեց նրան, միայն լսեց նրա դառն հեկեկանքը:

— Ինչո՞ւ այդպէս, Սոֆի, նրա ձեռքը բռնելով հարցրեց Արամեանը, եւ նոյն բոսկին նստեց պառկած տեղից:

— Վահէ՛, խօսեց նա, ներքի՛ր իմ անհամեստութեանը, պատճառը որ դու այնքան բարի ես... իսկ ես՝ թշուառական ամենաչինչին էակ եմ... ես զգում եմ իմ բոլոր ոչնչութիւնը քո առջեւ... արդարեւ, ես արժանի չեմ քեզ... միայն դու ներքի՛ր ինձ ասեմ, թէ «սիրում եմ քեզ»:

— Դու ինձ սիրում ե՞ս, հարցրեց նոյնպէս վրդովմունքով Արամեանը:

— Այո՛, պատասխանեց օրիորդը, չզաղարելով լաց լի նեղուց:

Սրբազան խոսվութիւնը տիրեց Արամեանին, եւ նա յափշտակուեցաւ սքանչելի հոգեզմայլութեամբ, երբ նրա ականջներին զարկեցին մոզական խօսքի վերջին հնչիւնը՝ այո՛:

— Դու սիրո՞ւմ ես ինձ... ուրեմն թո՛յլ տուր համբուրեմ քեզ, ասաց նա ուրախութեամբ:

Օրիորդը փարուեց նրա պարանոցով:

Մի քանի բոսկ տիրեց խորհրդաւոր լռութիւն...:

— Այժմ դնանք, ասաց օրիորդը, որպէս թէ սթափուելով իւր մտաւոր արբեցութիւնից:

— Գնանք, կրկնեց Արամեանը եւ վերկացաւ:

Օրիորդը նրա թեւն առաւ. նա իրան բուսական յոգնած

էր զգում. նա գնում էր Արամեանի կողքից թոյլ եւ անհաւասար քայլերով :

Ճանապարհին ասաց օրիորդը .

— Այժմ կ'ասե՞ս, թէ դու եւս սիրում ես ինձ :

— Սիրում եմ, պատասխանեց Արամեանը :

— Այժմ ես կարող եմ կոչուել քո կիներ, այնպէս

չէ՞, կրկնեց օրիորդը :

— Խնդրում եմ, Սոֆի, չլիշեւ ինձ այդ . . . :

— Այդ բոլոր . . . :

— Խնդրում եմ, չլքողովել ինձ :

— Եւ դու չե՞ս խղճալու ինձ :

— Ես արդէն ասացի, թէ սիրում եմ քեզ. այդ բաւական է :

— Այդ բաւական չէ՛ . . . :

— Աս այժմ այլ խօսք չեմ կարող քեզ ասել, պատասխանեց Արամեանը եւ լռեց :

Դարձեալ արտասուք երեւեցաւ օրիորդի աչքերում :

Երկար նրանք գնում էին. երկու կողմից եւս տիրում էր խորին լուսթիւն, մինչեւ նրանք հասան իրանց կացարանին : Երբ կամենում էին բաժանուել, Արամեանը զբկեց նրան եւ կրկին համբուրելով ասաց .

— Իմ կեանքումս ոչ մի օրիորդ չէր լսած իմ բերանից՝ «սիրում եմ քեզ» խօսքը, բայց ես զոհեցի դրան քեզ, այդքանով մենք երկուքս կարող ենք լինել բախտաւոր . . .

Օրիորդը նոյնպէս զբկեց եւ համբուրեց նրան. նրանք բաժանուեցան :

Առաւօտեան աստղը վաղուց շողշողում էր արեւելքում եւ թոչունները երգում էին իրանց վաղորդեան երգը :

Մանելով իւր անկողինը, օրիորդը այլեւս չկարողացաւ քնել : Հազարաւոր մտածմունքներ խոտովում էին նրան : Նա զգում էր Արամեանի ձեռքի առաջին շօշափումը իւր ծոցի

մէջ. նա զգում էր նրա ջերմ համբոյրները իւր թշերի վրայ, եւ այլեւս ուրիշ բան չէր զգում նա...: Մի քանի ժամ այսպէս նրա երեւակայութիւնը վառուած էր հրապուրիչ երեւոյթներով եւ նա անքուն մնաց, մինչեւ լուսարացին տրեց նրա յողնած անդամներին քաղցրիկ քունը:

Արամեանը վերադառնալով իւր կացարանը նախ առանց ձայն հանելու մտաւ Քաջբերունու մօտ եւ նկատեց, որ նա հանդիստ քնած է, յետոյ դարձաւ իւր քնարանը: Նա մտաւ անկողին, բայց քունը մօտ չեկաւ նրա աչերին: Մի կէրք, որ աւելի նման էր ամօթանքի եւ զղջման, չարաչար տանջում էր նրան. «Այս ի՞նչ գործեցիք»... ասաց նա, եւ միևնոյն բողբոջի զգաց իւր խղճի խայթը:

ԻԹ

Առաւօտեան Արամեանը ծուլանում էր վեր կենալ իւր անկողնից, բայց երբ նա լսեց միւս սենեակից Քաջբերունու ծանր հազը, խեղոյն վեր թռաւ անկողնից եւ գիշերազգեստով մտաւ ընկերոջ քնարանը: Նա գտաւ նրան վատ գրութեան մէջ:

Քաջբերունին տեսնելով նրան ասաց.

— Վահէ, այսօր ինձ համար մի սայլակ վարձիր, ես պիտի քաղաք գնամ. այնտեղ դոնեւ երկու բան մօտ կը լինի ինձ — բժիշկ եւ գերեզմանատուն. բայց այստեղ երկուսից եւս զրկուած եմ:

Արամեանը շատ աշխատեց համոզել նրան եւ յետաձգել նրա գնալը, բայց հնար չեղաւ:

— Դու արդէն կատարել ես քո հիւրասիրական պարտքը, մեզն իմն է, որ երկար չկարողացայ վայելել նրան, ասաց Քաջբերունին:

Տասր ժամին ճանապարհորդական սայլակը կանգնած էր Արամեանի կացարանի դռանը :

Արամեանը իրանց դնալու պատրաստութեան հոգացողութեան մէջ էր : Նա դուրս եկաւ որ մի քանի կարգադրութիւններ անէ եւ մէկէլ յանկարծ դրան շէմի վրայ հանդիպեց օր. Սոֆիին : Նա դունաթափուած էր որպէս մահ :

— Ես ուղիղ քեզ մօտ էի դալիս, Վահէ, ասաց նա :

— Ինձ մօտ, կրկնեց Արամեանը զարմանալով :

— Այո՛ :

— Հրամմեցէ՛ք :

Նրանք ներս մտան Արամեանի սենեակը :

— Դուք զնում է՞ք, հարցրեց օրիորդը նստելով փոքրիկ դահաւորակի ծայրին :

— Գնում ենք, պատասխանեց Արամեանը :

— Ե՞րբ :

— Կարելի է մի ժամից յետոյ :

— Եւ դու զնում էիր առանց ինձ հետ տեսնուելո՞ւ :

— Ես առանց քեզ տեսնելու չէի դնալ :

Օրիորդը հեղիկ նայեց Արամեանի Երեսին՝

— Ի՞նչ պատճառով էք զնում, հարցրեց նա :

— Սմբատի հիւանդութիւնը օր ըստ օրէ վատանում է, հարկաւոր է քաղաքում լինել :

— Մի՞թէ առանց քեզ չէ կարող զնալ :

— Կարող է, միայն ես չեմ կամենում նրան միայնակ թողնել :

— Եւ դու պիտի մնա՞ս նրա մօտ քաղաքում :

— Այո՛, պիտի մնամ հոգ տանելու նրա առողջութեանը :

Վերջին խօսքը ծանր ներդործութիւն ունեցաւ օրիորդի վրայ :

— Եւ դու պիտի թողնես ինձ այստեղ միայնա՞կ, հարցրեց նա սղորմելի կերպով նայելով Արամեանի Երեսին :

— Ի՞նչ արած, այդպէս պատահեցաւ, պատասխանեց Արամեանը:

— Ձէ՞ որ դու ասացիր, թէ սիրում ես ինձ, եւ այժմ կամենում ես միայնակ թողնել ինձ... բոլորովին չմտածելով, թէ ես տիրելու էի առանց քեզ...:

— Ես շատ արհուսում եմ, որ այսպէս շուտ բաժանվում եմ քեզանից, միայն համաձայնիր, որ Սմբատն այժմ առաւել կարօտ է իմ կարեկցութեանը, քան թէ դու. ես նրան նոյնպէս սիրում եմ, ինչպէս իմ դադարափարակից ընկեր, ես չեմ կարող նրանից բաժանուել:

Արամեանի վերջին խօսքերը խիստ զգալի եղան օրիորդին, նա մի քանի րոպէ մտածման մէջ ընկաւ եւ ապա պատասխանեց.

— Այո՛, Սմբատն այժմ առաւելապէս կարօտ է քո կարեկցութեանը քան թէ ես. Վահէ՛, դնա՛, Տէր ընդ քեզ, եւ հո՛գ տար այդ պատուելի տղամարդու առողջութեան մասին. ես չեմ կամենում բաժանել քեզ քո սիրելի ընկերից:

Արամեանին խիստ ազդեց օրիորդի քնքուշ զգացողութիւնը եւ նա մօտեցաւ նրան, դրկեց եւ սեղմեց իւր կրծքի վրայ:

— Հիմա կարելի՞ է պ. Սմբատին տեսնել, հարցրեց օրիորդը:

— Ի՞նչու չէ, կարելի է, պատասխանեց Արամեանը:

— Ես կը կամենայի նրան տեսնել:

— Ուրեմն սպասիր, իմացում տամ:

Արամեանը մտաւ Քաջբերունու սենեակը: Քաջբերունին, փաթաթուած իւր թանձր մուշտակի մէջ, պառկած էր մահճակալի վրայ:

— Օր. Սոֆին կամենում է քեզ տեսնել, ասաց նրան

Արամեանը:

— Ինձ անսխորժ է իմ այժմեան զգուելի կերպարան-

բայ տխրեցնել քնքուշ օրիորդի սիրտը, պատասխանեց նա-
տաս՝ թէ չեմ կարող ընդունել:

— Նա խնդրում է, նա քեզ տեսնելու է եկել:

— Լա՛ւ, թո՛ղ զայ:

Արամեանը դուրս դնաց եւ մի քանի վայրկեանից յետոյ
օրիորդի հետ ներս մտաւ հիւանդի սենեակը:

Սոֆին դնաց բռնեց Քաջբերունու ձեռքը եւ խիստ մօտ
նստեց հիւանդի մահճակալին:

— Հեռո՛ւ նստեցէք, օր. Սոֆի, այժմ անախորժ է ինձ
մօտենալ:

Բայց Սոֆին ամենեւին չչարժուեցաւ իւր տեղից եւ ա-
սաց. — Դուք այժմ եւս այնպէս բարի եւ սիրելի էք, որպէս
ստաջ:

— Ո՛չ, սիրելիս, հիւանդութեան հետ կատակ չի կա-
րելի անել, պատասխանեց Քաջբերունին:

Օրիորդը սկսաւ հարցնել նրա հիւանդութեան մասին,
այնուհետեւ յայտնեց, թէ ինքը շատ տխրում է, որ նրանք
այնպէս շուտ թողնում են ամարանոցը, որովհետեւ նրանց
զբացութիւնը տխրժելի էր իրանց զերդաստանին: Եւ ա-
ւելացրեց մի քանի բարեկամական խօսքեր:

Քաջբերունին կարճ պատասխանեց թէ. — Մենք շատ
հեռու չենք դնում, եթէ այս հազը շուտով չիջնցնէ ինձ ստոր
հողի տակ, մենք դարձեալ կարող ենք միմեանց տեսնել:

Օրիորդը սկսաւ նրան մխիթարել, թէ չպէտք է այդպէս
շուտ յուսահատուել կեանքից եւ խորհուրդ տուաւ նրան
դնալ նիցցա՛:

— Այո՛, եթէ ես փող ունենայի, շատ տեղեր կ'երթայի,
պատասխանեց նա:

Այդ օրիորդը ասաց որ ինքը եւս միտք չունի ամարա-
նոցում երկար մնալու, այլ շուտով քաղաք կը դառնայ, եւ
այնտեղ շուտ-շուտ կ'այցելէ նրան:

Քաջբերունին յայտնեց իւր շնորհակալութիւնը :

Օրինորդը քնքութեամբ սեղմելով հիւանդի ձեռքը, շեռացաւ :

Արամեանը նոյնպէս դուրս եկաւ նրան ճանապարհ ձգելու : Օր. Սոֆին յայտնեց, թէ նրան մի քանի ասելիք ունի. նրանք մտան դարձեալ Արամեանի սենեակը : Սոֆիի դէմքն արտայայտում էր ներքին վրդովմունք :

Արամեանը նստեց դահաւորակի վրայ, իսկ օրինորդը աթոռի վրայ նրա առջեւ նստելով, բռնեց նրա ձեռքը եւ ասաց .

— Իմ այս դիշերուայ վերջին հարցը մնաց առանց պատասխանի, այնպէս չէ՞, հարցրեց նա ուղղակի Արամեանի երեսին նայելով :

— Այո՛, պատասխանեց Արամեանը. բայց ես խնդրեցի, որ դու այդ մասին ոչինչ չհարցնես :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ զանազան հանգամանքներ ստիպում են այդ մասին լուել :

— Բայց իմ կարծիքով, ուր կայ ճշմարիտ սէր, այնտեղ ոչինչ հանգամանքներ տեղ չպէտք է ունենան :

Արամեանը դժուար դրութեան մէջ էր :

— Մի՞թէ սիրելու համար դու կարծում ես, թէ անպատճառ պէտք է կոչուել ամուսին, հարցրեց Արամեանը :

— Ես այդպէս չեմ կարծում, պատասխանեց օրինորդը պինդ ձայնով. ես մինչեւ անդամ հերքում եմ ամուսնութիւնը. ես կը բաւականանամ միմիայն քո սիրով, եթէ դու իսկապէս խոստովանես, թէ սիրում ես ինձ :

— Դու կարող ես բոլորովին հաւատալ, թէ ես սիրում եմ քեզ :

— Ուրեմն թո՛ւյլ տուր համբուրեմ քեզ, ասաց օրինորդը :

Նրանք գրկախառնուեցան... և մի քանի բոպէ նրանք
չէին բաժանուիւմ միմեանցից... :

Օրիորդը բոլորովին շտապունած դուրս եկաւ Արա-
մեանի սենեակից :

Ճանապարհին նրան հանդիպեց Մայիլովը, պատանին
գլխի տուաւ նրան, բայց օրիորդը ամենեւին չնշմարեց և
անցաւ :

Գնալով իրանց տուն, օրիորդն ուղղակի ներս մտաւ իւր
սենեակը. նա բոլորովին դռն էր իւր վիճակից, նրա դէմքն
արտայայտում էր անսղառ ուրախութիւն, և նա թռչնակի
նման հանդիսաւ չէր կարողանում նստել, այլ երգելով թռչկո-
տում էր այս կողմը, այն կողմը :

I.

Դիաչկովը լսելով թէ Արամեանն ու Քաջբերունին
գնացել են քաղաք, խկոյն վարձեց նրանց կացարանը, և
այդպիսով մերձաւոր դրացի դարձաւ Հացի-Գէլինց : Այնու-
հետեւ նա սկսաւ հնարքներ բանացնել այդ դերդաստանի հետ
ծանօթանալու, և շուտով նա հասաւ իւր նպատակին, երբ
մի օր ա. Բարբարէն ինքը հրաւիրեց նրան իրանց մօտ
ճաշելու :

Դիաչկովը յայտնուեցաւ ճիշտ պայմանեալ ժամին : Նա
հարմուած էր այնպէս պճնուած, կարծես երեւելի տօն էր և
նա նոր էր վերադառնում Նեւակի պրօսպեկտից :

Դիաչկովը՝ հայրական ահագին ժառանգութիւնը մայ-
րաքաղաքում գոհելով թատրոնների, բալերի, կրօժօկ-
ների և այլ շուպլութեան ու ղեղխութեան կուռքերին, ոչինչ
բան չէր շահել, այլ միայն ճշտութեամբ ուսել էր, թէ ինչ-
պէս պէտք է վարուել հասարակական կեանքում, այսինքն՝
ինչպէս պէտք է հանդիպել մանուկ օրիորդներին, կամ ման-

կահասակ տիկիններին, ինչպէս նրանց գլուխ տալ, խօսք կցել զուարճախօսել, սեթեւեթեւ. մի խօսքով՝ նա գիտէր իւր դերը խիստ հմուտ կերպով խաղալ կեանքի ամէն մի հանդամանքում :

Նա խիստ քաղաքավարի կերպով ներկայացաւ Հայր-Գէլենց գերդաստանին. նախ եւ առաջ մօտեցաւ տ. Բարբարէին եւ համբուրեց նրա ձեռքը, յետոյ շնորհալի կերպով դարձաւ դէպի օրիորդ Սոֆին՝ «բօն ժուս, մաղբմուտկէլ Սոֆի» ասելով, ապա ձեռք տուաւ Լիզային եւ Ելենային, որոնց վրայ նրանց առաջին հիւրերը ամենեւին ուշադրութիւն չէին դարձնում :

Դիաչկովի քաղաքավարի վարուցողութիւնը առաջին օրից տպաւորութիւն գործեց տ. Բարբարէի վրայ :

Դիաչկովը՝ իւր ընդունելութեան առաջին խօսքերը սերտած գեղեցկախօսութեամբ արտայայտելուց յետոյ ասաց. — Այժմ ես ձեր դրացութեամբ կարող եմ բոլորովին երջանիկ համարուել, մտածելով թէ ես կարող էի այնքան բախտաւոր լինել, շահելով ձեր բարի համարումը... : Ա՛խ, ի՞նչ էր իմ առաջին կացարանը. կատարեալ դժոխք. ո՛չ ոք չկար ժամանակ անցկացնելու, թէ եւ ինձ մերձակայ էին կենում գեներալ Կ...ի եւ կնեպ Ե...ի գերդաստանները, բայց ի՞նչ ախորժանք նրանցից... ճշմարիտն ասած, ես սաստիկ ատում եմ այդ ազնուականներին, շնայելով որ նրանք ինձ յարգում էին եւ ո՛չ մի օր առանց ինձ ճաշ եւ ընթրիք չէին անում : Բայց ի՞նչ նպատակով յաճախել այդպիսի գերդաստանների մօտ. գնում ես, այո՛, քեզ ընդունում են շատ սիրով. նստում ես, եւ ահա ծերունի գեներալն սկսում է շողակրատիլ իձր պատերազմական գործունէութիւնից՝ սկսեալ Պասկևիչից, Արստ Միրզայից հասնում է Վօրօնցովը, առանց ժամանակ տալու իւր յաջիկաներին մի բան խօսելու : Նրանք՝ խղճալիբը տհաճութիւնից տոչորվում են, իրանց մտքի

մէջ անիծելով իրանց դատարկարան հօրը: Իսկ կնեազը աւելի հին ժամանակից է սկսում՝ Ախտա Շահից, Հերակլից եւ դալիս մինչեւ Շամիրը: Այժմ երեւակայեցէք, կարելի՞ է այդպիսի փրամած կոճղերի հետ ժամանակ անցկացնել:

S. Բարբարէն եւ օր. Սոֆին ծիծաղեցին, պատասխանելով թէ բոլորովին ուղիղ է նրա նկատողութիւնը:

— Աւհասարակ, շարունակեց Դիաչկովը, այտեղ սալու եւ կատարեալ քաղաքակրթուած ընտանիքներ, ուր կարելի լինէր զգալ ճշմարիտ հիւրասիրութեան համն ու հոտը. — ինչքեմ իմ նկատմունք ձեզ վրայ չառնէք, որովհետեւ ձեր ընտանիքը այդ բանում կատարեալ բացառութիւն է կազմում: Բայց Պետերբուրգում հիանալի դերդաստաններ կան, արժէ նրանց հետ ժամանակ անցկացնել:

Եւ մայր ու աղջիկ սկսան հարցնել Դիաչկովից Պետերբուրգի կեանքից:

Դիաչկովը պատմեց երկար ու երկար, առանց լռելու. բառերը, որոնց կամաւ տալիս էր նա մի առանձին մուշկիական արտահնչութիւն, կարծես թէ առնելու էին նրա բերանից: Եւ ամէն խօսքի վերջաւորութիւնը բերում էր իւր վրայ՝ ցոյց տալով թէ ինքը ժամանակով մայրաքաղաքում եղած է հասարակական խօսակցութեան առարկայ:

Բայց երբ նրանից հարցրին, թէ այժմ ինչո՞վ է պարապում, պատասխանեց.

— Աւարտելուց յետոյ ինձ նշանակեցին Պետերբուրգում մի մեծ թաղի միրավոյ սուղեա, ես ատեցի այդ ստոր պաշտօնը եւ եկայ Կաւկազ, դուցէ բարձր տեղեր գտնելու: Այստեղ օիրուժնիյ սուղում անդամի տեղ եւ առաջարկում ինձ, բայց ես դարձեալ չեմ կամենում ստորացնել ինձ... նախագահի պաշտօնը... այն եւս յսկամայից, կարելի է համաձայնել... կամ պարտաւում անդամ... պրօկուրօր, եւ կամ մի այդպիսի բան... թէ եւ ծառայութիւնն աւհասարակ ինձ

անտանելի է, որովհետեւ ես սիրում եմ ազատ կեանք: Այլև
իմ գլխաւոր նպատակն այն է որ զնամ Փարիզ, մի քանի
տարի այնտեղ մնամ, յետոյ զնամ Պետերբուրգ իրաւարանա-
կան պրոֆեսորի քննութիւն տամ: Ինձ առաւել սիրելի է
համալսարանում պրոֆեսորի ամբիոնը, քան պալատում
նախադահի աթոռը: Այդ արդէն հիանալի է, երբ մարդ
կանգնած ամբիոնի վրայ ոգևորուած պատմում է, զորօրի-
նակ՝ քաղաքական իրաւունքների մասին, եւ Թէմիրզէսի հա-
զարաւոր աշակերաներ լուռ, հոգիացած լսում են նրան:

Այդ խօսքերը Դիաչկովն արտասանեց բաւական կրքով
եւ խորը յոգւոյ հանեց:

— Բայց այժմ բոլորովին անգործ էք, հարցրին
նրանից:

— Այժմ ես պարապում եմ խիստ ազատ վաստակով,
պատասխանեց Դիաչկովը: Արդարեւ ես մինչեւ այն աստի-
ճան չեմ կարող ստորացնել ինձ, որ զնամ օկրոժնիյ սուզ,
կամ պալատ, ատեանում կանգնեմ եւ պաշտպանեմ որեւիցէ
գործ, որպէս անում են այստեղի փաստարանները. բայց
արհեստում չծուլանալու համար, երբեմն մեծ գործերում,
երբ լինում են դժուար իրաւարանական հարցեր, ես դրում
եմ միմիայն խնդիրներ, թէ եւ խիստ շնչին վարձով, զորօրի-
նակ՝ մի քանի հազար մանկթով:

Բոլորովին սուտ էր խօսում Դիաչկովը. նա ո՛չ միայն
օկրոժնիյ սուզն ու պալատը չէր զնում գործեր պաշտպա-
նելու, ինչպէս հաւատացնում էր իւր թեթեւամիտ ունկնդիր-
ներին, այլ հարիւր մանկթ գործի համար նա միրովոյ սուզե-
րում էր քարշ գալիս: Միով բանիւ, նա քաղաքիս ամենաս-
տոր փաստարաններից մէկն էր, որին յանձնում են այն օ-
մենակեղտոտ գործերը, որ իւր պատիւը պահպանող ոչ մի
փաստարան յանձնառու չի լինում ընդունելու:

Յանկարծ նա նշմարեց անկիւնում դրած գաշնամուրը:

— Ա՛, այդ ո՞վ է ասում, Հարցրեց նա զարմացք ձեւացնելով իւր դէմքի վրայ :

— Սոֆին, պատասխանեց տ. Բարբարէն :

— Մաղբմուռէլ Սոֆին, կրկնեց Դիաչկովը ուրախութեամբ. — Ա՛խ ես Պետերբուրգից դուրս դալուց յետոյ կովկասում ոչ մի գերդաստանում չեմ լսած պիանօի ձայն. ես յուսով եմ, որ օր. Սոֆին այնքան ողորմած կը լինի, որ այդ մեծ դուարճութիւնը կը պատճառէ ինձ :

Տ. Բարբարէն սկսաւ թախանձել իւր դատերը, որ նա նուազէ :

Օր. Սոֆին մեծ յօժարութեամբ մօտեցաւ պիանօին եւ սկսաւ նուագել շատ վատ : Բայց Դիաչկովն անդադար ծափահարելով, դառնում էր դէպի տ. Բարբարէին ասելով.

— Այս արդէն Հրաչք է... ա՛խ, ո՛րքան Հիանալի նուագում է մաղբմուռէլ Սոֆին, Պետերբուրգում սակաւ աղջիկներ միայն կարող են այդպէս նուագել :

Օրիսորը ոգևորուած այդ գովասանքներով՝ նուագեց ամբողջ կէս ժամ, նա երգեց եւ մի ոսմանս, նոյն միջոցին Դիաչկովը դժայլմունքից ինքը նոյնպէս իւր խոսքոտ ձայնը խառնեց նրա ձայնի հետ :

Օրիսորը վերջացնելուց յետոյ Դիաչկովը մօտեցաւ նրան եւ մինչևեւ գետին խոնարհելով շնորհակալութիւն արաւ, ասելացնելով թէ այնուհետեւ չէր ցանկանալ լսել Մօցարտին եւ Բեհհօվէնին՝ նրա նուագելը լսելուց յետոյ :

Ապա ինքը Դիաչկովը նստաւ պիանօի մօտ եւ նուագեց երգելով մի սօնէտ. նրա անախորժ ձայնը այնպէս նման էր կատուի մլաւունի հնչիւններին, որ Գրիգօլի ծիծաղը շարժեց, որ լուս նստած լսում էր : Բայց Դիաչկովը իւր երգը կիսատ թողնելով հեռացաւ պիանօից հաւատացնելով, թէ համարարանում շատ պարապմունքի պատճառով կրծքի հիւանդութիւնը զրկեց նրան իւր անոյշ ձայնից, եթէ ո՛չ նա

միանդամ Պետերբուրգում գրաֆ Տամբալովսկու տանը մրցութեան մէջ մտաւ խտալացի առաջին երգիչ Կասօնի հետ եւ ինքը տարաւ մրցանակը :

ԼԼ

Քաջբերունին քաղաք զնալուց յետոյ ամբողջ մի ամիս հիւանդ պառկեցաւ, մինչեւ նրա առողջութիւնը վտեր ինչ ուղղուեցաւ. բայց այնուհետեւ երկու ընկերները չկամեցան ամբարնոց զնալ, որովհետեւ քաղաքում եւս բաւական հով էր եղանակը :

Մի օր նրանք նստած էին. Արամեանի զէմքը շէր ցոյց տալիս բոլորովին ուրախ արտայայտութիւն. կարծես թէ ներքին թախիծներ վրդովում էին նրա սիրտը, մինչեւ նա ընդհատեց լուսթիւնը, խօսելով .

— Սմբատ, մի՞ թէ միշտ այսպէս անպաշտօն եւ անզորձ պիտի մնանք մենք :

— Այո՛, պատասխանեց սառնութեամբ Քաջբերունին. որովհետեւ նա՝ ով որ պիտի մեզ պաշտօն տայ, ոտճիկ տայ, մենք նրա համար անպիտան կարասիներ ենք, այլ խօսքով, մենք նրա գործին անյարմար ենք :

— Ի՞նչ պէտք է արած, տհաճութեամբ հարցրեց Արամեանը :

— Ի՞նչ պէտք է արած, կրկնեց Քաջբերունին եւ նրա երեսի վրայ երեւեցաւ թթու արտայայտութիւն : Կամենո՞ւմ ես պաշտօն պրծաւ զնաց . . .

— Մի՞ թէ այդ կարելի է անել :

— Ուրեմն գո՛հ եղիր աղքատութեամբ :

— Բայց ա՞ղբը, հարցրեց Արամեանը :

— Աղբը ի՞նչ, կրկնեց Քաջբերունին :

— Նա մեզ հաց չի՞ տայ :

— Կը տայ, եթէ նրա ստեղծողը լիդես եւ նրա քմացը համար խունի ծխես :

Նրանց խօսակցութիւնն ընդհատեցաւ, երբ ներս մտաւ Դիաչկովը ուրախութեան ծիծաղը երեսին :

Նա առանց ողջունելու եւ առանց նրանց ձեռք տալու, գլխարկը վերցրեց եւ կանգնելով նրանց առջեւ ասաց .

— Ծնորհաւորեցէք, պարոններ, իմ քաջագործութիւնը, այսօր եւ տարայ սուղում մի այնպիսի փառաւոր դործ, որ կատարեալ հրաշք է . վասնորոյ, եղբարք, երեք հազար մանկ զբոսանցի . . .

— Տօ՛, Թաթոս, դու ի՞նչ օրէնք գիտես, որ քո տարած դործն ինչ լինի, ասաց նրան Արամեանը :

— Եղբայր, օրէնք գիտենալն այս քաղաքում ոչինչ նշանակութիւն չունի, պատասխանեց Դիաչկովը կծու կերպով : Ահա քո ընկերը եւս մազխտորոսի դիպլոմը ծոցում պարտոյ տանը նստած է . միայն այստեղ գլխաւորապէս պէտք է լինել սիրենա եւ կարողանալ զբաւել օրէնքը, դատաստանը եւ դատաւորները :

Քաջբերունին լուռ լսում էր նրանց :

— Ինչո՞վ, հարցրեց Արամեանը :

— Ինչո՞վ, կրկնեց Դիաչկովը . ծիծաղելի հարց . — «առ՛ւր կայսերն կայսեր եւ Աստուծոյն Աստուծոյ», ահա՛ թէ ինչով :

— Մի՞թէ կարելի է մինչեւ այդ աստիճան ստորանալ կեղտոտ դործիք դառնալով անպիտան մարդկանց լուծասիրութեան, հարցրեց Արամեանը :

— Արդարը միշտ սովից մեռնում է, եղբայր, պատասխանեց նրան Դիաչկովը :

Արամեանը կամենում էր մի խօսք եւս ասել, բայց նրան ընդհատեց Քաջբերունին ասելով .

— Ես բոլորովին համաձայն եմ քեզ հետ, պարոն Դիաչ-

կով. այսօրուայ օրում, ով չգիտէ ստախօսել, հաճոյամու-
լութեամբ կեղծաւորուել և ուրիշի կամքին ու նպատակնե-
րին զոհել իւր ամենաազնիւ և ամենասուրբ զգացմունքները,
չէ կարող արծաթ շահել: Որովհետեւ մեր քաղաքական
կեանքը, դժբախտաբար, այնպիսի հանդամանքների մէջ է
զըրուած, որ դրանք անհրաժեշտ պիտոյքներ են եղած: Եւ
մենք մի քանի բույլ առաջ այն նիւթերի վրայ էինք խօսում,
դու ընդհատեցիր մեզ:

Քաջալերուելով Քաջբերունու խօսքերից, որ նա խօսեց
կծու արհամարհանքով, Դիաչկովն ասաց.

— Եղբարք, ճշմարիտն ասած, դուք խիստ յիմար դա-
դափարների էք ծառայում, մի խօսքով դուք լսի օդ էք կուլ
տալի, իսկ այդ ձեր փորին սնունդ չի տալ, պէտք է ժամա-
նակի հանդամանքների հետ ընտելանալ և արեւահայեաց
ծաղիկի նման արևւր որ կողմից ծագէ, դէպի այն կողմը
պէտք է շրջել իւր գէմքը:

— Դէպի ամէն կողմ թեքուել, դէպի ամէն կողմ խո-
նարհուիլ, այդ կատարեալ կապկութիւն է, խօսեց Արամ-
եանը: Մինչդեռ պատիւը պահպանելը միշտ եղել է և պիտի
լինի սուրբ:

— Այդքատը ոչինչ պատիւ չունի, պատասխանեց Դիաչ-
կովը. պատիւը արծաթի մէջ է և սուանց ձեր ասած կապ-
կութեան չէ կարելի արծաթ վատտակել:

— Ուրեմն ամենայն սուրբ բան պիտի զոհել արծաթին:

— Այո՛ որովհետեւ նա միակ դերագոյն սրբազան էակն
է տիեզերքում, վճռական կերպով պատասխանեց Դիաչկովը:

— Ահա՛ քեզ լօզիկա, ծիծաղելով խօսեց Արամեանը:

— Եղբայր, դու ուղիղ ես, դարձաւ դէպի Դիաչկովը
Քաջբերունին, կեանքի մէջ դու քո դատը աւելի լաւ ես սեր-
տել քան թէ մենք. դու դնում ես մի ճանապարհով, որտեղից
խուժանը սակզ ընթանալով դարձել է հարթ և հաւասար,

բայց մեր նախապարհը վշտոտ է, և շատ էլ բանուկ չէ... :
Դու պաշտիր արծաթը, քո Աստուածը, մենք էլ ունինք մեր
Հոգարտութիւնը, և դո՛ւ ենք մեր աղքատութեամբ :

— Դրանք թող մնան, զատարկ խօսքեր են, չարժէ
խօսել դրանց վրայ, նրա խօսքը կտրեց Դիաչկովը : Բայց ես,
պարտն Քաջբերունի, յատկապէս եկայ ձեզ մօտ, շնորհակալ
լինել քո հիւանդութեան համար : Բոլորովին ճշմարիտ է
ասակը, թէ շմէկի դժբախտութիւնը միւսին բախտաւորում
է : Այո՛, քո փառաւոր հիւանդութիւնը պատճառ տուաւ
քեզ և նախանձաւոր ընկերիդ հեռանալ Կօջօրից և թողնել
այնտեղի ձեր նուիրական կացարանը բոլորովին իմ տիրապե-
տութեան ներքոյ, որի մէջ մի անկիւն անդամ ինձ տալու
դուք գրացաք :

— Այդ խօսքերով ի՞նչ ևս կամենում ասել, շտապով
Հարցրեց Արամեանը :

— Այն՝ պատասխանեց Դիաչկովը, ուղիղ նայելով Ա-
րամեանի երեսին, — ինչ որ ևս ցանկանում էի, այսինքն՝
իմ դրացութիւնս ասիթ տուաւ ինձ ծանօթանալ Հայր-
Գէլինց, հետեւապէս նաև օր. Սոֆիի հետ :

— Այդ մի մեծ բախտ չէր, Թաթոս Իվանիչ, — պա-
տասխանեց Արամեանը արհամարհական ծիծաղը երեսին, —
որի մասին Հարկաւոր լինէր սյղպէս հրճուանքով խօսել :

— Ի՞նչ բախտ կարող է լինել դրանից մեծ, պատաս-
խանեց Դիաչկովը ջերմեանդութեամբ : Օրիորդ Սոֆիի ա-
մէն մի խօսքը, նրա ամէն մի ժպիտը, վերջապէս նրա ամէն
մի համրայրը... այդ արդէն կեանք է և անմահութիւն...

— Բոլորովին սուտ ևս խօսում, պատասխանեց Արա-
մեանը և նրա ղէմքը դռնատուեցաւ ներքին վրդովմունքից :

— Երգվում եմ Աստուծով :

— Ձեմ հաւատում :

— Երգվում եմ պատուովս :

— Ձե՞մ հաւատում :

— Ի՞նչ տեսակ մարդ ես դու :

— Ի՞նչ էք վիճում, նրա խօսքը կտրեց Քաջըրերունին :
Ի՞նչ մի զարմանալի բան կայ այստեղ դժուար հաւատալու :

Արամեանը լռեց : Նրա երեսի զոյնը սաէպ-սաէպ
փոխվում էր : Դիաշկովը սկսաւ պատմել, թէ ի՛նչ հնար-
քով նա ծանօթացաւ Հացի-Գէլենց հետ, եւ այնուհետեւ ինչ-
պէս նա տիրեց օր . Սոֆիի սրտին, եւ նա պատմեց իւր բոլոր
սիրաբանութիւնները օրիորդի հետ :

— Թէեւ քո պատմութեան մեծ մասը զարդարուած է
ստախօսութեան ներկերով, բայց զարձեւալ նրա մէջ կան մի
քանի հաւատալիքներ, պատասխանեց Քաջըրերունին : Չար-
մանալի չէ, որ օր . Սոֆին ունեցել է քեզ հետ սիրաբանու-
թիւններ, այդ արդէն ինստիտուտական օրիորդի իսկական
յատկութիւնն է : Այդպէս եւ այդ աղջկերբը . զբանցից
իւրաքանչիւրը նախ եւ առաջ կը սիրահարուի մի գիմնադիտի
վրայ, յետոյ իրան սիրական կ'ընտրէ մի որեւիցէ դերասան,
իսկ այնուհետեւ, երբ նա իւր ճաշակը փոքր ինչ կրթուած
համարի, կը փաթաթուի ամէն մի ուսանողի շլինքով, որոնք
յաճախում են նրանց տուն իրրեւ հիւր . այնուհետեւ ստատ-
նան գիտէ, թէ ի՛նչ է դատում այդ տեսակ թիթեւօրիկ աղջ-
կանց վերջը :

Արամեանը տահնութեամբ լսում էր :

Դիաշկովը նոյնպէս տիրեց, երբ իւր սիրոյ առարկայի
վրայ այդպիսի նկատողութիւններ արին :

— Նրանք եկել են Կօջօրից, հարցրեց Արամեանը
Դիաշկովից :

— Հապա այս ցրտում ո՞վ կը մնայ ամառանոցում, պա-
տասխանեց Դիաշկովը : Երբորդ օրն է, որ նրանք եկած են .
այսօր եւ շորհ ունիմ նրանց մօտ ճաշելու :

— Ուրեմն այդպէ՞ս... ուզիդ Դիաչկովի երեսին նայելու խօսեց Արամեանը:

— Ի՞նչ կայ որ. քո սրտին ինչո՞ւ է դիպչում, Հարցրեց նրան Դիաչկովը:

— Ոչինչ... պատասխանեց Արամեանը:

Այդ խօսակցութիւնը տեւեց մի քանի րոպէ եւս, մինչեւ Քաջրերունին տաղտկացաւ:

— Ձարժէ դրա վրայ այդքան խօսել, ասաց նա: Պատմի՛ր, ի՞նչ նոր լուր գիտես, պ. Դիաչկով:

— Ահա՛ ձեզ նոր լուր. ինձ առաջարկում են մի րօպոյ սուղիայի պաշտօն նահանգում, բայց ես չեմ ընդունում:

— Ինչո՞ւ, Թաթոս:

— Նահանգում մի րօպոյ սուղիա լինելու Համար չարժէ հեռանալ քաղաքի զուարճութիւններից. առանց դրան էլ իմ գրութիւնս այստեղ բոլորովին ասպահովուած է:

— Քանի՞ Հազար ես որսացել մինչեւ Հիմա:

— Ո՛չ աւելի քան տասն Հազար...:

Եւ Դիաչկովը նայեց ժամացոյցին, խսկոյն հանդնեց, ասաւ զլխարկը եւ հեռացաւ ասելով.

— Ինձ ներեցէք, արդէն ճաշին քառորդ ժամ է մնում, ինձ կը սպասեն Հացի-Գէլենց տանը:

— Ահա՛ այդպիսի յիմարները կարողանում են փառաւորապէս ապրել այս աշխարհում, որովհետեւ նրանք տալիս են «կայսերն կայսեր, եւ Աստուծոյն Աստուծոյ»: Ջղուելի՛ կեղծաւորութիւն... ասաց Քաջրերունին ներքին վրդովմունքով:

Իսպց Արամեանը Համարեա չլսեց այդ խօսքերը. նա սաստիկ կերպով խռոված էր: Դիաչկովի խօսքերը Հացի-Գէլենց մասին յարուցին նրա սրտում անախորժ զգացմունքներ:

ԼԲ

Օգոստոսը եւս անցաւ, իւր հետ տանելով նաեւ տօթը: Եղանակը օրըստօրէ դառնում էր հովասուն: Հասարակաց դրօսարաններում որոշեալ ժամերին զուարճասէր բաղմու-
թիւնը աւելի եւ աւելի համախմբվում էր. գիշերները թատ-
րոնում սկսեց հնչել իտալական օպերան:

Ամարանոցներից ամէնքն էլ վերադարձել էին քաղաք: Օր. Սոֆին իւր մօր հետ նոյնպէս ամբողջ շարաթ կը լինէր, որ եկել էին Կօջօրից:

Օրիորդը քանի օր էր անձկանօք սպասում էր Արա-
մեանին, բայց տակաւին նա չէր երեւում Հացի-Գէլեհց մօտ: Վերջին օրերում նա հրամայեց շընգունել Դիբաչկովին, երբ քաղաք գնալուց յետոյ նա իմացաւ, որ խարեբայ ստուգեանոր ամուրի մարդ չէ եղած, ինչպէս նա հաւատացրել էր, այլ ունեցել է կին: Բայց վերադառնալով ամարանոցից, նա իրանց տան ներքին յարկի կեցողների թւում գտաւ մի նոր մարդ, ազգով ռուս, նորահաս օֆիցէր, բարակ, բարձր հասակով եւ բաւական ախորժեկի դէմքով: Մանուկ օֆիցէրն առաջին օրից զբաւեց օրիորդի ուշադրութիւնը:

Օրիորդը երկար սպասելով Արամեանին, վերջապէս նրա համբերութիւնը հատաւ եւ ստուգելով որ նա կենում է գերմանացոց գաղթարանում, մի օր վնից առաւօտեան կառք նստեց եւ դնաց դէպի այն կողմը: Ճանապարհին նա երեւա-
կայում էր այն բոլոր հիացումները, հրճուանքները եւ սիրա-
խօսական զգացմունքները, որոնցով կարծում էր թէ Արա-
մեանը կը հանդիպէ իրան: Նա մտածում էր, թէ ինքը կ'եր-
թայ նրա մօտ, նախ եւ ստաջ իրան կը ձեւացնէ խոռոված,
թէ ինչո՞ւ Արամեանը այսքան ժամանակ իրան սցցելութիւն
չեկաւ: Այնուհետեւ Արամեանը կը չոքէ իւր սաջեւ, ներս-

դուժինն կը խնդրէ, ինքը կը ժպտայ եւ կը համբուրէ նրան-
 էլ ի՞նչ ստես որ չէր մտածում օր. Սոֆին... :

Այդպիսի խորհրդածութիւնների մէջ նա աննկատելի
 կերպով անցաւ Գօլովինիսկի պրօսպեկտը, Աղէքսանդրեան
 սոցին, Վօրօնցովի արձանը, գերմանացոց դաղթարանը եւ
 հասաւ Մուշաէիդ : Այստեղ կառավարը սթափեցրեց նրան
 իւր մտաւոր խտովութիւնից, հարցնելով. «Ո՞ր կողմ կը
 հրամայէք դնալ» : Օրիորդը նկատելով որ բաւական անցել
 է Արամեանի կայարանից, հրամայեց ուղղել կառքը դէպի
 մեր ընթերցողի նախածանօթ գերմանացու տուն, ուր ընակ-
 վում էր Քաջբերունին, ուր առաջին անգամ ծանօթացանք
 Արամեանի հետ, երբ նա եկել էր սոցեկուլեան իւր ընկերով :

Օր. Սոֆին ամենեւին չհրամայեց իմացում տալ իւր
 մասին, այլ համարձակ ներս մտաւ եւ դտաւ Արամեանին
 միայնակ նստած գրելիս :

— Բարով, Վահէ, ասաց օրիորդը ներս մտնելով ու-
 բախտեան ծիծաղը երեսին :

— Ա՛, օր. Սոֆի, դո՞ւք էք, կրկնեց Արամեանը թեթեւ
 շարժուելով իւր տեղից : Հրամայե՛ք, խնդրեմ :

Արամեանի առողջանութիւնը, նրա պատկառելի ընդու-
 նելութեան ձեւը, որ արտասանեց նա նոր, իրանց մէջ դեռ
 էւս անսովոր, յոգնակի ձեւով, նրան խոկոյն դալալի եղան :
 Այն ինչ նա մտածում էր, թէ իւր սիրահանն իսկոյն զրկա-
 խտնուելու էր իւր հետ :

Օրիորդը ակամայից նստեց աթոռի վրայ, որ ցոյց
 տուաւ նրան Արամեանը :

— Գու վերջապէս ստիպեցիր ինձ դալ քեզ մօտ, այս-
 քան երկար սպասել տալուց յետոյ, ասաց նրան օրիորդը :
 Երեսի լսած չես եղել մեր դարձը :

— Ես լսած էի... միայն Սմբատի առողջութիւնը այս

վերջին օրերում մի փոքր եւս վատացաւ, այդ պատճառով չէի կարողանում տանից հեռանալ:

— Այժմ ի՞նչպէս է նրա առողջութիւնը:

— Վատ չէ՛:

— Ո՞ւր է նա:

— Գնացել է գրօնելու. նա ամէն առաւօտ սովորութիւն ունի քաղաքից հեռանալ մաքուր օդ ծծելու:

— Ուրեմն ես կարող եմ յուսալ, թէ դու այսուհետեւ ժամանակ կ'ունենաս մեզ մօտ գալու, այնպէս չէ՞:

— Ձգիտեմ... սառնութեամբ պատասխանեց Արամեանը:

Օրիորդը զարհուրելով նայեց նրա երեսին:

— Ի՞նչ է, դու հիւա՞նդ ես, Վահէ, քո դէմքն այնպէս գունատուեցաւ, հարցրեց նա:

— Այո՛, ես ինձ բոլորովին առողջ չեմ գտում. պատասխանեց Արամեանը տաղտկանօք, որպէս մի մարդ՝ որ ձանձրանում է իւր խօսակցից:

Օրիորդը մօտեցաւ նրան եւ բռնեց նրա ձեռքը:

— Ա՛խ, ի՞նչ սառն է քո ձեռք, կոչեց նա. կարծես սառուց լինի:

— Այո՛, օր. Սոֆի, ջերմութեան հուրը մարեցաւ ինձնում... եւ իմ սիրտը եւս այնպէս սառն է այժմ, ինչպէս իմ ձեռքերը...

— Ինչո՞ւ, հարցրեց օրիորդը սղորմելի կերպով:

— Չարմանալի բան է այդ սիրտ կոչուածը, նա շուտով կտորվում է, նա շուտով սառչում է, նա շուտով մեռնում է...:

— Այլեւս չէ՞ ողջանում:

— Ո՛չ, որպէս ապակիի փշրանքը չէ կարելի կրկին կցել եւ ողջացնել, նոյնպէս է եւ սիրտը:

Եւ Արամեանի գէժքը մոայլուեցաւ: Օրիորդը դրկեց նրան եւ խորին զգացողութեամբ նսյելով նրա երեսին ասաց.

— Վահէ՛, երբ քո սիրտը այդպէս կտորած լինի, մի այլ սիրտ, որ սոյնքան ամուր կերպով կապուած է քոնի հետ, նոյն գրութեանը չի՞ ենթարկուիլ:

— Այո՛, կ'ենթարկուի, եթէ՛ կապուած լինի, բայց իմ կարծիքով՝ իմ եւ ձեր սրտի մէջ եղած հեռազրական թելը վաղուց կտրուած է...

— Ուրեմն այդպէ՞ս է քո կարծիքը, պատասխանեց օրիորդը եւ թողեց նրան իւր դրկից եւ նստաւ նրան աւելի մօտ: — Այժմ հասկացոյ քո ահաճութեան պատճառը, միայն ուղիղ չէ քո կարծիքը այդ մասին:

— Կարծիքը ոչինչ նշանակութիւն չունի այնտեղ, ուր կան յայտնի փաստեր, պատասխանեց Արամեանը:

— Ի՞նչպիսի փաստեր:

— Զորօրինակ Դիաչկովը:

— Դիաչկովը, կրկնեց արհամարհանքով օրիորդը, ես հրամայեցի անցեալ օրը արտաքսել ձեր տանից այն յիմարին:

— Այդ արդէն ուշ է... եւ ձեր կորուստը նրա պատճառով կը մնայ անդարձ...

— Ուղիղն ասած, Վահէ, ես չեմ հասկանում քեզ. ի՞նչ կորուստ:

— Դրանից աւելի ի՞նչ կորուստ կարող է լինել, որ այժմ այդ փողոցի շառլատանը բոլոր քաղաքում տարածուած է մի ամբողջ ուժման իւր եւ ձեր սիրահարութեան մասին կօջօրում:

— Այն խարերան կարող էր շատ ստեր խօսել, բայց դրանով ես պիտի կորցնե՞մ իմ համարումը, պատասխանեց օրիորդը:

— Շատ ստերը միշտ հիմնվում են մասնաւոր ճշմարտութեան վրայ:

Չին խօսքերն են ձեզ հետ. լսեցէք իմ բարեկամական խրատներս, ուղղեցէք ձեր վարքը, եթէ չէք կամենում բոլորովին ոչնչացնել ձեզ, քանի որ դուք դեռեւս մանկահասակ էք, եւ դեռ եւս կեանք կայ ձեր առջեւ: Ես չեմ մոռանայ այն մի քանի ժամերը, որոնք Կօջօրում անցուցել եմ ձեզ հետ, ես մինչեւ մահ պիտի յիշեմ... Եւ դուք յետոյ պիտի հասկանաք, թէ ես ճշմարիտ սիրում էի ձեզ... Այո՛, իմ սիրտս կտալու եղաւ, ստաւ, ինչպէս ասացի ձեզ:

Օր. Սոփին կամեցաւ մի քանի խօսք ասել նրան, բայց յանկարծ նախասենեակում լսելի եղաւ Քաջբերունու ծանր քայլերի ոտնաձայնը, երբ նա սուլելով անցաւ դէպի իւր սենեակը:

— Եկաւ Սմբատը, ասաց Արամեանը, մենք այստեղ ինչ որ խօսենք, կարող է լսել նա. դնացէ՛ք, խնդրեմ, օր. Սոփի, թող մեր զաղանիքը մնայ նոյնպէս ծածուկ, ինչպէս կղել է մինչեւ այսօր:

— Դու արտաքսում ես ինձ, Վահէ՛, ասաց ողորմելի ձայնով օրիորդը. բայց խնդրեմ օգնիր ինձ մինչեւ դուռը դնալու, իմ մէջ այլեւս ոյժ չկայ...:

Արամեանը բռնեց նրա թեւից, բարձրացրեց եւ սկսաւ նրան դուրս տանել:

Կանգնելով դրանը, օրիորդը բռնեց Արամեանի ձեռքը եւ խօսեց. — Վահէ՛, դու մերժեցիր ինձ, դու բաժանուեցար ինձնից, բայց ես զարձեալ պիտի սիրեմ քեզ. մնաս բարեաւ, իմ բարեկամ, տու՛ր գոնեա վերջին անգամ համբուրեմ քո ձեռքը:

Եւ նախ քան Արամեանը կ'արգելէր, նա նրա ձեռքը սեղմեց իւր երեսի վրայ. արտասուքի կաթիլները թրջեցին նրա ձեռքը, Արամեանը օգնեց նրան նստել կառքը: Օրիորդը երեսի շղարչը վայր քաշեց: Կառքը սահեցաւ:

Վերջին խօսքերից բոլորովին յայտնի եղաւ օրիորդին, ինչ որ նոյն բողէին աղմկում էր Արամեանի սիրտը: Նա յանկարծ շոքեց մանուկ տղամարդու առջեւ եւ գրկեց նրա ծնկները ասելով.

— Վահէ՛, դու բարկացել ես ինձ վրայ, ներիր, ես մեղաւոր եմ քո առջեւ:

Արամեանը ոչինչ չսպասախանեց, միայն խնդրեց, որ նա բարձրանայ զետնից, բայց օրիորդը վեր չկացաւ տեղից եւ անդադար կրկնում էր. — Ների՛ր, ների՛ր ինձ... Եւ նա սկսեց դառնապէս լաց լինել:

Արամեանը դարձեալ աշխատեց բարձրացնել նրան:

— Ես չեմ կանգնելու, մինչեւ շատես, թէ ներում ես ինձ:

Արամեանը ասաց, թէ ներում է:

Օրիորդը նստեց իւր առաջուայ տեղում:

— Ես ներում եմ ձեզ, դարձեալ կրկնեց Արամեանը, յողոց հանկով, բայց ես այսուհետեւ չեմ կարող սիրել ձեզ, որովհետեւ մեր մէջ ամենայն ինչ վերջացած է արդէն...:

Օրիորդը դարձեալ սկսաւ լաց լինել:

— Սէրը, օր. Սոֆի, շատ քնքուշ եւ շատ մաքուր բան է, մի չնչին բիծ եւս արատաւորում է նրան. մինչդեռ նա է եւ պիտի լինի միշտ սուրբ, որպէս՝ եղել է սկզբից:

— Ուրեմն ես արատւորեցի՞ մեր սէրը, հարցրեց օրիորդը:

— Այդ ձեզ յայտնի է արդէն:

— Բայց դու եղիր դարձեալ բարի եւ խղճաւ իմ վրայ. ես, Վահէ կը մեռնեմ յուսահատութիւնից, երբ դու թողնես ինձ. իմ կորստեան պատճառ մի՛ լինիր, Վահէ՛:

— Մեր մէջ ամենայն ինչ վերջացած է այսուհետեւ, օր. Սոֆի, սառնութեամբ պատասխանեց Արամեանը: Դուք այլեւս ոչինչ մի՛ յուսայէք ինձնից, օր. Սոֆի. այս իմ վեր-

ԼԳ.

Ժողովուրդը, ամառուայ տաք ամիսներում զրկուած թատրոնից, խուռն բազմութեամբ դիմում էր այնտեղ: Օթեակները, բազկաթոռները եւ աթոռները, պաշգամբը, բոլորը բռնուած էին: Մուգիկան հնչում էր: Բազմութիւնից ոմանք իրանց դիտակներով նայում էին գեղեցիկ աղջիկներին, եւ ոմանք իրանց աթոռների վրայ նստած անհամբեր սպասում էին, թէ երբ պիտի բարձրանայ վարագոյրը:

Բազկաթոռների երրորդ կարգի մի անկիւնում նստած էր Քաջբերունին եւ նրա մօտ Արամեանը:

Արամեանը նոյն բոսէին խօսում էր իւր ընկերոջ հետ թատրոնական բեմի վրայ, թէ հայկական լեզուով ներկայացումները կարող էին բաւական օգուտ բերել հայ հասարակութեանը:

— Ի՞նչ օգուտ պէտք է բերէին, երբ այս յիմարները հայերէն չգիտեն, պատասխանեց Քաջբերունին, ակնարկելով թատրոն եկած հայերին:

— Մի՞թէ սրանք իտալերէն հասկանում են, որ այսպէս թափուել են այստեղ, ասաց Արամեանը:

— Դու կարծում ես, թէ դրանք եկել են այստեղ բան հասկանալու. ո՛չ, սրանք եկել են միեւնոյն նպատակով, ինչ նպատակով մարդ կ'երթայ բազար: Մայրերը իրանց աղջիկներին զարդարած բերել են վաճառելու, երիտասարդները եկել են գնելու...: Նայիր այն հարուստ հայ երիտասարդներին, որոնք նստած են առաջին կարգում. նրանք շատ անգամ թանկագին ընծաներ են նուիրում երգչուհուն, սակայն նրանք չեն զգում ո՛չ մուգիկայի անուշութիւնը, ո՛չ բեմական ներկայացումների վսեմութիւնը:

— Ի՞նչ նպատակով ուզում է լինի, զանազանութիւն

չկայ. Ինչդիրն այն է որ բազմութիւնը չի հեռանայ թատրոնից, երբ այստեղ ներկայացումներ տան եւ՛ չայերէն լեզուով:

— Այո՛, եթէ դու այդ ցանկանում ես միմիայն քո նիւթական շահի համար, աւելի զանազանութիւն չկայ. բայց դու ի նկատի ունիս հասարակութեան իրական օգուտը, որ կարող էր նա բարոյապէս կամ իմացականապէս շահուել իւր ազգային բարբառով ներկայացումներ տեսնելով:

— Ի հարկէ բուն նպատակը կը լինի այն, ինչ որ ազգութեան ճշմարիտ բարեկամի ցանկութիւնն է. իսկ եթէ ժողովուրդը այլ հայեացքով կը նայի դրա վրայ, այդ փոյթ չէ՛, մինչև նա ընտելանայ դործի էութեանը. որովհետեւ ինչ նպատակով ուղում է լինի, բայց եւ այնպէս մէկը նպատու է միւսին:

Քաջարեւունին ոչինչ պատասխան չտուաւ եւ համարեալ՝ չլսեց էլ թէ ինչ խօսեց նա. նա նայում էր դէպի օթեակները:

— Ահա՛ Սոֆին, վահէ, դռնէց նա:

Արամեանը տեսաւ Սոֆին, որ իւր երկու ջրբերի եւ եղբոր հետ ներս մտաւ մի օթեակ: Նա իւր անհամեմատ գեղեցկութեամբ եւ պատշաճաւոր հագուստով զերազանցում էր բոլորից: Նա նստեց եւ սկսաւ իւր դրաւիչ նայուցքը անզողար ձգել դէպի իւր չորս կողմը:

— Փարթամ բնաւորութիւն է, կրկնեց Քաջարեւունին:

Արամեանը ոչինչ չպատասխանեց, երեսը շրջեց դէպի միւս կողմը. բայց նա նկատեց որ ստուար զիտակներ ուղղուեցան դէպի նրա օթեակը:

Քաջարեւունին նշմարեց ներքի կարգում մի օթեակ, որ բոլորովին դատարկ էր մնացել: «Այդ ո՞ր բախտաւորին է սպասում», ասաց նա իւր մտքում, եւ տեսաւ որ մի քանի բողբոջ յետոյ զոնակը բացուեցաւ եւ այնտեղ ներս մտաւ

մի աղջիկ միջակ հասակով, եւ նրա հետ մի նորահաս պատանի, որ երեւում էր, թէ աղջկայ եղբայրն է :

Մանկահասակ օրիորդի արտաքին կերպարանքը բոլորովին դրաւեցին Քաջբերունու ուշադրութիւնը : Նրա հազուստը ոտքից ցլուռն աչքի էր ընկնում, շնայելով որ ոչ միայն պատրաստուած չէր թատրոնի համար, այլ այնպիսի պարզ հազուստով մինչեւ անգամ անյարմար էր երեւիլ որեւիցէ հասարակական ժողովում : Նրա սեւ ձեռնոցները, սպիտակ չթեայ հանդերձը, նրա սեւ թաւշեայ վերարկուն, որ թեք ձգած էր իւր ուսին, արտայայտում էին նրա անփութութիւնը դէպի հասարակական ծէսերն ու սովորութիւնները : Նրա գիտակը ամենեւին հարթարած չէր, որպէս վայել է թատրոն երթալու համար, այլ նրանք այնպէս խառնուած էին, կարծես թէ նա զեռ նոր էր հեռացել իւր աշխատութեան դրասեղանի մօտից :

Այդ օրիորդի օթեակը մօտ էր Քաջբերունու բաղկաթոռին, եւ նորահաս երիտասարդը, գրաւուած նրանով, կարողանում էր որսալ նրա դէմքի ամէն մի արտայայտութիւնը եւ նրա ամէն մի շարժումները :

Օրիորդը մտնելով իւր օթեակը, մի կողմնակի հայեացք ձգեց բազմութեան վրայ եւ նստեց խորին ստոնասրտութեամբ : Նրա դէմքը դունատ էր, ինչպէս մարմարին, բայց երեսի գծադրութիւնը կանոնաւոր էր եւ ախորժելի : Սեւ սաթի նման զիտակները, սեւ յօնքերը եւ սեւ, վառփառն աչքերը ցուցանում էին նրա արեւելեան ծաղումը : Իսկ մի քանի բողբոջ յետոյ, քանի մի բառեր, որոնք զանգակի հնչիւնով հասան Քաջբերունու լսելիքին, ստուգեցին օրիորդի հայացքի լինելը :

Վարպդոյրը բարձրացաւ : Բեմը վրայ ներկայացնում էին Բիգօլէտօ :

Օրիորդը ստանց ուշադրութիւն դարձնելու իւր չորս

կողմը, նայում էր միայն բեմին, որպէս թէ ինքը միայնակ լինէր թատրոնում: Բիզօլէտոյի միմոսական ծաղրածութիւնները չչարժեցին եւ ո՛չ մի ժպիտ նրա սառն դէմքի վրայ:

«Այդ օրիորդի մէջ մի բան կայ», ասաց իւր մտքում Քաջբերունին, չզաղարելով հետադօտել նրա ամէն մի շարժողութիւնը: Քաջբերունին շատ էր ցանկանում իմանալ օրիորդի ով լինելը. բայց չզիտէր ո՛ւմից հարցնէ: Նա չուղեց այդ մասին հարցնել նաեւ Արամեանից, որ նոյն ժամուն համարեա ձանձրացրել էր իրան իւր խօսակցութեամբ հայկական թատրոնի մասին:

Վարպօյրը վայր լըաւ: Առաջին գործողութիւնը վերջացաւ:

Հանդիսականներից ոմանք դուրս գնացին ծխելու, եւ ոմանք մնացին օրիորդներին մտիկ անելու: Քաջբերունին տեսաւ, որ իւր ուշադրութեան առարկան նոյնպէս դուրս գնաց օթեակից: Նա առանց մի բան տեսլու իւր ընկերօջը, ինքը նոյնպէս դուրս գնաց: Նա տեսաւ որ օրիորդը միայնակ ճեմում է նախասենեակում: Վայելչահասակ օրիորդը ոտքի վրայ աւելի գեղեցիկ էր, քան թէ օթեակում նստած ժամանակ:

Քաջբերունին սկսաւ հետադօտել նրա ընթացքը: Մի բանի պատուաւոր մարդիկ բարեւեցին նրան. նա թեթեւ կերպով շարժեց զլիսով եւ ո՛չ մինի հետ չխօսեց:

Ներսից լսելի եղաւ մուղիկայի ձայնը: Օրիորդը վերագարձաւ իւր օթեակը:

Քաջբերունին համարեա չէր նկատում, թէ ինչ էր ներկայացոյցում բեմի վրայ, նրա բոլոր ուշքն ու միտքը դարձած էր դէպի խորհրդաւոր օրիորդը:

Ներկայացման այն տեսարանում, երբ սպանող X...ը գրեց բեմի վրայ անբախտ N...ի դիակը, Քաջբերունին

նշմարեց յայտնի փոփոխութիւն օրիորդի դէմքի վրայ . նրա աչքերը վառուեցան, եւ նրա երեսի վրայ խաղաց թեթեւ կարմրութիւն : Կարծես նրա անբարբառ դէմքն ասում էր . «արժանաւոր հատուցումն յիմար սէրին» :

Երբ վարադոյրը վայր իջաւ, Քաջբերունին շուտով դուրս գնաց, մտածելով հետեւել այն օրիորդին, ուր եւ գնաց նա, եւ տեսնել, թէ որտեղ է բնակվում : Օրիորդը դուրս եկաւ եւ խսկոյն կառք նստեց : Ինքը նոյնպէս շտապեց կառքով հետեւել նրան : Յանկարծ յիշեց, որ մոռացել է վերարկուն վեր առնել : Մինչեւ դառնալն ու վերարկուն վեր առնելը, օրիորդի կառքն անհետացել էր :

Նա հանդիպեց Արամեանին, որ նրան որոնում էր :

— Ո՞ւր մնացիր, հարցրեց Արամեանը :

Քաջբերունին ոչինչ չպատասխանեց եւ կրկին նստաւ կառք, ակնարկելով իւր ընկերին նոյնպէս նստել :

Նրանք բոլորովին լուռ եւ անխօս հասան տուն : Արամեանը նորոգեց իւր խօսակցութիւնը հայկական թատրոնի մասին :

— Դու աւելի լաւ կ'անես առժամանակ թողնես թատրոնի հարցը եւ հողաս մի բան ուտելու . քաղցած փորով չի կարելի քնել, ասաց նրան Քաջբերունին :

— Տանտէրն այժմ քնած կը լինի :

— Ինչպէս եւ լինի մի բան դարի :

Արամեանը գնաց միւս սենեակը եւ դարձաւ մատուցարանը ձեռքին :

— Ճաշից մնացել է կէս շիշ գլինի, մի փոքր պանիր եւ մի քանի կտոր հաց, ասաց նա :

— Այդ էլ բաւական է :

Նրանք սկսան վայելել իրանց աղքատիկ ընթրիքը :

— Ճշմարիտ, Սմբատ, այս գիշեր իմ զգացմունքներս մինչ այն աստիճան զրոգուած էին, որ ամենեւին չեմ քնել .

այսօրուանից պիտի սկսեմ մի լաւ դրամա գրել Հայոց լեզուով, եւ եթէ կարելի չլինի ներկայացնել մեծ թատրոնում, սակայն կարելի կը լինի առանձին մասնաւոր տնե-րում ներկայացնել:

— Գրի՛ր, եթէ թոյլ կը տան ներկայացնել, սասց Քաջ-բերունին:

Նւ Արամեանը երկար մնաց արթուն. նա եռանդով գրում էր . . . :

ԼԳ

Ամբողջ մի ամիս Քաջբերունին որոնում էր, որ միւս անգամ եւս տեսնէ այն օրիորդին, բայց նրա բաղձանքն ի գուր անցաւ: Նա շուտ-շուտ թատրոն էր գնում եւ ամէն օր գուրս էր դալիս բուլվարի վրայ, կամ գնում էր Աղէքսանդրեան սյգին, բայց ոչ մի տեղ չհանդիպեց նրան:

Քաջբերունին սիրահարուած չէր նրա վրայ, որովհետեւ, որքան մեղ յայտնի է, այդ կիրքը վաղուց սառած էր նրանում: Բայց նրա հետաքրքրութիւնը շարժում էր այն բանը, որ նա ցանկանում էր գիտենալ, թէ ո՛րպիսի դոյու-թիւն ունէր այն խորհրդաւոր օրիորդը, որի առաջին իսկ երեւոյթը թողեց իւր վրայ այնպէս խոր տպաւորութիւն:

Մի օր բուլվարի վրայ երկար դռօսանքից յետոյ նա մտաւ մի հայ դրամաճառի խանութ փոքր ինչ հանգստանալու: Նա նստած ծխում էր. յանկարծ տեսաւ ներս մտաւ նոյն օրիորդը, սօքից ցղլուխ պատշաճաւոր հաղնուած մթա-դոյն հագուստ: Նա քաղաքավարութեամբ մօտեցաւ դրամա-ճառին եւ բաւական մաքուր հայերէնով խնդրեց Մ. Միանսարեանցի «Քնար Հայկականը»: Գրավաճառը պատասխա-նեց, թէ այդ գրքից իրանց մօտ էլ չի մնացել: Օրիորդը

հարցրեց, թէ ո՞րտեղից կարելի է դռնել: Քաջբերունին պատասխանեց նրան.

— Պատուելի օրիորդ, ես ունիմ ձեր խնդրած դէրժը, թէ կամենաք, ես կը տամ ձեզ կարգալու:

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութեան համար, պատասխանեց օրիորդը գլուխ տալով նրան:

— Ո՞րտեղ կարող եմ ձեզ հասցնել:

— Իմ կացարանը շատ հեռու չէ, պատասխանեց օրիորդը, ահա՛ իմ հասցէն:

Եւ օրիորդը մօտեցաւ դրասեղանին եւ շատ սիրուն հայերէն զրեց իւր հասցէն եւ յանձնեց Քաջբերունուն, գլուխ տուաւ եւ շտապ դուրս դնաց:

Նոյն օրուայ երեկոյեան պահուն, Քաջբերունին վեր առնելով բախտաւոր զիրժը, որ առիթ տուաւ իրան ծանօթանալ իւր խնդրած օրիորդի հետ, սկսաւ դիմել դէպի այն նուիրական տունը, ուր բնակվում էր նա:

Նա առանց երկար որոնելու գտաւ օրիորդի բնակարանը, զանգը քաշեց եւ խնդրեց իւր մասին իմացում տալ:

Քաջբերունուն առաջնորդելով մի քանի մաքուր եւ բաւական ճաշակով կահաւորուած սենեակներով, տարան օրվնայի (այդպէս էր օրիորդի անունը) առանձնասենեակը: Երիտասարդի ներս մտնելիս օրիորդը նստած կարում էր: Տեսնելով իւր հիւրին, նա կարը մի կողմ դրեց, կանգնեց եւ խիստ քաղաքավարութեամբ ողջունեց նրան, աւելացնելով.

— Զեր ազնուասրտութիւնը, յիրաւի, ինձ խիստ զգալի է. ես համարձակուեցայ ձեզ նեղութիւն պատճառել:

— Ընդհակառակը ինձ համար մեծ ուրախութիւն է, պատասխանեց Քաջբերունին եւ տուաւ նրան «Քնար Հայկական»:

Օրիորդն ուրախութեամբ առաւ զիրժը ասելով.

— Ա՛խ, ես շատ շնորհակալ եմ ձեզանից. դուք չափազանց պարտաւորեցրիք ինձ :

— Տեսնելով ձեր այդպիսի սէրը դէպի Հայոց դրահանութիւնը, ես մեծ ուրախութեամբ պատրաստ եմ միշտ բերել ձեզ համար ամէն տեսակ հայերէն գրքեր :

Նրանք նստեցան : Օրիորդն սկսեց ուրախ-ուրախ թերթել «Քնար Հայկականը» :

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութեան համար, ասաց նա. ես բաւական հայերէն գրքեր ունիմ, միայն նրանք բոտ մեծի մասին գրաբար լինելով, լաւ չեմ հասկանում. իսկ մի քանիսն էլ թէեւ աշխարհաբար, բայց զանազան բարբառով լինելով, դարձեալ դժուար հասկանալի են. բայց այս գիրքը կարելի է հասկանալ : Ինձ ասացին, թէ գրանում հաւաքուած են մեր նոր եւ հին գրողների համարեա բոլոր ընտիր երգերը :

— Այո՛, պատասխանեց Քաջբերունին, մենք մինչեւ այսօր չենք ունեցել այդպիսի հարուստ երգարան : Առաջին անգամն է, որ տեսնում էք այդ գիրքը :

— Առաջին անգամն է, պատասխանեց օրիորդը. միայն այս երգերից շատերն ինձ ծանօթ են, որոնք ես կարդացել եմ «Հիւսիսափայլի», «Գամառ-Քաթիպայի» եւ մեր այլ պարբերական հրատարակութիւնների մէջ, ինչպէս են՝ «Արաքսի արտասուքը», «Խաւացի աղջկայ երգը» եւ այլն :

— Գուք ստանճում էիք «Հիւսիսափայլ», հարցրեց Քաջբերունին :

— Ես շարունակ ստանում էի այդ պատուական ամսագիրը, պատասխանեց օրիորդը. ախո՛ս որ նա դադարեցաւ : Ռուսաստանում մենք մինչեւ ցայժմ չենք ունեցել այնպիսի անպատ եւ խորհրդաւոր հրատարակութիւն :

Քաջբերունին հիացած էր օրիորդի առողջ դատողու-

թեան եւ նրա ազգասիրական եռանդի վրայ: Եւ կամենալով
աւելի լաւ ծանօթանալ նրան, հարցրեց.

— Դուք ուրիշ ի՞նչ պիտի հրատարակութիւններ էիք
ստանում, կամ ի՞նչ գրքեր ունիք:

— Ես ստանում էի «Կոռուկ», «Ճոռաքաղ», թէեւ նրան-
ցից եւ ոչ մինը «Հիւսիսափայլի» հետ չէ կարող դասուել:
Մի քանի օր առաջ ինձ մօտ էր եկած մի պօլսեցի երիտա-
սարդ. նա պատմում էր, թէ Տաճկաստանում լրագիրներն ու
ամսագիրները աւելի մեծ կատարելութեան են հասած: Ես
խնդրեցի նրանից, նա բերաւ ինձ համար մի քանի համար
«Մասիս», «Մամուլ», «Մեղու», «Փունջ»: Ես կարգացի-
արդարեւ տաճկահայերի ղործերը աւելի բարձր պիտի դասել
գրականութեան մէջ քան Ռուսաստանի մերայիներինը:

— Ի՞նչն է պատճառ տալիս ձեզ այդպէս մտածել,
հարցրեց Քաջբերունին:

— Ի հարկէ իմ նկատողութիւնները չեն եղել այնքան
կրիտիկաբար, ո՛ւր քնաց որ մի քանի թերթերից չէ կարելի
ամբողջ Տաճկաստանի Հայոց այժմեան գրականութեան մա-
սին որոշ կարծիք յայտնել. միայն որքան եւ նկատեցի,
նրանց մէջ առաւել տեսանելի է մտքերի յղատութիւն եւ
իրական ու բարոյական կեանքի ուսումն:

— Ո՞վ էր այն երիտասարդը:

— Ուղիղը չգիտեմ, որովհետեւ նա իւր անձի համար
ոչինչ չասաց. միայն որքան երեւում էր, ուսեալ ոմն պիտի
լինէր:

Քաջբերունին մտածման մէջ ընկաւ:

— Նա այստե՞ղ է այժմ, հարցրեց նա:

— Ո՛չ, չգիտեմ նա ուր գնաց. նա ճանապարհորդում
էր զանազան տեղեր:

— Ի՞նչպէս եղաւ, որ դուք ծանօթացաք նրա հետ:

— Մի օր Աղեքսանդրեան այգում եւ նստած էի մի ան-

կիւնտում իմ մի բարեկամ երիտասարդի հետ. խօսում էինք մի կատակերգութեան մասին, որ այն օրերում ներկայացրին պատանի N-ինի տանը: Ես նկատեցի մի օտարական, որ նստած էր նստարանի միւս ծայրին եւ ուշադրութեամբ լսում էր մեզ. երբ մեր վէճը վերջացաւ, մենք սկսանք դրօսնել այդիւմ, նա դարձեալ չէր հեռանում մեզանից: Խօսակիցս ամենեւին ուշադրութիւն չէր դարձնում, բայց ես գաղտնի հետադատում էի նրա ընթացքը: Օտարականի խորհրդաւոր կերպարանքը շարժեց իմ հետաքրքրութիւնը: Ինձ ցանկալի էր գիտենալ, թէ ի՞նչու չէր հեռանում նա մեզանից: Ընկերիս հարկաւոր եղաւ վառել իւր ծխախոտը նրա ցիգարից, որ նա ծխում էր. այդ փոքրիկ յարարերութիւնը առիթ տուաւ նրան հաղորդ լինել մեր խօսակցութեանը եւ ես այդպիսով ծանօթացայ այն պարտնի հետ:

— Նա ակնոց ունէ՞ր, բարձրահաստ՞իկ էր, դանդուր մազերով, շաղանակազոյն, մոխրազոյն լայնեզրեայ եւրոպական գլխարկ, այնպէս չէ՞. պայծառ, դբաւիչ դէմքով... փոքրիկ չէկաւոն մուրուքով... այո՞. խօսելու միջոցին սովորութիւն ունի խաղալ մօրուքի մազերի հետ... ուղի՞ղ է:

— Իսկ եւ իսկ, կրկնեց օր. Աննան, նոյն անձն է: Բայց դուք մի բան մոռացաք. աւելի նշանաւոր են նրա աչքերը՝ մեծ-մեծ, լիքը, փայլուն եւ խաժակն...

— Այո՛, պատասխանեց Քաջրերունին:

— Ասացէք՝ խնդրեմ, ո՞վ էր նա:

— Ես եւս այնքան գիտեմ թէ ո՞վ է նա, որքան եւ դուք. միայն այսքանն ինձ յայտնի է, որ նա, ինչպէս ասացիք, ուսեալ ունի է...

Մի քանի րոպէ եւս տեւեց նրանց մէջ այդ խօսակցութիւնը անձանօթ անձի մասին, մինչև եւ նրանք դարձեալ սկսեցին խօսել Հայոց դրականութեան մասին:

— Հրամմեցէք զնանք իմ մատենադարանը, ուր զուգիլը տեսնէք, թէ ինչ գրքեր ունիմ, ասաց օրիորդը կանգնելով:

Քաջբերունին նոյնպէս վեր կացաւ: Օրիորդը իւր կարը եւ կարելու պարազանները զնելով մի զանրիւզում, սկսաւ առաջնորդել իւր հիւրին դէպի իւր մատենադարանը, ամենեւին ուշադրութիւն չդարձնելով թափ տալու իւր հաղուստին կպած բամբակի եւ թելի պատառները:

— Մեր Սաթենիկը՝ փոքր քոյրս չի բարկանայ, որ այսօր եւս չի կարող հազնել իւր շապիկը, ասաց օրիորդը:

— Ուրեմն ես զրկեցի խեղճ երեխային իւր ուրախութիւնից, ասաց Քաջբերունին, արդեւք լինելով ձեզ կարելու:

— Ո՛չ, նա այնքան բարի երեխայ է, որ չի նեղանայ նրանք մտան մատենադարան:

Քաջբերունուն այնպէս էր թվում, թէ հարիւր անգամ եղել է այդ տանը, եւ օրիորդի պարզ վարուեցողութեան մէջ չէր նշմարվում որեւիցէ մեծարական ցոյցեր. նրա բոլոր ընթացքը արտայայտում էր անկեղծութիւն եւ բարեսրտութիւն:

Օրիորդի մատենադարանը մի փոքրիկ սենեակ էր, բաւական մաքուր, առանց արտաքին շքեղութեան, նրա բոլոր գարդարանքն էին մի քանի պատկերներ, որոնց մէջ տեսանելի էր Վարդան Մամիկոնեանի, Ոզի Հայաստանի, Հայկի պատկերները եւ մի քանի սյլ պատկերներ հայ քաջազուններ:

Օրիորդն սկսաւ ցոյց տալ իւր գրքերը:

— Ահա՛ Եղիշէ, ահա՛ Խորենացի, Նարեկ, Ազաթանգեղոս, Վէրք Հայաստանի...

— Բաւական գրքեր ունիք, ասաց Քաջբերունին:

— Գրքեր ունիմ, միայն ջաւում եմ, որ գրարար են, իսկ ես լաւ չեմ հասկանում:

— Դուք կարող էք պարապել հին լեզուով, առանց լաւ ծանօթանալու հին լեզուի հետ, չէ՛ կարելի խորին տեղեկութիւն ունենալ մեր լեզուին եւ մեր գրականութեանը:

— Բոլորովին ուղիղ է ձեր ասածը, պատասխանեց օրինորդը. քանի եզրայրս կենդանի էք, նա ուսուցանում էք, բայց նրա մահից յետոյ թերի մնաց իմ հայերէն լեզուի գիտութիւնը. այժմ թէև մի սարկաւազ երբեմն դալիս է դաս պարապելու հետս, բայց այդ խղճալին ինքը եւս լաւ չէ խմանում:

— Եթէ դուք համաձայնէք, ես պատրաստ եմ շարաթը երկու անգամ դալ ձեզ հետ հայերէն պարապելու:

— Եթէ ձեր ժամանակը կը ներէ, ես չափազանց շնորհակալ կը լինիմ, պատասխանեց օրինորդը:

— Ես այժմ համարեա՛ բոլորովին ազատ եմ, պատասխանեց Քաջբերուծին. բայց եթէ դորժ եւս ունենայի, դարձեալ ես մեծ հաճութեամբ իմ ժամանակից մի քանի ժամ կը դահէի մի հայ օրինորդի, որ կամենում է իւր աղջային — մայրենի լեզուն լաւ սովորել: Ախտո՛ս, որ՝ այդպիսի ցանկացողներ խիտ հազուադիւս են այս քաղաքում: Այստեղի աղջիկները ո՛չ միայն չեն սիրում իրանց աղջային լեզուն ու գրականութիւնը, այլև ատում են եւ նախատիք են համարում խօսել հայերէն:

— Ի՞նչ մեղ ունին այն խեղճերը, սշտասխանեց օր. Աննան. նրանք ի՞նչ ճաշակ ունին իրանց աղջային գրականութիւնից եւ լեզուից, որ սիրեն նրան. իրանց ընտանեկան կեանքում դեռ երեխայ երբ նրանց լեզուները բացվում է, ծնողներ սկսում են նրանց հետ խօսել օտարազգի բառերով. այնուհետեւ երբ ուսումնարան են մտնում, այնտեղ եւս օտարազգի լեզուներ են սովորում՝ բոլորովին զուրկ մնալով աղջային լեզուից:

Քաջբերունու ղէմքը մուսլուեցաւ լսելով վերջին խօսքերը՝ նա ոչինչ չպատասխանեց :

— Եթէ մեր ծնողները լինէին խելացի մարդիկ, առաջ տարաւ իւր խօսքը օր. Աննան, եւ իրանց աղջկերանց ազգային հիմնաւոր կրթութիւն տային, այլեւս ուրիշ ո՞ր ազգի լեզուն կամ գրականութիւնը կարող էր գրաւել հայ օրիորդի սիրտն ու հոգին, որպէս իւր հայկականը : Օրինակի համար վեր առնենք մեր «Վէջք Հայաստանին». ես տասն անգամ կարդացել եմ նրան, բայց դարձեալ արտօմանքով նորից ցանկանում եմ կարդալ. բայց մի օտարազգի վէպ միանգամ երբ մարդ կարդում է, միւս անգամ այլեւս չէ ցանկանում նայել նրա վրայ :

Քաջբերունին ուշադրութեամբ լսում էր նրան եւ զարմանում նրա դատողութեան վրայ. նա Ռուսաստանում այս առաջին անգամն էր հանդիպում մի այդպիսի օրիորդի, որ այդ տեսակ կրթութիւն եւ հասկացողութիւն ունենար :

— Եթէ ես փոքրիչատէ գիտեմ հայերէն, խօսեց օրիորդը, այդ իմ հանդուցեալ հօր եւ եղբօրս շնորհիւն է. քանի եղբայրս չէր վերադարձել համալսարանից, հայրս էր պարսպում իմ կրթութեամբ. իսկ եղբօրս դաւուց յետոյ, երբ հայրս վախճանեցաւ, եղբայրս նրա փոխարէն սկսաւ կառավարել մեր տնտեսութիւնը եւ հողաբարձու լինել իմ կրթութեան. սակայն թոքախորը նրան չթողեց երկար ապրել, նա մեռաւ Երկու տարի առաջ :

Այդ փոքրիկ պատմութիւնը օրիորդը արտասանեց այնպիսի զգալի կերպով, որ բաւական ներգործեց Քաջբերունու սրտին :

— Ես ուրախ եմ, որ «Քնար Հայկականի» միջոցով կարողացայ ծանօթանալ ձեզ հետ եւ յոյս ունիմ փոխարինել ձեր հանդուցեալ եղբօրը՝ հայերէնում ունեցած ձեր թերութիւնները լրացնելու :

Օրիորդը իւր շնորհակալութիւնը յայտնեց զլիւի շարժումով, ապա հարցրեց.

— Դուք կարծում էք, եթէ «Բնար Հայկականը» առիթ չտար մեզ միմեանց հանդիպելու, մենք բոլորովին անծանօթ պիտի մնայինք միմեանց :

— Այո՛ :

— Բայց վաղուց է որ ես ճանաչում եմ ձեզ, պատասխանեց օրիորդը :

Քաջբերունին չկամենալով յայտնել, թէ միանգամ ինքը տեսել էր նրան թատրոնում, ցանկացաւ գիտենալ այդ անակնկալ խօսքի իսկութիւնը :

— Դո՛ւք. ի՞նձ, հարցրեց նա :

— Այո՛, ձեզ :

— Ի՞նչպէս :

— Լսեցէք, ես պատմեմ ձեզ, խօսեց օրիորդը. մի կիւրակէ ես վերադառնում էի հիւանդանոցից, որ գտնվում է գերմանացոց թաղում, ուր դնացել էի մի քանի խեղճ հիւանդների այցելութիւն գործելու. ինձ հանդիպեց մի գերմանուհի պառաւ, որին վաղուց ես ճանաչում էի. նա ասաց, թէ իւր տանը կենում է մի հոյ երիտասարդ, որ խիստ հիւանդ է, եւ աւելացրեց թէ երիտասարդը ուսանողներից է : Նա խոյն հասկացայ, որ հիւանդը մեր քաղաքացի չպիտի լինի, որ կենում է գերմանացու տանը, եւ խնդրեցի պառաւին, եթէ կարելի է ինձ ցոյց տալ հիւանդին : Նա յօժարեցաւ : Մենք միասին եկանք նոյն գերմանուհու տուն : Այնտեղի հիւանդը դուք էիք. ես ձեր քնարանի լուսամուտից ներս նայեցի, դուք պառկած էիք. բայց չհամարձակուեցայ ներս մտնել՝ տեսնելով մի այլ տղամարդի, որ նստած էր ձեր մահճակալի մօտ : Իսկ այնուհետեւ, ես ամէն կիւրակէ դալիս էի նոյն պառաւի մօտ եւ հարցնում էի ձեր առողջութեան մասին : Պատաւն ինձ ուրախացնում էր միշտ հաղորդելով

ձեր առողջութեան օր ըստ օրէ ուղղուելու մասին. այլև նա հաղորդեց ինձ մի քանի տեղեկութիւններ ձեր բնաւորութիւնից, որոնք խիստ հետաքրքրեցին ինձ, եւ այնուհետեւ ես ցանկանում էի ձեզ հետ ծանօթանալ: Այդ էր պատճառը իմ այն վերին աստիճան անքաղաքալարութեան, որ երբ մենք առաջին անգամ հանդիպեցինք դրավաճառանոցում, եւ խնդրեցի ձեզնից անձամբ բերել «Քնար Հայկականը» մեր տուն:

— Ծնորհակալ եմ ձեր բարեսրտութեան համար, ադնիւ օրիորդ, ասաց Քաջբերունին եւ բարեկամաբար սեղմեց նրա ձեռքը:

— Բայց այն միւս մանուկ տղամարդը ո՞վ է, որ ձեզ հետ կենում է, հարցրեց օրիորդը:

— Նա իմ ընկերն է՝ համալսարանից սկսած:

— Պէտք է այն պարոնը ազնիւ տղամարդ լինի. դերմանուհի պառաւը պատմում էր, թէ նա շատ խնամք էր տանում ձեր առողջութեան մասին:

— Այո՛, նա բարի տղայ է:

— Նա եւս մեր քաղաքացի չէ՞:

— Այո՛, նա էլ ինձ պէս պանդուխտ է սյստեղ:

— Խնդրեմ, միւս անգամ մեր տուն դալուս նրան եւս ձեզ հետ բերէք. ի՞նչպէս է նրա անունը:

— Վահէ Արամեան:

— Վահէ Արամեան, կրկնեց օրիորդը. ա՛խ, ես ո՛րքան սիրում եմ մեր պատմական անունները. ի՞նչ քաղցր յիշատակներ են նրանք ծնում մեր մտքի մէջ...: Բայց ասացէ՛ք խնդրեմ, ի՞նչ է ուսել պարոն Արամեանը համալսարանում:

— Նա աւարտել է բանասիրական մասը, այլև ուսել է արևելեկան լեզուները:

— Ուրեմն հայերէն եւս լաւ պիտի դիտենայ:

— Նա երևելի հայկաբան է, այլև հեղինակ. ունի մի

քանի արհեստական եւ մի քանի բանաստեղծական աշխատութիւններ. այս օրերում նա աւարտեց մի եղերերգութիւն՝ «Վարդան Մամիկոնեանի մահը» անունով. հիանալի բան է :

Արեւը վաղուց մայր էր մտել, եւ սենեակը, ուր նրանք նստած էին, բաւական մթնել էր : Օրիորդը նկատեց այդ, խկոյն վառեց դամբարը ասելով .

— Ինչո՞ւ ճրագ չենք վառում. ա՛խ, ո՛րքան մոռացկոտ եմ ես :

Մի քանի րոպէ եւս նրանք խօսեցին այս եւ այն առարկայի վրայ, մինչեւ աղախինը եկաւ յայտնեց օրիորդին, թէ որտեղ կը կամենային վայելել թէյը :

— Պարոն Քաջբերունի, ասաց օրիորդը, հրամայեցէք զնանք դահլիճ. այնտեղ դուք կը տեսնէք իմ պառաւ մօրը եւ կը ծանօթանաք նրա հետ :

Նրանք դուրս եկան մատենադարանից եւ մտան դահլիճ : Այնտեղ նստած էր օրիորդի մայրը, մի հասակն առած կինարմարդ, բարի եւ խելացի դէմքով : Նա ոտքից ցլուխ հագնուած էր սեւ : Օրիորդը իւր հիւրին ներկայացրեց մօրը, ասելով .

— Ահա՛, մայրիկ, պարոն Քաջբերունին, այն երիտասարդը, որ հիւանդ պառկած էր դերմանացոց թաղում, եւ որի մասին շատ անգամ պատմել եմ քեզ :

— Իմ մայրը, ա. Նդիսարէթ, կրկնեց օրիորդը :

Քաջբերունին դուրս տուաւ, նրանք նստեցին :

Ներս մասն՝ օրիորդի քոյրը՝ Սաթիւնիկը — մի սեւիկ աղջիկ, թաւ դիտակներով եւ փոքրիկ դէմքով, եւ նրա եղբայրը — Արշակը, փոքր քրոջ նման մանուկ, դորշ դէմքով : Երկուսն էլ քաղաքավարութեամբ մօտեցան, ձեռք տուին Քաջբերունուն եւ նստեցին իրանց մօր մօտ : Օրիորդը ցոյց տուաւ նրանց վրայ ասելով :

— Աբշահը եղբայրս է, Սաթինիկը փոքր քոյրս. դրանց երկուսի անունն էլ մեծ եղբորս դրածն է:

Մեծ եղբոր անունը յիշելուս տիկին Նդիսարէթի աչքերը լցուեցան արտասուքով, օրհորդը նկատեց այդ եւ շուտով խօսքը փոխեց:

Մատուցին թէյ: Քաջբերունին մի փոքր եւս խօսեց այս ու բանի վրայ, յետոյ գդակն առաւ ու հեռացաւ:

ԼԵ

Գալով իրանց կացարանը Քաջբերունին բոլորը պատմեց Արամեանին, թէ ինչպէս առաջին անգամ տեսել էր օր. Աննային թատրոնում, այնուհետեւ ինչպէս հանդիպեցաւ դրավաճառանոցում, եւ թէ յետոյ ինչպէս ծանօթացաւ նրա հետ:

Քաջբերունին բոլորովին պերճարան չէր, բայց խօսելով օր. Աննայի վրայ, նրա խօսակցութեան անփոյթ եւ անզարդ ոճն ընդունում էր բաւական զեղեցիկ ձև:

— Նրա բոլոր գոյութեան մէջ, շարունակեց նա, չէ երեւում ոչինչ բան կեղծեալ, նա պատկերանում է քո առջեւ որպէս մարմնացած առաքինութիւն՝ իւր պարզ եւ հրեշտակային սրբութեամբ: Նրա խելացի դէմքն արտայայտում է հեղութիւն եւ բարեսրտութիւն: Նրա աչքերի մէջ վառվում է երկնային հուր, մինչ այն աստիճան դրաւիչ եւ բազմախորհուրդ, որով խկոյն հրապուրվում ես, եւ դու մեծաւ հաճութեամբ ասում ես, թէ արժէ սիրել դրան...

— Ա՛սա՛, խնդրեմ, հարցրեց Արամեանը, ի՛նչպիսի ուսում եւ կրթութիւն ունի նա:

— Նա չէ կղել ոչ մի վարժարանում, այլ ուսել է իւր հօր եւ կղբօր մօտ. նա բաւական մաքուր խօսում է իւր մայրենի լեզուով եւ բաւական հասկանում է մեր հին լեզուն-

ունի բաւական դարդացած խելք, նա խօսում է քեզ հետ ամէն առարկայի մբայ՝ ուսումնական, արհեստական, քաղաքական, կրօնական եւ այլն, եւ բոլորի մէջ յայտնում է իւր ասողջ գատողութիւնը եւ իւր խելացի կարծիքը:

— Այդպիսի ազջիկներ այս քաղաքում հազուադիւս երեւոյթներ են, եւ շատ կը ցանկանայի նրա հետ ծանօթանալ:

— Նա արդէն խնդրել է որ ես քեզ տանեմ իրանց հետ ծանօթացնելու:

— Նա ո՞ր տեղից է ճանաչում ինձ:

Քաջբերունին սկսեց պատմել, թէ ինչպէս օրիորդը տեսել էր նրան հիւանդութեան ժամանակ:

Նոյն միջոցին դռները ճոռացին եւ յանկարծ ներս մտաւ Դիաչկովը:

— «Պատմութեան քաղցր տեղում մլթոնին ասաց՝ սալրամ-ալէքում», ասաց Արամեանը թուրքերէն առածը:

— Ինձ մի՛ ջղրանցնէք, ես այնքան բարկացած եմ, որ կսիւ կը սարքեմ, ասաց նա հայերէն լեզուով, դէմքը խոժտելով:

Նա դրաւ զլիսարկը լուսամուտում եւ սկսաւ անցուղարձ անել սենեակի մէջ, զլուխը շարժելով, ինքն իրան տակելով՝ «Այո՛, զժրախտութիւն... զժրախտութիւն»...

— Ի՞նչ է պատահել, Թաթոս, հարցրին նրանից:

— Էլ ինչ պիտի լինի. դուք, պարոններ, չար աչքով դարկեցիք իմ բախտաւորութեանը, պատասխանեց Դիաչկովը բարկութեամբ եւ շարունակելով անցուղարձ անելը:

— Մեր աչքերը Արտաւազդայ աչքերը չեն, ասաց նրան Արամեանը:

— Արտաւազդը չդիտեմ ով էր եւ ինչպիսի աչքեր ունէր, երեւի նա էլ ձեզ պէս Հայոց Թաղաւոր կը լինէր ծիծա-

դելով պատասխանեց Դիաչկովը, միայն ճշմարիտն ասած ես դժբախտ եմ այժմ :

Քաջբերունին եւ Արամեանը կարծեցին, թէ կարելի է նրան որեւիցէ դժբախտութիւն հանդիպած լինի, այդ պատճառով ցաւակցաբար հարցրին նրանից, թէ ի՞նչ դժբախտութիւն է պատահել նրան :

Դիաչկովը նստեց եւ իւր տխրամած աչքերը խորհրդաւոր կերպով ձգեց նրանց երեսին եւ խօսեց .

— Եղբարք, ես ցաւալի կերպով արտաքսուած եմ Հացի-Գէլենց տնից . ինքը օրիորդ Սոֆին հրամայած է այլ եւս չընդունել ինձ :

— Իրաւ այդ մեծ դժբախտութիւն է, կրկնեց Քաջբերունին . ի՞նչ պատճառով :

— Պատճառը խիստ բնական է, պատասխանեց Դիաչկովը . վերջին օրերում նրանց տան ներքին յարկում բնակվում է մի ուսու, մանկահասակ աստիճանաւոր, որ ծառայում է Կովկասեան ինժեներնոյէ ուղարակներում : Նա մի տղամարդ է բնական զեղեցիկ դէմքով, բարձրահասակ եւ վայելուչ հագնուած . ես՝ խղճալիս, օրիորդի այդ նոր տարփածուի առջեւ կորցրի իմ բոլոր արժանաւորութիւնս :

— Ի՞նչպէս կապուեցաւ օրիորդը այդ աստիճանաւորի հետ, հարցրեց Արամեանը հետաքրքրութեամբ :

— Չէ՞ որ ես ասացի, թէ նա ծառայում է ինժեներնոյէ ուղարակներում, եւ ճանճուր Իվանիչը իրբււ մի փողբաչիկ (կապալառու) մարդ, ի հարկէ միշտ դորձ ունի այնտեղ, եւ փողբաչիկները միշտ կաշառքով դրաւում են այնպիսի աստիճանաւորներից մինին, որ ծառայում է իրանց շահերին . այդ պատճառով յիշեալ պարոնը ծանօթ է լինում ճանճուր Իվանիչի հետ, եւ դիտենալով որ նա սիրուն աղջիկ ունի, սկսում է իւր բարեկամութիւնը աւելի սնդացնել, մինչեւ անդամ երթեւեկել Հացի-Գէլենց տուն . յետոյ էլ իւր

ընտկութիւնը փոխում է այնտեղ, եւ ի՞նչ մի դժուար բան է տիրել Սոփիի նման թեթեւամիտ աղջկայ սրտին. վերջնապէս նա հասնում է իւր նպատակին:

— Ճանճուր Իվանիչը չէ՞ կասկածում նրանից, հարցրեց Քաջրերունին:

— Կասկածանքը այնտեղ նշանակութիւն չունի, երբ Ճանճուր Իվանիչը աչքի առջեւ ունի իւր նիւթական շահերը. նա տտաւել ուրախ կը լինէր՝ մի սղդպիսի նրա համար բարերախտ հանդամանքում, եթէ իւր դատեր սիրով, նոյն իսկ նրա պատուի դնով, կարողանար որսալ ինժենէրի սերտ բարեկամութիւնը, որ ամէն տարի կարող էր նրան հազարնեքով օգուտ տալ:

— Ուրեմն դու յաղթուեցա՞ր ինժենէրից, հարցրեց Քաջրերունին:

— Այո՛, իմ բոլոր հնարադիտութիւններս փշրուեցան՝ Բոյց եթէ սղդ անիծեալ Ճանճուր Իվանիչը սուղերում դատ ունենար, ես էլ միեւնոյն դերը կը խաղայի, ինչ որ ինժենէրը. դժբախտարար նա ոչ ոքի հետ վէճ չունի:

— Ուրեմն աշխատի՛ր նրան քարշ տալ դէպի սուղ, ստաց ծիծաղելով Արամեանը:

— Եւ ես դրա վրայ եմ մտածում, պատասխանեց Դիւսչկովը, առանց սղդ չէ՛ կարելի:

— Այո՛, մտածի՛ր, կրկնեց Քաջրերունին կատակով, եւ հարկաւոր է մտածել...:

— Որպէս սուղել եմ՝ ինժենէրը կամենում է պսակուել Սոփիի վրայ, եւ Սոփին էլ բոլորովին խելքից ելած է նրա համար:

— Ուրիշ ի՞նչ կայ, հարցրեց Քաջրերունին, սղդ մեզ շատ չէ՛ դրաւում, սրովհետեւ մենք վաղուց գիտէինք, թէ նրանից ինչ էր դուրս գալու:

— Բոյց ես մահու շափ վշտացած եմ. այն Պանտա-

լոնովսկու (այդպէս էր ինժեների անունը) հէրը կ'անիծեմ...
 Թող մի փոքր անցնի... նա չդիտէ թէ ո՛ւմ հետ է կատակ
 անում... :

Այդ խօսքերն այնքան կրքով արտասանեց Դիաչկովը,
 որ յիբաւի նրա աչքերը վառուեցան բարկութիւնից, եւ նա
 դարձեալ վեր կացաւ եւ սկսաւ անցուղարձ անել սե-
 նեակի մէջ՝

Բոլոր այդ խօսակցութեան միջոցին Արամեանը լուռ
 էր. նրա վրայ խիստ անախորժ ներգործութիւն ունեցաւ
 Դիաչկովի լուրը: Թէեւ նա վաղուց իւր սիրոյ կապը կտրել
 էր օրիորդ Սոֆիի հետ, բայց տակաւին մի դադտնի կիրք
 նրա սիրտը ցաւեցնում էր, երբ լսում էր նրա մասին, թէ
 նա օր ըստ օրէ դիմում է դէպի կործանումն:

Բայց Դիաչկովը մօտեցաւ նրան եւ բռնեց նրա ձեռքը
 ասելով.

— Եղբայր, դու միայն կարող ես կարեկցել ինձ, որով-
 հետեւ մենք երկուքս համալիճակ ենք. բայց իմ խօսքերը
 ընկերօջ չեն դրաւում. նա թող պարսպի իւր Հայոց թագա-
 ւորութիւնը օդի վրայ հիմնելու ծրագրով... :

Մանուկ տղամարդիկը ոչինչ չպատասխանեցին նրա
 խօսքին, եւ Դիաչկովը առաւ գլխարկն ու առանց մնաք բա-
 րեաւ ասելու, դուրս դնաց:

— Ո՛ւր, ո՛ւր, Թաթոս, կանգնի՛ր, բան ենք ասում,
 ձայնեցին նրան. բայց Թաթոսը առանց յեա նայելու դնաց:

— Այդ յիմարը մեզ ընդհատեց, ասաց Քաջբերունին
 կցելով ընդհատուած խօսակցութիւնը օր. Աննայի մասին:

— Երկու հակառակ ծայրեր են օր. Սոֆին եւ օր.
 Աննան, մինը որքան անբարոյական եւ լկախ, միւսը այնքան
 առաքինի եւ բարեկիրթ:

Եւ նրանք Երկար խօսեցին կանանց կրթութեան մասին.
 Դիաչկովը նրանց մօտից դուրս գալով, ճանապարհին

Հանդիպեց մի աստիճանաւորի, որ կառքով դնում էր. նա տեսնելով Դիաչկովին, կառքը կանդնեցրեց եւ հրաւիրեց նրան իւր մօտ նստել: Դիաչկովն ուրախութեամբ ընդունեց նրա հրաւերը:

— Ո՞ւր էիք, հարցրեց աստիճանաւորը:

— Այստեղ մի քանի բոլէ ներս մտայ, պատասխանեց Դիաչկովը:

— Ո՞ւմ մօտ:

— Այդ տեղ երկու հոգի հայ-ի կ'ներ կան...:

— Դուք ի՞նչ դործ ունէիք նրանց մօտ:

— Ինձ պատուիրուած է լրտեսել նրանց դործունէութիւնը:

— Ի՞նչպիսի անձինք են:

— Նախանձաւոր պատրիօտ-ի կ'ներ (հայրենասէրներ):

— Ի՞նչ մտքերի են ծառայում:

— Մինը աշխատում է մշակել Հայոց լեզուն եւ դրահանութիւնը, խելամուտ առնել աղբին իւր պատմական ասանդութիւններին, իսկ միւսը կատարեալ ծով է. նրա յատակը դեռ չէ երեւում, բայց խիստ վտանգաւոր մարդ է: Երեւում էր որ սյդ ծանօթութիւնները հետաքրքրեցին աստիճանաւորին. նա շարունակեց իւր հարցութորձը.

— Այստեղ ի՞նչ են շինում:

— Այս քաղաքում բոյն դնելու միտք ունին:

— Ծառայո՞ւմ են. ապրուատ ունի՞ն:

— Նրանք մերկ են որպէս թեփուած հաւ, բայց իրանց աղքատութեան մէջ դարձեալ հպարտ են եւ անընկճելի:

— Վաղո՞ւց է որ ճանաչում էք դրանց:

— Ես համալսարանից ընկեր եմ եղել դրանց հետ:

Այսպէս նրանք խօսում էին եւ կառքը սահում էր ողորկ շրջանի վրայով, մինչեւ Դիաչկովը հրամայեց կանգնել, եւ ներսգութիւն խնդրելով աստիճանաւորից, վայր իջաւ:

— Առայժմ քնաք բարեաւ, ես պիտի մտնեմ իշխանի մօտ, ասաց նա :

— Մե՞ր իշխանի, Հարցրեց աստիճանաւորը :

— Այո՛, պատասխանեց Դիաչկովը եւ սկսաւ դիմել դէպի մի հոյակապ տուն : Պահապան կաղաղից, որ կանդնած էր դրանը, ստուգելով, որ իշխանը տանն է, նա քարշեց զանգը :

Աստիճանաւորը հեռացաւ :

Դուրս եկաւ մի ծառայ հագնուած լիվրէյ եւ առաջնորդեց նրան : Դիաչկովն սկսաւ բարձրանալ նեղ դորզի վրայով, որ բեւեռած էր սանդուխտներին, եւ լիմոնի, նարինջի ծառերի եւ սէսպէս ծաղիկների միջով նա մտաւ մի մեծ դահլիճ՝ փառաւոր կերպով դարձարած :

Այնտեղ մի քանի բոպէ սպասեց նա, մինչեւ նրա մասին իմացում տուին, յետոյ ընդունուեցաւ այն սենեակում, որ դարձարած էր աշխարհիս հագուազիւտ բաներով : Այդ իշխանի առանձնասենեակն էր :

Եւ արդարեւ Դիաչկովը խորին մեծարանքով գլուխ տուաւ մի ծերուկի, այեւոր գլխով, ակնոցներով եւ խորամանկ դէմքով, որ դրասեղանի հանդէպ նստած դրում էր : Տեսնելով Դիաչկովին, նա զրիչը վայր դրեց եւ իւր հարցական հայեացքը ձգելով Դիաչկովի երեսին, ասաց .

— Բարով, Ալէքսանդր Սիմոնովիչ . հը՛, ի՞նչ կայ :

— Մի քանի բոպէ առաջ նրանց մօտ էի, տէր, պատասխանեց Դիաչկովը . բոլորը ստոյգ է, ինչ որ ասել են ձեզ :

— Ի՞նչպէս :

Դիաչկովը իւր չորս կողմը նայեց, կարծես պատերը լսում էին նրան, եւ մօտեցաւ իշխանին եւ կանգնելով ծերուկի առջեւ նա երկար պատմեց նրան մի դատանիք : Մերուկը խորին ուշադրութեամբ լսում էր նրան, եւ հետզհետէ կա-

տաղի բարկութիւնը բոցավառվում էր նրա նախանձայոյզ աչքերում :

Երբ վերջացրեց Դիաչկոյը իւր խօսքը, դարձեալ հեռացաւ եւ կանգնեց իւր առաջուան տեղը :

— Ես այդ բոլորը իմացում կը տամ ուր պէտք է, վերջապէս խօսեց իշխանը, եւ մենք կը կարգադրենք նրանց մասին :

— Բայց ձերդ մեծափայլութիւնը մի խոստմունք ունէր ծառայիդ, ասաց Դիաչկոյը :

— Այո՛, ես չեմ մոռացել, ես խօսացել եմ նախազահէ հեա, դուք անպատճառ մի քանի օրից յետ դատարանում անդամ կ'ընտրուիք :

Դիաչկոյը դուրս տուաւ եւ հեռացաւ :

— «Գատարանի անդամ... Ի՞նչ հրաշալի խօսք է դա...», խօսում էր իւր մէջ ճանապարհին Դիաչկոյը. «այո՛, մեծ փառք է այդ՝ նստել ոսկեայ վօրօտնիկով դահլի վրայ, եւ դատ լսել... Այն յիմարները (Քաջբերունին եւ Արամեանը) ինձ վրայ ծիծաղում են, բայց ես կը դլորեմ դրանց դէպի մշտնջենաւոր կորուստ, եւ նրանց դամբարանի վրայ կը բարձրացնեմ իմ փառքի աթոռը...» :

Այդ խորհրդածութեան մէջ էր նա, որ յանկարծ մի կառք սլացաւ իւր մօտից. նա տեսաւ օր. Սոֆիին եւ Պանտալոնովսկուն միասին նստած կառքում : Կայծակի հարուած ունեցաւ այդ երեւոյթը նրա վրայ, եւ նրա ուրախ դէմքը մի ակնթարթում մոսյլուեցաւ :

19

Միւս օր կիւրակի էր : Արամեանն ու Քաջբերունին առաւօտից պատրաստուել էին գնալ օր. Սեպուհեանցի մօտ (այդպէս էր օր. Աննայի աղջանունը) :

Տասն ժամին նրանք երկուսն էլ դուրս դնացին, նստեցին կառք եւ դիմեցին դէպի քաղաք:

Մտնելով Սեպուհեանցներէ տուն, նրանք դտան միմիայն տ. Եղիսարէթին, որ ուրախութեամբ ընդունեց մանուկ տղամարդկանց. Գաջբերունին ծանօթացրեց տիկնոջ հետ Արամեանին եւ նրանք նստեցին:

— Ո՞ւր են օր. Աննան եւ երեխերքը, դուք մենակ էք, հարցրեց Գաջբերունին:

— Աննան երեխանց հետ դնացել է ժամ, միայն ես փոքր տկար լինելով զրկուեցայ այսօր պատարազ տեսնելուց, պատասխանեց տիկինը:

— Աննան ամէ՞ն կիւրակէ ժամ է դնում, հարցրեց Արամեանը:

— Ո՞չ մի կիւրակէ նա յետ չէ մնում պատարազից. նա սիրում է աղօթել:

— Այդ մի բարի ձգտումն է մանուկ աղջիկներէ մէջ, աւելացրեց Արամեանը. այդպիսով նրանք աւելի մօտ կը լինին Աստուծոյ:

— Թէ աղջիկը եւ թէ տղան, թէ ծերը եւ թէ երիտասարդը, մի խօսքով՝ բոլոր մարդիկ միշտ կարօտ են Աստուծոյ ողորմութեանը, պատասխանեց ջերմեռանդութեամբ տիկինը. որովհետեւ մեզն ու մա՜շը մեր ամէնքիցը շատ հեռու չեն:

Նախասնեակում լսելի եղան ոտնաձայներ:

— Ահա՛ նրանք եկան, ասաց տ. Եղիսարէթը:

Ներս մտաւ օր. Աննան իւր փոքրիկ քրոջ եւ կզբօր հետ, բոլորովին սպիտակ հաղնուած. նրա հազուադէպ փրփուրի պէս թեթեւ, խիստ վայելուչ կերպով նստած էր նրա վրայ: Կարծես նա Աստուծոյ տունը դիմելու ժամանակ միայն սովորութիւն ունէր պատշաճաւոր կերպով հաղնուիլ՝ Նա «ողորմի Աստուած» ասելով իւր մօրը եւ իւր հիւրերին, մօ-

տեցաւ, բարեկամարար սեղմեց Քաջբերունու ձեռքը, եւ Արամեանի հետ ծանօթանալուց յետոյ, խիստ քնքուշ բարեարտութեամբ յայտնեց իւր ուրախութիւնը Արամեանի հետ ծանօթանալու համար: Ապա նա դարձաւ դէպի մայրը ասելով:

— Մայրիկ, դու այսօր չկարողացար պատարագ տեսնել, բայց ես քեզ համար նշխարք եմ բերել ժամից:

— Աստուած օրհնէ քեզ, հողեակս, ասաց տ. Եղիսարէթը եւ ատու նշխարքը եւ երեսը խաչակնքելով դրեց բերանը:

— Դուք եւս, պարոններ, կարծեմ, այսօր ժամում չէք եղած, դարձաւ նա դէպի մանկահասակ տղամարդիկը, ձեզ եւս պէտք է հաղորդ կացուցանել Տիրոջ սեղանի վշրանքին:

Նրանք չկամենալով վշտացնել օրիորդի ջերմեռանդութիւնը, բնդունեցին նրա ձեռքից մի-մի պատառ նշխարք եւ բերանները դրին:

Մայրն սկսաւ հարցնել աղջկանից, թէ եկեղեցում ո՞վ կար, ժողովուրդը շա՞տ էր թէ քիչ, եւ թէ ո՞վ էր պատարագիչը:

— Պատարագիչը Տէր-Յարութիւնն էր. ժողովուրդը խիստ սակաւ էր, համարեա մի քանի պատառ կանայք եւ ձերունիք էին միայն եկել: Ժողովուրդը, ինչպէս երեւում էր, զնացել էր Մեծ Դքսի դալստեան հանդէսը տեսնելու: Ձդիւտեմ ինչո՞ւ, այսօր ժամաացութիւնն էլ շատ անկանոն էր: Պատարագիչ քահանան Յովհաննու աւետարանը մինչեւ վերջը չկարդաց:

Տ. Եղիսարէթը շարժեց դուխը:

— Ա՛խ, քահանաներ... կոչեց նա խորհրդական ձայնիւ:

— Այդպիսի օրերում նրանք առհասարակ պոչից, գլխից կարում են, ասաց Քաջբերունին, եւ միեւնոյն բոպէին սորջացաւ, թէ ինչո՞ւ մի այդպիսի պատկառելի իրողութեան վրայ այնպէս տղեղ խօսեցաւ:

Տ. Եղիսարէթը ոչինչ չպատասխանեց, միայն օրիորդն ասաց .

— Դժբախտաբար այդպէս են մեր եկեղեցականները . կարծես թէ նրանք Աստուհամար չեն կարգում, կամ մի դերագոյն ունին չէ լսում նրանց, այլ իրանց ժամասացութեամբ միայն ժողովրդին են կամենում հրատարակել . . . :

— Այդ բոլորը մեր քահանաների վատ կրթութիւնիցն է, պատասխանեց Արամեանը . մինչեւ այսօր մենք չունինք կարգին ուսումնարաններ՝ օրինաւոր քահանայացուք պատրաստելու համար . եւ մեր քահանաներն ընտրվում են ժողովրդի անպիտան մասից : Այդ է պատճառը՝ որ ժողովուրդը չատ է սառել եկեղեցուց :

— Երբէք մարդ չի հրաժարվում իւր բարեկամի տանից, եթէ նրա ծառաներն անկիրթ եւ անկարգ մարդիկ են, խօսեց տ. Եղիսարէթը . ուրեմն ի՞նչպէս կարելի է հեռանալ Աստուծոյ տանից, եթէ նրա սպասաւորներն անկիրթ մարդիկ են :

— Բոլորովին ուշիկ է ձեր խօսքը, պատասխանեց Արամեանը, բայց եւ այնպէս հարկաւոր է Աստուծոյ տան սպասաւորութեան համար արժանաւոր ծառայողներ պատրաստել :

— Առհասարակ մեր եկեղեցու մէջ ժամասացութիւնը վերին աստիճանի անկանոն է, ցանկալի է որ այդ բանի վրայ ամենալուրջ ուշադրութիւն դարձնուէր : Լաւ եւ ներդաշնակ երգեցողութեան միջոցով կարելի էր մեր ժողովրդի նախկին կրօնական ջերմեռանդութիւնը վառել, եւ այդպիսով ժողովրդին դէպի բարին առաջնորդել :

— Այո՛, ձայների ներդաշնակութիւնն ահազին նշանակութիւն ունի . եւ մեր շարականների մէջ ի սկզբանէ անտի դոյութիւն է ունեցել երաժշտական նշաններ . միայն ցաւալին այն է որ առհասարակ մենք չենք մտածում մեր ունեցած

ընտիր-ընտիր բաները կարգ ու կանոնի տակ ձգելու, որով ստիժ ենք տալիս Հայկական կեանքին անձանօթ մեր օտարամոլ ազգայիններին մտածելու, թէ մենք ոչինչ լաւ բան չունինք :

— Ձեր խօսակցութիւնը կարող է աւելի երկարել ասաց տ. Եղիսարէթը դառնալով զէպի դուստրը, Հապա մենք թէյ չպիտի՞ խմենք. եւ դու քո Հիւրերին չպիտի՞ պատուասիրես. ա՛խ, որքան անբաղաբավարի ես :

Օրիորդը վեր կացաւ եւ Հրամայեց ազախնին սարքել թէյի սեղանը :

— Այդպէս է Աննան, դարձաւ զէպի Հիւրերը տ. Եղիսարէթը. երբ նա ընկնում է խօսակցութեան յետեւից, արդէն ամէն ինչ մոռանում է :

— Մի՞ թէ դեռ թէյ չէք վայելած, Հարցրեց Քաջբերունին :

— Մենք միշտ սովորութիւն ունինք բոլորովին ծօմ զնալ եկեղեցի :

Օրիորդն ամէն օր սովորութիւն ունէր ինքը մատակարարել թէյը, բայց այսօր նա իւր պաշտօնը թողեց ազախնուն եւ ինքն նստեց Հիւրերի մօտ՝ նրանց դրողեցնելու իւր խօսակցութեամբ : Նա մի օր առաջ լսելով Քաջբերունուց, թէ Արամեանը Հեղինակ է եւ ունի մի եղերերդութիւն զրած, այդ Հարցը նրան Հետաքրքրում էր, եւ կամենալով լիովին տեղեկութիւն ստանալ նրա աշխատութեան մասին, Հարցրեց .

— Պ. Արամեան, դուք վերջացրի՞ք ձեր եղերերդութիւնը :

— Այո՛, պատասխանեց Արամեանը. բայց դուք ո՞ր տեղից դիտէք, թէ ես եղերերդութիւն եմ գրում :

— Անցեալ օրն ինձ ասաց պ. Քաջբերունին. ինձ շատ ցանկալի է տեսնել այդ :

— Մի քանի օր առաջ մենք մի պարոնի տանը դրակա- նական երեկոյթ ունէինք, ուր կարդացինք իմ եղբերդու- թիւնը. այժմ մի քանի երիտասարդներ մտադիր են բնմի վրայ եւս ներկայացնել ի հարկէ դուք նոյնպէս ներկայ կը լինիք :

— Ես մեծ ուրախութեամբ ներկայ կը լինիմ. միայն եթէ կարելի է մինչեւ ներկայացնելը մի անգամ բերէիք մեզ մօտ կարդալու. ես շատ կը ցանկանայի յառաջագոյն տեղե- կանալ ձեր աշխատութեան պարունակութեանը եւ յետոյ տեսնել բեմի վրայ :

Արամեանը խոստացաւ :

— Շատ ցաւալի է, կրկնեց օրիորդը, որ այսքան հայ ժողովուրդ ունինք այս քաղաքում, բայց չունինք մի ազ- դային թատրոն. դերմանացիք այստեղ մեր քաներորդ մասի չափ եւս չկան, բայց առանձին թատրոն եւ առանձին սկումբ ունին :

— Դեռ այդ բանի համար շատ ժամանակ պէտք է, մինչեւ հայը դերմանացու պէս յառաջագէժ դառնայ... զլուխը շարժելով կրկնեց Արամեանը :

— Բայց ես լսել եմ, որ պոլսեցիք ունին ազգային թատրոն, խօսեց օրիորդը : Այդ ուրախալի բան է, որ Տաճ- կաստանի հայերն այնքան առաջ են դնացել, բայց ցաւալի՜ որ Ռուսաստանի հայերս այսքան յետ ենք մնացել :

— Բայց պոլսեցիք ունին եւ Սահմանադրութիւն... պատասխանեց Արամեանը զգալի եղանակով :

Օրիորդը խնդրեց Արամեանին պատմել իրան պոլսեցոց Սահմանադրութեան մասին մանրամասն, թէ ո՞վ եղաւ նրա սկզբնապատճառը, ինչպէս սկսուեցաւ, խոստովանելով թէ ինքը շատ քիչ դիտէ այդ մասին : Արամեանը, թէ եւ համա- ոտաբար, բայց ճշտութեամբ պատմեց նրան Սահմանա- դրութեան ամբողջ պատմութիւնը : Օրիորդը յայտնեց իւր շնորհակալութիւնը, երբ նա աւարտեց խօսքը :

Մանուկ տղամարդիկը նշմարելով որ երկար նստեցին, վերկացան, մնաք բարեաւ ասելով հեռացան. տ. Եղիսաբէթը շատ խնդրեց, բայց նրանք չմնացին ճաշի: Օրիորդ Աննան նրանց ճանապարհ դնելու ժամանակ կրկին անգամ խնդրեց Արամեանին եղբերդութեան մասին:

— Ես իմ կեանքումս չեմ տեսած մի այդպիսի օրիորդ մեր հայերի մէջ, ճանապարհին ասաց Արամեանը:

— Այո՛, տե՛ս, թէ ի՛նչ ներդործութիւն ունի ուղիւ կրթութիւնը մանուկ սեռի վրայ:

— Բայց ափսո՛ս, որ նրա կրօնասիրութիւնն ու բարեպաշտութիւնը հասնում է մոլեռանդութեան:

— Ի՞նչ մի մեծ կորուստ է, որ նա ծանօթ չէ Վոլտերի եւ Բուսսոյի հետ, պատասխանեց Քաջբերունին. աւելի լաւ է կանանց լինել բարի քրիստոնեայ, քան թէ ազատ փիլիսոսփաներ: Նիդիլիստուհիների անբարոյական օրինակը քեզ բուսական է իմ ասածս աղացուցանելու:

— Այո՛, աշխատելու է Աննայի նման օրիորդներ պատրաստել, խօսեց Արամեանը ուկեղրութեամբ. դրա՛նք եւ միայն դրա՛նք կարող են ծնել ազգի համար պիտանի որդիք, եւ ոչ թէ նիդիլիստական ուղղութեամբ տողորուած ու փշայած աղջկերքը:

— Ո՞րտեղ պատրաստել, պատասխանեց Քաջբերունին:

— Պէտք է աշխատել հիմնել ազգային օրիորդական դպրոցներ, եւ նրանց կրթութեան օրինաւոր ուղղութիւն տալ:

— Նախ՝ որ այդ հնարաւոր չէ, բացի դրանից մեր յեմար քաղաքացիք — այդ հաստափոր գոմշի ուսմբիքը, այդ անդղայ, հողւով եւ մաքով մարմնացած մսէ բլուրները, ի՛նչ հնար են տալիս իրանց ուսեալ երիտասարդներին ազգին ծառայելու: Երեւակայիւր սյստեղ մի քանի իգական դպրոցներ կան, ուր պարազում են մեր հայ երիտասարդները. խեղճերը ո՛չ միայն արժանաւոր վարձատրութիւն չեն կա-

բողանում ստանալ, այլ շատ անգամ ձրի աշակերտուհիներ եւս չեն դռնում: Այս կամ այն մաղամէին ուրախութեամբ հարիւրներով մանէթներ են տալիս ամէն տարի, բայց ուսուցչին, որ դեքտորի դիպլոմը ծոցն է, հողիները դուրս է դալիս մինչեւ ամսական երեք մանէթ են տալիս:

— Այդ ունի իւր յատուկ պատճառները, որ մերայինք այստեղ այդպէս օտարամոլ են, պատասխանեց Արամեանը: Աղջկանց ուսումը եւ նրանց կրթութիւնը այստեղի ժողովրդի համար բոլորովին այլ նշանակութիւն ունի, քան ինչ որ կարծում ենք: Ուսման վրայ նրանք նայում են որպէս մի նիւթի վրայ, ինչպէս են այն կարասիքը, որ ծնողները պատրաստում են իրանց աղջկանց օժիտի համար: Ծնողները վաղուց հասկացել են որ ինստիտուտի, պանսիօնի լոկ անունը մեծ նշանակութիւն ունի իրանց աղջկերանց մարդու տալու ժամանակ, երբ նրանց մօցիքուլը, փեսին հրապուրելու համար, թէ չէսքան փուղ ունէ, էսքան բաժինք ունէ, էհէնց սիրուն է, էհէնց հունարով է... եւ աւելացնում է. «ինստիտուտումը կուրսը վերջացրիլ է... ոսնակ խօսիլ դիտէ... փօրտոպեան ածել, տանցօլաա խաղալ»...:

Այդպէս խօսելով երկու երիտասարդները դնում էին: Ճանապարհին հանդիպեց նրանց Գիաչկովը:

— Ո՞ւր, հարցրին նրանից:

— Ես ուղղակի ձեզ մօտ էի դալիս, պատասխանեց բաւական ուրախ դէմքով Գիաչկովը:

— Ներս դնանք:

Նրանք արդէն հասել էին իրանց կացարանին: Երեքը միասին ներս մտան:

— Ի՞նչ նոր համբաւ ունիս, հարցրին նրանից:

— Ես մի լաւ համբաւ ունիմ, թէեւ այդ չէր կարող ձեզ այնքան ուրախութիւն պատճառել, որպէս ինձ, այնուամենայնիւ հարկաւոր է ստել. երեւում է բախտը առժամա-

նակ եւս կամենում է ժպտալ ինձ. դուք կարելի է դեռ չէք մոռացել, որ անցեալ անդամ ձեզ պատմեցի իմ դժբախտութեան մասին, եւ վերջում աւելացրի, թէ Հայր-Գէլինց մօտ միւս անգամ պատիւ դանկու համար պէտք է աշխատել ճանճուր Իվանիչին դէպի սուդ քարշ տալ, որպէս զի նրանք միւս անգամ ակնկալութիւն ունենան ինձնից:

— Դեռ եւս երկա՞ր պիտի ձգուի այդ պատմութիւնը, նրա խօսքը ընդմիջեց Քաջբերունին. իսկ եւ կարծում էի, թէ մի այլ բան պիտի պատմես:

— Խնդրեմ լէ՛ք, վերջը շատ հետաքրքրական է, ասաց Գիւրչիւովը: Այո՛, որպէս զի նրանք միւս անգամ ակնկալութիւն ունենան ինձնից... Մինչ եւ այս խորհրդածութեան մէջ էի, եւ սրտնում էի որոգայթ լարել ճանճուր Իվանիչին, յանկարծ Աստուած ինքը կատարում է իմ խորհուրդը. ասէք ի՞նչպէս: Ճանճուր Իվանիչը բաւական մեծ դումար ֆեստուած է արքունի կապալներում, եւ տէրութեան դանձարանը նրա բոլոր շարժական եւ անշարժ կայքը պիտի ծախել սոց. նրանք ինձնից խնդրեցին պաշտպանել նրան սուղումը, թէ եւ համոզուած եմ, որ ոչինչ չեմ կարող օղնել. բայց ինձ ի՞նչ փոյթի, ինձ համար այսքանը միայն բաւական է, որ այդ անցքը առիթ տուաւ ինձ միւս անգամ ներս սողալ Հայր-Գէլինց ընտանեկան շրջանի մէջ:

— Ո՞րքան չարախնդաց մարդ եւ դու, ասաց նրան Քաջբերունին, ուշադրութեամբ նայելով նրա երեսին:

— Ի՞նչ չարախնդացութիւն, աշխարհիս կարգն այդպէս է. ըստ մեծի մասին մինի դժբախտութիւնը միւսի համար բախտաւորութիւն է բերում:

— Ո՞րքան փոքրոգութիւն է այդպէս օճանման սողալ մինի խաղաղ դերդաստանի մէջ եւ նենդութիւններ դործ դնել:

— Ի՞նչ փոքրոգութիւն, կրկնեց Գիւրչիւովը իւր առաջուայ եւանդով:

— Ո՛չ միայն փոքրոգութիւն, այլևս վերին աստիճանի ցածութիւն է, որ դու ջո ազգակցի դժբախտութեան վրայ ես հիմնում ջո մոլեկան հրապոյրները: Եւ ջնայելով որ մի ամբողջ հայ գերդաստան զրկվում է օրական հացից, դու ուրախ ես, որ խեղճ քաղաքացու դառն վաստակը պէտք է զոհ դառնայ ջո ազահութեանն ու անխղճութեանը:

— Ի՞նչ հայ, արհամարհանքով կրկնեց Դիաչկովը. մենք վաղուց կարգացել ենք ջո հայի «հոգւոցն ու հանգուցելոցը»:

— Ուրացո՞ղ, կոչեց Քաջբերունին կատաղութեամբ. ջե՞ս սարսափում, որ այդպէս անարգութեամբ բերան ես առնում դու իմ ազգի անունը: Ահա՛ ես կը լռեցնեմ քեզ:

Եւ նոյն բողբոջին Քաջբերունին մի ծանր ապտակ տուեց ուրացողի երեսին, որի գլխարկը թռաւ գլխից եւ ինքը թաւալուեցաւ նրա ոտքերի տակ:

Եթէ Արամեանը շուտով վրայ ջհասնէր, ուրացողի մարմինը ջարդուխշուր կը լինէր Քաջբերունու ոտքերի տակ, այնքան սաստիկ նա բարկացած էր: Գլխի մաղերը խճճուած, շորերը փոշոտուած առանց գլխարկի դուրս դնաց Դիաչկովը, ասելով.

— Այս իրաւո՞ւնք է, որ դուք այսպէս վարուեցաք ինձ հետ:

— Այդ թող քեզ դաս լինի, մինչեւ որ դու ջափ դնես լեզուիդ:

— Շա՛տ լաւ... ասաց Դիաչկովը եւ հեռացաւ:

Արամեանը նրա գլխարկը դուրս ձգեց լուսամտուից: Մի քանի բողբոջ Արամեանն ու Քաջբերունին լուս նստած էին միասին. վերջինի դէմքն արտայայտում էր սարսափելի բարկութիւն: Արամեանը լուս նայում էր իւր ընկերի վրայ, ջհամարձակուելով նրան խօսեցնել, որովհետեւ նրան ծանօթ էր իւր ընկերի բնաւորութիւնը:

ԼԼ

Մի քանի օր էր Արամեանը սրբազրուժ էր իւր ողբեր-
դութիւնը մաքուր թղթի վրայ, վերջացնելուց յետոյ նա
մօտեցաւ Քաջբերունուն ասելով.

— Ի՞նչ ողբերգութիւնը բոլորովին պատրաստ է, կամե-
նո՞ւմ ես այս գիշեր դնանք օր. Աննայի մօտ կարդալու:

— Գնա՛նք, պատասխանեց Քաջբերունին:

Երեկոյեան զանգակները հնչում էին, երբ նրանք դուրս
եկան իրանց կացարանից եւ սկսան դիմել դէպի Սեպու-
հեանցի տուն:

Նրանք դասն օր. Աննային իւր առանձնասենեակում
պարապելիս իւր փոքրիկ քրոջ հետ հայոց լեզուի դասով:
Տեսնելով մանուկ տղամարդկանց, նա քաղաքավարութեամբ
բարեւեց նրանց, աւելացնելով.

— Կարծե՛մ դուք կը ներէք ինձ, մինչեւ վերջացնե՛մ
Սաթենիկի դասը:

— Սնդրե՛մ, շարունակեցէք, արդէլք չենք լինիլ, ասաց
Քաջբերունին:

— Ահա՛ ձեզ առժամանակ դրազմունք, ասաց օրիորդը
եւ տուեց նոյեւելու իւր ասեղնեզործութիւնները. թէեւ սրանք
այնքան էլ զեղեցիկ չեն:

Եւ օրիորդը զրեց սեղանի վրայ նրանց առջեւ մի թղթէ
արկղիկ, որի մէջ դրած էին նրա ասեղնեզործութիւնները:
Մանուկ տղամարդիկն սկսան մի առ մի նայել: Օրիորդը ան-
փոյթ կերպով շարունակում էր քրոջ դասը:

Ասեղնեզործութիւնները նկարուած էին դեղեցիկ ճար-
տարութեամբ. նրանց մէջ կային ճակատի կապոցներ, փոք-
րիկ բարձի երեսներ, սենեակում հազնելու հողաթափներ
երեսներ, բոլորակ դրասեղանի ծածկոցներ, եւ այլ զանազան
կանաչի դարզարանքներ: Մանուկ տղամարդկանց ուշադրու-

Թիւնն առաւելագէս զբաւեցին մի քանի ասեղնեզործ պատկերներ բնութիւնից, որ ներկայացնում էին ծով, երկինք, լեռներ, անտառներ, որոնց մէջ օրիորդը ցոյց էր տուել իւր նկարչական տաղանդը: Դրանց մէջ առաւել հետաքրքրական էր մի գործ, որի նկարագրերը վերցրել էր նա «Ողի Հայաստանի» պատկերից. այդտեղ հիանալի կերպով պատկերանում էին Արարատը, Հայաստանի աւերակները, տխուր ու տրտում Ողի Հայաստանին:

Մանուկ տղամարդիկը վեր առան վերջին ասեղնեզործած պատկերը եւ երկար նայում էին նրա վրայ: Օրիորդը թեւերի յարմար դունաւորութեամբ եւ ճարտար ստուերագրութեամբ համարեա շունչ էր տուել անշունչ կտաւին:

Օրիորդը վերջացրեց դասը:

— Նայի՛ր, Սաթենիկ, ասաց նա իւր քրոջը, եթէ դարձեալ այսպէս վատ սերտես դասդ, ես ստիպուած կը լինիմ մայրիկին յայտնել այդ մասին:

Սաթենիկը երկիւղածութեամբ դուրս գնաց:

— Ի՞նչպէս է, դարձաւ նա գէպի իւր հիւրերը: Ձլինի՞թէ ծիծաղում էք իմ լաթերի վրայ:

— Ընդհակառակն, ձեր ասեղնեզործութիւնները շատ գեղեցիկ են, պատասխանեցին նրան:

— Այդ գովասանքը խիստ չափազանց է, կրկնեց օրիորդը:

— Ո՛չ, անկեղծ եմ ասում, շատ հիանալի են, պատասխանեց Քաջբերունին. մանաւանդ այս պատկերը, որ ներկայացնում է «Ողի Հայաստանին»: Ասացէ՛ք խնդրեմ, ո՞րտեղից էք ասել սրա նախազաղափարը:

— Մի պատկերից, որ նկարել է հանդուցեալ եզրայրս. նա հիանալի նկարում էր, պատասխանեց օրիորդը. այս բոլորն էս ցոյց կը տամ ձեզ:

Եւ օրիորդը բաց արաւ իւր թղթերի պահարանը, այն-

տեղից հանեց մի պատկեր, մատիտով նկարած: Մանուկ աղամարդիկը երկար նայեցին նրա վրայ, նրանք սքանչա-
ցան նկարչի նարտարութեան վրայ:

— Ձեր եղբայրը նկարչութեամբ էր պարապում, հարցրին օրիորդից:

— Ո՛չ, միայն նա զուարճութեան համար սիրում էր իւր պարապ ժամերը նուիրել նկարչութեան: Բայց նա ո՛չ մի տեղ չէր սովորել այդ արհեստը:

— Չարմանայի ձերք պիտի ունեցած լինի ձեր եղբայրը:

— Այո՛, նա շատ շնորհալի երիտասարդ էր. սակայն ախսո՛ւս որ նա երկար չապրեցաւ:

Եւ օրիորդի դէմքը տխուր կերպով մոայլուեցաւ մտա-
բերելով եղբոր յիշատակը: Արամեանը՝ տեսնելով այդ, խօսքը փոխեց, աւելով.

— Ատեղնեգործութիւնը ամենահարկաւոր բանն է, որ պիտի սովորի ամէն մի աղջիկ. բայց ցաւալի է որ այստեղի օրիորդաց վարժարաններից ոչ մէկում հարկաւոր ուշադրու-
թիւն չեն դարձնում այդ առարկայի վրայ:

— Բայց այդ, խօսեց Քաջբերունին, աղջիկները՝ իբրեւ
զերգաստանի ապագայ մայրեր, ոչ միայն պիտի գիտենան
ատեղնեգործութիւն, այլեւ անպայման հարկաւոր է նրանց
սովորել եւ մի քանի թեթեւ արհեստներ, որպիսի են ձեռ-
նոցներ կտրել, յարդէ գլխարկներ հիւսել, կամ կտրել նոյնը
դանադան ճոթերից, կանացի կիսաօշիկներ կտրել, մի խօս-
քով այնպիսի արհեստներ, որոնց ձեռագործը կարողանար
վաճառքի նիւթ գտնուել եւ գրանով իրանց ապրուստը
թեթեւացնէր: Այդ բաները հարկաւոր է մանուկանց աղքատ
աղջիկների համար, որով նրանք կ'ապաստուէին իրանց ծնող-
ների վրայ ծանր բեռ լինելուց, այլեւ եթէ օժիտ չունենալու
համար հօր տանը մնային, նրանք գիտենալով սրեւիցէ ար-
հեստ, շատ աղքատ տղերք կը ցանկանային այնպիսի կին

ունենալ, որ իւր գործունէութեամբ կարողանար մասնակցել տղամարդու հոգսերին :

— Բոլորովին ճշմարիտ է ձեր ասածը, խօսեց օր. Աննան. մեր քաղաքում աղջիկները ոչինչ չգիտեն, նրանք՝ աղքատ թէ հարուստ, համարեա բոլորովին անգործ են եւ իրանց տան լուսամուտների առջեւ նստած, դէպի փողոց են նայում առաւօտից մինչեւ իրիկուն եւ սյգպէս աննպատակ անցկացնում իրանց ժամանակը: Եւ նախանձում եմ այս քաղաքի եւրոպացի աղջկերանց, որոնք զանազան թեթեւ արհեստների մէջ օգնում են իրանց տղամարդոց, եւ առեւտրական խանութներում մեծ գործ են կատարում:

— Իզական սեռը այս՝ թէեւ եւրոպական քաղաքում՝ տակաւին կրում է իւր ճակատի վրայ ասիականութեան սեւ կնիքը, պատասխանեց Քաջբերունին. թէեւ նրանք հեռացան տների խորշերից, բայց նրանք այդ եւրոպական ազատութիւնը հանդիսացնում են միայն իրանց արձակ համարձակ գրօսանքներով փողոցները չափչփելով եւ ո՛չ թէ հրապարակ դուրս գալով իբրեւ մարդ, որ գործէր իւր մտաւոր ու նիւթական բարօրութեան համար:

Ազգայինը ներս մտաւ եւ յայտնեց, թէ տ. Եղիսարէթը խնդրում է հիւրերին զալ իւր մօտ թէյ խմելու:

Նրանք զնային դահլիճ:

Տիկինը խիստ բարեարտութեամբ բարեւեց նրանց եւ զանգատուեցաւ, թէ ինչո՞ւ այնպէս ուչ էին զայլիս իրանց մօտ. մանուկ տղամարդիկը յայտնեցին մի քանի պատճառներ, թէ զբաղուած էին, գործ ունէին եւայլն, բայց տիկինը ոչ մինը չընդունեց եւ դարձեալ խնդրեց՝ որքան կարելի է յաճախ գային:

— Մայրիկ, ասաց օր. Աննան, պ. Արամեանը մի աշխատութիւն ունի. մի քանի օր առաջ եւ խնդրեցի, որ բերէր մեզ մօտ կարգալու, շնորհակալ եմ, որ նա կատարեց իմ

խնդիրքը՝ մենք այսօր կ'ունենանք զբաղանական երեկոյ,
 պ. Արամեանը կը կարգայ իւր եղբերեղութիւնը:

— Իմ կողմից եւս շնորհակալութիւնը պ. Արամեանին,
 որ կատարել է քս խնդիրքը, խօսեց տիկինը. նա այնքան
 բարեսիրտ է, որ յանձն է առնում այդպիսի նեղութիւն:

— Այդ ինձ համար նեղութիւն չէ, պատասխանեց
 Արամեանը. ես ուրախ կը լինէի, եթէ իմ գերքը զբաւէր
 ձեր ուշադրութիւնը:

Օր. Աննան ինքն սկսաւ թէյ մատակարարել:

Տ. Եղիսարէթը հարցրեց Արամեանից, թէ ի՞նչ է նրա
 գրքի բովանդակութիւնը: Արամեանը համառօտ պատմեց
 Մուրր Վարդանանց քաջազործութիւնները եւ նրա նահատա-
 կութիւնը: Տ. Եղիսարէթը թէեւ գովեց նրա աշխատու-
 թիւնը, բայց այսպէս վերջացրեց.

— Մեկը է մի այդպիսի սուրբ գործը ներկայացնել
 թատրոնական բեմի վրայ:

Արամեանը չկամեցաւ գիմադրել նրա ջերմեռանդու-
 թեանը, այդ պատճառով ոչինչ չպատասխանեց:

Թէյից յետոյ Արամեանից խնդրեցին, որ կարգայ: Օր.
 Աննան իւր քրոջն ու եղբորը նայեպէս պատուիրեց, որ նստեն
 եւ լսեն: Արամեանը կամեցաւ մի քանի նշանաւոր տեղեր
 որոշել կարգալու համար:

— Ո՛չ, ասաց օր. Աննան, դուք սկսեցէք սկզբից, ես
 ցտնկանում եմ ծանօթանալ ձեր գրքի ամբողջ պարունակու-
 թեանը. եթէ այս գիշեր չվերջացնենք, կը նշանակենք մի այլ
 գիշեր եւս:

Արամեանը հաճեցաւ եւ ընթերցանութիւնն սկսեց. բո-
 լորն էլ ուշադրութեամբ լսում էին:

Քաջբերունուն բաւական յայտնի լինելով իւր ընկերի
 աշխատութիւնը եւ նրա պարունակութիւնը, նա ահանջ չէր
 գնում, միայն նստած մի մեծ բաղկաթոռի վրայ ուշադրու-

Թեամբ նայում էր օր. Աննայի երեսին եւ զննում նրա դէմքի ամէն մի փոփոխութիւնը, ամէն մի արտայայտութիւնը բոլոր ընթերցանութեան ժամանակ: Քաջբերունին նկատում էր, որ այն տեղերը, ուր բանաստեղծը նկարագրում էր պատերազմական քաջազործութիւնները հայ հերոսների, կռուի աղմուկը, թշնամու կոտորածը եւ քաջ Վարդանի խրախուսական ձայները. — օրիորդի դէմքը բացատրում էր խորին քաջազնական ոգեւորութիւն, եւ նրա սիրուն աչքերը բոցաւառւում էին սարսափելի փայլողութեամբ: Կարծես ինքը սուրը ձեռքին կռուի դաշտում պաշտպանում է հայրենիքը: Իսկ այն տեղերը, ուր նկարագրւում էին ուրացողների թուլարտութիւնները, Վասակի մատնութիւնները եւ կամ Հայոց քաջերի ընկնիլը պատերազմի դաշտում, օրիորդի դէմքը մոայլում էր, եւ մի քանի անգամ Քաջբերունին տեսաւ, որ նա գաղտնի երեսը շրջեց դէպի միւս կողմ եւ սրեց արտասուքը աչքերից:

Արամեանը յոգնելու չափ կարգաց:

Քաջբերունին նկատելով որ ընթերցանութիւնը հեռուէն ճշող տպաւորութիւն է դործում օրիորդի վրայ, խնդրեց Արամեանից դադարել կարգաւոյց:

— Ծա'տ ապրիս, շատ լաւ ես գրել, խօսեց տ. Եղիսարէթը, Աստուած աւելի շնորհ տայ:

— Անկեղծութեամբ եմ ասում, խօսեց օրիորդը, եւ մինչեւ այսօր քանի՜ քանի դրուածքներ՝ թէ՛ ոտանաւոր, եւ թէ՛ արձակ շարագրութիւններ եմ կարգացել Վարդանանց քաջերի վրայ, բայց մինչեւ այսօր նրանց ո՛չ միւր այն տղաւորութիւնը չէ դործել ինձ վրայ, ինչպէս ձեր դրածը:

— Այլ ձեր աղնիւ զղացողութիւնից է, պատասխանեց Արամեանը:

— Ինչո՞վ պիտի վարձատրես դու Արամեանի աշխատ-

տութիւնը, ասաց տ. Եղիսարէթը. նա բաւական յոգնեցաւ, քաղցրաւենիք կամ ինչ որ ունինք, դնա բեր:

Օրինորդը վեր կացաւ եւ մի քանի բողբոջից յետոյ մատուցարանի վրայ բերաւ դանազան տեսակ խիստ վարպետութեամբ պատրաստած մուրաբէք:

— Այդ մուրաբէքը Աննայի եփածն է, ասաց տ. Եղիսարէթը, հրաւիրելով հիւրերին ճաշակել:

— Այդպիսի չնչին բաներով միայն կարող ենք պարծենալ մենք՝ հայ օրինորդներս, խօսեց օր. Աննան: Մեր ընտիր ձեռագործն է խոհանոցի պտուղ, կամ դերձակի դործունէութիւն. մենք չունինք կրթութիւն եւ ոչինչ չենք ուսած. եւ մի լաւ բան մեզինից չէ կարելի յուսալ. մի մաղամ X ... միայն կարող է յառաջանալ գաղղիացու պէս ուսեալ ժողովրդից եւ ո՛չ անկիրթ հայի աղջիկներէ:

— Յաւալի է ասել, խօսեց Արամեանը, որ այս քաղաքի աղջիկներն ըստ մեծի մասին զուրկ են եւ դրանցից. շատերը տակաւին չգիտեն՝ հացը ժոնձուսն են թխում, թէ՞ բունձուսն է, որպէս գեանախնձոր, եւ նոյն իսկ թե՛լ ու ասեղ բանացնել եւս չգիտեն:

— Այո՛, վերին աստիճանի ստոր գրութեան մէջ է մեր վիճակը այս քաղաքում, պատասխանեց օր. Աննան. մենք չունինք ո՛չ բարոյական եւ ո՛չ գիտնական կրթութիւն, մենք չգիտենք ո՛չ անտեսութիւն եւ ո՛չ կառավարութիւն, մի խօսքով՝ մենք Աստուծոյ ձեռքի ամենամոռացաբարձն ենք:

— Ձեր կարծիքը չափազանց խիստ է իզական սեռի մասին, պատասխանեցին օրինորդին:

— Անձնատարութիւնը ոչինչ նշանակութիւն չունի, բայց վնասակար հետեւանքներից, պատասխանեց օրինորդը: Ո՛վ չէ նկատում իւր թերութիւնները, նա կը դրկուի ամենոյն յառաջագիւծութիւնից:

Նրանք դեռ եւս երկար խօսեցին այդ նիւթի վրայ, եւ օրիորդն առաւել խելացի կերպով ապացուցեց, որ իրանց քաղաքում աղջիկները ոչ այլ ինչ են, բայց միայն «ըստարկ խրճիկներ», կամ «երեխայի խաղալիքներ»: Մանուկ տղամարդիկը բոլորովին համոզուեցան նրա ասածներէից:

— Ե՞րբ էք մտադիր բեմի վրայ ներկայացնել ձեր ողբերգութիւնը, հարցրեց օր. Աննան:

— Միտք ունիմ, որքան կարելի է, շուտով ներկայացնել, ասաց Արամեանը:

— Ո՞վքեր են խաղալու:

— Մի քանի ուսանողներ մեր ընկերներէից:

— Եթէ մայրս թոյլ տար, ես եւս մի դեր կը վերցնէի, ասաց օրիորդը:

— Այդ շատ լաւ կը լինէր. կամենո՞ւմ էք, մենք կը խնդրենք նրանից:

— Ո՞չ, դուք մի՛ք խնդրի՛ր. ես ինքս կ'առեմ եւ կը համոզեմ նրան:

— Շա՛տ լաւ:

Նրանք տաքացած խօսում էին. դիշերն աննկատելի կերպով անցնում էր: Քաջբերունին նայեց ժամացոյցին եւ տեսաւ որ տասներկուսից անց է:

— Ժամանակ է տուն դնալու, ասաց նա եւ վեր կացաւ:

Արամեանը նոյնպէս վեր կացաւ. նրանք պատրաստուեցան դնալու:

— Դուք, կարծեմ, ասաց օրիորդը դառնալով դէպի Քաջբերունին, մի քանի օր առաջ ինձ մի բան խոստացաք:

Քաջբերունին մտածման մէջ ընկաւ:

— Մտքիցս դնացել է ամենեւին, ասաց նա:

— Որքան մոռացկոտ էք դուք, խօսեց օրիորդն անկեղծաբար ժպտալով: Դուք չխոստացա՞ք հայերէն պարապել ինձ հետ:

— Ա՛խ, այժ՛, ասաց Քաջբերունին, . և սիրով կը կատարեմ իմ խոստումս, առաւօտունից սկսենք:

— Շատ շնորհակալ կը լինիմ, ասաց զլուխ տալով օրիորդը: — Բայց դուք, պ. Արամեան, եթէ կարելի է ձեր զիրբը թողէք ինձ մօտ, ևս այս զիշեր կը կարգամ մնացածը:

— Ահաւ ուրախութեամբ, պատասխանեց Արամեանը: Նրանք հեռացան:

ԼԸ

Բաւական ժամանակ հեռանալով ձանճուր Իվանիչից, մեր ընթերցողը մի անգամ դռնէ չմտարեց, թէ ո՛ւր մնաց այդ մարդը, չնայելով որ խղճալին այժմ ընկած է դժբախտութեան դասն հարուածի տակ:

Մենք միւս անգամ կը տանենք մեր ընթերցողին ձանճուր Իվանիչի մօտ. նա այժմ հիւանդ պառկած է իւր մահճակալի վրայ:

Այժմ մեր հինաւուր բարեկամին դու չես գտնիլ այնպէս, ինչպէս էր նա առաջ, ազնիւ ընթերցող. նա այժմ բուրբոյին փոխուած է, նրա բուրբ մարմինը փքուած տիկի է նմանում ևւ մոտա գէմքը, այժմ մաշուած, դալկացած, սարսափելի է ինչպէս մահ, ևւ նրա աչքերը, դուրս ընկած իրանց բոյներից, վառվում են ելեքարական կրակով, որպէս սոված զայլի աչքերը մթին զիշերային ժամուն:

Նա անտէր, անխնամ պառկած է մի փոքրիկ խոնաւ սենեակում իբր գործակատարի՝ Սիմոն Կազօրիչի տանը. նրա մօտ նստած է ևւ Սամիլ Պետրովիչը, որ եկել է միլիթարելու իւր անբախտ բարեկամին:

Առածն ասում է. «Իժբախտութիւնը միայնակ չէ գալիս», նոյնը ևւ հանդիպեցաւ մեր խղճալի ձանճուր Իվանիչին: Սկսած այն օրից, Երբ բաժանուեցանք մենք նրանից,

անբախտութիւնները միմեանց յետեւից սկսան պաշարել նրան. մի կողմից տ. Բարբարէի եւ օր. Սոֆիէի շույլ ծախսերը օր ըստ օրէ աւելանալով՝ բոլորովին մաշեցին նրա հարստութիւնը. միւս կողմից նա ֆրաստուելով իւր կապալներէ մէջ, նրա տունը եւ շարժական կայքերը աճուրդի դրուեցան արքունի փողի փոխարէն: Վերջին անցքը մինչ այն աստիճան դարձուրելի հարուած էր խճալի ձանձուր Իվանիչի համար, որ նա կաթուածահարուելով անդամալոյծ դարձաւ եւ կիսակենդան ընկաւ անկողին՝ ողբալի կերպով սպասելով մահուան, որ հանդիստ առնի:

— Փիքը մի՛ անիր, ձանձուր Իվանիչ, ասում էր Սամիլ Պետրովիչը, էս աշխրքի բանը էդպէս է. սանդուխտներէ պէս մինը դէվէր է դնում, մէկէլը ցած է դալիս. էդ ամէնը Աստծու ձեռքին է. միք ձեռքին վուչինչ չկայ. մարդի ճակատին ինչ վուր դրած է, էն պտի ըլի. Յոր երանելին միտդ բի՛, քանի քամբախտութիւններէ մէջ ընկաւ. վուրթկերանցից, աղջկերանցից, տանից, տիղից, մէ խօսքով՝ իր ամէն հարստութենից գրկուեցաւ, մարմինը քրքրուեցաւ, օրթունքն ուտում էր նրա ջանը, մազբամ ինքը էլի չէր նիզանում, էլի իր Աստծուն փառք էր տալիս:

Յղճալի ձանձուր Իվանիչը խորին անզղայութեամբ դրուած լինելով իւր մահուան խանձարուրի մէջ, ամենեւին չէր ըսում Սամիլ Պետրովիչի միտթարանքները: Նա ընկրգմուած էր երեւակայական ցնորքներէ մէջ:

«Տեհա՞ր, Սիմոն Եսպորիչ, վո՞ւնց խարեցի քու Կուզմինին... է՛, դուն չիս դիտի իմ ուստութիւնը. ես աստանին կու նաղնիմ... հիմի դնա դո՛շաղ կայ. ինչպէս դուդիս՝ չինէ կազօննի անիրը, էդ շանվուրթի ինձենէրը էլ չի տտի՛ լամ մ'ա՛յ... Ես նրա ուկըր մի բան քսեցի՝ նա էլ չի հաշի քիզ վրայ...»:

Յղճալի ձանձուր Իվանիչը, իւր մահուան գտտացանքի

մէջ, Երեւակայութեամբ դարձեալ զնացել էր Կաւկայ. նա խօսում էր իւր զործակատարի հետ եւ պարծենում էր իւր զործունէութեան վարպետութիւններով:

Սիմոն Եագօրիչը լսելով իւր տիրոջ ծանօթ խօսքերը, անցեալը մի ակնթարթում նրա աչքի առաջ հանդիսացաւ, նա յիշեց իւր Կաւկայի կեանքի ոսկեղարը, Երբ այնքան առատ հունձ էր անում. նա յիշեց վերջին զժրախտութիւնները, եւ նրա սիրաբը փղձկեցաւ:

«է՛յ, կուչէր, ո՞ւմն ին էտ ձիանիբը... ո՞ւմն է էտ կառէթը... (չարունակեց հիւանդը իւր զառանցանքը) նա ինձ դուխ է տալիս... կ'օտիս թէ ես դրա ազան ըլիմ... Հա՛... հա՛... հա՛... իմն ի՞ն... կնիկս առնել էրի՞տ... ա՛խ, անիծեալ լինիք դուք, Բարբարէ, Սոֆի... դուք իմ սուներ քանդկցիք...»:

— Խեղճ մարդ, կրկնեց արտասուքը սրբելով Սիմոն Եագօրիչը, իւր տան անկարգութիւնները մահուան դէմ էլ նեղացնում են իրան...

Մի քանի բողէ բուեց ձանձուր Իվանիչը եւ շարունակեց վրացերէն լեզուով.

«Վաթիսուն տարի շարշարուեցայ, հողի, մարմին, յոյս, հաւատ եւ ամէն ինչ մաշեցի... Հարստութիւն ժողովեցի, սուսն ու սեղ ունեցայ, բոլորը մի քանի բողէում ջնջուեցաւ... Անիծեա՛լ աշխարհ, այս է քո էհախբարը... Ինչո՞ւ չես դալիս, սիրելի մահ. դնանք քեզ հետ միւս աշխարհը, տեսնենք այնտեղ ի՞նչ կայ... բայց նա այս աշխարհի նման ի՞նչպէս կը լինի... այնտեղ ձուկը, Կախէթու դինի, փողբաթներ չկան... այնտեղ փող չկայ... այնտեղ բոլորն ազատ են... այնտեղ հրեշտակներն էլ մերկ են ման դալիս...»:

Նա փոխեց իւր խօսքը:

«Ա՛խ, Սոֆի, Սոֆի... անիծուի՛ս դու, անդամ աղ-

ջիկ... դու իմ տունը իստակ քանդեցիր... քեզ վրայ որ-
 քան մխսեցի իմ սիրելի կողէկները... նրանք էին այնքան
 դառն հոգսերի... այնքան սեւ օրերի... նրանք իմ արեան,
 իմ կեանքի, իմ դառն քրտինքների դինն էին... Ա՛խ,
 ուսո՛ւմ, ուսո՛ւմ... Թքեմ քո մօզօնողի երեսին... դու
 փչացրիր իմ աղջիկը... նա թողեց մօր տունը, ձգեց իւր
 ծնողները եւ փախաւ մի շառլատանի հետ... Ա՛խ, ուսո՛ւմ,
 ուսո՛ւմ, անիծուի՛ քո մօզօնողը... Չէ՛, այդ ուս ուս
 չէր... այդ դա՛հ րոմար էր...

Էլ չխօսեց խղճալի հիւանդը, վերջին խօսքերով նա
 կնքեց իւր մահկանացուն:

Կ Տ Ա Կ

Ա

Թուին հազար ութ հարուր
Օխտանասուն ու մէկին,
Հայուց քրօնիկօնի
Ղ.Վինօրիս թուի հնդին :

Ես Ղազօ Իվանիչըս —
Դէզէյուլ ու մամէյուլ՝
Օջախի վուրթի, քաղկցի,
Օխտը պուրախի պատուաւոր :

Ուշքս ու միաքս գլխումս,
Լաւ ուղուխով, խելացի,
Իմ մեղաւոր ձեռքովս
Էս անդերձը գրեցի :

Իմ Խոստովնահէր տէր-տէրը՝
Տէր-ձիպինն ու Բաստամը,
Սամիլն ու Սիմօնը —
Չուրանէվէտ ին մօծամա :

Ճակախս գիրը Թամամ է,
Ես էլ շատ չիմ ապրի-
Երեք քսան տասիրիք
Անց իմ կացրի ես տարի :

Ես շատ ուժքը քաշեցի,
 Շէ՛ն մնայ Աստծու տունը.
 Քէ՛փ ու սափա արեցի,
 Դարդ չմնաց իմ սրտումը:

Փուղ ու փարայ դադեցի,
 Տուն ու տիղի տէր դառայ,
 Փողոցումը դուքաննիք
 Ու մէ քարվասլա առայ:

Աշխրքիս ամէն փառքերը
 Վայելեցի, լիացայ,
 Մազբամ փուղիցը մենակ
 Ջրլիս ես չկշտացայ...

Կախէթու դինին էնքան,
 Վունց որ իմ դէդի կաթը,
 Ես շատ անուշ արեցի,
 Առայ նրա լազաթը:

Դօշ, գուրդէէլ, խիղիլալէն
 Միշտ դբած էր իմ սուփրում,
 Առանց թերխաշ ցօցխալի
 Ճաշ չիմ կերի իմ օրում:

Օրթաճալի բաղերում
 Քէ՛փ իմ արի համաշա,
 Իմ դուռնայի ձէնէմէն
 Ո՞վ չէր դայի թամաշա:

Բայց ծերութեան հասակում
 Դարդս էլաւ անդարման.
 Էլի աղքատ, առանց փուղ
 Ես դնում իմ գերեզման...

Բ

Իմ քաղկերցի ասպրափե,
 Մեննի՛մ ձեր ազնիւ հոգուն,
 Ձիզ ես օրթում եմ տալի՛
 Ձրկինինց էկեղեցուն .

Ձիզ ես օրթում եմ տալի՛
 Սուրբ Մոզնի, սուրբ Թէկէթին
 Սուրբ Ձիզրաչէն զօրաւուր,
 Մէկէկէ սուրբ Շահնարաթին . —

Վուր դուք էս օրէս էզնէն
 էս իմ անդերձը կարթաք,
 Ու իմ գրջլտած հոքուն
 Օղորժի էլ հիզը տաք :

Իմ կինքիս պատմութիւնը
 Ձիզ թո՛ղ ըլի օրինակ,
 Ինձմէն դուք խիլք սողրեցէք,
 Վուր չմնաք խիղճ, դարդակ :

Նրբ արևելի դուք ծէքին
 Ասարծուն ազօթքնիր կ'օնիք,
 Ան ձիր դու՛շմընի դիսին՝
 Ուշունց, անիծք կութափէք .

Պարտական ըլիք, թէ չասիք
 էս անիծքնիրն էսթաւուր՝ —
 «Սուրբ Բէթխային, Թաճմինդա՛,
 «Միրանաւուր զօրաւուր,

«ԼՀԳՈՒՆՔԸ, վարժատնիք
 «Արէք քարքանդ, բրիչակ,
 «Վուր միւր վուրթիքը խելքէմէն
 «Զըլին ու շղառնան էչակ:

Ա՛խ, ի՛նչ ասիմ, ախարտիք,
 ԼՀԳՈՒՆՔԸ մօզօնողին.
 Վուրթիքս ուսման տուի,
 (Ափսո՛ս մխսած իմ փուղին:)

Բայց դուս էկան շարլատան,
 Իմ տունն արին վերան,
 Շայի-բիսախ մխսեցին,
 Ջան ու ջիզարս կերան...:

Գ

Էդ ուսում ասած բանը
 Դրուստ անիծք է, դեա՛խ,
 Ով վուրթուն ուսում կու տայ,
 Նա տուտուց է ու սարսաղ:

Ձիւր աղերքը թո՛ղ սովրին
 Վրացեվար գրիլ, կարթալ,
 Էլ չէ նրանց հարկաւուր
 Ուրիշ բանով ուսում տալ:

Աղջկերանցը խօ պէտքը չէ՛,
 Վուր կստունք էլ սովրին,
 Ուր սիրեկնին գիւր գրին,
 Ջը՛հէլ աղերք հուրս անին.

Ձեր քուրիաթի հեղ խօսիք
 Ամէն վախա վրացեւոր,
 Հասոց լիզուն պէտքը չէ՛,
 Անճուռնի է ու խաւար:

Թէ հայեւոր դուք խօսիք,
 Ան սովրեցնիք ձեր տղերքին,
 Աստուած վկայ, էն կինքում
 Էլ չի՛ պրծնի-ձեր հոգին.

Ձեզ կըպրի կարսումը
 Կ'երէ վասած թէժ կրակ,
 Չուն ձեր վարթիքը կուլին
 Կոօ ու ցօկ, շանճրազ:

Հայեւոր դուք մէկ մէկուն
 Չըլի վար բարենիւր տաք,
 Ան ձեր մեռլի հոգուն
 Էզ լիզուով աղօթք կարթաք:

Չուն հայեւոր աղօթքը
 Աստուծ էսկի չի լսի,
 Աստուծ ինքը վրացեւոր
 Մ'իշա կ'օսէ ու կուխօսի:

Ձեր կնանիքը, տղամարդէկ,
 Թէ մեռլին կ'օնին սուզ,
 Վրացեւոր վուխը ասին,
 Վար բնզունուի արարտուք:

Թէ վար Թելէթ, Խութէրա
 Ձեր քուրիաթով ուխա դնաք,
 Վրացեւոր սրփերուն
 Ձեր աղօթքները կարթաք,

Վուր ձիր լիզուն հասկանան,
 Ու կատարին ձիր մուրազ.
 Հաուց լիզուի աղօթքով
 Սրբիերուն կ'օնիք տնազ:

Պ

Ձիր տներու՞մը հայերից
 Դուք չպահիք քօծ ու բիջ,
 Թէ վուր պահիք ձիր դլխին
 Կուլի Աստծու մինձ պատիժ:

Չունքի ձիր պատկերները
 Կուլի վուր նրանցձէն սովբին
 Հաուց լիզուի խօսիլը,
 Կոօ դառնան ու դժուին:

Միշտ վրացի Իմերէլ,
 Թուշ ու Յէվսուր, Օսերուն,
 Պահեցէք ձիր տներում,
 Վուր լաւ կրթին ձիր վուրթուն:

Ձիր դուքներու դավթարը
 Չլի վուր դրիք հայեվար.
 Վրացեվար դրեցէք,
 Լաւ շնուրքով, մարթավար:

Թէ հայեվար դուք դրիք,
 Կուլի սուսուց մէ հէքեաթ
 Ու Աստուծ ձիր անուարին
 Ձի սայ խէր ու բարաքաթ:

Զիդ գեթազվա, մէ բան էլ
 Միտս էրի սուրբ Թեւէթ.
 Թէ ուղուճիք փուղ դադիւ,
 Պիտի ծախիք դալը բիլէթ:

Շանփուրի աղէն, Բուրնութին
 Հաղարնիրով դաղեցին,
 (Չաղբանիցէճէն բերին
 Շինովի ասի գնացին):

Չուն հալալ աշխատանքով
 Ո՞վ է դադի միլլիօններ.
 Հաղամ փուղն էր, վուր շինից
 Փարբիկէք ու մինձ տներ:

Ուխտ գրեցէք՝ ձեր կինքում
 Տասն անգամ կուտը ննդնիւ,
 Ու հարուր հաղարնիրով
 Աճէն գամին կլանիւ:

Էն վուխարը դուք կութողնիք
 Ձեր տղերանցը, անգուման՝
 Միլլիօններով մանէթներ
 Ու հարուր հաղար թուման:

Էստուճցմէն մի՛ ամանչէք,
 Էս է հիմի աղաթը.
 Հաղամ փուղը հալալ է,
 Վուճց վուր ձեր դէդի կաթը:

Նէտավի մէ ինձ Աստուծ
 Ծիրութինս դարձնէր,
 Ան իմ դէդէն — Կէկէլուն
 Ինձ նուրից վուրթի ծնէր,

Մէկէլ կուտը ննդէի,
 Մէկէլ փողբաթ բունէի,
 Ու նրա էդնէն ուրախ,
 Հանդիստ սրտով մեռնէի...:

Ե

Բայց հիմի ջէր աշխրբից
 Ձէ կշտացի իմ աչքը,
 Երբ վուր ես փիքը իմ անում՝
 Էն կինքումը բան չկայ...

Ասում ին, բաղ ու բաղչա,
 Ունի Աստըծու դրախտը,
 Թէ ինձ էնտեղ կու տանին,
 Ի՞նչ լաւ կուլի էն վուխտը:

Ա՛խ, միւր Օրթաճալի պէս
 Վո՞ւնց կուլի էն բաղն ու բաղչէն.
 Ո՞վ է տուի էնտեղ քէփ,
 Ձուռնա դափն ու քամանչէն:

Ասում ին, արթարնիրուն
 Գինի կու տան անպատճառ,
 Բայց էն գինին վո՞ւնց կուլի
 Կախէթու քաղցր մաճառ:

Ասում ին, էն կինքումը
 Մարդիկ վուռնչիչ չին սւտում,
 Աստըծու փառքով կշտացած,
 Մարդն ուրախ է իր սրտում:

Դէ՛, արբ՛ դու զիմացիր,
Ի՞նչ պիտ՛ ըլի քու հայր,
Երփ սուփրումդ չունենաս
Գինի, զուրդէլ, խիղլալա :

Ասում ին, էն կինքումը
Մարդիկ տներ չին շինում,
Վուչ մշակներ ին բանում
Միբոցովի մաշինում :


Թէ՛ վուր զուրթ ըլի էստունք,
Վայր՛մէ, էլ չի ըլի փողբաթ,
Ի՞նչով պիտի փուղ դադիս,
Տուն, աիղ պահիս ու քուրիաթ :

Ձիդ դե՛թաղվա, քաղկըցիք,
էս խօսքերը միտը բերէ՛ք,
Բանի սաղիք քէփ արէք,
Փուղ դաղէ՛ք, անուն հանէ՛ք :

Արքայութենում, ախարբտիք,
էնտեղ վունչիչ ձիդ չին տալ —
Վուչ Ստանիսլաւ, վուչ Աննա,
Վուչ օսկէմէն մինծ մէնդալ :

Արքայութենում, ախարբտիք,
Փողբաթ չկայ, փուղ չկայ,
Ինչով պիտի լիանայ
Փուղի, կարօտ միբ աչքը :

Հրիշակները էնտեղ
. ին դիփուն,
Ո՞ւմից պիտի փուղ դժլինք,
Վա՛յ միբ օրին, միբ հողուն . . . :



Բ Ա Ռ Ա Յ Ա Ն Կ

Արագօվանի կրթեալ, ուսումնա-
կան

ազուտ ազիւս

աղաք սոփորութիւն

աղաքաբ մախան, կատարած

ազուցակ ազանի

ամուսն ազգաբազան սխալ ուղիղ՝
անուս

այն աչք, միտք

ան կամ

անգուման անկասկած, ազանսօ

անխիլ անխելք

անդերձ (անդարձ) կտակ

ապիպտ ուսազարդ

առուտեկամ առուտ, առուտեկան

ատեպար վկայական

ատեժ յարկ

արմնալ գարձանալ

Բար արժանի, հուսասար, նման
բարօր (ի վօրօսնիկ) կուղբ (ի մուշ-
տակ)

բաղ բազնիք

բազագ կտակեղէնի վանտական

բազագլխան կտակեղէնի խանութ

բալ պար, պարահանգէս

բալբա գուցէ

բախիլ նախանձ

բաղ պարակզ, սպիթ

բաղկալ նպարտվանառ

բարարան գուտ, խանութ

բարիշնցնիլ, հաշակցնել, պայմա-

նադրել, կարգադրել

բարխատ նիւթի տեսակ

բարուք վառութ

բիարուտ անդատիւ, խոյտառակ

բիրք (բերք) բանա

բիրժ սակարան

բիստի 2 կողէկ

բին, բնեք, ծառայ

բուզմէք թեղանկարդ

բուխարի վառարան, օճախ

բուխիւր, ի՞նչ — է ուտում ի՞նչ

անհեթեթ, անմիտ կը խօսի

բրիշակ անիլ քանդակ, վիցընել

բօքիլ շէշ

Գանա արդեօք, բայց

գեքաղվա կը խնդրեմ, կ'աղաչեմ

գելաբնուրի կարմբախայտ (մուկն)

գուրիքնատոր կառավարէչ

գշիլ, գըշիլ խել, պատուել

գօքազօն գեքեզմանսօխ

գօքա համապն

Գանի վաստիկիլ, շահիլ

դալալ միջնորդ

դաներա, դայրա գափ

դարար հաշուեղիքք

դաիծախսանոզ վէճ յարուցանող

դեադուչկա քուր

դերիա, դերիէք կանացի զգեստ

դերիացու զգեստի նիւթ

դէդ(ա) մայր

դէդէուլ մօք կողմէ, մօքենական

դէդօփալ թագուհի

դիէփ համար, մասին

դիզ գեղ

դիվէր դէպի վար

դիմք անհող, հանդիստ

դիփ, դիփանունք *ամէնքը, ամբողջ*
 դուլուդի *տպագրական սխալ ==*
 դուլուդի
 դուլս *անուշահոտ իւղ*
 դուղ *դող*
 դուշման *թշնամի*
 դուրակ *էշ*
 դուքան *խանութ, գործ*
 դրուստ *ճիշդ*
 դրօշկ *կտոր*
 դօշ *լանջք, կուրծք*
 դօշ *ձուկ մը*
 դօվլաք *հարստութիւն*

Իարմուկա *տօնախմբառ*
 Եափնցի *տառատուկ*
 Եախ *տոսնձիւն*
 Եհալ *երթալ*
 Եսիր *գերբի*
 Էփ *երբ*
 Էօլս *գնալ դոհ ըլլալ, յարժարել*

Զակրամիցա *արտասահման*
 գալ *սրահ*
 գակօն *օրէնք*
 գակօնչիք *օրէնագէտ, օրէնագիր*
 գանդուկ *սնտուկ*
 գարար *ֆլաս*
 գաւիտեմիա *վարժարան*
 գաւօտ *գործատուն*
 գուրգէլ, գուրգիլ *ձուկ մը*
 գուքս *զարգարանք, պահուճանք*
 գըջլտիլ *տպագրական սխալ == գը-*
 ջլտիլ
 գօս *ուժ, բռնութիւն*
 գօրքա *գօրաւոր, շատ*

Էրի *բերաւ*
 Էգէրա *թերեւ*
 Էդգադամ *սոցլափ*
 Էլօր *միւս օր*
 Էնդուլէն *դէն անկէ անդին*
 Էպուրում *ասոր մէջ*

Էտնէն *վերջը, անդին*
 Էհեմց *այնպէս*
 Էհտիրար *վարկ, վարժք*
 Էնտուր *անոր համար*
 Էրաւուր *այս տեսակ*
 Էտհանգի *այնպիսի*
 Էտունք *ասոնք*
 Էրիտ *տուաւ*
 Էրկաքէ *նամբէ երկաթուղի*

Ըշկօլ *զպրոց, ուսումնարան*

Թախար, քախր *կերպ, տեսակ*
 քամաի *հաճելի. — ամիլ, զցիլ*
 Հաւեցեհէլ, *հաճեցեհէլ*
 Թամաշա *ամիլ նայիլ, մտիկ ընել*
 քանիտ *գումար*
 քասակրաւի *ճակատակապ*
 քարաքամ *անզէտ, խեղճ ու կրակ*
 մարդ
 քաւադ *իշխան*
 քաւուր *տեսակ*
 քէժ *կրակ սաստիկ, բուռն կրակ*
 քոկ *չուան*
 քուգ *փոշի*
 քուլափ *վերարկու գիւղացւոց*
 քումգի *հեղուկի չափ*
 քրեւ *գալ կտուէն ինչալ, վազվզել*
 քրիատր *թատրոն*

Փած *գալ շարժել*
 ժնգերքը (ժնգեաքը) *կախիլ քիթը*
 կախել, *դէմքը թթուեցեհէլ*
 ժուկ *ժամանակ, ատեն*

Իգրուշկէք *խաղալիք*
 Իժում *յետոյ, այնուհետև*
 Իլլախփի *Էթէ, բոց*
 Իծաներդ *մօտ կլան, յամտու-*
 թիւնդ, *չարութիւնդ բռնեց*
 Ինշկլի *միշու*
 Իստակ *բուրոյժին, ամբողջովին*
 Իսպաիի *գեղեցիկ*

խալօյնի լիստ կազմուած ցուցակ
իւփկա շքնազկեստ
իքմնեք իրեր

Լազար պէտք
լայնի անկ յարմարիւ, վայելիւ,
արժանի համարիւ

Ինզցինկա կոփկասեան պար մը
իիդ տալ լազալ
լիստ ցանկ, ցուցակ
լեկք վերմակ
լպստած լիբր, անպատկաս
լպստել լիզիւ
լօզիկա արամարանու թիւն

Խազին աէր, պարտաաէր
խազիւկա տիրուհի
խաբրու պատճառով
խաբքամ կալ անհոյ բլլալ
խալիս Հաստարիմ, աննենդ, միա-
միա

խալիս ժողովուրդ
խալիմուրիւն շար(արքա)ութիւն,
գաւաճանութիւն
խասեար բնաորութիւն, սովորու-
թիւն

խարապ բլիլ փճանալ
խարազ կօշկակար
խարջ ծախք, նրա — օքմին է անոր
յարմար մէկն է
խէշ խաշ, պատկեր
խէրուիլ օգուտիւ
խիզիլալէ խախար
խուրջին մտառ
խրամալի ծածան

Յիտ ճնճողուկ, թռչուն

կազեօն, կազօննի տուն, պետական
տուն
կապաւոր կապոց հազած
կառէր կասք
կարդուզ ուսանողի գլխարկ
կարս կարսա

կէննիք խիշ, հատ
կծովի շարքը բերանը առնելով
կռնդի պոչ
կուխնի խոհանոց
կուշէր կոռասպան
կուտք ննգնիլ սնանկանալ, կոր-
ծանիւ

կուրս ուսման ընթացք
կրիշա տանիք
կրուօօկ ահուժք
կօծել գոցել
կօնիս քոխիսն նստաւ դժբախտու-
թեան մէջ ինկայ
կօնփետ շարք
կորմովոյ օրապահիկ

Հալա դեռ
հալիլ, հալիլայ հայելի
համաշա միշա
համֆար համալիճակ
հէտաի սյնալէս, սյնալիսի
հոբէս ահա՛, ա՛յ
հուզրամ (հազրք?) պատրաստի?
հումար շնորհք
հուրս անիլ որսալ

Ղարալ անիլ հաւանիւ, ընդունիւ
զադա, զադամ չափ
զադաֆի խեղճ
զադր երախտիք
զազազ վաճառական
զալար նենդութիւն, մատնութիւն
զալք կեղծ
զպիմ ամուք, զօրաւոր
զասարխամա սպանդանոց, մսալա-
ճառանոց

զէյրաք ֆաշիլ շահը պաշտպանել
զուլ(լ)ուդ պաշտօն, ծառայութիւն
զուլէյն նեղութիւն, արամութիւն
զուրդ, զուրք ուղիղ, ճիշդ
զվիմօրիս Հոկտեմբեր
զօմաղուդ Հիւրասիրութիւն
զօշախ կաց քաջ կզի՛ր

ձիւննուր ջութակի տեսակ
 քնիքն արճամարճական ձևւ
 քօք զգեստի նիւթ
 քօնդ ծայր

Մագրամ բայց, թերեւս, միթէ
 մատուշկա կին
 մագանդա զին, արժէք
 մախնիս թթու կաղամբով եւ ձաւա-
 բով կերակուր մը
 մահուր շուրայ
 մաղազա խնութ
 մամա հայրիկ
 մամէլուլ հօք կողմէ, հօքէնական
 մաշ բայց
 մաշ վուց հազա ինչ(պէս)
 մասխարա գցել ծաղրեւ
 մատերիս նիւթ
 մարաբա կուր
 մափքուլ ձեռողէ նուրբ թել
 մէշօկ պարկ
 մէքօմ իրբ թէ
 միխս ծախք
 միդ մեղք
 միրավոյ, միրօ սուդիս հաշտարար
 դատարան
 մշակ գործաւոր, բեռնակիր
 մուժիկ դիւզացի
 մուղայիք կիմալ հող, խնամք տա-
 նիւ, զգոյշ բլլաւ
 մուկար զմնի պարտաւորութիւն
 դնել, երախտապարտ ընել
 մուշտարի յաճախորդ
 մուրաբա անուշեղէն, քաղցրեղէն,
 պտոյտ անուշ
 մուրազ փափազ
 մուքրա ձրի
 մօգօնի հնարել, դանել
 մօդ անիլ հաւարել
 մօդնի նորածէւ(ութիւն)
 մօքալ(ի) տիկի պանիր
 մօլօտեց սարի՛ս
 մօլչի լու՛՛

մօծմա մկայ
 մօքրաք կարօտ
 մօշլա էլա մերցուեցաւ
 մօցիքուլ ամուսնութեան միջնորդ

Նամարդ անպատիւ, ամարդի
 նեթնի փափուկ, նազիկ
 նետալի երանի՛ թէ
 նիշավօ ոչինչ
 նիշել զարդ բանիւ
 նմուտ վայրկեան
 ննգմիլ իյնաւ
 Նօխտէ լիամ (սանձի երկաթի մասը,
 որ կենդանւոյն բերանը կ'ան-
 ցուի)

Շահի, շայի 5 կողէկ
 շահի (շայի) բիստի խնայուած դրամ
 շանքազ սրիկայ
 շանց տալ ցոյց տալ
 շառ գրպարտութիւն, շար(ախօս)ու-
 թիւն
 շիկ տալ ձոխանաւ, փայլել
 շիւար մնալ շուարել
 շիւպայ, շիւպէ կնկան զլխարկ
 շիւփ, շիւփ քղանցք
 շիւք պարանոց, վիդ
 շուր զգեստ
 շուք (շոք) տար

Ուզուփ ուղեկ
 ումքր կեանք
 ումիկ յոյս
 ուշնար ուշքով, խելքը զլուխ
 ուշուց տալ հոյհոյել, անիծել
 ուպրավլէնիւ պաշտօնարան շինուա-
 ծոց
 ուստուքիմ վարպետութիւն
 ուփրօ աւելի, նամանաւանդ
 Չաղր վրան
 չալաղաջի (ոչխարի) պուստ
 չալիշ գալ շարշարօտիւ, աշխատել

չանջալէ՛ք կցորդք, Հեռեւորդք
 չարէ՛ք քառորդ
 չա՛քմէ՛ք կօշիկ
 չա՛քու՛ն ժուրճ
 չեստնի պատուաւոր
 շի, շխում Հնտաի, Հոր
 շին տառի՛ւն
 շինու[ն]իկ պաշտօնեայ
 շուլք դանկապան
 շու՛ն = շունքի վասն զի
 շուստ շուս, արագ
 շուքսնէ՛վէտ չորսք (ժխտին)

Պանլմանշ, նի — շէս Հասկնար
 պաշկա ծրարիկ
 պաշտոնի գրամտանի պատուաւոր
 քաղաքացի
 պապիրոս գլանիկ
 պարտնոյ գերձակ
 պիտինք պէտք ենք
 պլիանոյ ազամանդ
 պլիսիկ վրայէն տանել, յափշտակել
 պոշտի = Prosit անուշներ
 պրիսքաւ պաշտօնեայ
 պրոկուրոր դատախազ
 պոմոլուս Հրամայեցէք
 պօլկ զինուորներու դունդ
 պօլլուիլ փաթթուիլ

Ջալդ շուս, փոթով
 ջան ժարմին
 ջգրացնել նեղացնել, բարկացնել
 շէք գէտ, մի — անդամ
 շբիս, շիթ, շիկոյան բուրսօվին
 շիք զրպան
 շուս դատակարդ
 շօնքօլ փարփար

Ռադ աննի Հեռացնել
 Բագի բիլի գոհ բլլալ
 Բեխ դունչ, բերան
 Բումբ տիկ
 Բուշ ժանեակ
 Բուսօրան Բուս Հօրեզրայք

Սադա պարզ
 սափա խրախճան
 սաթար Համբարդութին
 սերդուկ վերնազգեստ
 սիվ սէս
 սկամի սեղան
 սկուպոյ ազահ
 սխար ժամ(անակ)
 սովդա տուճախ, — բարիշեցնիլ
 — տուճախը Հնարաւորել
 սովդաքար վաճառական
 սուդ դատարան
 սուխարի պարբմատ
 սպիրք ոգի
 ստօլ, սքօլ աթուս
 ստատսիլի սովխտնիկի շինով պե-
 տական խորհրդական
 ստրօններէ կակ բաւոր ից ժիլեգա
 լիսօ շինուածքը կարծես եր-
 կաթէ թափուած է

Վէշէք Երեկոյթ
 վուխտ ժամանակ
 վուք որ
 վուրդի ուք տեղ
 վուրդի, վուրքկիքամք որդի, որ-
 գիներ
 վուրդանց ուսկից, ուք տեղէ
 վսէ խօրօջ ամէն բան լուս
 վօքոտնիկ օճիք

Տանցիվաւ պար(էլ)
 տեհիլ տեհնել
 տըվպեա ստօինիէ կրեպիլի, կակ
 ժէլեգօ բու շէնքը երկաթի պէս
 Հաստատուն է
 տիպլիպիտօն թմբուկ
 տնագ աննի ծաղրէլ
 տուտուց յիմար, ապուշ
 տրաքիլ պայթիլ
 տրօտքօ ժայթ
 կոլ Հաստի
 տօրգ տճուրգ

Բազմաբանի խարերայ, աւազակ
 րազի Հաւան, զո՛ւ
 րասպիսկէ՛ք ստացադիրներ
 րուփկա տոգոր. սխալ = իսփկա

Յեղօշկա շղթայ
 ցօցխալ ձուկ մը

Փայտօմ կառք
 փայ Ըլիլ բաժին դառնալ
 փնշատել կնքել
 փեշակ արհեստ
 փեշափար արհեստաւոր
 փեշաշ պարզել
 փերշատի, փարշաբ-փի ձեռնոց
 փիֆր Հող, կարծիք, — անի խոր-
 չիլ

փուտ պակասութիւն
 փոնչի, փոնչի Հացագործ
 փոքաշիկ ծառայող
 փտնի պարտակել, անուանարկել
 փօղբար դաշինք, կապալ
 փօշմնիլ ցաւիլ, զղջալ
 փօրտօպեան դաշնակ

Քարիպ (քարիպաւոր) վրացի ազ-
 գային զգեստ
 քալքառօնօ տիկին
 քամբախտութիւն զժբախտութիւն

քարվաւա, քարավանարա խան
 քեսառ առշա՛ւ
 քեսառութիւն անգործութիւն, ան-
 շահութիւն
 քէսէ դրամապան
 քէսիք ազբատ
 քէլա բղող
 քբոց կողով
 քոբոց զնդասեղ
 քուլփաք տիկին
 քուչէֆ փողոց
 քուեր, քվեր բոլոր
 քշփշիլ փոփաւլ
 քրքամ կաշառ
 քօթէֆ խղիկ
 քօծ ազախին

Օրագօցմնօք կրթութիւն
 օխտէմէն գալ յաղթել, զլուխ ելլել
 օլիքօմի գաւառ
 օսկիմէն օսկիւն
 օրտէն նշան
 օրքում երզում
 օրքան ձեռնադաշնակ
 օմի մէկը

Ֆուրաշի գլխարկ
 ֆրանս շիք՝ լու հազուած ազո-
 մարդ



ՀԵՏՁՀԵՏԷ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ

Բ Ա Փ Փ Ի Ի

ՀԵՏԵՒԵԱԼ ԸՆՏԻՊ ԵՒ ՍՊԸՌԵԺ ԸՀԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «ՍԱԼԻՒ» Հար. Բ. (ձևապահ) :
2. «ՍԱԼԻՒ» Հար. Գ. (ձևապահ) :
3. «ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ» (անտիպ եւ արտատպուած) :
4. «ՈՍԿԻ ԱՔԱՂՈՂ» :
5. «ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ» Հար. Ա :
6. «ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ» Հար. Բ :
7. «ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (անտիպ եւ արտատպուած) :
8. «ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (անտիպ եւ արտատպուած) :
9. «ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (անտիպ եւ արտատպուած) :
10. «ՆԱՄԱԿՆԵՐ» (անտիպ) :
11. «ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (անտիպ եւ արտատպուած) :
12. «ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» Հայկից մինչև և Լեւան Զ. (անտիպ) :
13. «ԱՐՄԻՒՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» (Խրիմեան Հայրիկ) :
14. «ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ» և այլն :

Բ Ե Փ Փ Լ Լ


Վ Ա Ճ Ա Ռ Ե Լ Ի Գ Ի Ք Ե Ր Ն Ե Ն

	<i>Շիւերնգ</i>
1. «ՍԱՄՈՒԻԷ» Հտր. Ա. Բ. և Լ. Գ. մի զբքի մէջ ամփոփուած, Գ. տպագրութիւն	10
2. «ԴԱԻԻԹ-ԲԷԿ» Հտր. Ա. Բ. և Լ. Գ. վերջարանով, Գ. տպագրութիւն	8
3. «ԿԱՅԾԵՐ» Հտր. Ա., Բ. տպագրութիւն	5
4. «ԿԱՅԾԵՐ» Հտր. Բ. և Լ. վերջ, Բ. տպագրութիւն	7
5. «ԽԵՆԹԸ» և «ԶԱԼԱԼԷԴԴԻՆ» մի զբքի մէջ ամփոփուած, Գ. տպագրութիւն	5
6. «ԽԱԶԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ» Ա. Բ. Գ. և Լ. Գ. Հտր. մի զբքի մէջ ամփոփուած, Գ. տպագր.	5
7. «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ»	} <i>մէջ ամփոփուած</i>
«ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՏԸ»	
«ԳԱՂՏՆԻՔՆ ՂԱՐԱԲԱՂԻ»	
8. «ՍԱԼԲԻ» Հտր. Ա.	8
9. «ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ»	5
10. «ՏԱՃԿԱՀԱՅՔ» Բ. տպագրութիւն լրակատար	3
11. «ԶԱՀՐՈՒՄԱՐ» Բ. տպագրութիւն	5
12. «ՄԻՆԸ ԱՅՍՊԷՍ, ՄԻՒՍԸ ԱՅՆՊԷՍ» Բ. տպագրութիւն	3

Յանկացոյցները պիտի դիմեն՝

Imprimerie des P. P. Méchitharistes

Vienne (Autriche), VII. Mechitharistengasse 4.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220030153

[2n]

A $\frac{\text{II}}{30153}$